



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՄԱՏԹԷՈՍ Մ. ԷՊԼԻՂԱԹԵԱՆ

ԿԵԱՂԵՔ ՄԸ ԱՉԳԻՍ ԿԵԱՂԵՔԻՆ ՄԷՉ

ԱԿԱՆԱՏԵՍԻ ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՂԻ
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ
1908—1928

ԱՆԹԻԼԻԱՍ
1987



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՓՈԽԱՆ ՅԱՌԱՋԱԲԱՆԻ

- | | |
|---|----|
| 1.- Կենսագրական | 9 |
| 2.- Վկայութիւն մը Մատթէոս Էպլիղաթեանի մասին | 17 |

Ա. ՄԱՍ — ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊԻ ԿԵԱՆՔԷՆ (ՅՈՒՇԵՐ ԵՒ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ)

- | | |
|-------------------------------------|----|
| 1.- Գրիգոր Զօհրապ, երկրաչափ | 30 |
| 2.- Վկայական չունեցող մեծ փաստաբանը | 33 |
| 3.- Զօհրապի դժնդակ վերելքը | 35 |

Բ. ՄԱՍ — ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՕՐԵՐՈՒՆ

- | | |
|---|-----|
| 1.- Բարենորոգումներու շրջան | 51 |
| 2.- Հայաստանի մէջ | 58 |
| 3.- Առաջին ոճիրը | 61 |
| 4.- Իշխանը եւ քիւրտը | 63 |
| 5.- Հայ եւ թուրք բախում | 65 |
| 6.- Արամ Մանուկեան | 74 |
| 7.- Քիւրտ աշիրաթապետ
Մուսա Պէյի սպանութիւնը | 78 |
| 8.- 1913-ի ձմեռը Վանի մէջ | 84 |
| 9.- Բարենորոգումներու յոյսերով | 94 |
| 10.- Մեծ փոթորիկէն առաջ | 104 |
| 11.- «Մարզպան» գնդապետ Հօֆ Վանի մէջ | 113 |
| 12.- Տխուր վերադարձ
(վերջ մարզպան Հօֆի առաքելութեան) | 123 |

Գ. ՄԱՍ — ՄԵԾ ԵՂԵՌՆԷՆ ՅԵՏՈՅ

1.- Թրքական պարտութեան նախօրեակին	145
2.- Հայ գաղթականներու օգնութեան առաջին նախաձեռնութիւնները	153
3.- Կեդրոնական համազգային հաստատութեան մը «Ազգային Խնամատարութեան» ստեղծումը	156
4.- Որբանոցներ եւ գաղթակայաններ	163
5.- Քանի մը թիւեր, եւ պիւտձէ	176
6.- Թուրքերու քով գտնուող հայ որբեր	183
7.- Շուտ մեծցող որբեր	188
8.- Արմաշի գիւղատնտեսական որբանոցը	191
9.- Գաղթական հայ մտաւորականներ եւ Ազգային Խնամատարութիւնը	192
10.- Ազգային Խնամատարութեան չրջանային քննիչները	195
11.- Միջ-կուսակցական եւ այլ պայքարներ	197
12.- Ազգային Խնամատարութեան յարաբերութիւնները Ամերիկեան Նպաստամատոյցին հետ (Նիր իսթ րելիֆ)	202

**Դ. ՄԱՍ — ՄԱՏԹԷՈՍ Մ. ԷՊԼԻՂԱԹԵԱՆԻ ԿԵԱՆՔԻՆ ԵՒ
ԳՈՐԾԻՆ ՀԵՏ ԿԱՊ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՐԳ ՄԸ ՎԱԻԵ-
ՐԱԳՐԵՐ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ**

1.- Երեք վաւերագրեր	219
2.- Պաշտօնական նամակներու տետրակ մը	231



Մատթէոս Մ. Էպիղիաթեան երբ Հայաստանի Հանրապետութեան
«Խնամատարութեան եւ Վերաշինութեան»
անդակաւացուցիչն էր Պոլսոյ մէջ:

ՓՈՒՆԱՆ ՅԱՌԱՋԱԲԱՆԻ

Ո՛Վ ԷՐ ՄԱՏԹԷՈՍ Մ. ԷՊԼԻՂԱԹԵԱՆ

«Մնած եմ Գըրգադան ֆաղաֆը (Իզմիրի նահանգ) 1881 Հոկտեմբեր 21-ին: 1897-ին աւարտած եմ Իզմիրի Մեսրոպեան վարժարանը: Նոյն ֆաղաֆի պետական վարժարանը (*գիմնազիոն*) աւարտել ետք, 1903-ին մտած եմ Պոլսոյ իրաւաբանական համալսարանը, եւ 1908-ին իրաւաբանութեան *տոկտորայի* ֆննութիւններս աւարտած եմ»:

«Օսմանեան կառավարութեան սահմանադրութեան շրջանին դատաւոր անուանուած եմ նախ Եպերոսի *Եանիա*, եւ ապա Սուրիոյ *Հալէպ* ֆաղաֆները: 1913-ի ամառը, Վանի ընդհանուր դատախազ նշանակուեցայ, եւ վեց ամիս ետք՝ նոյն ֆաղաֆի դատարանի նախագահ»:

«1914-ի Յուլիսին, Բարեմորոգումները գործադրելու պաշտօն ունեցող գնդապետ Հօֆին (Նորվեկիացի) մօտ *Հայերէն թարգմանի* տիտղոսով, հայկական գործերը վարելու կոչուեցայ»:

«1919 Յունիս 14-ին, Պոլիս նորահաստատ Ազգային Խնամատարութեան ընդհանուր տնօրէն կարգուեցայ, ապա նոյն պաշտօնը պահելով հանդերձ, 1920 Յուլիս 3-ին, Հայաստանի հանրապետութեան Խնամատարութեան եւ վերաշինութեան նախարարի թիւ 4839 պաշտօնագրով նոյն նախարարութեան Կ. Պոլսոյ մերկայացուցիչ նշանակուեցայ: Իսկ 4863 թիւ եւ 5 Յուլիսի 1920 թուակիր պաշտօնագրով՝ գաղութային գործերու վարիչ: Եւ որովհետեւ արտասահմանի գաղութային գործերու վարիչները անուանելու իրաւասութիւնը նախարարաց խորհուրդի որոշումով փոխանցուած էր արտաքին գործերու նախարարութեան, ուրեմն Հայաստանի հանրապետութեան Խնամատարութեան եւ վերաշինութեան նախարարութիւնը թիւ 6629 եւ 25 Սեպտեմբեր 1920 թուակիր պաշտօնագրով զիս դադրեցուցած է իր մերկայացուցիչը ըլլալէ: Իսկ 5546 թիւ եւ 28 Սեպտեմբեր թուակիր արտաքին գործերու նախարար Համօ Օհանջանեան պաշտօնագրով մը ինծի կը հաղորդէր, որ ես *«առժամապէս* Հայաստանի հանրապետութեան Պոլսոյ դիւանագիտական մերկայացուցչական շրջանում գաղութային գործերու վարիչ անուանուած եմ, եւ ոռնիկիս կարգադ-

րութիւնը եւ այլ մանրամասնութիւններ (գործելու հրահանգներ) հաղորդուած են ներկայացուցիչ Թահթանեանին»:

«Արտաքին գործերու նախարարութիւնը 5548 թիւ եւ 28 Սեպտեմբեր թուականով կ'իմացնէր Ֆ. Թահթանեանի, թէ Մատթէոս Էպլիղաթեան ընդհանուր հիւպատոսի թեկնածութիւնը նկատի առնուած է եւ կը սպասեն իր հաւանութեանը, որպէսզի համապատասխան թուղթերը դրկեն: Այդ միջոցին ծանօթ է, որ Թուրքերն ու Ռուսերը յարձակեցան մեր ազատ եւ անկախ հայրենիքին վրայ: Երեսնամի հետ կապերնիս խզուեցաւ, եւ ես «գաղութային գործերու վարիչ»ի տիտղոսով եւ Համաձայնական իշխանութեանց թոյլատուութեամբ եւ արտօնութեամբ՝ նորահաստատ հայ հիւպատոսարանի գործերը վարեցի, մինչեւ 1922 Դեկտեմբեր, երբ անգլիական իշխանութեանց հրահանգով ստիպուեցամք Հիւպատոսարանը փակել»:

ՄԱՏԹԷՈՍ ՄԵԼԳՈՆ ԷՊԼԻՂԱԹԵԱՆ



Ձեռագիր այս կենսագրութիւնը պատրաստուած է նոյն ինքն Մատթէոս Մ. Էպլիղաթեանի կողմէ, եւ յանձնուած իր հարազատներուն, մահէն քանի մը տարիներ առաջ՝ «որպէսզի թերթերը սխալ տեղեկութիւններ չհրատարակեն» իր մասին (մահուան առիթով):

Գրութիւնը շատ աւելի պաշտօնական տեղեկագրի կը նմանի քան թէ կենսագրականի: Բայց զինք անձնապէս ճանչցողներու մեծամասնութիւնը հաւանաբար պիտի վկայէր թէ մի'շոյ այդպէս էր Մատթէոս Էպլիղաթեան, իրաւաբան՝ բառին գիտական իմաստով, «պարթեւահասակ, ազնուական արտաքինով, խստադէմ, սակաւախօս եւ անհաղորդ: Մարդ մը որ կը խուսափէր իր մասին խօսելու ու խօսեցնելու» (Կայծ կողանեան):

Նմանօրինակ բնորոշում մը կը կատարէ նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս, գրելով.

«Ամէն անգամ երբ իմ մեր հայրենի գիւղը գար (Քէսապ), ծանրախոհ, հանդարտամիտ եւ ազնուական մարդու կերպարը կը հանդիսադրէր ամբողջ գիւղին, եւ յատկապէս պատանիներուն համար, որոնք ինձի նման յատուկ պատկառամբ կը տածէին իր անձին նկատմամբ: Ձիւն չէինք կրցած — եւ չէինք կրնար այդ տարիքին եւ այդ պայմաններուն մէջ — անչնայ. բայց կը գգայինք ամէն անգամ երբ գաւազանը ի ձեռքին քայլէր գիւղին նեղիկ փողոցներէն, կամ բարձրանար «գըրադխանայ»ի (ակուսրի) աստիճաններէն եւ կամ նստած ըլլար գիւղամուտին զրօսավայրի մը պարտէզին մէջ թերթը ի ձեռքին, որ ազգի մը պատմութիւնը կար շաղախուած իր անձին մէջ, որ ազգային առողջ մտածողութեան եւ մարդկային ազնուական տիպարի խորհրդանիշ մըն

էր մեզ համար» (Ազգային Խնամատարութիւն—Ընդհանուր Տեղեկագիր, Անթիլիաս, 1985):

Բայց միայն իր հարազատները, մօտիկ ազգականները եւ քանի մը մտերիմ բարեկամներ գիտէին, որ միշտ խնամուած արտաքինով այդ պատկառելի դատաւորը կը կերպարանափոխուէր, երբ ամէն օր — ժամացոյցի ճշգրտութեամբ — ճի'շդ միեւնոյն պահուն տուն կը վերադառնար: Կը հանէր «դուրսի» գգեստները, կը հագուէր տան յատուկ հին հագուստներն ու հողաթափերը, գլխուն կը դնէր լաթէ գդակը, եւ անմիջապէս կը նստէր տիկին Մարի Էպլիղաթեանի պատրաստած կլկլակին ետեւ, ի'ր բազմոցին վրայ: Տան մէջ կը դառնար ուրախ, սրամիտ, լաւատես, կեանքի հաճոյքները սիրող պարզ մարդը, այն որ էր խորքին մէջ:

Ապշեցուցիչ յիշողութիւն մը ունէր, եւ սիրայօժար կը խօսէր իր ծննդավայր Գըրգաղաճի, բայց մա'նաւանդ Հայաստանի բնութեան, կլիմային, յատկանշական կերակուրներուն, բերքերուն, մարդոց, սովորութիւններուն, եւ մասնաւորապէս ջուրերուն եւ ակերուն մասին: Բայց շատ հազուադէպ ակնարկութիւններ կ'ընէր ի'ր կեանքին եւ դերակատարութեան մասին:

Տարիներու վրայ երկարող պնդումներէ ետք, վերջապէս որոշեց հրապարակել իր յուշերը, որոնք լոյս տեսան Պոսթնի «Հայրենիք Ամսագիր»ի 1951-1956 տարիներու համարներուն մէջ: Տեսողութիւնը արդէն տկարացած էր, որով փոխանակ գրելու ստիպուած էր տարի մը շարունակ տուն տալու ազնիւ բարեկամի մը, որ խօսակցութիւնը վերածեց գրութեան: Տպագրութենէն յետոյ նկատեց բազմաթիւ վրիպակներ, բայց մանաւանդ ոճի տարբերութիւն, անտեղի կրկնութիւններ, փոքր յապաւումներ, եւ մէկ-երկու տեղ իմաստային փոփոխութիւններ, որոնց համար բնականաբար դժգոհեցաւ: Անհրաժեշտ էր ուրեմն կարգ մը սրբագրութիւններ կատարել: Անկասկած՝ նախընտրելի պիտի ըլլար գրութիւնը ամբողջացնել եւ վերախմբագրել, ոչ թէ յօդուածաշարքերու այլ՝ գիրքի ձեւով: Դժբախտաբար հեղինակը այլեւս կարողութիւն եւ ժամանակ չունէր այդ ծրագիրը իրականացնելու համար:

Այդ իսկ պատճառաւ ներկայ հատորին մէջ կը հանդիպինք բազմաթիւ կրկնութիւններու (հակառակ այն իրողութեան որ անոնցմէ մաս մը ջնջած ենք): Կրկնութիւններ որ հեղինակը հաւանաբար գիտակցօրէն կատարած է ընթերցողին յիշողութիւնը թարմացնելու համար, որովհետեւ յօդուածները ամիսը անգամ մը, իսկ յօդուածաշարքերը իրարմէ մէկ կամ երկու տարուայ հեռաւորութեամբ կը հրատարակուէին: Զանազան հատուածներուն միջեւ կապը շեշտելու առաջադրանքով նախաձեռնած ենք նաեւ ենթախորագրեր աւելցնելու. վերջապէս, խմբագրութիւնս պարտաւոր էր անուն մը ընտրել, քանի այս հատորին բաղկացուցիչ մասերը ցարդ հասարակ խորագրի մը տակ չէին մէկտեղուած:

Նկատելի է որ Մատթէոս Էպլիղաթեանի ինքնագիր կենսագրականը կանգ կ'առնէ Դեկտեմբեր 1922-ին, մինչդեռ ան մահացաւ երեսունեօթ տարիներ յետոյ: Գաղթականութեան տաժանելի տարիներ՝ որոնց ընթացքին հինգ-վեց անգամ երկիր եւ քաղաք փոխեց: Որով կը կատարենք քանի մը լրացումներ, այդ թուականէն առաջ եւ ետք: Դժբախտաբար մեր տեղեկութիւններն ալ մասնակի եւ պարագայական են (ձեռագիր նոթեր, նամակներ եւ հարազատներու վկայութիւններ):

Արտագրած ենք նաեւ Կայծ Կոկանեանի վկայութիւնը իր մասին (գրուած մահուան քառասունքին առիթով) որ զինք անձնապէս ճանչցած էր Պոլսոյ մէջ: Վերջապէս, կազմած ենք իր կեանքին համառօտ ժամանակագրութիւնը (տեսնել հատորին վերջը):

*
**

Իզմիրի մօտ գտնուող Գրրգաղամ (քառասուն ծառ) գիւղաքաղաքը ժամանակ մը բարեկեցիկ բնակչութիւն ունէր (հայ, յոյն եւ թուրք) շնորհիւ տորոն (garance) բոյսին մշակութեան: Անոր արմատներէն կ'արտահանուէր ալիգարիմ կոչուած զօրաւոր գունանիւթը որ կը ծառայէր բրդեղէն, թել եւ կերպաս ներկելու: Քիմիական ալիգարիմի գիւտէն յետոյ — որ շատ աւելի առատ եւ արժան էր — Գրրգաղամի տնտեսութիւնը մեծապէս տուժեց: Սակայն բարգաւաճ շրջանէն մնացին երկյարկանի եւ մարմարով սալայատակուած տուններ, Ս. Աստուածածին եկեղեցին, ինչպէս նաեւ երկու վարժարաններ, Նարեկեան (տղոց) եւ Վարդուհեան (աղջկանց):

Մատթէոս Էպլիղաթեան ծնաւ տնտեսական քայքայումի շրջանին (21 Հոկտ. 1881): Անդրանիկ զաւակն էր կօշկակար Մելգոն Էպլիղաթեանի եւ Թագուհի Միսիրեանի: Ծնորհիւ իր ուսման բուռն փափաքին, եւ իր փաստաբան մօրեղբօր, Յովհաննէս Միսիրեանի բարոյական եւ նիւթական աջակցութեան՝ պատանի Մատթէոս աշակերտեց Գրրգաղամի Նարեկեան, եւ յետոյ Նագիլլիի եւ Ագիսարի ազգային վարժարաններուն (Իզմիրի կուսակալութիւն), հետեւելով իր ծնողքին աստանդական կեանքին: Վերջապէս, կարողացաւ նախ Իզմիր՝ յետոյ Պոլիս երկրորդական եւ բարձրագոյն ուսման հետեւիլ, հասնելով մինչեւ իրաւաբանութեան Տոկտորայի աստիճանին (1908), նիւթական շատ դժուար պայմաններու, եւ քաղաքական վտանգաւոր շրջանի մը մէջ: Իր ձեռագիր նոթերուն մէջ Մատթէոս Էպլիղաթեան կը հաստատէ որ Համիտեան բռնակալութիւնը, առանց պաշտօնական արգելք ղենելու՝ անուղղակի միջոցներով դժուարութիւններ կը ստեղծէր, որպէսզի հայերը իրաւաբանութեան դասընթացքներուն չհետեւին: Այսպէս է որ 1898-ի ամառը կարողացած էր Պոլիս մեկնիլ (հակառակ պետական արգելքին), բայց «ձախողած» իրաւաբանութեան վարժարանի մուտքի

քննութեանց մէջ, երբ ուսուցիչը բերանացի քննութեան ժամանակ հարցուցած էր.

— «Հա՞յ ես»:

Հաստատական պատասխանին վրայ — «դո՛ւրս ելիր» ըսած էր, զէրօ մը ղենելով անունին առջեւ:

Ճարահատ, Մատթէոս Էպլիղաթեան վերադարձած էր Իզմիր, եւ հետեւած Սուլթանիէ թրքական վարժարանին դասընթացքներուն, չորս տարի կրկնելով իր երկրորդական ուսումը (եւ դառնալով հմուտ թրքագէտ):

1903-ին վերջին փորձ մը կատարելով կը յաջողի Պոլիս մեկնիլ, եւ արձանագրուիլ իրաւաբանութեան վարժարանի դասընթացքներուն: Մուտքի բերանացի քննութիւնները շնորհած էին, պարզապէս որովհետեւ ներկայացող թեկնածուներուն թիւը հինգ հարիւրը կ'անցնէր: Գրաւոր քննութեանց թուղթերուն վրայ Մատթէոս Էպլիղաթեան կը ղենէ իր արձանագրութեան ճիշդ թիւը, բայց անուան սկզբնատառ Մ. ին քով կ'աւելցնէ շինծու անուն մը, քննիչէն ծածկելու համար իր իսկական ինքնութիւնը: Այդ օրերուն թուրքերը մականուն գործածելու սովորութիւն չունէին, եւ այդ կարելիութիւնը օգտագործելով բազմաթիւ հայեր արդէն սպրդած էին «արգիլեալ գօտիներ»:

Փաստօրէն սակայն Մատթէոս Էպլիղաթեան 505 թեկնածուներու մէջ չորրորդ հանդիսանալով, վերջապէ՛ս կը յաջողի մտնել — իր բառերով — «աւետեաց երկիր», եւ վեց տարուայ ուսման շրջանէ մը յետոյ կը տիրանայ իրաւաբանի թանկագին վկայականին:

Հակառակ Համիտեան արիւնոտ վարչակարգին ստեղծած դժնդակ պայմաններուն, Մատթէոս Էպլիղաթեան երիտասարդ տարիքէն անդամակցած էր Հ.Յ. Դաշնակցութեան, որուն հաւատարիմ եւ գործունեայ շարքայինը մնաց մինչեւ իր մահը, ստանձնելով կուսակցական պատասխանատու պարտականութիւններ:

*
**

Ծնորհիւ այս հատորին մէջ լոյս տեսած յուշերուն կարելի է 1909 թուականէն սկսեալ մինչեւ 1923-ի սկիզբը հետեւիլ իր կեանքին գլխաւոր իրադարձութիւններուն — նախ որպէս դատաւոր, յետոյ հայերէնի թարգման մարզպան Հօֆի մօտ, Պոլսոյ Ազգային Խնամատարութեան ընդհանուր տնօրէն, եւ վերջապէս Հայաստանի հանրապետութեան «Խնամատարութեան եւ վերաշինութեան» նախարարութեան Պոլսոյ ներկայացուցիչ (3 Յուլիս, 1920):

Շարքը ամբողջացնելու համար կը նշենք սակայն որ երբ Օսմանեան պետութիւնը գերմաններու կողքին մասնակցեցաւ Երկրորդ Հա-

մաշխարհային Պատերազմին, Մատթէոս Էպլիղաթեան կը գտնուէր Պոլիս, ուր կը վարէր անուանական պաշտօն մը, օգնական նշանակուած ըլլալով «Բարենորոգութիւններ»-ու Քննիչ մարմնին նախագահ Ռոպէրթ Կրէյվսի: Եւ երբ 1915 Մարտին այդ գրասենեակը ջնջուեցաւ, արդէն սկսած էր գործադրուիլ թուրք պետութեան հակահայ ծրագրուած քաղաքականութիւնը: Զերբակալութեան վտանգը շրջանցելու համար Մատթէոս Էպլիղաթեան ամիսներ շարունակ պահուեցաւ նախ Պոլիս, եւ յետոյ Այտըն (Իզմիրի նահանգ), ուր հայերը գերծ էին տարագրութեան ճակատագրէն: Վերջապէս 1916 Նոյեմբերին եւ թուրք բարեկամի մը յանձնարարութեամբ՝ միջոցը գտաւ թուրք բանակին մէջ զինուորական ծառայութիւն կատարելու, անձանօթ անունի մը տակ թաքնուած, եւ իր բառերով՝ «զլուխը ազատեց»: Նաեւ եղաւ պարզ զինուոր, յետոյ սպայ՝ հակընդէմնայ եզերապահ զօրամասին պարենաւորման բաժնին մէջ (Մեծ, կամ Իշխանաց կղզի):

Այդ շրջանին ամուսնացաւ իր համաքաղաքացի օրիորդ Մարինոս (Մարի) Զիլինկիրեանի հետ (30 Հոկտ. 1917): Ունեցաւ երկու զաւակներ, Մելգոն-Նորայր, եւ Գրիգոր-Պարէտ:

Իր վերջին պաշտօնը սակայն շատ կարճ տեւեց, քանի 29 Նոյեմբեր 1920-ին Հայաստանի հանրապետութիւնը կ'անցնէր Խորհրդային իշխանութեան տակ: Այսուհանդերձ՝ Պոլիսը գրաւած «Համաձայնական» ուժերու արտօնութեամբ — որոնք տակաւին պաշտօնապէս չէին ճանչցած կատարուած փոփոխութիւնը — Մատթէոս Էպլիղաթեան լման երկու տարի վարեց Պոլսոյ հայ հիւպատոսարանի գործերը «Գաղութային Գործերու Վարիչ» տիտղոսով, բայց գործնապէս ընդհանուր հիւպատոսի իրաւասութիւններով: Ստեղծուած էր տարօրինակ կացութիւն մը, քանի հիւպատոսարանը անցազիր կու տար Թրքիայատակ հայերու, յանուն հայ կառավարութեան մը որ այլեւս գոյութիւն չուներ: Բայց կարեւոր է հաստատել որ անոնք կ'ընդունուէին բոլոր պետութիւններուն կողմէ: Եւ անոնց շնորհիւ է որ մեծ թիւով վտանգուած հայեր, որոնք թրքական նոր հալածանքներու մղձաւանջը կ'ապրէին, կարողացան արտասահման ապաստանիլ. եւ քանի ամիսները անցան ա'յնքան աւելցաւ հեռացողներու թիւը: Ականատեսի վկայութեամբ՝ Կարօ Գէորգեան կը գրէ.

«Ով որ գտնուեցաւ այդ օրերուն Պոլսոյ մէջ պէտք է միմչեւ այսօր ալ յիշէ այդ դառն ու դաժան օրերը, Բեմալական բանակներու յաջողութիւններով, Իզմիրի անկումով, Պոլսոյ անխուսափելի գրաւման վտանգով եւ ստեղծուած ահաւոր, անկարագրելի խուճապով... ծայր տուած էր տեղաշարժ մը, որ օրէ օր կ'ընդարձակուէր եւ կ'ընդգրկէր ժողովուրդին բոլոր խաւերը:

«Համարեմք չուներ Հայաստանի Հանրապետութեան Պոլսոյ հիւպատոսարանին առջեւը պոչ կապած հայոց բազմութիւնը: Ժամերով եւ օրերով կը սպասէին, որ անցագիրներ ստանան արտասահման երթա-

լու համար: Հանրապետութեան դիւանագիտական մերկայացուցիչ Ֆերտիման Թահթաֆեանը, այլ մանաւանդ հիւպատոսի պաշտօն վարող Մատթէոս Էպլիղաթեանը ամիսներով չարչարուեցան, դիւրացնելու համար հազարաւոր դիմողներու ճամբորդութիւնը եւ Հայաստանի քաղաքացի չեղող այդ բազմութեանց տալու հանրապետութեան անցագիրը, որ մանչցուած էր բոլոր օտար պետութեանց կողմէ»: (Ամէնուն Տարեգիրքը, Կարօ Գէորգեան, 1964, Պէլրու-Լիբանան, էջ 239: Տեսնել մաեւ՝ Ամէնուն Տարեգիրքը, 1961, էջ 601)

Սակայն 1922 Դեկտեմբերին Հայաստանի հանրապետութեան Պոլսոյ հիւպատոսարանը, Անգլիական իշխանութեանց հրահանգով՝ ստիպուեցաւ վերջ տալ իր գործունէութեան:

Անմիջապէս յետոյ, եւ բազմաթիւ ուրիշներու կարգին՝ թրքական ոստիկանութիւնը սկսաւ հետապնդել Մ. Էպլիղաթեանը: Բարեբախտաբար օր-ցորեկով, եւ բանուկ փողոցի մը մէջ ձերբակալութեան փորձ մը ձախողեցաւ, որովհետեւ վտանգը զգալով անիկա արագ ինքզինքը նետեց անցնող հանրակառքի մը մէջ: Վերջապէս, որպէս փախստական ապաստան գտաւ իտալական Բրակա նաւուն վրայ, որ Պուլկարիա կը մեկնէր: Զուգադիպութեամբ մը, միեւնոյն նաւուն վրայ կը գտնուէր նաեւ Զաւէն Պատրիարքը, որ վերջնականապէս Պոլսէն կը հեռանար (10 Դեկտեմբեր 1922):

Մատթէոս Էպլիղաթեան անվտանգ հասաւ Ռուսաստանի Բլոէշտ քաղաքը, ուր քանի մը ամիս առաջ ղրկած էր իր ընտանիքը, մայրը եւ երկու եղբայրները (Միքայէլ եւ Պետրոս):

Ռուսաստանի եղաւ իր գաղթականական կեանքի առաջին կայանը:

Մտադրած էր անմիջապէս Սուրիա մեկնել եւ հաստատուիլ Ալեքսանդրէթի Սամազը, տեղեկացած ըլլալով որ հոն արաբերէնն ու թրքերէնը համահասար կերպով կը գործածուէին պաշտօնատուններուն մէջ: Որով իրեն համար կրնար ստեղծուիլ փաստաբանութեամբ զբաղելու, եւ կամ դատաւոր նշանակուելու կարելիութիւնը:

Պայմանները սակայն ստիպեցին որ 1924-ին Յունաստան փոխադրուի, եւ Աթէնք մնայ վեց տարի, փոխանակ ճամբան շարունակելու մինչեւ Սուրիա (առաւելապէս նիւթական պատճառներով): Տնտեսական անապահովութեան եւ զրկանքի տարիներ, որոնց ընթացքին անիկա ընդունեց ներկայացող ո'րեւէ գործ: Այսպէս, ժամանակ մը աշխատեցաւ գուլպայի գործարանի մը մէջ, յետոյ սալիկ ծախեց, յոյն փաստաբաններու քով փոքր պաշտօններ ստանձնեց (բազմաթիւ իզմիրցիներու պէս յունարէն գիտէր), եւայլն: Տիկին Էպլիղաթեանն ալ իր կարգին ծախեց սիրելի ջութակը, մէկ կողմ դրաւ նկարչական կազմածները, եւ սկսաւ ասեղնագործութեամբ, կարով եւ կարուճեւի դասեր տալով ընտանիքին նիւթական բեռը մասամբ թեթեւցնել: Կ'ապրէին Ֆիքս Տուրղութի հայկական գաղթականայանին մօտ փոքր տան մը մէջ:

Աթէնքի մէջ Մատթէոս էպլիղաթեան մասնակցեցաւ ազգային թէ կուսակցական կեանքին, եւ իր աշխատակցութիւնը բերաւ «Նոր Օր» օրաթերթին: Կանոնաւորապէս կը ստորագրէր «Քաղաքական Եօթնակը» ընդհանուր խորագրով մեկնաբանական յօդուածներ:

Վերջապէս 1932-ին կարողացաւ Հալէպ մեկնիլ, ստանձնելով տեղւոյն Հայկազեան երկսեռ վարժարաններուն տնօրէնութեան պաշտօնը. միեւնոյն ատեն պատմութեան եւ բարոյագիտութեան դասեր կ'աւանդէր վերջին դասարաններուն:

1935-ի աշնան հաստատուեցաւ Անտիոք, եւ ժամանակ մը զբաղեցաւ փաստաբանութեամբ: Յետոյ նշանակուեցաւ Նախադատ Ատեանի, եւ ապա Վերաքննիչ Ատեանի անդամ, պաշտօն մը որ վարեց մինչեւ Սանճաքի թրքական տիրապետութեան տակ անցնիլը: 1939-ի աշնան Քէսապի ճամբով անցաւ Լաթաքիա: Տարի մը անգործ մնալէ ետք, Սուրիական կառավարութեան որոշումով 1940-ին նշանակուեցաւ Լաթաքիոյ Նախադատ Ատեանի անդամ, եւ միաժամանակ ստանձնեց Քէսապի, եւ անոր մօտ՝ Քասթալ Մաաֆ թիւրքմէն շրջանին դատարանի գործերը վարելու պաշտօնը (երկու շաբաթը անգամ մը Քէսապ կամ Քասթալ Մաաֆ կ'երթար):

Վերջին հաշուով վերոյիշեալ բոլոր պաշտօնները երկրորդական են, մա'նաւանդ մէկու մը համար որ երեսուներեք տարեկանին արդէն դատարանի նախագահ էր Վանի մէջ: Յիշատակած ենք զանոնք պարզապէս ամբողջական ըլլալու համար:

Այսուհանդերձ՝ կարելի է դատական իր վերջին պաշտօնը խորհրդանշական նկատել:

Երկրորդ Համաշխարհային Պատերազմի օրերուն ժողովուրդը ապրուստի ծանր մտահոգութիւնը կ'ապրէր: Շուկաներէն հետզհետէ անհետացած էին ցորենը, ալիւրը, հացը, շաքարը, սուրճը, օճառը, քարիւղը, կերպասները... անմատչելի գիներով վերայայտնուելու համար «սեւ շուկայ»ին վրայ: Զարաշահները ժողովուրդը անխնայ կը կողոպտէին, հակառակ պետութեան խիստ միջոցառումներուն: Սուրիոյ բոլոր քաղաքներուն մէջ նշանակուած էին պարենաւորման (իաշէ) դատերուն լիազօր միակ դատաւորներ (որոնցմէ շատերը — իրենց կարգին — պատկառելի հարստութիւն դիզեցին...): Կառավարութիւնը Մատթէոս էպլիղաթեանը նշանակեց Լաթաքիոյ շրջանին պարենաւորման դատաւոր, վստահելով անոր անաչառութեան եւ անշահախնդրութեան վրայ*: Պաշտօն մը՝ որ անիկա վարեց մեծ ձեռնհասութեամբ մինչեւ 1947, երբ հանգստեան կոչուեցաւ, արժանանալով տեղացիներու միահամուռ յարգանքին:

*) Սուրիացի պետական կարեւոր անձնատրոյթիւններէն ոմանք Մատթէոս էպլիղաթեանի հետ ծանօթացած էին Պոլսոյ մէջ, երբ Սուրիան մաս կը կազմէր Օսմանեան պետութեան: (Նմբ.)

Մատթէոս էպլիղաթեան իր կեանքին վերջին տարիները անցուց Լաթաքիոյ մէջ, սակայն գարնան առաջին ծիծեռնակին հետ կը բարձրանար Քէսապ, իր սեփական բնակարանը, եւ հոն կը մնար մօտ եօթամիս: Անսահման սէր ունէր այդ հայկական գիւղին հանդէպ, որ կը յիշեցնէր իր ծննդավայր Գըրգաղաճը:

Մահացաւ 30 Սեպտեմբեր 1960-ին (79 տարեկանին): Իր աճիւնները ամփոփուած են Լաթաքիոյ հայ ազգային գերեզմանատան մէջ:

ՄԵԼԳՈՆ ԵՎ ԳՐԻԳՈՐ ԷՊԼԻՂԱԹԵԱՆ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

ԸՆԿԵՐ ՄԱՏԹԷՈՍ ԷՊԼԻՂԱԹԵԱՆ

Հոկտեմբերի սկիզբը Լաթաքիայէն կարճ հեռագիր մը կը գուժէր մահը ընկեր էպլիղաթեանի, մէկը Հ.Յ. Դաշնակցութեան հին փաղանգի վերջամասցներէն, գրեթէ ութսունամեայ:

Այս անունը մեր միջին սերունդին, մասնաւորաբար նոր սերունդին որեւէ բան չ'ըսեր, որովհետեւ ընկ. էպլիղաթեան երկար տարիներէ իր վեր քաշուած էր ազգային ու կուսակցական գործօն կեանքէ, եւ կը խուսափէր իր մասին խօսելէ ու խօսեցնելէ:

Իր մահուան քառասունքին առիթով պիտի ուզէի, որ մեր հայրենակիցները ընդհանրապէս, իսկ երիտասարդութիւնն ու «Ապրիլեան Սերունդ»ի տղաքը մասնաւորաբար ծանօթանան անոր անձին ու գործին, եւ այս քանի մը տողերը ըլլան յարգանքի համեստ տուրք մը մեր ընկերոջ քաղցր յիշատակին:

Զինք ճանչցայ 1917-ին Պոլիս, Առաջին պատերազմի ընթացքին, երբ կը բնակէինք Մեծ Կղզի: Այդ շրջանին թրքական բանակի հակընդօժովեայ եզերապահ զօրամասի պարենաւորման սպան էր ան, «իաշէ գապիթի Մատթէոս էֆէնտի» անունով:

Մականունը ոչ ոք գիտէր: Կարծես գիտնալու ալ պէտք չկար: Այդ պակասը կը լրացուէր իսկական «էֆէնտի»ութիւնը բնորոշող յատկանիշներով, — պարթեւահասակ, ազնուական արտաքին, խստադէմ, սակաւխօս ու անհաղորդ:

Չեմ կարծեր, որ համազգեստը ասոր մէջ որեւէ դեր ունէր:

Անձնական յարաբերութիւններ չունէինք. արդէն ինքն ալ այդ ուղղութեամբ մեզ բնաւ չէր քաջալերեր:

Իր բարեկամները թուրքեր էին, յատկապէս տեղւոյն ոստիկանապետը՝ Մուրատ պէյ: Յարգուած դէմք մըն էր: Պատճառը, կ'ըսէին, ընկեր էպլիդաթեանի անկաշառ նկարագիրն էր: Այդ շրջանին պարենաւորման թուրք սպաներուն գողութիւնն ու կաշառակերութիւնը սովորական երեւոյթներ էին:

Իշխանաց Կղզիները Պոլսէն շուրջ մէկ ժամ հեռու են եւ կը գտնուին Իզմիրի ծոցին գրեթէ մուտքին եւ կը պաշտպանէին Տերինճէի ծովակայանը, ուր այդ օրերուն ապաստանած էր թրքական նաւատորմի գլխաւոր մէկ մասը, խուսափելու համար Մարմարա սպրդած անգլիական ընդծովեաներու հարուածներէն:

Կիրակի երեկոյ մը, պտոյտի ընթացքին, մօտեցանք Մեծ Կղզին եզերող խրամներուն:

Ընթրիքի պահն է: Զինուորները մեզ ալ կը հրաւիրեն: Անակնկալ էր մեզի համար տեսնել, որ թուրք զինուորները կը ստանան մատուցուած մաքուր կերակուր, վրան ալ պտուղ:

Կը թուի թէ զինուորներն ալ գուշակեցին մեր զարմանքը եւ երբ իմացան, որ հայեր ենք, «ողջ ըլլայ Մատթէոս էֆէնտին, ան ալ ձեզի պէս հայ է», ըսին:

Պաշ չաւուշը իր կարգին ըսաւ. «Շատ աղէկ մարդ է, բայց շատ կարծր է, պէ աղբար»: Եւ երբ պահ մը հեռացաւ, զինուորներէն մէկը քմծիծաղով յարեց. — «Կարծր է, հարկա՛ւ, որովհետեւ ո՛չ կը գողնայ եւ ոչ ալ թոյլ կու տայ որ գողնան խեղճ զինուորին պատառ մը հացը»:

Այս բոլորը կրնային ճիշդ ըլլալ. բայց իր «թրքասիրութիւնը» այդ շրջանին տեսակ մը «ըլաւաճանութիւն» կը նկատէինք եւ այդ պատճառով ալ իր մասին բացասական տրամադրութիւն ունէինք, եւ կը սպասէինք պատերազմի վերջաւորութեան՝ դասը տալու համար:

Տարիուկէս ետք, 1918-ին, Թուրքիա պարտուած էր, զինադադար հռչակուած եւ Պոլիսը գրաւուած էր դաշնակից յաղթական բանակներէն:

Անկախ Հայաստան ունէինք, որ շուտով ծովէ ծով պիտի տարածուէր: Ապրիլեան Եղեռնի կազմակերպիչները կախաղան պիտի բարձրացուէին եւայլն, եւայլն:

Ազգային եւ կուսակցական կեանքը վերստացած էր իր նախապատերազմեան թափը, ամէն մարզի մէջ վերակազմակերպութեան, վերակառուցումի տենդ, վէրքեր դարմանելու եւ ստեղծուած ահաւոր բացերը գոցելու ճիգ: Բնականաբար վերակազմակերպուեցաւ նաեւ Հ. Յ. Դաշնակցութիւնը Պոլսոյ շրջանին մէջ:

Օր մըն ալ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ»ի մէջ կարդացինք, որ մեր շրջանի հին ընկերները եւ պատանեկան միութեանց նախկին անդամները ժողովի կը հրաւիրուին «ծանօթ հաւաքատեղին»: Ժողովին ներկայ պիտի ըլլար նաեւ ընկեր Յ. Ամատունի՝ մեր վերակազմակերպման աշխատանքներով զբաղելու համար:

Որոշեալ ժամուն հաւաքուած ենք «ծանօթ հաւաքատեղին», ներկայ է ընկեր Ամատունի:

Յանկարծ ներս կը մտնէ «Մատթէոս էֆէնտի»ն:

Ի՛նչ «Մատթէոս էֆէնտի» դաշնակցակա՞ն: Անկարելի է:

Եւ ապշանքէն քար կը կտրինք, երբ ընկեր Ամատունի եւ Մատթէոս էֆէնտի ջերմօրէն կ'ողջագուրուին:

Ուրեմն Մատթէոս էֆէնտին ոչ միայն չարքային դաշնակցական էր, այլ նաեւ բան մըն ալ աւելի՝ ըստ երեւոյթին:

Ժողովի ընթացքին կատարուած արձանագրութիւններէն տեղեկացանք որ մականունը էպլիդաթեան է:

Ժողովի վերջաւորութեան, երբ ընկեր էպլիդաթեան մեկնեցաւ, բոլորուեցանք ընկեր Ամատունիի շուրջ, անոր անձին ու անցելին մասին տեղեկութիւններ ունենալու համար: Այդ առթիւ իմացանք, որ ան 1914-ին Վանի եւ շրջակայ երեք նահանգներու մէջ քարեմտրոգումները գործադրելու պաշտօնը ունեցող գնդապետ Հօֆի մօտ հայկական գործերը վարելու պաշտօն ստանձնած էր, եւ մտերիմ գործակիցն ու խորհրդականը եղած Հայկական հանրապետութեան հիմնադիր Արամին: Մահէն հրաշքով փրկուած էր՝ Հօֆի ընկերանալով մինչեւ Հալէպ*, ուր Համաշխարհային Առաջին պատերազմի պայթումով իթթիհատականները ճամբու դրած էին զայն:

Ապա մտած էր բանակ, «Գրքադաճը Մատթէոս էֆէնտի» անունով եւ ապաստանած Պոլիս, իր հետքը կորսնցնել տալու համար:

Նոյն ժողովին ներկայ «մարանկոզ» Գալուստէն եւ «քէօմիւրճի» Արտաշէսն իմացանք նաեւ, որ ընկեր Մ. էպլիդաթեան, ոստիկանապետ Մուրատ պէյի հետ ունեցած առերես մտերմութեան շնորհիւ, արգելք եղած էր Կղզիներու շրջանին մէջ ապրող բազմաթիւ հայ զինուորական փախստականներու ձերբակալման: Եւ երեւակայել, որ այս բոլորի մասին իր կողմէ ո՛չ մէկ խօսք կամ ակնարկութիւն: Ինչ որ ըրած էր կ'իմանայինք արջն ու ձախէն, եւ կամ իր միջոցով փրկուածներէ:

Անվիճելիօրէն մէկ բան յստակ էր, ա՛յն, որ առանց աղմուկի ամենատազնապալի օրերու մէջ կրցած էր ներդաշնակել զինք շրջապատող անձերու տրամադրութիւններն ու դիրքը, «Աստուծունը՝ Աստուծոյ եւ Կեսարինը՝ Կեսարին» տալով ծառայել իր ազգին ու հայրենիքին: Այս գիծը անոր մէջ անաղարտ մնաց մինչեւ իր մահը:

*) Միւնչն Իզմիր: (Խմբ.)

Վստահաբար իր այս արժանիքն էր, որուն տեղեակ էին Չաւէն Պատրիարքը եւ անմիջական գործակիցները, երբ զինադադարէն ետք 1919-ի Յունիսին ստեղծուեցաւ «Խնամատարութեան տնօրէնութիւն»ը, կարգ մը խարխափումներէ ետք բոլորին աչքերը ուղղուեցան ընկեր Մատթէոս Էպիղղաթեանի:

Խնամատարութեան տնօրէնութիւնը ծանր եւ պատասխանատու գործ էր, ուր զիրար կը խաչաձեւէին անձնական, հաւաքական, նիւթական եւ «քաղաքական» հակադիր հաշիւները: Թրքական պարտութեամբ ձեռք ձգուած երթեւեկի ժամանակաւոր ազատութեամբ եւ Պոլսոյ համեմատական ապահովութեան շնորհիւ, մայրաքաղաք թափած էին մերկ ու բոկոտն գաղթականներու բազմութիւններ, նաեւ լեռներէ, ձորերէ, թրքական տուններէ ու որբանոցներէ հաւաքուած բազմահազար որբեր:

Չորս տարուան անպատմելի զրկանքներու ու տառապանքներու մէջ, անոնք գրեթէ կորսնցուցած էին մաքուր բարքերն ու աւանդութիւնները, մասնաւորաբար գաղթականները դարձած էին պահանջկոտ, անկարգապահ, բիրտ եւ անկիրթ: Բոլորը պէտք էր տեղաւորել, կերակրել եւ վերակերտել հայակականութիւնը անոնց մէջ:

Ի պատիւ պոլսահայութեան պէտք է յայտարարել, որ այդ պատմական վայրկեանին՝ պատշաճ բարձրութեան վրայ գտնուեցաւ ան, եւ իր սիրտն ու քսակը լայն բացաւ դժբախտներուն փրկութեան համար:

Սակայն, շատ չանցած, Պոլսոյ ազգային կեանքին մէջ ծայր տուին անհասկացողութիւններ, որոնց մէկ ծայրը կ'երկարէր մինչեւ Փարիզ, Ազգային պատուիրակութիւնը: Ազգային խնամատարութեան գործը պահ մը քայքայումի վտանգին ենթարկուեցաւ: Այս բոլորին վրայ կ'աւելնային դժգոհութիւնները Ամերիկեան նպաստամատոյցին, որ մինչ այդ՝ գաղթականներուն եւ որբերուն փրկութեան մէջ նախախնամական դեր կատարած էր:

Արդարեւ, նպաստամատոյցի վարիչները առիթով մը հրաւիրուած էին հայկական մեծ պարահանդէսի մը, Փերա Փալատի մէջ, ուր տեսած էին, թէ իրենց օժանդակութեանը դիմող ազգի մը տիկիները կը լողային աղամանղներու եւ մեծածախս «թուալէթ»ներու մէջ:

Կը գանգատէին նաեւ մեր ազգային պատասխանատու կարգ մը վարիչներէն, նպաստամատոյցի առընչութեամբ անոնց ցոյց տուած ինքնագլուխ գործունէութենէն ու կամակորութենէն. ի միջի այլոց, նաեւ Տրապիզոնի առաջնորդ Գարեգին Մ. Վրդ. Խաչատուրեանէն (Պոլսոյ այժմու պատրիարքը), ինչպէս կը վկայէր ատենին ընկեր Էպիղղաթեան:

Ամերիկացիները սպառնացած էին իրենց օժանդակութիւնը դադրեցնել՝ ի տես այս տգեղ երեւոյթներուն:

Ահա այդ ատեն անգամ մը եւս երեւան կու գային Մատթէոս Էպիղղաթեանի «Ղիւանազիտական» շնորհները, եւ իրեն յատուկ պաղարկանութեամբ ու շրջահայեցութեամբ կը յաջողէր հարթել կամ նուազագոյնի իջեցնել ծագած դժուարութիւնները, ներդաշնակել հակամարտ

կողմերը եւ փրկել Խնամատարութեան գործը, անոր շնորհիւ՝ նաեւ բազմահազար գաղթականներ ու որբեր:

Դեռ աւելին. զինադադարը հազիւ կնքուած, պոլսահայութիւնը տազնապեցնող կենսական խնդիրներէն մէկն էր ազատել թուրքերու կողմէ առեւանգուած եւ պահուած բազմահազար հայ որբերն ու որբուհիները:

Բազմաթիւ դիմումներէ ետք, գրաւման բանակի հրամանատարութիւնը հրահանգ տուած էր, որ մասնաւոր յանձնախումբի մը միջոցով թուրք բոլոր տուններէն հաւաքուէին հայ որբերն ու որբուհիները, գործակցութեամբ դաշնակից ոստիկանութեան:

Պայման էր, որ խուզարկուելիք տուններու մասին կատարուած ցուցմունքները ճշգրիտ ըլլային:

Նաեւ այս առթիւ շատ կարեւոր դեր կատարեց ընկեր Մ. Էպիղղաթեան: Մեծ Կղզիի այն փորձաշատ շրջաններէն էր, որուն անտառներուն մէջ ցրուած եւ հետախուզական ամենասուր աչքերէ հեռու՝ փառահեղ վիլլաներու մէջ ապաստանած էին Անատոլուի հայութիւնը ջարդող ու կողոպտող բազմաթիւ թուրքեր, իրենց առեւանգած հարիւրաւոր հայ որբերով ու որբուհիներով:

1918 Դեկտեմբերի սկիզբները, Մեծ Կղզիի մէջ ալ յանկարծ խուզարկութիւնները սկսան:

Դաշնակից ոստիկանութիւնը ձեռքով դրածի պէս կը գտնէր ու մէկիկ մէկիկ կը մտնէր այն տունները, ուր հայ որբ-որբուհիներ կային, լիովին տեղեակ իւրաքանչիւր տան մէջ պահուած որբերու թիւին: Կային տուններ, ուր երեք, չորս կամ հինգ հայ աղջիկներ ու տղաք գտնուեցան:

Թուրքերը չփոթած ու կատղած էին:

Իրենց գաղտնիքներուն տեղեակ էին միայն երեք անձեր, տեղւոյն գայմագամը, էյթամ զալէմ միւտիրը (որբերու գրասենեակի տնօրէն) եւ ոստիկանապետ Մուրատ պէյ:

Չորրորդը ո՞վ էր:

Չորրորդը իրենց «մտերիմ», «սիրելի» «Մատթէոս Էֆէնտին» էր:

Թէ ի՞նչպէս ձեռք ձգած կամ կազմած էր Մեծ Կղզիի մէջ հայ որբ ու որբուհի պահող թուրքերուն անուանացանկը իրենց բնակարաններով, մնաց գաղտնիք մեզմէ շատերուն համար:

Այդ ցանկը փրկեց թէ՛ մեր պատիւը դաշնակից իշխանութեանց մօտ, եւ թէ՛ բազմաթիւ որբերն ու որբուհիները:

Այդ շրջանին, Պոլսոյ մէջ, Հայկական Հանրապետութեան դիւանադատական ներկայացուցիչն էր հայ ազգային կեանքին մէջ նշանաւոր անձանօթ մը՝ Փերտինանտ Թահթաճեան*:

* Մատթէոս Մ. Էպիղղաթեան Ռետեւայ տեղեկութիւնները տուած է Ֆերտինանտ Թահթաճեանի մասին, ձեռագիր նոթով սր: (Խմբ.)

Պոլիս արեւմտահայ քաղաքական եւ մտաւորական կեանքի կեդրոնն էր իր Պատրիարքարանով, Երեսփոխանական ժողովով ու մեծազանգուած հայութեամբ:

Սեւրի դաշնագրի նախօրեակին, զոյգ պատուիրակութեանց համարտութիւններուն հետեանքով, պոլսահայութիւնը պառակտուած էր եւ տարակոյս չունիմ, որ իր դերին գիտակից հայկ. դիւանագիտական ներկայացուցիչ մը կրնար շատ բան ընել ի շահ ընդհանուր գործին, սակայն Թահթաճեան կ'ապրէր հայ կեանքի լուսանցքին վրայ:

Հայաստանի կառավարութիւնը հաւանաբար անդրադառնալով գործուած սխալին, 1920 Յուլիսին իբրեւ հիւպատոս եւ Թահթաճեանի խորհրդական նշանակեց ընկեր Մատթէոս Էպլիղաթեանը, որ որոշ չափով պիտի դարմանէր կացութիւնը:

Ընկեր Էպլիղաթեան նախ կազմակերպեց հիւպատոսարանը եւրոպական չափանիշով, ապա, անաղմուկ, ըստ իր խառնուածքին, ջանաց իրարհասկացողութեան գետին մը ստեղծել երկու ճակատներուն միջեւ, գոնէ ընդհանուր եւ համահայկական հարցերու շուրջ:

Բայց դէպքերը աւելի արագ ընթացան:

1920 Դեկտեմբերին խորտակուեցաւ Հայաստանի անկախ հանրապետութիւնը եւ, ի լրումն չարեաց, 1922 Սեպտեմբերին Մուսթաֆա Բեմալ ջախջախեց եւ ծովը թափեց Փոքր Ասիոյ հեյլէն բանակը, որուն մեծ յոյսեր կապուած էին:

Իզմիրի աղէտը իր անդրադարձումը ունեցաւ Պոլսոյ հայութեան կեանքին վրայ: Ժողովուրդը խուճապի մատնուեցաւ եւ նոր ջարդերու ու տեղահանութեանց սարսափը ապրեցաւ:

Ամէն մարդ կ'ուզէր ժամ առաջ հեռանալ Պոլիսէն: Շողանաւեր, լեփ-լեցուն, փախստականներ կը փոխադրէին: Շատերը չէին գիտեր, թէ ո՞ր կ'երթան եւ ի՞նչ ճակատագիր կը սպասէ իրենց:

Ընկեր Էպլիղաթեան անընդհատ անցագիր կը բաժնէր փախստականներուն:

«Ճերտինանտ Թահթաճեան ծնած է Տրապիզոն 1864 թուականին: Ուսած է Մուրատ Ռաֆայէլեան վարժարան: Ծատ լա գիտեր Ռայերէն եւ ֆրանսերէն լեզուները, ինչպէս նաեւ ռուսերէն, թէւ օտար շեշտով. իսկ թրքերէնը տկար էր»:

«Նախապէս Պաթոմի թուրք հիւպատոսարանը թարգմանի պաշտօն ստանձնած է: Յետոյ անցած է Թիֆլիս, հանրակարգի վարչութեան: Ալեքսանտր Խատիսեանի հետ իր յարաբերութիւնը եւ քարեկամութիւնը այդ ժամանակէն կը սկսին: Լեզուական կարողութեան եւ այդ ծանօթութեան շնորհիւ՝ Ահարոնեան պատուիրակութեան որպէս քարտուղար-թարգման Պոլիս կու գայ, եւ հոն ալ կը մնայ կապ պահելու համար (պատուիրակութեան վերադարձին): Յետոյ, միշտ շնորհիւ Ալեքսանտր Խատիսեանի՝ Հայաստանի հանրապետութեան ներկայացուցիչ կը նշանակուի Պոլսոյ մէջ: Մուսթաֆա Բեմալի վարչութեան հաստատումէն ետք, պապական նոտարակից շնորհիւ (Թահթաճեան ջերմ կաթողիկէ էր) կը յաջողի Պոլսէն հեռանալ, եւ կը հաստատուի Հոտտու կղզին: Տարիներ յետոյ կու գայ Աթէնք, եւ հոն կը մահանայ»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
République Arménienne

ԱՆՑԱԳԻՐ № 5273 PASSEPORT

Բաճում Հարսնումի
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԱՆ
 Մեծ Գ. Կոչյ Պապարտի
 Ինքնու ընթացքով եւ պաշտօնային պատճենով
 քաղաքացիական եւ զինուորական անձնագրերի
 ազատ անցումը կը հրահանուի

Մասն Գ. Կոչյ
 Քաղաք Գ. Կոչյ
 Ծնած է Գ. Կոչյ
 եւ նրան ի հարկին պաշտպանութիւնի եւ պաշտօն
 շնորհիւ

Տարի 1922
 Լուսակ 1922
 Մայ 1922
 Պարտի 1922
 Այլ
 Յատու ճանաչում

Տպուած 21/10/1922
 LE COMITÉ DE LA SECTION CONSULAIRE
 Գ. Զեկոյան

DROIT PERCU PERS
 Signature du porteur

En nom du Gouvernement de la
 République Arménienne,
 Nous, Résident-Diplomatique à Constantinople
 prions les Autorités Civiles et Militaires
 des Suissees Amies et Alliées de laisser
 passer librement M. Kevork
 né à Const/le Գարսեան
 demeurant Const/le
 se rendant en Bulgarie
 et de lui prêter aide et protection en cas
 de besoin.

Age 30
 Taille moyenne
 Cheveux noirs
 Yeux noirs
 Yeux noirs
 Signes particuliers
 Délivré à Const/le le 21/10/1922

Le Représentant Diplomatique
 F. Tadatos

Գէորգ Կառավարենցի հայկական անցագիրը (արտատրպւած Կարօ Գէորգեանի «Ամէնուն տարեգիրք»էն 1964, էջ 240, Պէյրութ, Լիբանան): Առիթը ունեցած ենք նման քաղաքաի անցագրեր տեսնելու: (Խմբ.)

Ես ալ այդ խուճապահարներուն մէջ էի: 1923 Յունուարին, առաւօտ մը ներկայացայ իրեն անցագիր մը ուզելու համար*:

— «Դուն ա՞լ», — ըսաւ յուզումով:

Անցագիրս յանձնած պահուն աւելցուց.

— «Կը կարծէի, որ այս անցագրերը պիտի բաժնէի միայն Հայաստան մեկնողներուն»:

Եւ աչքերը խոնաւցան:

Վստահ եմ, որ ընկեր Մատթէոս էպլիղաթեան մեռաւ այդ ցաւը սրտին:

ԿԱՅԾ ԿՈԿԱՆԵԱՆ

Արտագրուած «Արեւելք» օրաթերթէն (Հալէպ, Սուրիա, Ժն տարի, թիւ 130-131, 1960: «Արեւելք»ն ալ յօդուածը արտագրած է «Յուսարեք» օրաթերթէն, Գահիրէ, Եգիպտոս):



*) Մատթէոս Էպլիղաթեան կը հաստատէ որ Հայաստանի հանրապետութեան Պոլսոյ հիւպատոսարանը 1922 Դեկտեմբերին փակուած էր անգլիական իշխանութեանց հրահանգով:

Սակայն Կայծ Կոկանեան կը գրէ որ հայկական անցագիր մը ստացած է Մ. Էպլիղաթեանէ 1923 Յունուարին (որ այդ թուականին Պոլսէն հեռացած էր):

Այս հակասութիւնը քացատրելու համար տուեալ չունիմք: (Խմբ.)

Ա. ՄԱՍ

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊԻ ԿԵԱՆՔԷՆ

(Յուշեր եւ Տպաւորութիւններ)

«Պատրանքներ եւ յոյսեր ունեցողներն իսկ ընդոստ արթնցան երբ Թանին թերթին մէջ Հիւսէին ճահիտ զարգացուց «Միլլէթի հաքիմէ»ի (տիրապետող ժողովուրդ) տեսութիւնը, որուն հիման վրայ Օսմանեան պետութեան բաղկացուցիչ ազգերը ենթակայ պիտի ըլլային ՏԻՐԱՊԵՏՈՂ թուրք ազգին»:



Մատթեոս Մ. Էպիֆանյան Եանիայի իր պաշտօնավարության ընթացքին, պաշտօնակիցներուն հետ:

Համալսարանի իրաւաբանութեան բաժնի դասընթացքին կ'ուզէի հետեւիլ: Ստիպուած էի ուրեմն Պոլիս երթալ, որովհետեւ այն ատեն Գոնեայի մասնաճիւղը դեռ չէր բացուած:

Թրքահայութիւնը իր ամենէն մութ օրերը կ'ապրէր, եւ Համիտի կառավարութիւնը արգելած էր հայերուն, առանց անցազրի մէկ գաւառէ միւսը երթեւեկել: Իսկ Պոլիս անցնելը գրեթէ անկարելի էր: Երկու անգամ փորձած էի, այն ալ կանոնաւոր անցազրով՝ տրուած Իզմիրի կուսակալ ամենազօր Բեամիլ փաշային կողմէ, բայց երկու անգամին ալ ետ էի վերադարձուած: Երրորդը սակայն յաջողեցաւ... (1903):

Պոլիս մտնելէ վերջն ալ, հոն մնալը չափազանց դժուար դարձած էր, մանաւանդ Համիտի ծննդեան եւ գահակալութեան տարեդածերուն, երբ Կարմիր Սուլթանի խաֆիէները* բոլոր պանդոկներուն եւ վարձու սենեակ տրամադրող տուններուն մէջ հայ պանդոկատներ կը փնտռէին, եւ գտածնին անմիջապէս իրենց ծննդավայրը կը ղրկէին:

Իրաւաբանութեան ուսանող մը, բնականաբար՝ պիտի հետաքրքրուէր հայ դատաւորներու եւ փաստաբաններու կեանքով: Ինչ խօսք որ այս վերջին դասակարգին ամենէն փայլուն ներկայացուցիչներէն մէկն էր Գ. Զօհրապ: Եւ որովհետեւ Համալսարանի դասընթացքը օրական երկու, եւ քիչ անգամ երեք պահ էր, բոլոր կէսօրէ վերջերը ազատ ժամանակ ունէի, կրնայի տարբեր աշխատանքով մը ապրուստի բեռս թեթեւցնել եւ միաժամանակ գործնականապէս օգտուիլ՝ փաստաբանի մը գրասենեակը յաճախելով: Բնական էր որ առաջին հերթին բախտս փորձէի Զօհրապին քով:

Բարձրաստիճան դատաւոր մը, որ խնամակալս էր եւ ընտանեկան հին բարեկամ մը, իմ խնդրանքովս յանձնարարական քարտ մը տուաւ: Երբ ներկայացայ Զօհրապի գրասենեակը, կէս-քարտուղարի եւ կէս-գործակատարի դերը կատարող երկու երիտասարդներ՝ Արշակ եւ Արմենակ անունով, նախասենեակին մէջ արդէն կը զբաղէին իրենց գործերով:

* Գաղտնի ոստիկան: (Խմբ.)

Նախասենեակը բաւական սպասեցի, մինչեւ որ Զօհրապ մինակ մնաց: Մտայ քովը եւ քարտս ներկայացուցի:

Այն ատեն Զօհրապ 40-50 տարեկան, կլոր դէմքով, միջահասակ, սուր եւ թափանցող աչքերով, գեղեցկադէմ հասուն մարդ մըն էր: Ներդաշնակ ամբողջութեան մէջ ձայնը միայն բացառութիւն կը կազմէր՝ կէս մը ճաթած, ոչ-համակրելի:

Առաւ քարտս, ուշադրութեամբ կարդաց, քանի մը հարցումներ րրաւ եւ յետոյ — «բարեւ ըրէք էֆէնտիին, ես զինքը յետոյ կը տեսնեմ», ըսաւ:

Իսկապէս հետեւեալ օրը բացատրած էր խնամակալիս, թէ ես ուսանող մը ըլլալով գրասենեակի աշխատանքի ժամանակ ստիպուած պիտի ըլլայի դասերուս հետեւիլ, եւ բնականաբար իրեն պիտի չկրնայի օգտակար ըլլալ: Իսկ ստիպել ուսանող մը որ դպրոցի դասերը լքէ, ինչ-պէս շատերը կ'ընէին ապրուստի մտահոգութեամբ՝ իր խղճին դէմ արարք կը նկատէր:

Բնականաբար, շատ տխրեցայ, եւ այդ տխրութիւնս օրէ օր աւելցաւ, երբ Պոլսոյ կեանքին քիչ առ քիչ վարժուելով՝ ազատ ժամերուս սկսայ գրականութեամբ զբաղիլ... եւ գրել, ինչ որ Զօհրապի վրայ ունեցած համարումս պաշտամունքի վերածեց:

Զօհրապ այն ատեն իր ասպարէզին ամենէն փայլուն շրջանը կը բոլորէր: Ա' գրականութեամբ զբաղուելու ժամանակ չունէր: Շատոնց դադրած էր, Հ. Ասատուրը իրեն գործակից ունենալով, «Մասիս»ը հրատարակելէ. իսկ ես, որ Հ. Մուսուֆեանի «Արեւելք»ին եւ Տիգրան Արփիարեանի «Մասիս»ին սկսած էի աշխատակցիլ, սկսած էի աւելի գնահատել զայն. իմ աչքիս անոր պատկերը օրէ օր կը մեծնար նախ՝ իբր գրագէտ, եւ քանի ամիսները եւ տարիները կ'անցնէին, նաեւ՝ իբր փաստաբան-իրաւագէտ: Ան ինծի համար փարոս մըն էր: Հասած էր ընկերային եւ ասպարէզի այնպիսի աստիճանի մը, որուն հասնիլը մեծագոյն փափաքս դարձաւ, եւ շատ բնականաբար հետաքրքրութիւնս իրմով անսահման էր:

Ամէն առիթով, որու հետ որ շփման մէջ գտնուէի, ըլլար դատաւոր, փաստաբան կամ գրագէտ, խօսակցութեան այնպիսի ընթացք կու տայի, որ նիւթը վերջապէս Զօհրապը եւ իր կեանքը ըլլար (անհատական եւ ընկերային): Ամենէն շատ ինծի տեղեկութիւն հայթայթողը խնամակալս էր, այն ժամանակ Բերայի ընդհանուր դատախազ: Յետոյ Հ. Ասատուրը, զոր միշտ առիթ կ'ունենայի փաստաբան Մ. Ասասեանի գրասենեակը տեսնելու: Քանի մը խմբագիրներ, Պատրիարքարանի հետ կապ ունեցող անհատներ, դատարաններու նըրբանցքներու խօսակցութիւններ, եւայլն, գոհացում կու տային իմ հարցասիրութեանս եւ կը լրացնէին քաղած ծանօթութիւններս:

*) Նորայր Պարեւ, կամ Պարեւ գրական անունով: (Խմբ.)

Սկսաւ 1908-ի Սահմանադրութեան շրջանը: Տարբեր կեանք, տարբեր մթնոլորտ, տարբեր առաջադրութիւններ: Այլեւս Համիտեան շրջանի ստորերկրեայ կեանքը վերջ գտաւ: Ամէնուս կեանքը բաց օդին մէջ պարզուեցաւ: Աշխատանքները եւ գաղափարները բիւրեղացան: Այնպէս որ, մութին մէջ դարանակալ մեր յաւիտենական թշնամին մինչեւ մեր ուղն ու ծուծը կրցաւ թափանցել: Տարիներ անցան: Զօհրապը նահատակուեցաւ...:

Օր մը, երբ 1919-20-ի ընթացքին Ազգային Խնամատարութեան ընդհանուր տնօրէն էի, Մեծ Կղզիէն Պոլիս գացող շոգենաւին մէջ բանասէր Ա. Ալպօյաճեանի Զօհրապի մասին գրած մէկ գեղեցիկ հատորը թղթատելու առիթը ունեցայ: Որքան կը յիշեմ, լաւ պատրաստուած գիրք մըն էր: Այդ գիրքն ալ, ինչպէս ամբողջ գրադարանս, Պոլիս մնաց: Ուրիշներ ալ պարբերաբար իր մասին անձնական յիշողութիւններ հրատարակեցին: Այս ամէնը անշուշտ ատաղձը պիտի կազմեն ապագայ ընդարձակ ուսումնասիրութեանց, թէ՛ Զօհրապի եւ թէ՛ իրեն բախտակից մեծ նահատակներուն համար: Ես կը հաւատամ, որ մեր մէջ պիտի գտնուին գրողներ, որոնք պիտի զբաղին անոնց կեանքով, եւ ամէն մէկը իր ուսումնասիրութեան արգասիքը հրատարակ պիտի նետէ՝ իբր մեծագոյն կոթողը մեր դեռ քարով ու կիրով գոյութիւն չունեցող Պանթէոնին մէջ:

Ահա այդ կարգի ուսումնասիրողներու գործին, անշուշտ շատ պզտիկ չափով օգտակար ըլլալու առաջադրութեամբ՝ կը գրեմ այս տողերը:

Ես նկատի չունիմ միմիայն գրագէտ Զօհրապը, ո'չ ալ պիտի բաւականանամ միայն փաստաբանով կամ քաղաքական գործիչով: Պիտի գրեմ միայն ինչ որ գիտեմ եւ տեսած եմ, կամ ինչ որ ինծի պատմուած է, եւ առիթը ունեցած եմ հաստատելու:



1.- ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ, ԵՐԿՐԱԶԱՓ

Գրիգոր Զօհրապ (որ այսօր եթէ ողջ մնար, 90 տարեկան պիտի ըլլար)*, շատ երջանիկ պատանեկութիւն մը չէ ունեցած: Հայրը կանուխ մեռած ըլլալով՝ մայրը վերամուսնացած է միջակ կարողութեան տէր անձի մը հետ, որ փաստաբանութեամբ կը զբաղէր: Ազգային վարժարանէ մը յետոյ, Գ. Զօհրապ հետեւած է Կալաթա Սէրայի Թրքօ-Փրանսական լիսէին:

Այդ վարժարանը, Սուլթան Ապտիւ Ազիզի օրով եւ նափուէոն Գ.ի թելադրութեամբ հաստատուած էր, եւ մա՛նաւանդ սկզբնական շրջանին, շատ փայլուն շրջան մը բոլորած: Ուսուցիչներուն մեծ մասը Փրանսական կառավարութեան կողմէ նշանակուած ծանօթ փրոֆեսորներ եղած են, եւ թուրք քաղաքական մարդոց բնածին յատկութիւնները հոն գտած են իրենց մտքի մեծագոյն սնունդը:

Կալաթա Սէրայի լիսէին, սկզբնական շրջանին, ունեցած է նաեւ իրաւաբանական եւ երկրաչափական դասընթացքներ, եւ շատ մը հայ պատանիներ լիովին օգտուած են այդ բացառիկ առաւելութիւններէն:

Գ. Զօհրապ երկրաչափական ճիւղին հետեւած է:

Կալաթա Սէրայի լիսէին դիմաց հրուշակ (հելվա) ծախող թուրքի մը խանութը կար (որ վերջը Օհնիկեաններու ծխավաճառատունը դարձաւ): Պատանի Գրիգորը, որ իրենց տունէն (կարծեմ, Օրթագիւղ) ամէն առտու քալելով կու գար վճարար: Կէսօրները իրեն տրամադրուած յիսուն փարանոց (գարապէշիկ) թղթադրամով (գայմէ) հաց եւ հելվա կը գնէր: Բարի խանութպանը, հակառակ անոր որ գայմէիմ գինը հետզհետէ կը բարձրանար, Զօհրապի հացին եւ հելվային քանակը չէր քիչցնէր, ա՛յնքան կը համակրէր խեղճ երեւոյթով բայց ուշիմ այդ տղուն:

Այդ համակրանքը դպրոցական ընկերներն ալ լիովին շոյալած էին: Դասարանին տարիքով ամենէն պզտիկ աշակերտը, բայց միշտ առաջինը եղած էր: Բոլորն ալ գինքը շատ սիրած էին: Տարիներ վերջը, երբ Զօհրապ նշանաւոր փաստաբան մը դարձաւ, այս կամ այն մեծ երկրաչափը դեռ հիացումով կը պատմէր իր նախկին դասընկերոջ երկրաչափական բարդ հաշիւներուն բերած արագ եւ ճշգրիտ լուծումներուն մասին:

* Այս տողերը գրուած են 1951-ին: (Խմբ.)

Տարիներ այսպէս հելվա-հացով օրը իրիկուն ընող, եւ ամէն օր ցուրտին եւ տաքին, մանաւանդ անձրեւին եւ ձիւնին մէջ ժամերով քալելու ստիպուած Գրիգորը, կարելի է երեւակայել թէ որքա՛ն անհամբերութեամբ կը սպասէր որ օր առաջ ընթացաւարտ ըլլար, եւ աւելի հանգստաւէտ կեանքի մը տիրանար: Կու գայ այդ օրը, երբ աւարտական քննութիւններու արդիւնքով Զօհրապ իր դասարանին առաջինը կը հանդիսանայ:

Ըստ ընկալեալ սովորութեան, այդ տարի երկրաչափի վկայական ստացողներու ցանկը, քննութեան արդիւնքի կարգով, հանրօգուտ շինութեանց նախարարութեան կը ղրկուի, որպէսզի ամէն մէկը յարմար պաշտօնի մը կոչուի: Երկիրը, ինչ խօսք որ եւրոպական իմաստով դեռ նոր կը կազմակերպուէր: Կանոնաւոր ճամբաներ եւ կամուրջներ շատ քիչ կային, մինչ կուսակալութեանց կեդրոններն անգամ երկրաչափներ չկային, եւ կամ այդ անունը արդարացնող պաշտօնեաներ գոյութիւն չունէին:

Նախարարութիւնը երկրաչափ Գրիգոր էֆէնտիին աւարտական քննութեանը համապատասխան կարեւոր պաշտօն մը կու տայ: Ան Տրապիզոնի կուսակալութեան գլխաւոր երկրաչափը կ'անուանուի հազար ութ հարիւր զրուշ ամսականով, ինչ որ հանգստեան թոշակի եւ այլ ծախսերէն վերջ, իրեն 16 օսմանեան հնչուն ոսկի կը բերէր:

Զօհրապ չէր գիտեր, կամ անորոշ գաղափար մը միայն ունէր ամսականներու վճարման մասին, որովհետեւ, մա՛նաւանդ գաւառը, պաշտօնեանները տարին հազիւ թէ 4-5 ամսական կը ստանային՝ Պոսոյ 6-7-ին դէմ: Նոյնպէս գաւառը աւելի դժուար էին պակասը լրացնելու կարելիութիւնները: Ամէն պարագային, չափազանց ուրախ էր, քանի յիսուն փարանոց հացի եւ հելվայի պատմութիւնը վերջ պիտի գտնէր:

Տարիներու զրկանքի արդիւնք, թէ նկարագրի հարց, դեռ պատանի տարիքին իսկ վայելելու, ծախսելու բուռն փափաք մը կար իր մէջ:

Բոլոր ընթացաւարտ ընկերներուն պէս, ինքն ալ որոշեալ օրը կը ներկայանայ նախարարի խորհրդականին, որպէսզի անուանումի հրամանագիրը ստանայ եւ մեկնի իր նոր պաշտօնատեղին: Սենեկապանը գինքը կ'առաջնորդէ շատ լաւ կահաւորուած սրահ մը, որուն մէկ անկիւնը, խոշոր գրասեղանի մը ետեւը կարծես թաղուած, կարճուկ մարդ մը նստած էր: Երբ կը հասկնայ թէ այդ պատանին ի՞նչ կ'ուզէ, կ'ըսէ.

— «Լաւ, տղա՛ս, ինչո՞ւ հայրդ չեկաւ»:

— «Հայրս մեռած է»:

— «Ուրեմն, Գրիգորը ո՞վ է»:

— «Ես եմ»:

— «Ինչպէ՞ս թէ դուն: Տրապիզոնի կուսակալութեան առաջին երկրաչափ անուանուողը դո՞ւն ես»:

— «Այո՛, Վսեմապատիւ Տէր»:

Նախարարի խորհրդականը զանգակը կը զարնէ եւ կը հրամայէ պատանի երկրաչափին անուանման թղթածրարը բերել:

Գրիգորը, միշտ ոտքի վրայ, անձկանօք կը սպասէ:

Տասը վայրկեան կը տեւէ թղթածրարին քննութիւնը: Խորհրդականը անոր կողքին հինգ-տասը տողեր կ'աւելցնէ, եւ Զօհրապին կը յանձնարարէ մէկ շաբաթ վերջ նորէն իրեն հանդիպիլ: Այս վերջինը կը հասկնայ որ բաներ մը կ'անցնին կը դառնան: Կ'ենթադրէ որ կարգ մը դժուարութիւններ ծագած են: Թէեւ այն ժամանակ Պոլսոյ մէջ հայերու հանդէպ մասնաւոր ատելութիւն մը չկար տակաւին, բայց չէ՞ որ քրիստոնեայ էր: Կեանքը դեռ իրեն չէր ժպտած: Միշտ նեղութիւններ եւ դառնութիւններ էր տեսած, եւ այս ուշացումը իրեն ի նպաստ մեկնելու ո'չ մէկ հիմ ունէր, մանաւանդ որ իրեն հետ ընթացաւարտ եւ ուրիշ պաշտօններու անուանուող ընկերները արդէն իրենց հրամանագիրները ստացած էին, եւ մեկնելու կը պատրաստուէին:

Զօհրապ այնչափ անփորձ էր տակաւին, որ նոյնիսկ չէր հարցուցած թէ ո՞վ էր կարծուկ այն մարդը որ իր յոյսերը առկախած էր: Այսպէս, սիրտը բաբախուն եւ դողալից, երբ յաջորդ շաբաթ կը ներկայանայ նախարարի խորհրդականին, մարդը այս անգամ հայերէն լեզուով կ'ըսէ.

— «Բախտ ունիս եղբր, տղա՛ս, կառավարութիւնը, նկատի առնելով բացառիկ ընդունակութիւնդ եւ տարիքդ, քեզ այս նախարարութեան մէջ գրասենեակի մը փոխ-տնօրէն անուանեց 900 դրշ. ամսականով»:

Եւ իսկապէս ասիկա մեծ շնորհ մըն էր: Թէեւ ամսականը նախորդին կէսն էր, բայց տարւոյն վերջը ձեռք անցնելիք դրամը նկատի առնելով՝ տարբերութիւնը մեծ չէր: Եւ որքա՛ն աւելի հաճելի էր Պոլսեցիի մը համար մնալ մայրաքաղաքին մէջ, ուր ամէն հանգստութեան եւ մանաւանդ յառաջդիմութեան կարելիութիւններ կային:

Զօհրապ, շքեղ, առանց պատասխան մը տալու, դուրս կ'ելլէ: Հիմա որ հասկցած էր թէ խորհրդականը հանրածանօթ Գրիգոր Օտեանն էր, բարեկամի մը միջնորդութեան կը դիմէ: Օտեան կը զարմանայ, որ այդչափ մեծ շնորհ մը կ'արհամարհուի, որովհետեւ ինք գիտէ որ ոչ թէ 1800, այլ 3000 դրշ. ամսական ստացող գաւառի ո'եւէ պաշտօնեայ սիրով պիտի փոխանակէր իր պաշտօնը Զօհրապին հետ: Յետոյ, միջնորդող բարեկամին կը բացատրէ նաեւ թէ Զօհրապին նման թիւյ-թիւմեր (աղուամագ) իսկ հազիւ ունեցող պատանի մը, որ գործի բերմամբ կուսակալութեան ամէն մէկ անկիւնը պիտի այցելէ, չի կրնար պէտք եղած հեղինակութիւնը ունենալ իր ստորադասներուն վրայ, եւ ժողովուրդին կողմէ արժանի յարգանքով ընդունուիլ: «Յետոյ, լագերու մէջ այդ տղան ինչպէ՞ս կրնամ դրկել», կ'աւելցնէ:

2.- ՎԿԱՅԱԿԱՆ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԵԾ ՓԱՍՏԱԲԱՆԸ

Երբ Զօհրապ վերջնական կերպով կը հասկնայ թէ Տրապիզոն երթալու հարցը ջուրը ինկած է, կատաղութենէն աչքերը արիւնով կը լեցուին: Ո՛չ ոք կը հասկնայ թէ ինք տարբեր խմորով մէկն է: Գրասենեակի մը մէջ պարփակուիլ, սիկար ծխելով եւ խառու խմելով օրը իրիկուն ընելիք տղայ չէ: Հետեւեալ օրն իսկ երկտողով մը կը հրաժարի իրեն առաջարկուած պաշտօնէն, եւ կը մերժէ պետական պաշտօնեայ ըլլալ: Վերստին կ'երթայ մեծ ակնկալութիւններով թողուցած վարժարանը, եւ այս անգամ իրաւաբանութեան ճիւղին կ'արձանագրուի. եւ այսպէս, յաւելեալ չորս տարիներ հէլվա-հացի ուժովին կ'ենթարկուի...:

Հոն ալ սակայն անակնկալի մը առջեւ կը գտնուի: Կալաթա Սէրայի երկրաչափական եւ իրաւաբանական ճիւղերը կը ջնջուին, եւ Պոլսոյ կողմը կը բացուի իրաւաբանութեան դպրոցը (դեռ այն ժամանակ համալսարան բառը եւ հաստատութիւնը գոյութիւն չունէին. բժշկական դպրոց, իրաւաբանութեան դպրոց կ'անուանէին այդ վարժարանները, որոնք սակայն Faculté-ի մը ձեւով կը գործէին): Կառավարութիւնը այդ վարժարանի տնօրէնութեան կը կոչէ ծագումով Հունգարացի եւ նկարագրով խիստ անձ մը՝ Մաթար Էմիլ Էֆէնտիմ:

Տարիները շատ դժուար, բայց կ'անցնին: Զօհրապ անհամբեր կը սպասէ այն օրուան երբ շրջանաւարտ պիտի ըլլար եւ սկսէր փաստաբանական ասպարէզին, որուն կոչումը կը զգար իր մէջ: Բայց իր բուռն փափաքը նոր արգելքներու կը հանդիպի. նախ նորահաստատ դպրոցին իրաւաբանական շրջանը երեքէն չորս տարիի կը վերածուի. յետոյ Զօհրապ վէճ մը կ'ունենայ դպրոցի տնօրէնին հետ եւ կը ստիպուի վարժարանէն հեռանալ, առանց ԱԻԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՑԸՆԵԼՈՒ:

Այդ ատեն է որ լուսամիտ նախարար մը, Հասան Ֆեհմի փաշա, կը նախաձեռնէ առաջացնել եւրոպական ձեւով դատական կազմակերպութիւն մը: Բարենորոգումը կը սկսի էստրենի կուսակալութենէն, որուն ընդհանուր դատախազ կ'անուանէ իր մէկ բարեկամը՝ Թորոս Սարաճեան:

Փաստաբաններու վիճակն ալ կ'ուզէ բարեփոխել: Առանց վկայականի, դատարաններու մէջ սլքտալով փաստաբանութիւն ընող անձերը կը հրաւիրուին քննութիւն մը անցնել: Այդ քննութիւնը Պոլսոյ մէջ իրաւաբանական վարժարանին մէջ կը կատարուի, իսկ կուսակա-

լուծեանց մէջ՝ Կեդրոնի դատարանի նախագահէն եւ քանի մը անդամներէ կազմուած յանձնախումբի մը կողմէ: Կուսակալութեանց մէջ քննութիւն անցընող եւ յաջողող անձերը միայն այդ կուսակալութեան մէջ իրենց ասպարէզը կրնային գործադրել:

Զօհրապ շունչը էտիրնէ կ'առնէ, եւ շատ փայլուն կերպով անցընելով քննութիւնը, իր արտօնագիրը կը ստանայ: Կը վերադառնայ Պոլիս, եւ բացառիկ կարգադրութեամբ կը ստանայ նաեւ իրաւունք՝ Պոլսոյ մէջ փաստաբանութիւն ընելու:

Այսպէս, երկրաչափական վարժարանէն առաջինն եղող շրջանաւարտ Զօհրապ կը լքէ այդ ասպարէզը եւ կողմնակի արտօնագրով մը կը դառնայ փաստաբան:

*
**

Գրագէտ-հրապարակագիր Զօհրապի մասին ես ըսելիք մեծ բան չունիմ: Ատոր համար պէտք է մասնագիտական ծանօթութիւն եւ մանաւանդ գրադարանային երկար աշխատանք: Մէկը կը պակսի ինծի, եւ միւսին համար ո'չ մէկ կարելիութիւն ունիմ: Միայն գիտեմ թէ կանուխէն գրել սկսած է, թէ լաւ գրող մը եղած է, եւ թէ իր գրական աշխատանքը մեծապէս նպաստած է հանրային գործունէութեան մէջ իր յաջողութիւններուն, ու փաստաբանական ասպարէզին մէջ փայլուն դիրք մը ապահովելուն: Ունեցած է մաքուր լեզու եւ գեղեցիկ ոճ, ինչ որ կ'ենթադրեմ թէ շնորհն է ազգային նախակրթարանին մէջ իրեն ջամբուած հայերէն լաւ դասընթացքի մը: Յետոյ Հ. Ասատուրի հետ գործակցութիւնը պզտիկ առաւելութիւն մը չէ եղած:

Իր փայլուն իմացականութիւնը, մշակուած միտքը, սուր դիտողութիւններու եւ կուռ դատողութիւններու մեծ ընդունակութիւնը աւելի քան բաւական էին, ոչ միայն հայկական, այլեւ ո'նեւ ազգի կեանքին մէջ իրեն առաջնակարգ տեղ մը յատկացնելու համար:

Ութսունական թուականներուն Զօհրապ արդէն Ֆրանսական երկրորդական լաւագոյն ուսումը ստացած էր Փրանսերէն լեզուով, յետոյ երկրաչափական՝ եւ աւելի վերջ իրաւաբանական դասընթացքները աւարտած: Ուրեմն, իր ժամանակին լաւագոյն պատրաստուած միտքը եղած էր: Աւելցուցէք ասոր վրայ իր քննելու, դատելու, խօսելու եւ գրելու բնածին մեծ յատկութիւնները, եւ ահա՛ ձեր առջեւ կը պատկերանայ այնպիսի մեծ եւ բազմակողմանի շնորհներով օժտուած անձ մը, որուն այս կամ այն յատկութիւնը, քիչ մըն ալ աւելիով գուցէ ունեցողներ գտնուէին, բայց ամբողջութեանը մէջ ո'չ մէկ հայ գտնուած էր իրեն հաւասար:

Եթէ քիչ մը երիտասարդական աւիւնի մղումով, եւ քիչ մըն ալ ճանչցուելու եւ իր ասպարէզին նպաստ մը բերելու փափաքով Զօհրապ

գրիչը ձեռք առած էր, ի՛նչ լաւ պիտի ըլլար, եթէ ամբողջովին գրականութեան նուիրումը բաւարարութիւն տար իրեն: Ինքը սակայն, խոր յուզումներու ենթակայ, վայելելու ծարաւը ունէր, եւ անմիջապէս ընկերային եւ նիւթական բարձր ոլորտներու մէջ կ'ուզէր սաւառնիլ: Եւ դժբախտաբար, մանաւանդ այն ժամանակ, գրականութեան ուղիով ատոր հասնիլը անկարելի երազ մըն էր... «Թուղթի փառք» մը: Հայերէն կարդացողներուն թիւը սահմանափակ էր, եւ միայն գիրով ու գիրքով ապրիլը շատ դժուար:

Փոխանակ դատական մեծ թղթածրարներ քննելու եւ պաշտպանողական հրաշալի գրութիւններ պատրաստելու, եթէ Զօհրապ գրականութեան նուիրուէր, հայ ազգը գրական հարուստ երկերով օժտուած պիտի ըլլար: Այսուհանդերձ՝ այնքանն ալ որ տուած է Զօհրապ հայ գրականութեան, բաւական է զինք մեր լաւագոյն գրագէտներուն շարքին դասելու: Իբրեւ հրապարակագիր տուած է նաեւ կուռ տրամաբանութեամբ արժէքաւոր խմբագրականներ: Կը յիշեմ դեռ «Լուսաւորչի աւելը» վերնագրով իր գրութիւնը, զոր ամէն վեց ամիսը գոնէ, բոլոր թերթերը իրենց առաջին սիւնակին վրայ կը վերարտադրէին:

Յ.- ԶՕՀՐԱՊԻ ԴԺՆԴԱԿ ՎԵՐԵԼՔԸ

Սկզբնական շրջանին փաստաբանական ասպարէզին մէջ Զօհրապ անմիջական յաջողութիւն չէ արձանագրած: Գրականութեամբ զբաղիլը, թերթերու յօդուածներ հասցնելը, եւ նոյնիսկ Հ. Ասատուրի հետ «Մասիս»ը հրատարակելը արգելք էին ատոր: Բայց օր մը, երբ Հ. Ասատուրի հետ Առեւտրական Առաջին դատարանը կ'երթան եւ հոն ունկնդիր կ'ըլլան մեծ դատավարութեան մը, Զօհրապի աչքերը ցատուով կը լեցուին:

Առեւտրական Առաջին դատարանը Պոլսոյ մէջ մեր գիտցած «Խառն դատարանն» էր, որուն նախագահը (Վճռաբեկ Ատեանի նախագահի աստիճանով) եւ երկու անդամները Օսմանեան հպատակներ էին: Ասոնց վրայ երկու անդամ ալ կ'աւելցնէին խնդրոյ առարկայ դատի կողմերուն հպատակութեան համաձայն, անուանուած իրենց պատկան հիւպատոսարաններուն կողմէ: Ֆրանսական իշխանութեանց հին ժամանակներէն ստացած առանձնաշնորհումներու րէժիմի* պահանջն էր այս: Ուրեմն, օտարներու դատին կը մասնակցէին նաեւ համազգի դատաւորներ: Եւ սակայն, երկուքի դէմ երեք ըլլալով, անշուշտ մեծամասնութիւնը Օսմանեան կառավարութեան ներկայացուցիչն-

*) Զարթիլիւսիոն

րուն կողմն էր, որոնք միշտ կ'ընտրուէին Ֆրանսագէտ դատաւորներէ: Թրքացած հայ մը՝ Ալի Շահպազ, Ստեփան Գարաբան, եւ Սահմանադրութեան շրջանին՝ Յովհաննէս Ալեքսանեան հոն նախագահ եւ անդամ եղած էին:

Այդ նոյն օրը մեծահարուստ հայ-կաթողիկէ մը՝ Կեօշէ Օղլու շատ կարեւոր դատ մը ունէր, որուն պաշտպանութիւնը յանձնած էր իրեն պէս Թոգատցի մը՝ փաստաբան Մկրտիչ Ասասեանի: Այս վերջինը, թէեւ մաքուր, պարկեշտ ու փաստաբանի բնածին յատկութիւններով օժտուած, չունէր սակայն ո՛չ Զօհրապի զարգացումը, եւ ոչ ալ տրամաբանելու կարողութիւնը: Ուստի, Զօհրապ դառն կերպով կը գանգատի Հ. Ասատուրին, որ այնքա՛ն կարեւոր եւ մեծ դատեր կը յանձնուէին միջակութիւններու, մինչ իրենք անգործութենէ կը դառնանային:

Այսուհանդերձ, այդ սկզբնական տարիները բոլորովին զուր չեն անցնիր: Մէկ կողմէ՝ Զօհրապի գրական ու հրատարակագրական աշխատանքները, եւ միւս կողմէ՝ իրեն յանձնուած պզտիկ կամ միջակ կարեւորութեամբ դատական լաւագոյն լուծումը, եւ յաջող կերպով տարուած հրատարակագրային աշխատանքները կը սկսին նպաստաւոր արձագանգներ գտնել թէ՛ Պոլիս, եւ թէ՛ մանաւանդ մայրաքաղաքին մօտ քաղաքներուն մէջ:

Իզմիտի ծանօթ «այիմկամի»ներու (ծխախոտի մաքսանենդներ) մէկ դատը, եւ Իզմիրէն ստանձնուած բաւական կարեւոր դատ մը իրեն պզտիկ համբաւ մը կ'ընծայեն:

Նոյնպէս Զօհրապ, որ այլեւս բոլորովին ծակ-գրպան մը չէր, քիչ մըն ալ նկարագրին բերմամբ, կը մտնէ այնպիսի շրջանակներու մէջ ուր կ'ինն ու խաղը մեծ դեր ունէին: Այսպէս՝ ազգայինէն եւ գրականէն դուրս, ան կ'ունենայ ծանօթներու մեծ թիւ մը, որոնք ճարտար փաստաբանին գործերուն կարեւոր նպաստ կը հայթայթեն:

Երբ 1903-ին ես կարողացայ Պոլիս մնալ եւ իրաւաբանական վարժարանը յաճախել, Զօհրապ արդէն մեծ համբաւի տիրացած փաստաբան մըն էր, եւ ոսկիները գրպանին մէջ շիկտեցնելու իր մոլու-թիւնը ամէնուն ծանօթ էր: Ընտանիքի տէր էր արդէն: Կ'ապրէր Լիւբ-սամպուրկի սրճարանին դէմի տունը, եւ Պոլսոյ մէջ (Սանասարեան թէ Գայսէրի խանը) ունէր իր քանի մը սենեակնոց գրասենեակը: Իր անձին եւ գործին շուրջ ստեղծած էր այնպիսի մթնոլորտ մը, որ ինձի պէս, իր ասպարէզին հետեւիլ մտադրած երիտասարդին հետաքրքրութեան գլխաւոր առարկան դարձած էր: Մինակ ես չէի. ամէն ազգի ուսանողներ մեծ յափշտակութեամբ կ'ունենէինք, երբ ան պաշտպանողականներ կ'ընէր, մանաւանդ Առեւտրական Առաջին դատարանին մէջ:

Պոլսոյ մէջ դատավարութիւնները կէսօրուան մօտ կը սկսէին եւ կը տեւէին մինչեւ ժամը 3:30-4: Այդ միջոցին մենք դպրոց չունէինք, եւ ոչ ալ գործ կամ զբաղում. կ'երթայինք դատարանական նրբանցքն-

րուն մէջ դեգերիլ եւ սպասել որ կարեւոր դատ մը սկսէր, եւ մենք ունկընդդէինք:

Այն ժամանակ ոճրային-պատժական դատերը զիս շատ չէին հետաքրքրեր: Անոնց մէջ բացառիկ կարեւորութեամբ պաշտպանողականներու քիչ կը հանդիպէի: Ընդհակառակն, Մովային եւ Առեւտրական Նաոն դատարանի գործերը կրկնապէս հաճելի էին: Առհասարակ Ֆրանսերէնն էր տիրապետող լեզուն: Եւ հոն մեծ փաստաբաններ՝ Պարուցցի (իտալացի), Միցի (անգլիացի), Ռոզենդալ (գերմանացի), եւ ուրիշ իտալացի մը, որուն անունը չեմ յիշեր, Զօհրապ, Ստամպուրեան, Բեաթիպեան, Փափագեան, Երկանեան եւ ուրիշներ կարգով կու գային իրենց իրաւագէտի եւ հետտրի արժանիքները յայտնաբերելու: Ամէն մէկը կէս ժամ, ժամ մը, երբեմն աւելի կը խօսէր, եւ դատը կը յետաձգուէր, որպէսզի յաջորդ անգամ հակառակորդը պատասխանէր:

Այն ատեն ես դեռ չէի կրնար բնորոշել, թէ փաստաբաններուն պարզած կէտերէն որմէ՞ կը հիմնական ու իրաւացի էր, եւ դատարանէն բաժնուած ժամանակ կը կարծէի, որ վերջին խօսողը իրաւունք ունէր: Որքա՛ն մեծ կ'ըլլար սակայն զարմանքս, եւ յաջորդ անգամ կազմած կարծիքս հիմնովին կը փոխուէր, երբ հակառակորդ կողմը մի առ մի փաստերով կու գար ջրելու միւսին պաշտպանողականը:

Այդ օրերուն էր որ նման մեծ պայքարի մը ներկայ եղայ, երբ փաստաբան Ռոզենդալ եւ ուրիշ մը (անունը չեմ յիշեր), կը զբաղէին Համայնի երկաթուղիին համար երկու հարիւր հազար հնչուն ոսկիի դատով մը: Կ'երեւի Ռոզենդալ դատը կորսնցնելու վրայ էր, քանի դիմած էր Զօհրապին, խնդրելով որ իրեն ծրագիր մը ներկայացնէ: Զօհրապ ներկայացուցած էր իր ծրագիրը, ուր մեծ դեր մը ունեցած էր նաեւ իր կարող երկրաչափ մը ըլլալը: Այդ ծրագրին գործադրութիւնը ապահոված էր դատին յաջողութիւնը: Ռոզենդալ, իբր վարձք, ըստ պայմանագրի, կը ստանայ տասը հազար ոսկի, որմէ կ'ուզէ երկու հազարը միայն Զօհրապին տալ: Այս վերջինը կը ստիպուի դիմել դատարան, որ իրեն իրաւունք կու տայ՝ հինգ հազարի գումար մը գանձել:

Երբ Գ.եան տան սնանկութիւնը կը հռչակուի, Զօհրապ կը ստանձնէ անոր փաստաբանութիւնը: Օրէ օր յարաճուն հեղինակութեամբ կը յաջողի տասնեւհինգ օրուայ մէջ առնելիքներուն հետ համաձայնութիւն (գօմգօրտաքօ) կնքել, եւ կը ստանայ երկու հազար ոսկիի խոստացուած վարձքը:

Անմիջապէս զուարճասէր Զօհրապ երկսեռ կարգ մը անձերու հետ կ'երթայ Մեծ Կղզի, ուր մէկ շաբաթ վերջ Բեմանչէ (պզտիկ ջուլֆակ մը) նուագողին նուագի գոգը բանալ կու տայ, եւ իր վերջին բուռ մը ոսկին հոն կը լեցնէ...

Այսպէս, նիւթական փայլուն վիճակը իր մէջ կը զարգացնէ նաեւ դէպի կինը եւ խաղը ունեցած վայելքի հակումները: Կ'ըսէին թէ՛ օրեր

կ'ըլլային, երբ կամուրջն անցած երեկոն գրպանը տալիք տասնոցն անգամ չէր գտնուեր, իսկ հետեւեալ առտու 300-400 ոսկիով կ'անցնէր այդ կամուրջն, յաջող բախտախաղէ մը ետք:

Համիտի շրջանին բախտախաղն ալ արկածալից հանգամանք մը ունէր: Կային պալատական կամ պալատի հետ կապ ունեցողներ, որոնք խաղասրահ կը մտնէին պարզապէս շահիլ-կողոպտելու համար, որովհետեւ վնասի պարագային առանց վճարելու կը մեկնէին: Բնական էր որ խաղացողները յաճախէին այնպիսի տուններ, ուր նման անբաղձալի տարրեր չէին գտնուեր:

Այդ կարգի խաղարաններէն մէկն էր Շիտակ ճամբու վրայ ծանօթ հայ կաթողիկէ ընտանիքի մը տունը, ուր կ'ըսէին թէ Զօհրապ ե'ւ ապահով խաղալու, ե'ւ շահածը հաճելի կերպով հոն ձգելու կարելիութիւնը ունէր:

Եւ սակայն, ո'չ խաղը եւ ո'չ կիներ ոչ մէկ ատեն մոռցնել տուած էին Զօհրապին իր գործի պարտաւորութիւնները: Օր մը Թօքաթլեանի ետեւի սրահը նստած կ'ըլլան քանի մը ծանօթ անձեր: Անոնցմէ մէկը՝ փաստաբան Տիրան Երկանեան, տեսնելով եւրոպացի գեղադէմ կիներ, որ դատի մը մէջ Զօհրապի փոխանորդեալն էր, եւ որ շնորհալի կերպով կը բարեւէր իր փաստաբանը, կը հարցնէ. — «Զեր վարձքը անձո՞վը կը հատուցանէ, թէ դրամովը»:

Զօհրապ անմիջապէս կը պատասխանէ. — «Ամօթ է ինծի համար՝ առանց դրամական հատուցումի կիներ մը ունենալ, եւ նոյնպէս ամօթ՝ առանց դրամական վարձքի դատ մը ստանձնել»:

*
**

Զօհրապի յարաճուն հեղինակութեան մասին խօսեցայ: Այդ հեղինակութիւնը ոչ միայն գործի աշխարհի մէջ զգալի էր, այլեւ դատաւորներու շրջանակին մէջ: Իր փաստաբանական դիրքին մեծ զարգացումը Զօհրապի դիրքութիւններ կ'ընծայէր նաեւ կարգ մը ազդեցիկ դատաւորներու բարեացակամութիւնը ապահովելու, ինչ որ շատ անհաճոյ կը թուէր օրուայ դատական նախարար Կերմէյրաւագատէ Ապտիւրրահման փաշային:

Նախարարը, ինչպէս անունէն կ'երեւի, կը պատկանէր ընտանիքի մը, որ Օսմանի տան պէս կը կազմէր մէկը այն տասներեք իշխանապետութիւններէն, որոնք արեւմտեան Փոքր Ասիոյ կը տիրէին, եւ ժամանակի ընթացքին մի առ մի տեղի տուած էին օսմանցիներու յաղթական յառաջխաղացին առջեւ: Կէրմէյրաններու գլխաւոր քաղաքը Քէօթահիա (Կոստինա) եղած էր:

Ահա այս ընտանիքի պետը, Ապիւրրահման փաշան, նախկին մեծ եպարքոս, Սուլթան Համիտի ամենէն սիրելի աղջկան աներհայրը, թէեւ անուս, բայց շատ խելացի եւ մա'նաւանդ, ինչ որ տարօրինակ էր այդ շրջանին՝ չափազանց պարկեշտ եւ ուղղամիտ անձ մը, կարելին ըրած էր դատական մարմինը կարելի չափով ուղիղ գիծի վրայ պահելու համար: Համիտ զինքը չափազանց կը յարգէր, եւ այս է պատճառը որ ո'եւէ մեծ պալատական կամ իշխանաւոր դատաւորներու եւ դատական գործերու միջամուկն չէր կրնար ըլլալ: Եթէ երբեք, իր նկարագրին բերմամբ, անհաճոյ դատաւոր մը մեծ պաշտօնեայի մը պաշտպանեալը եղած էր նախապէս, զայն ստիպուած պաշտօնի վրայ կը պահէր, բայց յառաջացումէ կը զրկէր, ինչպէս եղած էր Ստեփան Գարաբանին համար (պաշտպանեալը մեծ եպարքոս Սայիտ փաշայի, որուն Փրանսերէնի ուսուցիչը եղած էր):

Այսպիսի բացառիկ եւ սակաւթիւ անձերէ դուրս, ո'չ մէկ դատաւորի չէր ներքեր իր անձնական շահին հետամուտ ըլլալ: Այսուհանդերձ կաշառակերութիւնը տակաւին գոյութիւն ունէր երկու տեսակ դատաւորներու պարագային: Նախ՝ անխելքները, եւ պզտիկ քննութիւն մը կը բաւէր հաստատելու համար վճռին յետին նպատակով տրուած ըլլալը: Այդպիսիները անողորմաբար իրենց պաշտօնէն կ'արձակուէին, եւ նախարարը իրենց վերստին գործ մը յանձնելու համար (եթէ յանձնէր), տարիներ կը սպասցնէր: Կաշառակեր դատաւորներու երկրորդ դասակարգը շատ խելացիներն էին: Իրենց որոշումները կու տային օրինական այնպիսի հիմերու վրայ, որ դատաւորին անպարկեշտութիւնը բացայայտ կերպով խնդրոյ առարկայ չէր կրնար ըլլալ: Ասոնք առհասարակ սրտակից բարեկամը կ'ըլլային խօսքին եւ կարողութեանը վստահուելիք փաստաբանի մը, որ կրնար իրենց ազգականն ալ ըլլալ:

Արդ՝ ժամանակէ մը ի վեր, դատական նախարարը Զօհրապի դատաւորներուն հետ ունեցած սերտ յարաբերութիւնները լաւ աչքով չէր տեսներ: Բայց Զօհրապ իբր փաստաբան այնքա՛ն կարող էր, որ ես մինչեւ այսօր չեմ եկած այն համոզման, որ իրեն բարեկամ դատաւորները ամէնքն ալ անպարկեշտ մարդիկ էին: Անոնք ուղղակի կ'առինքնուէին իր կուռ պաշտպանողականներէն: Զինքը լսելու առիթ չունեցողները, ինչպէս դատական նախարարը, կրնային այդ բանը չգիտնալ, եւ սխալ գաղափար մը կազմել՝ փաստաբան-միջնորդի մը դերը տալով իրեն:

Ըսածս փաստելու համար՝ երկու պարագայ պիտի յիշատակես:

Իրաւաբանական վարժարանի այն աշակերտները, որոնք դպրոցը աւարտելէ ետք, ապագային կ'ուզէին ազատիլ պարտադիր սքաժէն, ինչպէս նաեւ փորձառութիւն ձեռք բերել, դպրոցէն զրկուած ցանկի մը վրայ, իբր քարտուղար դատարանները կը զրկուէին դատական նախարարութեան կողմէ, երկու առ երկու: Ես ալ դիմում կատարած էի: Գրեթէ տարի մը սպասելէ ետք, երբ արդէն հինգ շաբաթէ ի վեր, փաս-

տարան Հմայեակ Խոսրովեանի գրասենեակին մէջ իբր քարտուղար կ'աշխատէի, ինծի հաղորդուեցաւ, որ Պոլսոյ Պատժական Երկրորդ դատարանի օգնական քարտուղար անուանուած եմ:

Դատարանի գործերը շատ էին: Այն ժամանակ Հաշտարար դատաւորներ գոյութիւն չունէին, եւ մեր դատարանի 18 քարտուղարները հազիւ կը հասնէին գործերուն: Ես եւ դպրոցական միւս թուրք ընկերս, առանց ամսականի, ամէն կէսօր դատարան կ'երթայինք ու փոխն ի փոխ արձանագրող քարտուղարին կ'օգնէինք: Երբ փաստաբան մը բերանացի կատարէր պաշտպանողականը, մենք ալ, առանց գիրերու վրայ կէտերը դնելու, արագ կերպով նոթ կ'առնէինք, եւ վերջը ամբողջացնելով արձանագրութիւնը կը կազմէինք*:

Օր մը, գեղադէմ հայ երիտասարդ մը իր փաստաբան Զօհրապի հետ ներկայացաւ դատարան, եւ իր բացակայութեան այդ նոյն դատարանէն տրուած վեց ամսուայ դատապարտութեան վճիռին բեկանումը պահանջեց: Աղջկայ մը հետ յարաբերութիւն ունեցած, եւ վերջն ալ մերժած էր հետը ամուսնանալ: Կողմերը հայ էին եւ Պոլսոյ հայկական շրջանակներուն մէջ շատ ծանօթ: Մասնաւորապէս աղջկան հայրը հարուստ էր:

Ըստ օրինի՝ չափահաս տղու մը եւ աղջկայ մը սիրային յարաբերութիւնները պատժական ոչ մէկ միջոցի առարկայ կրնային ըլլալ, եթէ անոնք հրապարակային եւ հանրային բարոյականի դէմ ձեւով մը չարտայայտուէին: Իսկ ամուսնութեան խոստումով աղջիկ մը խաբելը, եւ զայն կին դարձնելէ յետոյ խոստմանադրուած ըլլալը ու հետը չպակուելը պատժոյ առարկայ արարք մը կը նկատուէր, եթէ այդ խոստումը գրաւոր փաստերով, օրինակ՝ նամակներով հաստատուէր: Խնդրոյ առարկայ դատին մէջ սիրային նամակներ գոյութիւն ունէին, որոնց մէջ ապագայ կեանքի համար ակնարկութիւններ ալ կային. բայց ուղղակի ամուսնութեան խոստում գոյութիւն չունէր: Մէկ խօսքով՝ պարագաները կը ներկայանային այնպիսի ձեւով մը, որ դատարանին վճիռը ուղղակի դատաւորներու հայեցողութեան եւ խղճին կապուած էր: Պարագայ մը, որ ամենէն աւելի առիթ կ'ընծայէ փաստաբանին՝ իր տրամաբանելու ամբողջ կարողութիւնը եւ համոզելու ճարտարութիւնը ցոյց տալու: Եւ Զօհրապ այդ օր մասնաւոր կերպով փայլեցաւ, իր պաշտպանողականը սկսելով այնպիսի փայլուն ձեւով, որ ես պահ մը շշմած՝ դադարէի էի նոթ առնելէ, երբ նախագահին խիստ մէկ նայուածքը զիս ուշքի բերաւ:

Ամբաստանող օրիորդը ներկայ չէր. իր փաստաբանը միայն կար: Զօհրապ գրապանակէն անոր լուսանկարը հանեց եւ ըսաւ. — «Պարոննե՛ր, այս օրիորդը կ'ըսէ թէ՛ իմ պաշտպանեալս, ներկայ երիտասարդը, զինքը խաբելով գլխէ հանած է: Արդ, աչքի առջեւ ունենալով այս պատկերը եւ զիտելով ներկայ երիտասարդը, ձեռքերնիդ ձեռ խղճին վրայ ըսէ՛ք թէ՛ ո՞վ է խաբողը եւ ո՞վ է խաբուողը»:

* Ակնարկութիւնը արարական տառերով թրքերէցիս Ռամար է: (Խմբ.)

Եւ իսկապէս, երիտասարդը շատ աւելի գեղադէմ էր քան աղջիկը: — «Կ'ըսեն թէ, — շարունակեց Զօհրապ, — պաշտպանեալս իր դրամական պահանջքին գոհացում տրուած չըլլալուն համար մերժած է ամուսնանալ: Ես կ'ըսեմ թէ՛ եթէ ատիկա ճիշդ է, ուրեմն պէտք է եզրակացնել թէ՛ օրիորդին հայրը, մեծահարուստ սեղանաւոր՝ գործնական միջոց մը կարծած է գտնել, առանց քսակին բերանը բանալու, աղջիկը տղուն գիրկը նետել: Հոս ալ խոստումը չպահողը, խաբողը ո՞վ է»:

Զօհրապ այս գետնի վրայ տրամաբանական այնպիսի փաստերով շարունակեց իր պաշտպանողականը, որ նախագահն ու անդամները միաձայն անպարտ արձակեցին երիտասարդը:

Ես շատ լաւ կը ճանչնայի մեր նախագահը: Բառին ամենէն լայն իմաստով՝ պարկեշտ, ուղիղ եւ կրօնասէր մարդ էր: Ինչո՞ւ զարմանալ ուրեմն, երբ Զօհրապ գիտէր, առանց նիւթական միջոցներու դիմելու, իր խելքով եւ խօսքով լուսաբանել դատաւորներու խիղճն ու միտքը:

Երկրորդ օրինակը շատ աւելի մեծ յաջողութիւն բերաւ Զօհրապին, եւ սակայն մեծ ձախորդութեան ալ պատճառ դարձաւ:

Առեւտրական Առաջին Խառն դատարանի առջեւ Լօրանտօներու մէկ մեծ դատը կը պաշտպանէր: Պահանջքին գումարը կը հասնէր 2-3 հարիւր հազար հնչուն ոսկիի: Ատեանի հինգ դատաւորներէն երկուքը, ըստ Քաթիւքիլասիոնի, Փրանսական հիւպատոսարանին կողմէն նշանակուած մարդիկ էին: Թրքահպատակներ էին նախագահը, Օսման պէյ, ուրիշ թուրք մը եւ Ստեփան Գարաբեանը: Ուրեմն, եթէ երեք թրքահպատակները համաձայն ըլլային, Օսմանեան կառավարութիւնը դատը կը շահէր:

Սակայն, ո՞վ պիտի ըլլար այդ անձը՝ որ իր կառավարութեան դէմ արտայայտուէր՝ օտարին իրաւունք տալով:

Խառն դատարանի տարեգրութեանց մէջ երբե՛ք չէր տեսնուած որ օտար հիւպատոսարաններէ նշանակուած դատաւորները իրենց հպատակներուն աննպաստ կարծիք յայտնած ըլլային: Ասիկա այնքան բացայայտ իրողութիւն մըն էր, որ մեզի իրաւաբանական վարժարանին մէջ մասնաւոր կարեւորութեամբ կը բացատրուէր (երբ խօսքը Քաթիւքիլասիոններու մասին էր): Կ'ըսէին թէ Փրանսացիք յատուկ դիմում կատարած էին Գարաբեանին, որ սակայն այդչափ կարեւոր դատի մը մէջ կառավարութեան աննպաստ ընթացքի մը մէջ չէր ուզած զըտնուել: Ուրեմն խօսքը լիովին կը պատկանէր փաստաբանին ճարտարութեան:

Ես չլսեցի պաշտպանողականները, բայց ինծի ըսին որ այդ դատավարութեան միջոցին Զօհրապ ուղղակի անդիմադրելի կորով մը, օրինական-տրամաբանական անհերքելի փաստեր առաջ բերած էր, եւ հրաշքը՝ իրականացած...: Դատարանի նախագահ Օսման պէյ յարած էր Փրանսացի դատաւորներու տեսակէտին, եւ դատապարտած էր կառավարութիւնը հարիւր հազարաւոր ոսկիներու վճարման:

Նոյն օրն իսկ, Պոլսոյ ո՛չ միայն դատական, այլև քաղաքական շրջանակներու մէջ ինկած էր վլվլուկը:

Դատարանի նախագահ Օսման պէյ ճանչցուած էր իբրև անկաշառ եւ շատ ուղղամիտ անձ մը: Միւս կողմէ՝ Թուրքիոյ դատաւորներուն մէջ ան միակն էր, որ իբր օրէնսգէտ՝ միջազգային համբաւի տիրացած էր (ի միջի այլոց, Լահէի իրաւարար ատենանի Օսմանեան կառավարութեան ներկայացուցիչը եղած էր): Նախարարը, բարեբախտաբար, զինքը շատ լաւ կը ճանչնար: Ան կանչած էր զինքը եւ շատ խիստ կերպով յանդիմանած:

Օսման պէյ հոն ալ պարզած էր իր տեսակէտը, եւ կատարելապէս համաձայն եղած էր Զօհրապին:

— «Նորէ՞ն այդ խոզը դրամով կամ խելքովը ձեզ տոպրակը դրաւ: Դուն հայ կեանքովի մը չա՞փ ալ հայրենասիրութիւն չունիս», — ըսած էր նախարարը:

Այս վերջին ակնարկութիւնը Ս. Գարաբանին մասին էր:

Նախարարը սակայն Օսման պէյը չէր հրաժարեցուցած, այլ փոխադրած Մովսիսի Առեւտրական դատարանի նախագահութեան, եւ այդպէս իր ամսականը ութսուն ոսկիէն իջեցուցած երեսունհինգի...:

Տրուած վճիռը վերջնական ըլլալով՝ կը մնար գործադրութիւնը: Եւ Օսմանեան կառավարութեան ձգձգումներուն վերջ տալու համար, Ֆրանսական մարտանաւեր եկան Միտիլիի առջեւ ցոյց-սպառնալիք մը ընելու: Նոյն շաբաթը դատական նախարարը շրջաբերականով մը հրամայեց որ Զօհրապ, իբր փաստաբան, դատարաններու մէջ չընդունուի այլեւս:

*
**

Այսպէս ուրեմն, մէկ օրէն միւսը արագընթաց սուրացող մը սկսաւ անթացուպերով քալել: Զօհրապ կրնար գործել միայն հիւպատոսարաններու դատարաններուն մէջ: Կրնար նաեւ խորհրդական-փաստաբանի գործ կատարել, ինչ որ իր գործելու եւ շահելու կարելիութիւնը գրեթէ մէկ քառորդի կ'իջեցնէր: Ան կը վախնար նաեւ յոռեգոյնէն (Համիտի շրջանն էր): Մէկ խօսքով, ամենաազդեցիկ մարդիկ իսկ անհետ կը կորսուէին, եւ ո՛չ ոք հետաքրքրուելու քաջութիւնը կրնար ունենալ:

Բայց Զօհրապի պէս ազատամիտ մարդ մը, բնականաբար, չէր կրնար սիրել Թուրքիոյ բռնապետական ռեժիմը: Եւ երբ այդ ռեժիմին թաթը կ'իջնէր իր գլխին, անշուշտ պիտի ընդվզէր:

Հիւպատոսարաններու աշխատանքը կը մօտեցնէ Զօհրապը ռուսական դեսպանին: Հետզհետէ անոր պաշտպանութիւնը կը վայելէ, եւ

դեսպանատան իրաւագէտ-խորհրդականը կ'ըլլայ: Դեսպանը հայկական հարցով շատ կը շահագրգռուէր: Զօհրապ ալ հայու հանգամանքով կը զգար թէ պարտաւոր էր զբաղիլ անով, եւ իր կարողութեան չափով նպաստել որ չքանար համիտեան ռեժիմի հայակուլ քաղաքականութիւնը: Եւրոպա ալ կ'անցնի եւ հոն այդ ուղղութեամբ ու կեղծ անունով ֆրանսերէն գիրք մը կը պատրաստէ:

Վերջապէս, Զօհրապին համար այդ շփոթ եւ գէշ օրերն ալ կ'անցնին: 1908 Յուլիս 10-ին երկրորդ անգամ ըլլալով, Համիտեան Սահմանադրութիւնը հռչակուեցաւ եւ յաջորդ (1909) տարւոյն Ապրիլի սկիզբները, երբ Համիտ գահընկեց եղաւ, Զօհրապ եւ Հալաճեան Թուրքիոյ երեսփոխանական ժողովին մէջ Պոլսոյ հայութիւնը կը ներկայացնէին:

Ես այդ տարի եւրոպական Թուրքիոյ հեռաւոր մէկ գաւառը՝ Եանիա մեկնեցայ իբր դատաւոր, եւ զինք Պոլիս ձգեցի, իբր փաստաբան, նիւթական շատ փայլուն վիճակի մէջ: Նոյն ատեն Զօհրապին առջեւ բացուեցաւ ազգային-քաղաքական գործունէութեան այնպիսի մեծ ասպարէզ մը, որ իրեն պէս տաղանդ մը կրնար գոհացնել:

Մինչեւ 1912-1913 Զօհրապի գործունէութեան մասին միայն ազգային թերթերէն լուր կ'առնէի, նաեւ թուրք թերթերէ՝ Թուրքիոյ երեսփոխանական ժողովին առնչութեամբ: Այդ շրջանին էր որ Զօհրապ եղած է նաեւ համալսարանի իրաւաբանական բաժնի փրոֆեսոր: Ուսանողները հիացումով կը խօսէին իր մասին: Իր պաշտօնակից երեսփոխան Պետրոս Հալաճեանին պէս Զօհրապ իթթիհատ կուսակցութեան չէր անդամակցած: Իթթիհատական շէֆերը մեծ հիացում ունէին իր մասին, բայց չափազանց կը զգուշանային իրմէ: Այս կէտը իրենց տեսարան Հիւսէին Ճահիտ (որ վերջէն Եալչըն անունն ալ առաւ), «Թանին» թերթին մէջ շատ լաւ պարզեց, երբ վիճարանութեան մը առիթով, յոյն երեսփոխան եւ փաստաբան Քօզմիտիին եւ Զօհրապին ճառերուն անդրադարձաւ: Յոյն փաստաբանը կոչեց քեզ իմ գալաֆը*, Զօհրապին հետ բաղդատելով: Սակայն, միաժամանակ Հիւսէին Ճահիտ Զօհրապը կը գտնէր այնքա՛ն նրբասաց, որ անբնական չէր համարեր որ ամէն մարդ զգոյ՛չ եւ վերապահ ըլլար անոր հանդէպ:

Երեսփոխանական ժողովին մէջ Զօհրապ ո՛ր նիւթի մասին ալ խօսէր, հեղինակութիւն մը կը յայտնաբերէր: Այսպէս, տարի մը երբ զինք ծովային նախարարութեան պիւտճէի տեղեկաբերը կարգած էին, այնպիսի ձեւով մը իր նիւթը պարզեց եւ եզրակացութիւններու յանգեցաւ, որ բոլոր ընկերները ափ ի բերան մնացին:

Ազգային կեանքի մէջն ալ Զօհրապի գործունէութիւնը մեծ փայլ ստացած էր: Միայն Թուրքիոյ երեսփոխանական ժողովի անդամ ըլլալը չէր բաւեր: Հալաճեանն ալ իրեն պէս անդամ էր, բայց որքան կը յիշեմ,

*) «Քեաղըտ գալաֆը» կը կոչուէին այն ինքարոյս փաստաբանները, որոնք դպրոցական չէին, եւ թուրք մրտելով փորձառութիւն ձեռք բերած էին:

ազգային ժողովներուն եւ խորհուրդներուն անդամ չէր, եւ եթէ անոնց կը մասնակցէր, փայլը մինչեւ ինծի պէս հեռու գաւառները ապրողներու չէր հասներ: Ազգային երեսփոխանական ժողովէն ներս գոյութիւն ունեցող ոչ թէ երկու խմբաւորումներու, այլ երկու մտայնութիւններու (ազատական եւ պահպանողական) մէջ Զօհրայ առաջիններուն ամենէն կարկառուն դէմքերէն մէկն էր, եւ սակայն կուսակցական չէր (եւ ընկերակարական պիտակին տակ գործելու ընդունակութիւնն ալ չուներ): Ի գուր էին Խաժակի կամ Ուրիշներու ուղղակի կամ թելադրական ակնարկութիւնները: Զօհրայ ուժեղ անհատականութեան տէր էր եւ հայկական քաղաքական այն ժամանակուայ կեանքէն մեծ ակրնկալութիւն չուներ: Համաշխարհային տարազով, սկզբունքներու պիրկ շրջանակի մէջ պարփակուիլը անոր համար անտանելի կաշկանդում էր: Բայց թէ իսկապէս ազատամիտ էր, ո՛չ մէկ տարակոյս:

Փաստարանութիւն ընելէ զրկուած շրջանին, ինչպէս յիշեցի, Զօհրայ ուսական գեսպանատան հետ սերտ յարաբերութիւններ հաստատած էր եւ հարստահարութեանց ու բարենորոգումներու պահանջի խեղդիւններով շատ հետաքրքրուած: Մինչեւ այն ժամանակ այդ հարցին հանգէպ գրեթէ անտարբեր մարդիկ իսկ սկսեցին էին մօտէն եւ ջերմօրէն հետաքրքրուիլ, ալ ուր մնաց Զօհրայի պէս մէկը, որ պատանի հասակէն արդէն ազատական գազափարներով սնած եւ մեծցած էր: Բնականաբար, ան մեծ բաժին ունէր Պատրիարքարանի այն մարմիններուն մէջ, որոնք հայ ժողովուրդի ներկայ վիճակով եւ ապագայ կացութեամբ կը զբաղէին: Չմոռնանք, որ կառավարութեան անունը Օսմանեան էր (հիմակուան պէս թրքական չէր), եւ ինչպէս հայն ու թուրքը, նոյնպէս յոյնը եւ արքանացին, արտքն ու վարչը այդ կառավարութեան ու երկրին բազմապէս մասերն էին: Ուրեմն հասարակաց հայրենիքին բարօրութիւնը ձեռք բերելու համար, ամէնքն ալ նոյն ոգիով եւ նոյն ջանքով պէտք է աշխատանք տանէին:

Հանրաժամով է այսօր որ Օսմանեան Սահմանադրութիւնը այդ շնորհը չբերաւ երկրին: Պատրանքներ եւ յոյսեր ունեցողներն իսկ ընդոտտ արթնցած երբ «Թանին» թերթին մէջ Հիւսէին Ճահիտ զարգացուց «Միլլէթի հաֆիսէ» (սիրապետող ժողովուրդ) տեսութիւնը, որուն հիման վրայ Օսմանեան պետութեան բազմապէս ազգերը ենթակայ պիտի ըլլային ՏԻՐԱՊԵՏՈՂ Թուրք ազգին:

Թուրքը սակայն չգուցացաւ երկրին ու պետութիւնը սեփականացնելով, այլ մնացեալ ազգերուն բաժին հանց բանակալութիւնն աւարտը:

Թուրքերը կը պահանջէին որ հիշք իրենց պէս մտածէինք, առանց սակայն փայտելու իրենց աստեղութիւնները: Մենք իրաւունք չունէինք նոյնիսկ մեր աշխատանքին արդիւնքը մեզի պահելու: Հայուն համար հարուստ ըլլալը տեսակ մը յանցանք զարմաւ: Առողջ, կայտաւ, ուժեղ, մարդիկ, արժանափ տէր հայ ըլլալը հանցի չէր իրենց: Երկրին մէջ

ընակող օտարներուն հետ սերտ յարաբերութիւններ ունենալը աններելի մեղք էր: Մեր ընտանեկան կեանքին լաւ պայմանները իրենց նախանձը կը գրգռէին: Իսկ բարեմոյն գաւակներ, եւ մանաւանդ շնորհալի կիւն եւ աղջիկ ունենալը չափազանցուած բարիք մըն էր...:

Այս բոլորէն յետոյ թուրքերը կը պահանջէին որ զիրենք յարգենք, եւ հաւատարիմ մնանք իրենց անհատական թէ ազգային շահերուն:

Այս էր տիրող կացութիւնը 1909-ի Սահմանադրութենէն առաջ, եւ անկէ յետոյ:

Բնականաբար, այլացեղ անհատներ թուրքերուն մօտ ըլլալու պատճառներ չէին տեսներ: Եւ եթէ յոյն երեսփոխան Պուշօ Էֆէնտին (Պուսիոս) ատենին երեսփոխանական ժողովին մէջ կը յայտարարէր, թէ Օսմանեան պետութեան հետ իր ունեցած կապը կը նմանէր ճի՛շդ Օսմանեան պանքային կառավարութեան հետ ունեցած կապին (այսինքըն՝ անուռով միայն Օսմանեան), Զօհրայներն ալ իրաւունք ունէին նոյն ձեւով մտածելու եւ գործելու: Հետեւաբար, զուր էր թուրք պետական անձնակազմին ամէն կարգի աշխատանքը՝ համոզելու համար հայերը, որ բարեմորոգումներու գործադրութիւնը Օսմանեան պետութեան միայն սպասեմ:

Մեր մէջ մինչեւ այսօր կան մտածողներ, որոնք չեն գիտեր կամ չեն ուզեր գիտնալ թէ թուրքը ո՛չ միայն հայուն, այլ իր հարազատ թուրք հայրենակիցիմ համար իսկ չէր կրնար ապահովել կեանքի տանելի եւ յառաջադէմ պայմաններ: Ասիկա իր ըմբռնողութեան սահմանէն վեր բան մըն էր: Եւ այս պայմաններուն տակ, արդար չէ ըսել թէ մենք սանկ պէտք է ընէինք, այլ ձեւով պէտք է գործէինք, թէ մեր գործելակերպը անթափտ էր, թէ համակերպելով աւելի կը շահէինք, եւ կամ թէ մեր դատը մեռած ծնած էր: Աւելորդ է յիշեցնել նաեւ, թէ այսինչ իշխանաւորը սա ըսած է, այսինչ արտաքին գործոց նախարարը մեզի դէմ կարծիք յայտնած է, թէ մեր թիւը, մեր երկրին դիրքը եւ դրացիներու փոխարարները նկատի պէտք էր առնել, եւ այլն: Այս կարգի հին եւ նոր սովորներու կարծիքը, նոյնիսկ այսօր, շատ դիւրաւ կարելի է ջրել, ո՛ւր մնաց այն ժամանակ, երբ հայութիւնը իր հօր կազմակերպութեամբ եւ մեծագոյն զոհողութիւններու պատրաստակամութեամբ՝ շատ աւելի մօտեցած էր իր դարաւոր երազին, քան յոյնը իր անկախութենէն քիչ առաջ, կամ պուլկարը իր ինքնավարութեան նախօրեակին:

Մենք թէեւ բարենորոգումներու նախընթացին ալ տիրող թուրք կառավարութեան հետ միշտ Էրեւնդ ընթացքի մէջ գտնուեցանք, եւ մեր մարդավարի ապրելու իրաւունքը պահանջելով հանդերձ, իր հետ ունեցած յարաբերութիւնները ուղեցինք պահել օրինակաւ գետնի վրայ:

Ճիշդ այդ օրերուն էր, որ Զօհրայ յօդուածով մը կը պահանջէր որ մեր գաւառի Առաջնորդները, որոնք կառավարութեան հետ ազգին

պաշտօնական յարաբերութիւնները կը վարէին, ըլլային մասնաւոր կերպով այդ ուղղութեամբ պատրաստուած օրէնսգէտ անձեր:

Ես ատոր պէտքը կատարելապէս կը գնահատէի, բայց կը կարծէի որ գէթ այդ խնդրոյն մէջ իմ կեանքովս աւելի փորձառութիւն ունէի: Հետեւաբար, նոյնպէս թերթով արտայայտուեցայ, եւ ըսի որ իր կարծիքը գործադրելի չեմ գտներ: Չէի կրնար երեւակայել որ իրաւաբանական լայն զարգացում ունեցող անձնաւորութիւն մը զաւառի առաջնորդը ուզէ ըլլալ կրօնական սքեմով: Աւելի իրագործելի եւ օգտակար կը գտնէի որ իրապէս կարող օրէնսգէտներ առաջնորդներու քով խորհրդական անուանուէին: Վերջէն Պոլիս, իբր Ազգային ժողովի երեսփոխան, նոյն սկզբունքը պաշտպանեցի Պատրիարքարանի համար իսկ, առաջարկելով ոչ թէ Պատրիարքարանի գործակատար մը, ոչ թէ լաւ թրքագէտ դիւանապետ մը, այլ՝ բառին բուն իմաստով օրէնսգէտ-խորհրդական մը դնել հոն:

Ամէն պարագայի, ասիկա անմիջական լուծումի կարօտ հարց մը չէր: Այս կամ այն ձեւը նախամեծար համարելէ առաջ, մարդ պատրաստելը մէկ օրէ միւս օր չէր ըլլար: Կը յիշեցնեմ միայն իբր ապացոյց, թէ պաշտօնապէս կամ անպաշտօն, այն ժամանակ մեր ուզածը Օսմանեան պետութեան սահմաններում մէջ կեանքի, ինչքի եւ պատուոյ ապահովութիւն ունենալն էր: Եւ այս երեք բառերը մեծ ու պզտիկ բոլոր հայերուն բերանին մէջ կարգախօս դարձած էին:

Տարիներ վերջ, երբ առիթը ունեցայ Ոսկան Մարտիկեանը տեսնելու, ինծի պարծանքով յիշեց, որ մեծ եպարքոս Մահմուտ Շէվքէթ փաշայի դահլիճին մէջ իբր փօքթի նախարար, թելադրած էր փոխանակ վեց նահանգներու՝ ամբողջ Թուրքիոյ օգտակար ըլլալ, նախարարութիւնները օտտելով մէյ-մէկ օտար մասնագէտ խորհրդականներով:

Գիտենք որ այդ ծրագիրը իրագործուեցաւ, եւ անգլիացի մը ներքին գործերու, Ֆրանսացի մը ելեւմտական, եւ գերմանացի մը դատական նախարարութեանց խորհրդական եղան: Բայց կացութեան մէջ ո՛չ մէկ փոփոխութիւն տեղի ունեցաւ: Օտար խորհրդականները լաւ թելադրութիւններ կ'ընէին, բայց զանոնք գործադրելու կոչուած մարդիկ Թուրք նախարարներն էին: Եթէ նախարարին կամ կառավարութեան գործին եկող բան մըն էր, կը գործադրուէր, այլապէս՝ բարձի թողի կ'ըլլար: Մէկ խօսքով՝ Թուրքն էր, որ կը վճռէր: Իսկ Օսմանեան պետութեան բաղկացուցիչ բոլոր տարրերուն շահը նկատի առնելով՝ յառաջդիմական ծրագիր մը գործադրելու կարողութիւնը կը պակսէր Թուրքին, որ միայն լաւ զինուոր էր եւ նուրբ քաղաքագէտ:

Գուցէ ընթերցողը կարծէ, որ քիչ մը երկար եղաւ նիւթէս այս շեղումը: Բայց ես այս խորհրդածութիւնները ըրի մասնաւոր նկատումով մը:

Առաջին մեծ պատերազմի ընթացքին, հայերու հանդէպ Թուրքերու ունեցած հրէշային վարմունքի մասին երբ կը խօսուի, կ'ըս-

ւի — ի միջի այլոց — թէ Ջօհրապի եւ իր ընկերոջ Վարդգէսի, Տիգրանակերտի պատերազմական ատեան ղրկուելուն, եւ ճամբան կամ հոն անոնց ունենալիք սեւ ճակատագրին տեղեակ ըլլալով հանդերձ, Թալէաթ, վերջին գիշերը Սէրբըլը տ'Օրիամ ակումբի մէջ Ջօհրապէն բաժնրելու պահուն, սրտազեղում մը ունեցած է, եւ հակառակ իր սովորութեան՝ համբուրած է զայն: Ասոր հետեւանք, կ'եզրակացնեն՝ թէ ան ակամայ յօժարած է ոչնչացնել իր բարեկամը, որուն սպասած վախճանին տեղեակ էր:

Ես շատ հաւաստի աղբիւրէ գիտեմ, որ Ջօհրապի նահատակութենէն ամիսներ յետոյ, նոյն ակումբին մէջ, քանի մը անձերու ներկայութեան, Թալէաթ ըսած է.

— «Տուա Դեսպանատան պաշտօնէութիւնը, պատերազմի յայտարարութեան վրայ, շատ հապճեպ կերպով մեկնած է եւ երկրորդական կարգ մը պարտութեանը ոչնչացնելու կարելիութիւնը չէ ունեցած: Ամիսներէ ի վեր անոնք կը քննուին եւ կը թարգմանուին: Մեծ ցասումով եւ զարշանքով տեսանք որ անոնց մէջ կը գտնուին նաեւ Ջօհրապի ուսուցիչականատան տուած կարգ մը գրութիւնները եւ թելադրութիւնները, որոնք իր դաւաճանութեան մեծագոյն ապացոյցներն են: Եթէ նախապէս տեղեակ ըլլայինք ատոնց գոյութեան եւ բովանդակութեան, փոխանակ Ջօհրապը մինչեւ Տիգրանակերտ ղրկելու, հոս Պայազիտի հրապարակին վրայ զինք կը կախէինք, եւ ես ինքս անոր չուանը կը քաշէի»...:

Հոս Թալէաթ գտնէ իր ծագումը չէր ուրանար: Թուրքիոյ մէջ այդ տխուր գործը զնչուններուն մասնագիտութիւնն էր...:

Բայց մենք անհերքելի փաստեր ունինք եզրակացնելու համար, որ անոնք Ջօհրապի եւ իր նմաններուն, ողջ հայութեան արիւնի ծարաւի էին: Իրենց քաղաքական այս տեսակէտը իթիհատի կեդրոնին մէջ դեռ շատ առաջ արդէն ճշդուած եւ որոշուած էր եւ... միաձայնութեամբ:

Մնացեալը թատերական հրէշային սարքաւորում մըն էր միայն:





Մատթեոս Էպիդաթեան թոռնիկին հետ, Քէսաս, 1951-ի ամառը:

Բ. ՄԱՍ

ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԵՐՈՒՆ

Թոռնիկիս՝ Նորայրին

«... Ինչ կորով եւ դիմադրական ուժ ունին ձերինները (հայերը), որ դարերու ընթացքին եթէ թիւի համեմատական աճում չեն ունեցած, եւ սակայն չեն լքած, չեն ընկճուած, չեն չքացած, եւ մանաւանդ իրենց ինքնուրոյն յատկութիւնները չեն կորսնցուցած»:

Գնդապետ Հօֆ (Օգոստոս, 1914)

1.- ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒ ՇՐՋԱՆ

Երբ Օսմանեան Սահմանադրութիւնը հռչակուեցաւ 1908 Յուլիս 10-ին, իրաւաբանութեան տոկտորայի քննութիւնս չէի աւարտած:

Քաղաքական այդ մեծ դէպքը պատճառ եղաւ որ Պոլսոյ կեանքը տակն ու վրայ ըլլայ: Համիտեան իշխանութեան անօրինակ ճնշումին դադրիլը իր հունէն ուժգնօրէն դուրս նետեց ազատասէր, գուցէ աւելի ճիշդ կ'ըլլար ըսել Աորասէր թուրք երիտասարդութիւնը: Կիրքերը պոռթկացին եւ ամէն մարդ իրաւունք ունենալ կարծեց խելքին փչածը ըսելու եւ ընելու: Համալսարանի ուսանողներն ալ գիրք ու տետրակ ծալլած, սկսան ազատութիւն-քաղաքականութիւն խաղալ:

Երկար եւ տքնաջան աշխատանքներէ ետք մեծ համբերութեամբ կը սպասէի օր առաջ աւարտել քննութիւնը, եւ գործի ասպարէզ նետուիլ: Եւ սակայն ամիսներ անցան մինչեւ որ զայն լրացուցի: 1909-ի Մարտին միայն վկայականը ստացայ, եւ Յունիսի կէսին ինծի առաջարկըւեցաւ երթալ Եանիա դատական պաշտօնով:

Օսմանեան կառավարութեան մէկ հին սովորութիւնն էր յոյն շատ եղած տեղերը հայ դրկել, եւ հայաշատ տեղերն ալ կարելի չափով ո'չ-հայ քրիստոնեաներ:

Մեծ պետութիւններէ պարտադրուած՝ դատաւորական կազմերու մէջ հաւասարապէս իսլամներու հետ քրիստոնեայ ոչ-թուրք տարրերու ներկայութիւնը՝ այս կերպով ըստ երեւոյթին կը պահուէր կառավարութեան կողմէ: Բայց ինչպէս ամէն առթիւ՝ թուրքերը գիտէին իրենց պարտադրուած ամէն յանձնարարութիւն ոչ-թուրք տարրերուն ի նպաստ կամ բոլորովին չգործադրել եւ կամ, լաւագոյն պարագային՝ գործել այնպէս որ օգտակար ձեռնարկներն իսկ սպասուած արդիւնքը չտային: Ընդունեցի Եանիայի պաշտօնը թուրք ընկերներու խոր ցաւակցութեան, եւ յոյն ընկերներու խանդավառ շնորհաւորութիւններուն մէջ: Առաջիններուն համար Եանիա դժոխք մըն էր, ուր հաց գնելու համար իսկ յունարէնով պիտի արտայայտուէին, եւ ուր թուրքերը մզկիթին մէջ անգամ յունարէն խօսելու վարժուած էին: Մինչդեռ յոյներուն համար այդ նահանգը Յունաստանէն անիրաւօրէն դուրս մնացած, հետեւաբար նուիրական վայր մըն էր, որ մօտ ատենէն պէտք է մայր հայրենիքին վերադառնար:

Գացի Եանիա եւ երեք տարի մնացի այնտեղ: Նախ՝ իտալացիք, Թրիբունի պատերազմի ընթացքին, Ադրիական ծովու մէկ նեղ անցքով զատուած՝ իրենց մարտանաւերու սպառնալիքին տակ կը պահէին մեզ: Յետոյ կու գային Ալպանացի թոսքաները իրենց Պաշկիմով, եւ յոյները իրենց էքմիֆի էքէրիայով, իսկ թուրք նորահաս Իթթիհատականներն ալ՝ ասոնց ամէնուն դէմ: Կատարեալ քաղաքական մարզադաշտ մը, ուր ցեղերն ու կիրքերը միշտ իրարու կը բախէին: Իսկ մենք՝ պետական պաշտօնեաներս, մանաւանդ դատաւորներս, ամէն հոսանքի դէմ կուրծք տալու ստիպուած՝ պարտաւոր էինք խղճի ու օրէնքի պահանջները հաշտեցնել, եւ անսայթաք մնալ արդարութեան ուղիին վրայ:

Տարօրինակ կեանք մը ունեցայ հոն: Եանիայի պաշտօնավարութիւնս ինծի համար կարծես քաղաքական կեանքի դասընթացք մը եղաւ: Ամէն մէկ ցեղի տենչանքն ու ձգտումը տեսնել, կիրքերու բախումին ականատես ըլլալ, հաւանական լուծումներով զբաղիլ, եւ երբ անոնք արիւնալի հանգամանք մը կը ստանային, ուղիղ եւ սակայն կարելի եզրակացութիւններու յանգիլ ու վնիտ արձակել: Վճիռ՝ որ երբեմն սրտիդ սփոփանք եւ քեզի օրհնութիւն կը բերէ. իսկ երբեմն ալ վճիռ՝ որ կախաղանի եռոտանիին վրայ իր լուծումը կը գտնէ:

Այս բոլորը, իբր անհատ, զիս լայնօրէն կը զբաղեցնէին: Բայց իբր հայ՝ կեանքս անիմաստ եւ տխուր էր: Հայկական շրջանակէ հեռու, մեր թերթերուն միջոցաւ միայն մեր աշխարհի իրադարձութիւններուն հաղորդ կը մնայի: Ուստի, ուզեցի անպայման հեռանալ եւ առաջին պատեհ առիթը օգտագործեցի Հալէպ փոխադրուելու համար:

Անշուշտ, Հալէպն ալ այն ժամանակ ինծի համար մեծ հրապոյր մը չունէր: Կը մտածէի Պոլիս հասնելուս պէս աւելի յարմար քաղաքի մը համար աշխատիլ: Եւ սակայն ճամբորդութեանս ընթացքին արդէն Ղազի Մուխթար փաշայի մեծ դահլիճը կազմուեր էր, եւ ինծի հրամայուեցաւ անմիջապէս նոր պաշտօնատեղիս մեկնիլ:

Հալէպի դատաւորական կեանքիս մասին մեծ բան չունիմ ըսելիք: Հոն ալ արարները անկախութեան ձգտումներ ունէին: Կային լեզուի եւ այլ հարցեր, բայց առհասարակ դատարանը չէր ազդուեր անոնցմէ:

Որքան կը յիշեմ, առաջին անգամ հոն տեսայ ձերբակալուած Հնչակեանի մը դատարան ներկայանալը (անպարտութեան վճիռով մը վերջացած):

Մեր վերաքննիչ Ատեանը գործունէութեան ընդարձակ սահման մը ունէր, քանի Ուրֆայի, Մարաշի եւ Անտիոքի շրջաններու դատերն ալ վերաքննութեան համար մեզի կու գային: Եւ առաւօտէն մինչեւ երեկոյ, երբեմն լամբերով ստիպուած էին դատ-դատաստան ընել: Որով ես շատ քիչ առիթներ կ'ունենայի դուրսի կեանքին հետ շփուելու:

Մեծագոյն հաճոյքս էր, եթէ դեռ չմթնած կարենայի դատարանը ձգել, քալելով հասնիլ մինչեւ Ազգային Առաջնորդարան, եւ Ներսէս Եպիսկոպոս (այն ատեն վարդապետ) Դանիէլեանի հետ մտերիմ խօսակ-

ցութիւն մը ունենալ: Պարզ եւ մաքուր կղերական մըն էր, որուն մեծագոյն հաճոյքը անգլիական կամ ֆրանսական հիւպատոսէ մը քաղած նըպաստաւոր լուրերը կ'ըլլային, զոր նոյնքան հաճոյքով ինծի կը փոխանցէր:

Իրիկունները կը կարդայի Պոլսոյ Հայերէն եւ թրքերէն թերթերը, որոնք լեցուն էին արեւելեան վիլայէթներու բարենորոգումներու հարցին շուրջ թեր ու դէմ լուրերով եւ արտայայտութիւններով: Ես ալ, ինծի գաղափարակից երիտասարդներու պէս, կը մտածէի որ շատ շուտ պիտի վերջանար Պալքանեան պատերազմը: Գիտէինք, որ հակառակ իթթիհատականներու մեծխօսիկութիւններուն՝ երկիրը իր բանակով ոչ կրնար ազատատենչ ազգերուն սլացքը կասեցնել, եւ ոչ ալ եւրոպական Թուրքիան (Ռուսէլիմ) պահել: Բայց կը կարծէինք որ այդ պատերազմը գոնէ չորս-հինգ ամիս պիտի տեւէր, եւ թուրքերը, ստիպուած ըլլալով երկրի ամէն կողմէն իրենց զինուորները քաշել եւրոպական Թուրքիոյ պատերազմական ճակատին վրայ, պիտի պարպէին արեւելեան եւ հարաւային մասերու մէջ գտնուող, եւ որեւէ նպատակով հոն պահուած զինուորներուն մէկ մեծ մասը: Ասիկա առիթը պիտի ստեղծէր որ մենք ալ հարսնիքի մասնակցէինք:

Չեղաւ այդպէս, եւ հսկայ գաճէ արձանին ոտքերը քանի մը շաբթուան մէջ կքեցան: Թուրքիան նկուն եւ խեղճացած դուրս եկաւ պատերազմէն՝ ամբողջ աշխարհ մը ձգելով իր բնիկ տէրերուն, իսկ մեզի՝ մնացածներուս գլխուն փորձանք մնաց բռնութեամբ իշխանութեան կրկին տիրացած իթթիհատական զտարիւն կառավարութիւն մը, որ հողային մեծ կորուստէն յետոյ փորձառու դարձած էր: Այլեւս — գոնէ ասիական Թուրքիոյ մէջ — ո'չ հայերու, ո'չ արաբներու, եւ ո'չ իսկ թուրքերու ի նպաստ հիմնական բարենորոգումներու հետամուտ պիտի չըլլար:

Թուրքերը, հակառակ դառն դասերուն՝ բան չէին սորված:

*
**

1913-ի Մարտին էր: Այլեւս ձանձրացած էի միօրինակ եւ հոգեկան ապրումներէ զուրկ կեանքէն, մինչդեռ երիտասարդական եռանդը ուժգնօրէն կը խօսէր մէջս, եւ գոհացում գտնելու յոյսն ալ տակաւ կը կորսուէր: Խնդրեցի նախարարութենէն որ ինծի արտօնեն երթալու Պոլիս, ուր կը մտադրէի ամուսնանալ:

Նախարարը անմիջապէս պատասխանեց ըսելով թէ երբ երկիրը պատերազմական վիճակի մէջ է, հայրենասիրական գործ չէ արձակուրդ ուղելը: Ուրեմն, խնդրանքս մերժուեցաւ:

Ճիշդ այդ օրերուն Հալէպի մէջ իսլամ բարձր ընտանիքները շատ մօտէն հետաքրքրող դատ մը կար: Ոճրադատ ատեանի մէջ իմ յայտնած

կարծիքս, որուն ընկերներս համաձայն չէին, շատ մեծ եւ լաւ ազդեցութիւն ձգած էր: Ժողովուրդին գոհունակութիւնը արձագանգ գտած էր նաեւ կեդրոնը, եւ երբ հրաժարիլն ալ ի հարկէ աչք առնելով՝ կրկնեցի խնդրանքս, հեռագիր մը ստացայ նախարարութենէն, որով կը հաղորդուէր թէ Վանի կեդրոնի ընդհանուր դատախազ անուանուած եմ:

1913-ի Մայիսի կէսին, Վան երթալու համար ճամբայ ելայ դէպի Պոլիս: Աւելի երկար այդ ուղին նախընտրած էի, որովհետեւ այդ հեռակայ գաւառը երթալէ առաջ կ'ուզէի նախ ընտանիքս տեսնել, եւ յետոյ յարաբերութեան մէջ մտնել կարգ մը անձերու հետ՝ մեր ազգային գործերու վիճակին մօտէն ծանօթանալու համար:

Իրաւաբանութեան համալսարանի ուսանողութեան օրերուն, մեծագոյն փափաքս էր օր մը իբր դատաւոր հայկական շրջանի մը մէջ գտնուիլ: Իբր հայ պարտականութեան զգացումներ ունէի, որոնք հայկական կեդրոնի մը մէջ միայն կրնային գոհացում գտնել:

Եանիայի մէջ յոյն եւ ալպանացի յեղափոխականներու կեանքին ականատես եղած էի: Այդ անվեհեր երիտասարդները դէմս տեսնելով կը տառապէի, երբ ստիպուած կ'ըլլայի օրէնք գործադրելու: Չէ՞ որ այդ երկրին մէջ արդարութեան, ազատութեան եւ բարօր կեանքի չգոյութիւնն էր որ այդ մարդիկը կը մղէր ապստամբելու:

Այդ կարգի պարագաներու մէջ ես կարելի բարեկամեցողութիւն ի գործ կը դնէի: Բայց ո՛չ կառավարութիւնը, եւ ո՛չ ալ անոր դէմ գործողները մեծ դժգոհանք կրնային ցոյց տալ իմ որոշումներուս հանդէպ, որովհետեւ գիտէին որ պարտականութեան զգացումէն դուրս իմ մէջ ո՛չ մէկ շահագրգռութիւն ունէի: Եւ արդէն թուրքերուն համար անհասկնալի պիտի ըլլար որ հայ մը թուրքէն աւելի յոյնի մը կամ ալպանացիի մը մը բարեկամ ըլլար: Դարերէ ի վեր այնքա՛ն աշխատանք տարած էին որպէսզի այլացեղ տարրերը միշտ իրարու դէմ ելլէին, միշտ զիրար ատէին:

*
**

Պոլիս, կամուրջին վրայ առաջին տեսած անձս Ա. ը եղաւ, որուն հետ «Արեւելք» խմբագրատունէն մօտ ծանօթութիւն ունէի: Ըսաւ թէ չերթամ Վան, թէ հաւանաբար մօտ ատենէն հոն պոմպաները պիտի պայթին: Ուրիշներ ալ յետոյ նոյն խորհուրդը տուին: Ականջ չկախեցի: Նպատակ մը ունէի եւ աչքս բաց դէպի այն կը դիմէի:

Պոլիս դատական նախարարութեան ֆուլիաներուն մէջ իմացայ որ զիս Վանի ընդհանուր դատախազ անուանելէ առաջ, թուրքերը երկար մտածած էին: Օրուայ վարչապետ Մահմուտ Շէվքէթ փաշայի նախարարութիւնը պնդած էր որ բարենորոգումները լայն սահմանի մէջ իրենք կ'ուզեն գործադրել, միայն թէ հայերը մեծ պետութիւններու չդիմեն:

Եւ որպէսզի օտարի միջամտութիւնը աւելորդ նկատուի, իբր գործադրութեան սկզբնաւորութիւն քանի մը հայ կառավարիչներ (միւլթասարըֆ) պիտի անուանէին: Իմ անուանումս ալ կ'երեւի այդ տեսակ մտածելակերպի մը արդիւնքն էր:

Պոլսոյ մէջ սկսայ ինծի ծանօթ քանի մը ազգայիններու հետ շփման մէջ մտնել, տեղեկութիւններ հաւաքել, եւ մօտաւոր գաղափար մը կազմել Վանի ազգային ու կառավարական գործերու եւ ղեկավարներու մասին: Զգուշացայ Պատրիարքարան հանդիպելու, եւ Արշարունի պատրիարքը տեսայ Ղալաթիա՝ երեսփոխանական ժողովի մը վերջաւորութեան: Լսեր էի եւ գիտէի արդէն, որ մանաւանդ այդ բախտորոշ շրջանին՝ ազգին զլուխը գտնուելու կարողութիւնը կը պակսէր իրեն: Եւ սակայն զինքը հեռուէն կազմած գաղափարէս ալ շատ վար գտայ: Երկարօրէն գանգատեցաւ կառավարութենէն այնպիսի լեզուով եւ շեշտով մը, որ ա՛նուագն անտեղի կարելի էր համարել իրեն բոլորովին անծանօթ անձի մը առջեւ:

Հանդիպեցայ նաեւ «Ազատամարտ» խմբագրատունը: Ռ. Զարդարեանը սեղանին առջեւ նստած կը գրէր: Ինքզինքս ներկայացնելէ եւ քանի մը խօսք փոխանակելէ ետք, — «խնդրեմ, վայրկեան մը սպասեցէք» ըսաւ եւ դուրս ելաւ:

Երկու վայրկեան յետոյ վերադարձաւ երկու ընկերներով, եւ ինծի ներկայացուց Շահրիկեանը եւ Վոսմեանը: Եւ չորսերեսու ունեցանք մէկ ժամէ աւելի մտերիմ խօսակցութիւն մը:

Շահրիկեանին չըսի թէ Իզմիրի կուսակալութեան դատական քննիչ եղած միջոցին, մօրեղբօրս հետ մօտէն շփում ունեցած էր: Հայկական կեանքը եւ ի մասնաւորի Վանը մեզ այնքան զբաղեցուց, որ անձնական յիշատակներ քրքրելու միջոց չունեցայ:

Մեկնելէս առաջ, սա եզրակացութեան հասանք. —
— «Վանի մէջ երկու անձեր միայն, Արամ ու Իշխանը, իբր կուսակցութեան անդամներ, ինծի հետ յարաբերութեան մէջ պիտի գտնուէին: Եւ այդ պէտք է ըլլար կարելի զգուշութեամբ»:

*
**

Ինծի ըսուած էր որ Վան երթալու ամենէն կարճ, ապահով եւ մաքուր ճամբան Կովկասէն կ'անցնէր: Ըստ այնմ, Պաթումի ճամբով նախ Թիֆլիս գացի եւ հինգ-վեց ժամ մնացի: Երեկոյեան ճամբայ ելայ դէպի Երեւան:

Հոն չհասած, էջմիածնի կայարանը պիտի իջնէինք, եւ անկէ կառքով Սուրմալու գաւառի գլխաւոր քաղաքը՝ Իգդիր պիտի իջեանէինք:

Հաճոյալի հանդիպումով մը, գնացքին մէջ տեսայ անձ մը, որ իր հնախուզական աշխատանքովը եւ յարակից ուսումնասիրութիւններով ինծի ծանօթ էր, Երուանդ Լալայեանցը: Թիֆլիս-Երեւան մեր ճամբորդութեան ընթացքին շատ թանկագին տեղեկութիւններ հայթայթեց այն երկրի մասին ուրկէ կ'անցնէինք, եւ որ դարեր շարունակ պահած ու սնուցած էր հայութեան մէկ կարեւոր հատուածը: Այն որ ինծի պէս հայրեմիքէն դուրս ծնած է, լաւ պիտի հասկնայ հոգեկան վիճակս, եւ այն զգացումներն ու հմայքը, զոր հայրենի երկրէն անցքը եւ տեսքը ինծի կը պարգեւէին:

Լալայեանցը առաջարկեց հանդիպիլ նաեւ էջմիածին: Բայց իմացայ որ Գէորգ Կաթողիկոսը հոն չէր գտնուեր, այլ՝ ամառանոցը: Յուլիսի առաջին շաբաթն էր, տաքը անտանելի, իսկ ես ճամբաները, հոս հոն ուշացած ըլլալով կ'ուզէի օր առաջ պաշտօնատեղիս հասնիլ: Մտածեցի նաեւ որ քանի մօտ պիտի ըլլամ հայութեան այդ մեծ սրբավայրին, ապագային աւելի պատեհ առիթ մը պիտի կարենայի գտնել մասնաւոր այցելութիւն մը տալու համար:

Կառք մը վարձեցի եւ մեր պատմական գետին վրայէն անցնելով մէկ ու կէս ժամէն հասայ Իգդիր: Հետեւեալ առաւօտ Իգդիրէն մեկնեցայ, եւ սահմանին մօտ Օրկոֆի մաքսատունը մէկ-երկու ժամ մնալէ ետք՝ անցայ թրքական հողը եւ երեկոյեան գիշերեցի Գրզըլ-Տիգրտական գիւղը:

Օդը տաք էր: Քիւրտ աղային սենեակը որ ինծի տրամադրուած էր, լուերով լեցուն էր: Քնանալ անկարելի եղաւ: Հետս ունեցած կարպետը փռել տուի, եւ բացօթեայ լաւ քուն մը քաշեցի:

Հետեւեալ օրը ալեւոր Արարատի շուրջ դարձանք: Գիշերեցինք Աբաղայի դաշտին մէջ հայ գիւղ մը՝ կարծեմ Խաչէնի մօտ, դարձեալ բացօթեայ:

Հոս առաջին անգամ ըլլալով՝ չիման մէջ գտնուեցայ թուրք զապթիլէներու հետ: Ընդհանուր դատախազը մեծ անձնաւորութիւն մըն է ոստիկան-գինուորներուն համար: Անոնք կը հպատակին իրենց հրամանատարին՝ իբր գինուոր, բայց դատական-ոստիկանական գործերու մէջ իրենց պետը ընդհանուր դատախազն է:

Ի հարկէ, աղայ մը եւ ոստիկան մը տրուած պայմաններու տակ առաջարկեցին ինծի ինչ որ կրնային՝ բնակավայր եւ սնունդ հայթայթելու համար: Իմ մերժումս իրենց զարմանք պատճառեց: Ոստիկանի մը հրամայեցի հաւկիթ գնել: Վերադարձաւ տասնեակից հաւկիթով:

— «Անպիտան կեանքովը, — ըսաւ, — ինչ որ ուրիշ անգամ երկու տասնոցի (կէս դրուշ) կու տայ, այսօր չորս առաւ»:

Ես վստահ էի, քանի ծախողը «կեանքովը» էր, որ ոստիկանը անոր բան մըն ալ չէր վճարած:

Հինգ դրուշնոց մը տուի իրեն եւ վրադիրը չառի: Աչքերը տարօրինակ կերպով բացաւ: Երբ քովս գտնուող հայ տղան հետս սկսաւ հայերէն խօսիլ, թէ՛ աղային եւ թէ՛ ոստիկան-գինուորին զարմանքը յայտնապէս մեծ եղաւ: Հասկցան թէ հայ եմ, եւ մէկ երկու վայրկեան յետոյ ամէնքն ալ անհետացան...

Ընդհանուր դատախազ մը, հա՞յ...

Երրորդ օրը առտու Բերկրի հասանք:

Բերկրի Գագայի (գաւառակ) կեդրոն էր եւ հոն կարելի եղաւ սրճարան անունով խեղճուկ խանութ մը գտնել: Ինծի այցելութեան եկող գայմազամը (փոխ-կառավարիչ) եւ դատաւորը «աւետեցին», որ նոյն օրն իսկ, (1913 Յուլիս 10) էնվէրը վերագրուած է էտիրնէն: Անոնք ալ նախապէս յարգանքի մեծ ցոյցեր ըրին, մինչեւ որ հասկցան դարձեալ հայ տղուն խօսակցութենէն որ «Էրմէնի կեանքովը» մըն եմ, եւ կարճ կապեցին իրենց սելամալեֆումները:

Բերկրիէն վերջ, երեկոյեան հասանք Ճանիկ՝ Թիմարի գիւղախումբի կեդրոնը: Եթէ չեմ սխալիր, մօտ ութ հարիւր անձ թէ տուն ունէր այդ հայ գիւղը: Հոն գիւղին եզերքը, ջուրի ակի մը շուրջ, բաւական մեծ բազմութիւն մը հաւաքուած էր: Պատուոյ տեղը բազմած էին միւտիրը (գիւղապետ-կառավարիչ), տեղացի աղա մը եւ կողքին՝ Լիմի վանահայր վարդապետը:

Կեդրոնէն եկած հրահանգին վրայ էտիրնէի վերագրուած անթիւ ուրախութեան ցոյցեր կը կատարէին: Տաւուլը եւ գուռնան կը տիրապետէին, եւ օղիի շիշերը ձեռքէ ձեռք կ'անցնէին: Ի հարկէ, իմ հոն հասնիլս քիչ մը խանգարեց միւտիրին Բէյֆը: Իսլամ պետի մը ներկայութեան օղի խմելը անվայել բան էր: Բայց երբ հասկցաւ որ նոր ընդհանուր դատախազը հայ էր, երեսը վարդի պէս բացուեցաւ...

Հետզհետէ կատարները տաքցան եւ սկսան ուրախութեան ցոյցը գինարձակութեամբ ալ նուիրագործել: Հայ վարդապետը, խմելով մէկտեղ, լուրջ մնաց եւ սակայն, առիթը չփախցուց կեանքի, ինչքի եւ պատուի գոհացման ի նպաստ մաղթանքներ ընելու:

Այս կէտը մասնաւոր կերպով ուշադրաւ էր: Ամէն տեղ, եւ ամէն առթիւ, այդ երեք բառերը մեծին եւ փոքրին բերանն էին:

Յոգնածութիւն պատրուակելով քիչ մը հեռու քաշուեցայ եւ ջանացի քնանալ: Եւ սակայն ատրճանակներու ձայնը անտանելի աստիճանի կը հասնէր: Կանչեցի կառապանս Միհրանը, որ վանեցի էր, եւ հարցուցի թէ կարելի՞ էր ճամբայ ելլել: Լիալուսին էր, եւ կէս գիշերին սկսանք կամաց-կամաց դէպի Վան յառաջանալ:

Արշալոյսի առջի շողերուն Միհրանը ետին դարձաւ եւ մէնիտ մը նուէր ուզեց՝ ըսելով — «Ահա Վանի բերդը»:

Առաջին անգամ զայն տեսնող ճամբորդէ մը սովորութիւն էր այս նուէրը ուզելը:

Անշուշտ Վանի բերդը տեսնել կ'արժէր: Բայց այդ երեք ու կէս օրուայ ճամբորդութեան փորձանքէն ազատիլն ալ նուազ արժէք չունէր: Վճարեցի Միհրանին ուզածը, եւ մէկ ու կէս ժամէն հասանք Այգեաստան:

2.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ...

Պատանեկան տարիքէս, թէ՛ ուսանող եւ թէ՛ իբր պաշտօնեայ, վարժուեր էի քաղաք ու միջավայր փոխելու: Հոս սակայն պարագան տարբեր էր: Հայաստանի մէջ էի, եւ Վանը մեր հայրենիքին մասնաւոր եւ նշանակալից վայրերէն մէկն էր: Հայրենիքը եւ հայութիւնը փրկելու տենդագին աշխատանք կը տարուէր հոս: Դաշնակցական, Ռամկավար եւ Հնչակեան, իրենց հետեւորդներուն ու մանաւանդ կազմակերպչական ընդունակութիւններուն համեմատութեամբ՝ անարգել կը գործէին Վանի մէջ:

Իթիհատը Պալքանները կորսնցնելէ յետոյ, մնացեալին պինդ կառչած էր: Եթէ Համիտի շրջանին իրեն զօրավիգ քրտական զօրականութիւն ստեղծուած էր, հիմա ալ կ'աշխատէին կարգ մը քիւրտ ցեղապետներ սիրաշահիլ եւ խամաճիկներ ստեղծել:

Եւրոպական Թուրքիոյ մէջ թէ Պոլիս, հետաքրքրուած էի Վանի կուսակալին անձով: Գիտէի որ Մակեդոնական Յեղափոխութեան շրջանին փորձառութիւն շահած երիտասարդ մըն էր, գործնական մտքի տէր, եւ շատ մեծ աշխատասէր մը միանգամայն: Բնականաբար տնօրէնին ներկայանալէ եւ մնացեալ պաշտօնակիցներու ծանօթանալէ յետոյ, անմիջապէս տնօրէնին հետ այցելութեան գացի կուսակալ Հասամ Թահսիմ պէյին:

Առաջին տպաւորութիւնս իսկ վերահաստատեց իր մասին կազմած կարծիքս: Մեծ զարգացում չ'ունէր, բայց անկասկած խելացի մարդ մըն էր: Իր խօսակցութեան մէջ անկեղծութեան եւ բարեմտութեան շեշտ մը կար, որով կ'ուզէր ծածկել աղուէսի իր խորամանկութիւնը: Ընթացիկ քաղաքավարական արտայայտութիւններէ ետք, անմիջապէս իմ ուշադրութեանս յանձնեց պարագայ մը: Ըսաւ.

— «Գիշերը եթէ ատրճանակի հարուածներու ձայն լսես, մի՛ զարմանար: Այս քաղաքը գէշ, ոչ-քաղաքակիրթ տեղերու յատուկ սովորութիւն ունի: Ամէն մարդ իր տան պարտէզէն ատրճանակ կ'արձակէ: Չկարծես թէ դէպք մը պատահած է, եւ իբր ընդհանուր դատախազ քեզի պիտի դան ու կանչեն քննութեան համար: Պարզապէս մարդիկ զուարճութեան համար գէնք կ'արձակեն: Ոստիկանութեան պատուիրեցի որ

խիստ հետապնդում կատարեն, եւ արգելքի հրամանին անսաստողները ձերբակալին: Դուք ալ մեր աշխատանքին օգնեցէք եւ խիստ եղէք»:

Պատասխանեցի.

— «Անշուշտ, օրէնքի սահմանին մէջ, երկրին բարւոք վարչութեան համար եղած եւ ըլլալիք բոլոր ձեռնարկներուն անվերապահ աջակցութիւնս բերելու պատրաստ եմ»:

Ելայ քովէն, զարմանալով, որ այդքա՛ն կարեւորութիւն կու տար պարզ ոստիկանական պզտիկ դէպքերու: Չուշացայ սակայն հասկնալու համար որ այդ վարպետ մարդը իր պարզ յանձնարարութեամբ, մատը դրած էր պետականօրէն ամենակարեւոր վէրքին վրայ:

Իսկապէս, այդ երեկոյ իսկ, արեւմուտէն քիչ ետք, այլ եւ այլ տեղերէ սկսան լսուիլ ատրճանակներու հարուածներ:

Նոյն պահուն քովս կը գտնուէր ինձմէ մէկ ամիս առաջ Վան հասած հայ երիտասարդ դատաւոր մը, ամուրի ինծի պէս, որուն հետ միասին պիտի բնակէինք Հիւսեանին տունը: Տանտէրն ալ բարի գալուստի այցելութեան եկած էր: Երկուքն ալ երկարօրէն պարզեցին հրացանաձգութեան պատճառը:

Սահմանադրութեան հռչակումէն ետք, ժողովուրդը չէր դադրած զինուելէ: Այլ եւ այլ ձեւի գէնքեր գնելը պարտաւորութիւն նկատողները սկսած էին նաեւ զանոնք լաւ գործածելու վարժութիւնը ձեռք բերել. եւ որովհետեւ քաղաքի ժողովուրդը, առհասարակ արհեստաւոր՝ ոչ ցերեկը կրնար զբաղիլ այդ գործով եւ ոչ ալ գիւղականի լայն միջոցները կրնար ունենալ, ստիպուած էր տուներու ետին գտնուող մեծ պտղաստանները օգտագործել: Ահա թէ ինչու կուսակալը իրաւունք ունէր չախորժելու այդ անհանգստացուցիչ ձայներէն, որոնք ոչ միայն քաղաքին գիշերային հանգիստը կը խանգարէին, այլեւ ամենէն ձայնաւոր ապացոյցը կու տային որ հայերը գէնք կը գնէին եւ զինավարժութեամբ կը զբաղէին:

Յաջորդ օրուընէ սկսեալ տունը եւ դատարանը սկսան անվերջ եւ անտանելի ռարի եկար»ի այցելութիւնները:

Եւ արդէն քանի մը տարուայ փորձառութիւն ունէի այդ տեսակի այցելութիւններուն: Ինծի համար հոս նորութիւնը հայ կեանքն էր, եւ մանաւանդ ներկայացող հայ մարդոց նկարագիրը բնորոշող արտայայտութիւնները: Անոնց մէջ կային այնպիսիներ, որոնք կը ներկայանային ինծի որպէս ժողովուրդի աղա դասը. պարտաւորութիւն կը կարծէին ունենալ բարւոք յարաբերութիւն մշակելու օրուայ իշխանաւորներուն հետ: Կային եւ հազուադէպ դէմքեր, աւելի կամ նուազ հասարակական գործերով զբաղողներ, որոնք նորութեան մը ի տես, կ'ուզէին առօրեայ քաղաքական կեանքին մօտէն հետեւելու կարելիութիւններէն օգտուիլ: Ոմանք յայտնապէս ուրախ էին: Կառավարութեան եւ հայ տարրին փոխ-յարաբերութեան մէջ բարւոքումի նշան կը նկատէին ընդհանուր դատախազի մը առաքումը Վան: Կային նաեւ

աւելի ազատախօս անձեր (Արշարունի պատրիարքին պէս) որոնք կառավարական այս կարգադրութիւնը խաբէական ձեռնարկ մը կը նկատէին:

Ամէն պարագայի առաջին 8-10 օրերու ընթացքին կատարելապէս հասկցայ թէ շատ դժուար կացութեան մը մէջ կը գտնուիմ: Նախ՝ օրէնքի մարդ էի եւ խղճի մտօք անոր տրամադրութիւններուն գործադրութեան պաշտօնն ունէի: Օրէնքի տրամադրութիւնները սակայն, միշտ խղճի ձայնին հետ համաձայնեցնել կարելի չէր: Օսմանեան կառավարութեան օրէնքները, մեծ մասամբ Ֆրանսականէն թարգմանուած՝ լաւ էին: Սակայն զանոնք ըմբռնելու եւ մանաւանդ գործադրելու մէջ մեծ թերացումներ կ'ըլլային: Իսկ քաղաքական բնոյթ ունեցող գործերուն մէջ, հասկնալի է, դատաւորի մը հայեցողութիւնը ըստ ազգի եւ նկարագրի՝ շատ կը փոխուէր:

Որքան ալ ազատ եւ արդար մտածող ըլլար ան, չէր կրնար համոզել թուրք դատաւոր մը որ իրաւունք տար ոչ-թուրքի մը բողոքին եւ արդար ընդվզումին, երբ վերջինս կը ծառանար կառավարութեան դէմ, իրեն եւ ազգակիցներուն եղած անիրաւութեանց համար: Եւ այսպէս, երբ մէկը կը գործէր ոչ-օրինական ձեւով, դատաւորը ինքզինքը պարտաւոր կը զգար՝ առանց չքմեղանքը նկատի առնելու՝ պատժելու գայն:

Բայց կար նաեւ յանցաւորին կեանքը եւ ընկերային պայմանները քննելու, յանցանքին իրական կարեւորութիւնն ու չափը ըմբռնելու, եւ մանաւանդ կրօնական ու ազգայնական մոլուցքէ չտարուելով՝ պաղարեամբ դատ-դատաստան ընելու, եւ անկաշկանդ վճիռ արձակելու պարտաւորութիւնը: Ուրեմն, Հոն ուր հասկացողութիւն, գնահատանք, գատողութիւն կար, միեւնոյն օրէնքէն բխած վճիռներն ալ անձէ անձ բնականաբար մեծ տարբերութիւն կրնային ունենալ:

Անկաշկանդ բառը ընդդժեցի, որովհետեւ առհասարակ բոլոր երկիրներու մէջ առաւել կամ նուազ, բայց այն աստե՛ն մանաւանդ թուրքիոյ մէջ՝ դատաւորներու մեծագոյն փորձանքը քաղաքական պատճառներով կառավարական-վարչական կազմի ոտնձգումները, եւ նոյնիսկ սպառնական միջամտութիւններն էին:

Ի՞նչ ընել: Ձեռնթափ ըլլալ, հրաժարիլ եւ առնել քալե՞լ, թէ գժուարութիւններու կուրծք տալ եւ տոկալ, մինչեւ որ քեզ ճամբէին:

Բանի միշտ երազս էր եղած հայ երկրի եւ հայ աշխարհի մէջ աշխատելը, շուգեցի առիթը կորսնցնել եւ դասալիք ըլլալ: Միայն որոշեցի զգուշ ըլլալ, եւ նպատակիս իրագործման համար աւելի լայն միջոցներ օգտագործել:

Այցելուներուն մէջ ամենէն հետաքրքրական դէմքերը թուրք տեղացի երեւելիներն էին: Անոնց համար աւելի քան տարօրինակ էր հայ ընդհանուր գաղափար մը տեսնելը: Յետ այսու ինչպէ՞ս գտաւ պիտի բանային հայ անհատներու գէմ...:

Բարենորոգումներու, հայերուն կարգ մը իրաւունք տալու մասին կը խօսուէր, եւ ահա՛ այդ խօսքերուն ճիշդ ըլլալուն ապացոյցը՝ հայ ընդհանուր դատախազ մը ցցուած էր առջեւին: Ինչպէս կ'երեւէր, այդ թուրք երեւելիներէն ոմանք կ'ուզէին օրուայ պահանջներուն ենթարկուիլ եւ իրականութեան հետ հաշտ ապրիլ, որովհետեւ շատ սիրալիր էին ինծի հետ, կամ գէթ լաւ կը կեղծէին: Կային սակայն այնպիսիներ, որոնք չէին կրնար իրենց անհանդուրժողութիւնը զսպել:

Ինծի կը մնար ամէնուն հանդէպ լուրջ, ծանր եւ զգուշ վարմունք ունենալ, դիտել, զննել, մտքիս մէջ պահել ամէն մէկէն ունեցած տպաւորութիւնս եւ, հետզհետէ այլ եւ այլ առիթներէ օգտուելով, հասկնալ շրջապատը կազմող տարրերը եւ անձերը բնորոշող յատկութիւնները եւ նկարագիրները:

8.- ԱՌԱՋԻՆ ՈՃԻՐԸ

Հազիւ 8-10 օր եղեր էր գործի սկսիլս, երբ լուր եկաւ թէ ոճիր մը գործուած է քաղաքին մէջ: Թէեւ օգնական դատախազ մը ունէի, ծագումով թաթար, եւ երկու հարցաքննիչ դատաւորներ, սակայն նախամեծար համարեցի անձնապէս քննութիւն կատարել:

Վանի Այգեստան ըստած մասը բուն քաղաքէն 15-20 ըրպէի ճամբայ էր, չափաւոր քաղաքով: Գլխաւոր պողոտան յիսուն ըրպէի չափ կ'երկարէր: Ատոր երկու կողմերը, պարտէզներուն եզերքը եւ կամ մէջը տուներ կը գտնուէին: Ժամանակին Վանը լիճի եզերքէն քսան ըրպէ հեռու պարսպապատ բերդաքաղաք մը եղած էր: Բերդին մէկ մասը դեռ կը մնար, ինչպէս անոր ստորոտը՝ հին քաղաքը եւ շուկան: Բայց ժողովուրդը այդ նեղ փողոցներէն հետզհետէ ձերբազատուելով պարտէզներու մէջ բնակավայր հաստատած էր ու կերտած Այգեստանը, որ քաղաքին մեծագոյն եւ լաւագոյն մասը կը կազմէր: Հոն բնակողներուն մեծ մասը ամէն օր ստիպուած էր քաղաք իջնել՝ թէ՛ խանութներուն մէջ աշխատելու, եւ թէ՛ առօրեայ գնումները ընելու համար:

Ձմեռը, մանաւանդ ձիւնին եւ բուքին, ճամբան տաժանելի էր: Բայց ամէն մարդ վարժուած էր այդ կեանքին: Այգեստանի քաղաքին մօտիկ մասին մէջ հաստատուած թուրքերուն մէջէն անցնիլը, հայերուն համար մեծ անպատեհութիւն կը նկատուէր: Իսկ Այգեստանի մանաւանդ վերի մասը, գլխաւոր պողոտային աջէն ու ձախէն բացուած շատ մը փողոցներ կային, երբեմն մէկ ու կէս, երկու մեթր լայնքով, որոնք կրկին բաժանումներով թաղերու քառակուսիներ կը կազմէին:

Այդ տեսակ փողոցի մը մէջ ահա գործուած էր ոճիրը, որուն քննութեան կ'երթայի:

Նորաշէն կոչուած եկեղեցիին առջեւ, այդ նոր փողոցին երկու կողմերը այլ եւ այլ խանութներ կային, գետնէն մէկ մեթր բարձր տախտակէ յատակներով: Ինծի կ'ընկերանար ոստիկանութեան տնօրէնը, ինծի պէս նորեկ, համալսարանական երիտասարդ մը, որ գործելու եւ մանաւանդ փայլելու մեծ փափաք ունէր: Երբ հասանք ոճիրին վայրը, տեսանք որ տարիքը բաւական յառաջացած մարդ մը, ալեխառն խարտեաշ մագերով, պառկած էր փողոցի երկայնքին: Սպաննուած պահուն կ'երեւի ձմերուկ կ'ուտէր, որովհետեւ ձմերուկի կտոր մը քովը ինկած էր. դէմքին, պեխերուն եւ հագուստներուն վրան ալ կուտեր կային:

Օր ցերեկով գործուած սպանութեան հեղինակը կարելի չէր որ անծանօթ մնար: Նեղ, բայց շատ բանուկ այդ եկեղեցիին փողոցը, որ եզերուած էր խանութներով, ամենէն անյարմար տեղն էր ցերեկ ատեն ոճիր գործելու համար: Իսկ սպանեալին ձմերուկ ուտելու պահուն գետին տապալիլը յայտնի ապացոյց էր որ կռիւի մը հետեւանք չէր այդ ոճիրը, այլ կանխամտածուած գործ մը:

Նախնական քննութենէն յայտնի եղաւ որ սպանեալը Մելօ անունով նախապէս երեք տարուայ թիապարտութեան դատապարտուած էր, աւելի քան կասկածելի անցեալով ու ներկայով:

Ոչ ոք գիտէր ոճրագործին ինքնութիւնը: Ինչ ձեւով որ խօսեցանք, անօգուտ եղաւ: Բոլոր խանութպանները իրենց առջեւը կը նայէին, գունատ եւ շուարած. կ'ըսէին թէ քան չեմ տեսած: Սակայն բոլոր վկաներն ալ ուզածիդ չափ տեղեկութիւններ կու տային շատ գէշ բարքի տէր սպանեալին մասին: Ոչ ոք կը ցաւէր գործուած ոճիրին համար. իսկ ոճրագործը կարծես մարմին ունեցող անձ մը չէր, ոչ ոք տեսած էր զայն:

Այսպէս, քանի մը ժամ ապարդիւն հարց ու փորձէն ետք, պզտիկ միջադէպ մը պատահեցաւ իմ եւ ոստիկանութեան տնօրէնին միջեւ: Ան ուզեց որ վկաները մօտակայ պահականոցին մէջ վար դրուին, եւ բռնութիւն գործածուի անոնց խօսիլ տալու համար: Բնականաբար մերժեցի: Եւ որովհետեւ ըստ օրինի, դատաւորի մը քննութեան սկսելէն վերջ, ոստիկան թէ ոստիկան-գիւնուոր անոր հրահանգներով միայն ստիպուած էին գործել, մերժումէս նեղուած՝ ան ձեռք առաւ հեռաձայնը եւ սկսաւ կուսակալին հետ խօսիլ:

Կ'երեւի կուսակալը զինքը սաստեց, որովհետեւ դէմքը խոժոռեցաւ, եւ առանց մնաք-բարով իսկ ըսելու ձգեց գնաց:

Հոն գտնուող հինգ-վեց հայ խանութպանները, որոնք կը զգային թէ մեր մէջ տարակարծութիւն կար, լայն շունչ առին երբ տնօրէնին մեկնիլը տեսան:

Հասկցայ որ նոր բան պիտի չկարենայի իմանալ: Այսու ամենայնիւ, ամէնքը գատ-գատ, եւ վերջն ալ հաւաքաբար քովս բերել տուի եւ դարձեալ հարցաքննեցի: Ամէն մէկը, որեւէ պատրուակով, այդ ժամուն իր խանութը չըլլալը, հետեւաբար բանէ լուր չունենալը կրկնեց, եւ խնդրեց աղերսարկու ձեւով մը որ իրեն թոյլ տամ մեկնելու: Որովհետեւ ալ ընելիք չէր մնացած, օրինական ձեւակերպութիւններէ ետք իբր վկայ բերուածները արձակեցի, եւ տուն վերադարձայ:

Հետեւեալ առտու կուսակալը հեռաձայնով ինծի յայտնեց թէ ոճիրը, իրեն տրուած տեղեկութեանց համաձայն՝ գործուած է պատժելու համար Մելօն, որ հակառակ շատ մը հրահանգներու եւ սպանալիքներու, շարունակած է յանուն կուսակցութեան ասկէ անկէ դրամ չորթել:

Բնականաբար ոճրագործը (ամէնուն ծանօթ) դատական իշխանութեան համար անյայտ մնաց, եւ հարցը փակուեցաւ:

4.- ԻՇԽԱՆԸ ԵՒ ՔԻՒՐՏԸ

Քանի մը օր յետոյ առտուն թղթածրար մը կը քննէի, երբ երկու հոգի պաշտօնատեղիս մտան:

Մէկը ինծի ծանօթ Ա. Թէրզիպաշեանն էր, որ նախապէս ներկայացած էր որպէս կալուածատէրը դատական պաշտօնատան *:

Թէրզիպաշեանը ներկայացուց իր ընկերը՝ Իշխանը, որ կարճահասակի եւ միջակի միջեւ, նիհար, 35-40-ի մօտ անձ մըն էր: Պիտի ըսէի երեւոյթով սովորական մէկը, եթէ զարմանալի աչքերը չըլլային:

Իսկապէս այս աչքերը յատկանշել շատ դժուար էր: Եթէ ըսեմ թէ աղուէսի խորամանկ աչքերու կը նմանէին շատ ճիշդ չէր ըլլար: Կարծես նուրբ վայրագութեան երեւոյթը ունէին: Վանէն դուրս, ազգային շրջանակներու մէջ այդ օրերուն շատ կը կրկնուէր իր անունը՝ Աղթամարի շրջանի առնչութեամբ: Ոչ-Ռաշնակցական մամուլը կ'ամբաստանէր զայն, իբր վանքի հասոյթները իւրացնող: Իսկ Վան գալէս

*) Կառավարական շէնքին մէջ քաւարար տեղ չկար դատարաններուն համար, եւ այդ պատճառաւ վարձուած էր Թէրզիպաշեաններուն պատկանող խանի մը երկրորդ յարկը: Քաղաքը, շուկային մէջ, տակը մանիֆաթուրայի եւ այլ խանութներու վրայ՝ այդ տախտակաշէն շէնքը շատ հեռու էր անհրաժեշտ յարմարութիւններ ունենալէ: Բայց Օսմանեան կառավարութեան օրով պետական լաւ շէնքերու չօրոյթիւնը նուազագոյն չարիք մըն էր:

ետք, իր (եւ Արամին) անունը օրը աւելի քան տասն անգամ կը լսէի: Այդ երկուքը կը նկատուէին կուսակցութեան յայտնի դեկավարները: Այս կարծիքը կը բաժնէին նաեւ թուրքերը եւ կառավարական պաշտօնէութիւնը:

Ես կը սպասէի Իշխանին այցելութեան, բայց մեծապէս զարմացայ որ այդ այցելութիւնը կ'ըլլար նախ պաշտօնատեղիս եւ յետոյ՝ ընկերակցութեամբ մէկու մը, որ Դաշնակցականներու համակրանքը վայելելէ շատ հետու էր:

Քաղաքավարական կարճ խօսակցութենէ մը յետոյ, Թէրզի-պաշեան բացատրեց, որ Վանի պատժական նախնական դատարանը ամիս մը պատիժ սահմանած է Իշխանին, իբր արտօնատիրոջ «Աշխատանք» թերթին՝ գրգռութիւն յառաջացնող յօդուածի մը համար: Ըսաւ նաեւ թէ որոշումը ի բացակայութեան տրուած է, եւ եկած են ատոր դէմ առարկելու եւ խնդրելու որ ուշադրութիւնս կեդրոնացնեմ գործին վրայ: Այլապէս յօդուածը չէ, այլ դատարանի անիրաւ որոշումն է, որ տարբերու մէջ գրգռութիւն պիտի յառաջացնէ:

Իսկապէս, իրենց մեկնելէն վերջ քննեցի թղթածրարը եւ կարդացի խնդրոյ առարկայ գրութիւնն ու յարակից թրքերէն թարգմանութիւնը: Այսօր, երեսուն եւ վեց տարի ետք՝ լաւ չեմ յիշեր, թէ այդ ոտանաւորին վերնագիրը «Չարի՞ք» էր թէ «Սոսկում»: Լաւ գիտեմ միայն որ այդ գրութիւնը ճշգրիտ պատկերը կու տար Բիւրտին, եւ թարգմանողն ալ այդպէս ըմբռնած ու գրած էր: Եւ սակայն... քիւրտ բառը գոյութիւն չունէր այդ ոտանաւորին մէջ: Ուրեմն թարգմանիչը ոչ թէ թարգմանած, այլ մեկնաբանած էր զայն:

Կուսակալը, պետական թարգմանին հայ ըլլալէն օգտուելով, թարգմանութիւնը անոր ընել տուած էր, ինչ որ օրինապէս ճիշդ չէր, քանի պետական թարգմանները միայն Փրանսերէնով կը զբաղէին: Օգտուելով այդ պարագայէն, եւ դիտել տալով որ նօտարին կողմէն ալ թարգմանութեան ճշգրտութիւնը չէր վաւերացուած, խնդրեցի դատարանէն նախ այդ թերթին լրացնել:

Բնականաբար, յաջորդ դատավարութեան ընթացքին կարդացած նոր թարգմանութեան մէջ քիւրտ բառը գոյութիւն չունէր: Բանաստեղծական գրութիւն մը, որ «աջի ու ձախի հետ կապ չունի» ըսի: Եւ պահանջիս համաձայն, Իշխանը անպարտ արձակուեցաւ:

5.- ՀԱՅ ԵՒ ԹՈՒՐԿ ԲԱՍՈՒՄ

Դժբախտաբար նոյն յաջողութիւնը չունեցայ յաջորդ գործին մէջ:

Վան ժամանելէս գրեթէ հինգ շաբաթ ետք կէս գիշերուան մօտ սոսկալի հրացանաձգութիւն մը ծայր տուաւ, որ սովորական, ասկէ-անկէ արձակուած հարուածներու չէր նմաներ: Բոլոր ձայները կրկին Նորաշէն թաղի կողմէն կու գային, եւ ժողովուրդը սկսեւ էր տուններէն դուրս թափիլ:

Հագուած՝ անձկութեամբ կը սպասէի՝ ճիշդ լուր մը ունենալու համար: Քառորդ ժամ վերջ, քոմիսէրներ եւ ոստիկաններ իրենց տնօրէնով մեր դրան առջեւ եկան ու զիս հրաւիրեցին այցելել ոճիրին վայրը, որովհետեւ իսկապէս ոճիր մը գործուած էր:

Գացինք: Թաղերու մէջ, տուններու առջեւ, ժողովուրդը կը պոռար, կը կանչէր: Կը լսէի նաեւ հայհոյանքներ եւ բուռն արտայայտութիւններ կառավարութեան եւ տէլրիյէի՝ դէմ, եւ թշնամական ցոյցեր մեզի դէմ:

Ճամբան ոստիկանական տնօրէնին հարցուցի այս ամէնուն իմաստը: Յայտնի եղաւ որ Մելգոն անունով ատամնաբոյժ մը ըսպաննուած էր: Եւ քանի զոհը հայ էր, ժողովուրդը կ'ենթադրէր որ ոճիրը գործուած էր չըջուն պահակախումբին կողմէ (կազմուած մէկ ոստիկանէ եւ չորս ոստիկան-զինուորներէ): Վիրաւորը նեղ երկու փողոցներէ կազմուած անկիւնի մը պատին կռօնած, եւ կէս կծկուած ձեւով գետին փռուած էր:

Շուրջիները քիչ մը հեռացնելով մօտեցայ: Տեսայ որ գանկին մէջ գնդակ մը ստացած էր: Խոշոր ծակէ մը ուղեղին կտորները դուրս թափած էին, եւ աչքին մէկուն վրայ բուռնցքի խոշորութեամբ ուռեցք մը կար:

*) Առ հասարակ չորս-հինգ ոստիկան եւ ոստիկան-զինուորներէ կազմուած այդ գիշերային շրջուն պահակախումբերը հայերու, եւ մանաւանդ կազմակերպութեանց համար կատարեալ մղձաւանջ մը դարձած էին: Այդ կազմակերպութիւնները իրենց գիշերային գործունէութեան մէջ ինքզինքնին կաշկանդուած կը նկատէին: Վերջին օրերը շարունակուող հրացանաձգութիւնները արգիլելու համար, կուսակալը հրահանգած էր պահակախումբերու թիւը անվերջելի, ինչ որ մեծ դժգոհութիւն պատճառած եւ գրգռութիւններ յառաջացուցած էր:

Անմիջապէս ոստիկան մը զրկեցի որ բժիշկ բերէ, եւ մինչեւ անոր գալը սկսայ ինկած տեղը ու դիրքը ճշդել, եւ առաջին անգամ դէպքին վայրը գտնուողները նախնական հարցաքննութեան մը ենթարկել:

Ժողովուրդը կը շարունակէր պոռալ կանչել եւ բացորոշ արտայայտութիւններով ուղղակի սպառնալ մեզի:

Տասը վայրկեան վերջ երկու հայ բժիշկներ եկան, եւ օրինական երդումը կատարելէ ետք, վիրաւորը քննեցին ու յայտնեցին թէ վէրքը յառաջացած է զինուորական մեծ գէնքէ մը արձակուած գնդակէ մը, որ գանկին վերի գագաթի կողմէն մտած եւ աչքէն դուրս ելած էր:

Այդ որ լսուեցաւ, ժողովուրդը սկսաւ աւելի բուռն կերպով արտայայտուիլ. չէ՞ որ բժիշկներու իսկ վկայութեամբ ոճիրը գործուած էր այդ անիծեալ տէվրիյէյին կողմէ:

Տեսայ որ հանդարտ կերպով տեղւոյն վրայ աշխատելու կարելիութիւն չկար: Արդէն վիրաւորն ալ բժիշկներու գալէն առաջ մեռած էր: Վայրին ու դիրքին ուրուագիծը առնելէ ետք արտօնեցի որ դիակը վերցնեն: Ապա Խաչ-փողանի պահականոցը գացի, ուր մինչեւ առտուան ժամը ութը անխափան շարունակեցի հարցաքննութիւններս:

Ոստիկանը եւ ոստիկան-զինուորները միեւնոյն ուղղութեամբ կ'արտայայտուէին: Իսկ սպանեալին հետ գտնուողները՝ տարբեր: Այսինքն՝ պաշտօնական-թրքական եւ հայկական երկու հակադիր տեսակէտներ կային: Ոստիկանը եւ ոստիկան-զինուորները կը պնդէին թէ վերոյիշեալ թաղէն անցած ատեն հանդիպած էին քանի մը երիտասարդներու, եւ — «կեցէ՛ք» — ըսած: Հայ զինեալները հրահանգը անգիտանալով՝ անմիջապէս դիրքեր գրաւած էին նեղ փողոցներուն անկիւններն ու տանիքներու վրայ, եւ սկսած էին իրենց վրայ կրակել: Որով իրենք ալ ստիպուած էին դիրքեր բռնել եւ փոխադարձել: Իսկ ոստիկանը կը կրկնէր թէ առաջին հարուածին իսկ ինք արդէն մեկնած էր, մօտակայ պահականոցին իմացնելու համար դէպքին մասին: Ոստիկան-զինուորները իրենց եւ հայերու դիրքերը ցոյց տալով, կը բացատրէին որ այցելութենէ մը վերադարձող սպանեալը միայն հարաւէն արձակուած գէնքով կրնար վիրաւորուած ըլլալ: Մինչդեռ ատամնաբոյժին ընկերացողները կը պնդէին թէ հրացանաձուլութիւնը լսելուն պէս ամէն մէկը աճապարած էր յարմար տեղ մը ապաստանիլ: Բոլոր հայ վկայները միաբերան կը յայտնէին թէ ո՛չ մէկ հայ զինեալ տեսած էին դէպքին վայրը:

Այսպէս՝ խնդիրը կնճռոտ հանգամանք մը կը ստանար, ու հայ եւ թուրք դէպքի երեւոյթը կ'առնէր:

Կառավարութիւնը կ'ուզէր պահել զինեալ պահակախումբերու շրջագայութեան դրութիւնը, եւ համոզուած էր որ պատահած դէպքը հաստատած էր անոր օգտակարութիւնը: Իսկ ջնջելու հայկական պահանջը նոր թափ կը ստանար, քանի յայտնապէս այդ դրութիւնը դէպքերու եւ սպանութիւններ կը յառաջացնէր:

Այս հակադիր տեսակէտներուն առջեւ ո՛րեւէ անաչառ դատաւորի բռնելիք ուղղութիւնը գիտութեան մարդոց յայտարարութեամբ միայն կրնար ճշդորոշուիլ: Քանի բժիշկները կ'ըսէին թէ զինուորական (մաուզերի պէս) մեծ գէնքէ մը յառաջացած էր վէրքը, ուրեմն սպաննողը ոստիկան-զինուոր միայն կրնար ըլլալ: Անոնց չորսն ալ նոյն գիշեր գէնք արձակած էին — բան մը որ իրենք ալ չէին ուրանար — եւ իրենց գէնքերը քննող փորձագէտն ալ արդէն այդ կը հաստատէր:

Որոշեցի ուրեմն անոնց համար ձերբակալման հրամանագիր տալ: Նոյնը նաեւ ոստիկանին համար որ մասնակցեր էր յարձակման: Ապա, քովս հասնող առաջին հարցաքննիչ դատաւորին յանձնելով քննութեան շարունակութիւնը, քնատ եւ ուժաթափ՝ տուն վերադարձայ:

Մէկ-երկու ժամ ետք երբ պաշտօնատեղիս եկայ, տեսայ որ հարցաքննիչ դատաւորը ամենայն լրջութեամբ կը կատարէր իր պարտականութիւնը: Յայտնեց որ կէս ժամէ ի վեր կուսակալը եւ ոստիկան-զինուորներու հրամանատարը հեռաձայնով ինծի հետ խօսիլ ուզած էին: Իսկապէս հինգ ըրպէ յետոյ կուսակալին թիկնապահ հարիւրապետը հեռաձայնով զիս հրաւիրեց: Եւ որովհետեւ հարցաքննիչ դատաւորին քով հարցուփորձերուն ես ալ ներկայ պիտի ըլլայի (ու ասիկա ջերմ փափաքովը դատաւորին, որ կ'ուզէր իմ հեղինակութեանս ապաւինիլ), պատասխանեցի թէ չեմ կրնար հեռանար այժմ՝ զբաղմանս պատճառով, եւ խնդրեցի որ կուսակալը բարի ըլլար հեռաձայնով հետս կապուիլ:

Իսկապէս քիչ վերջ ունեցանք խօսակցութիւն մը, որուն եզրակացութիւնը այն եղաւ թէ ոստիկան-զինուորներու հրամանատարը՝ կատղած էր ինծի դէմ, որովհետեւ համարձակած էի իր մարդիկը ձերբակալելու հրաման տալ: Նոյն նեղսրտութիւնը ցոյց տուած էր ոստիկանութեան տնօրէնը: Վերջինը քննութեանց ատեն քովս կը գտնուէր, եւ քանի մը անգամ միջամտել փորձած էր: Արգիլած էի իրեն որեւէ հարց ու փորձ ընել, եւ ինքն ալ ձգած գացած էր:

Պատասխանեցի կուսակալին որ արդարադատութեան պաշտօններս շիտակ եւ անաչառ գործունէութեամբ կը շարունակեմ, եւ խընդրեցի իրմէ որ ձերբակալման հրամանագիրս գործադրել տայ:

Առաւօտ կանուխ թաղերու մէջ անսովոր եռուզեռ մը սկսած էր: Ամէն կողմ ցոյցեր տեղի կ'ունենային. քաղաքամէջի շուկան փակ էր: Խուճ-խուճ հայեր թաղերու մէջ կը պտըտէին, եւ պահանջ կը յայտնուէր որ ոստիկանը եւ ոստիկան-զինուորները ձերբակալուին:

Տարօրինակը այն էր, որ մինչ թուրքերն ու կառավարական շրջանակները կը գանգատէին ընդհանուր դատախազին դէմ, որ կողմնակալութիւն կ'ընէր եւ իր ընթացքովը կը վարկաբեկէր թուրք զինուորու-

*) Ոստիկան-զինուորներու հրամանատարը հազարապետ Խալիլ պէյն էր, յետոյ նշանատր դարձած Խալիլ փաշան՝ Էնվերի հօրեղբայրը, որ առաջին մեծ պատերազմին փառատր դաս մը առաւ զօրավար նազարեկեանէն:

Թեան պատիւը, հայերը կը զանգատէին հայու անունը կրող ընդհանուր դատախազին դէմ, որ թուրքի մը պէս յայտնօրէն կը պաշտպանէր թուրք ժանտարմաններն ու ոստիկանութիւնը:

Տեղւոյն վրայ գտնուող մեծ պետութեանց հիւպատոսներն ու փոխ-հիւպատոսները շահագրգռութեամբ կը հետեւէին օրուայ տազնապալի կացութեան, եւ անոնց հայ թարգմանները ամէն տեղ զիս կը հետապնդէին լուր մը ստանալու համար:

Պոլիս հեռագիրներ կը տեղային: Վերաքննիչ Ատեանին նախագահը, որ դատական գործերու տնօրէնն էր միեւնոյն ատեն, կուսակալին հետ համաձայն, նախարարութեան կը հեռագրէր որ հայ ընդհանուր դատախազը իր կողմնակալ ընթացքով ժողովրդային գրգռութիւն յառաջ կը բերէր: Գինով թուրք թղթակից մըն ալ, կուսակալին հետ Պոլսէն Վան եկած՝ սիւնակներով նոյն բանը կը հեռագրէր «Թանին» թերթին, եւ պատճէնն ալ ինծի կը զրկէր:

Իսկ տեղւոյն հայ թերթերը (Դաշնակցական եւ Ռամկավար) զանգատներ կ'արձանագրէին հայանուն դատախազին դէմ:

Ճամբան, փողոցը, ամէն կողմ սպառնալից նայուածքներ կ'ուղղուէին ինծի: Ոչ ոք գիտէր սակայն որ ես առաջին օրէն իսկ ձերբակալման հրամանագիր տուած էի, բայց չէի կրնար յայտնել, քանի օրէնքով բացարձակօրէն արգիլուած էր ո'րեւէ տեղեկութիւն դատական քննութեան ընթացքին հանրութեան սեփականութիւնը դարձնել:

Այս տարօրինակ կացութենէն դուրս ելլելու համար երկու միջոց ունէի՝ կամ հրամանս գործադրել տալ, եւ կամ հրաժարիլ եւ ձեռնթափ ըլլալ:

Դեռ վերջնական որոշման մը յանգած չէի, երբ Վերաքննիչ Ատեանի թաթար ընդհանուր դատախազը՝ քովս եկաւ եւ յայտնեց թէ կուսակալին քովէն կու գար, եւ կարգ մը տեղեկութիւններ կ'ուզէր ընթացիկ գործերու մասին: Եւ յետոյ, խօսքը ատամնարոյժին սպանութեան բերելով թելադրեց ինծի շատ ալ չընդդիմանալ, մանաւանդ որ ըսաւ, — «սպարէզդ խորտակելու վրայ ես»:

*) Վերաքննիչ Ատեանի ընդհանուր դատախազը իմ պաշտօնավարութեան օրերուն երկկողմանի դիրք մը ունէր: Դատարանի մէջ դատարար մըն էր, որ միայն պահանջ կը ներկայացնէր, առանց որոշում տալու, իսկ դատական կազմի արտաքին յարաբերութիւններուն ղեկավարը ինքն էր: Թէ՛ նախարարութեան եւ թէ՛ տեղական պետական հաստատութեանց հետ կարելի էր միայն իր խողովակով յարաբերիլ: Ուրեմն իր կարեւորութիւնը մեծապէս կը շեշտուէր, երբ ամենէն առաջ իրեն ներկայացուած խնդիրները քաղաքական հանգամանք ունէին:

Ամենէն առաջը ընդգծեցի, որովհետեւ ամէն դէպքի առթիւ ամէն դիմում, նախ իրեն պէտք է ըլլար: Ուրեմն նախաձեռնութիւնը իրն էր, եւ ոստիկանական այլ ուժեր՝ օրէնքով ճշդուած պարագաներու տակ՝ իր տրամադրութեան տակ կը գտնուէին:

Հասկցայ որ լեզուին տակ բան մը կար: Իսկապէս կամաց մը գրպանէն խոշոր ծաւալով թուղթ մը հանեց եւ ըսաւ թէ կուսակալութեան հարիւրի մօտ ոստիկանները իրենց բռնիսէրներով եւ տնօրէններով, ինծի դէմ բողոքագիր մը պատրաստած, ստորագրած եւ կուսակալին յանձնած էին: Կարդաց 7-8 կէտերէ բաղկացած այդ ընդարձակ գրութիւնը, ուր կը յայտնուէր թէ ես առաջին վայրկեանէն իսկ կողմնակցութիւն ըրած էի, եւ թուրք տարրին դէմ ատելութեամբ լեցուած՝ անարգած էի կառավարութիւնը: Թէ տարրերու միջեւ կիրք եւ գրգռութիւն յառաջացուցած էի անմեղ ոստիկանի մը ձերբակալութիւնը պահանջելով: Թէ ամբողջ ոստիկանական կազմին մէջ աշխատելու եռանդը չքացուցած էի, եւ եթէ քսանչորս ժամէն պաշտօնէս չհեռացուէի, բոլորն ալ պիտի ձգէին իրենց գործը եւ տուններնին պիտի երթային:

Անշուշտ տեղացի ոստիկանները այդ տեսակ բան մը ընել համարձակելու քաջութիւնը չունէին: Պոլսէն նոր եկած մէկ-երկու ոստիկաններու, եւ մանաւանդ ոստիկանութեան տնօրէնին գործը պէտք է ըլլար այս, եւ շատ հաւանաբար կուսակալին թելադրութեամբ:

Ոչ միայն ոճը անարգական էր, այլեւ ուղղակի այնպիսի վերագրումներ կային, որոնք դատական ճամբով զիրենք դատապարտել եւ պատժել տալու համար աւելի քան բաւական էին:

Հասկցայ որ սպառնալիք մըն էր, եւ շատ գէշ տեսակէն: Ուշադրութեամբ կարդալ ուզելու ձեռով թուղթը ձեռքէն առի, եւ կամացուկ մը գրպանս դնելով մեկնիլ պատրաստուեցայ:

Ցատկեց տեղէն եւ բողոքագիրը պահանջեց:

Պատասխանեցի որ ոստիկանները, մէջը ըլլալով նաեւ իրենց տնօրէնը, դատական քննութիւններու մէջ իմ ստորագրած պաշտօնեաններն են: Այս գրութեամբ իրենց պետը անարգած ըլլալով՝ անմիջապէս իրենց դէմ դատ պիտի բանամ:

Մարդը սկսաւ աղաչել, պաղատիլ, յայտնելով որ կուսակալը զինք պաշտօնանկ ընել պիտի տայ, քանի պատուիրած էր բողոքագիրը ցոյց տալ, կարդալ միայն, բայց երբեք հայուն ձեռքը չտալ: Ըսի.

— «Գնա՛, պէյին յայտնէ որ ձեռքէս առաւ», եւ դուրս ելայ:

Ոստիկաններու բողոքագիր-մագպաթան իմ վրայ կուսակալին ենթադրածէն բոլորովին հակառակ ազդեցութիւն գործեց: Անմիջապէս իմ գիրովս կուսակալին պաշտօնագիր մը զրկեցի, որով կարճ եւ կտրուկ յայտնեցի թէ կուսակալութեան գործադիր իշխանութեան պետը ըստ օրինի ինքն էր, որով պահանջեցի իրմէ ձերբակալման ծանօթ հրամանագրերուս գործադրութիւնը: Կամ անոնք անմիջապէս պէտք է գործադրուէին, եւ կամ, եթէ ինքը անկարող էր, պէտք է իմացնէր ինծի թէ օրէնքի գործադրութեան համար որո՞ւ պէտք է դիմէի:

Քիչ յետոյ քարտուղարը վերադարձաւ կուսակալին թիկնապահին եւ ընդհանուր դատախազին հետ: Հեռաձայնս պատեհօրէն խանգարուած էր: Կրկին զիս կուսակալին մօտ հրաւիրեցին: Իրենց բացատրեցի եւ

ըստ որ նախ պէտք է մեր յարաբերութիւնները բնականոն վիճակ մը ունենային: Փոխանակ ոստիկանները գրգռելու եւ իր դիրքին անհամապատասխան ընթացք մը ունենալու, ինք պարտաւոր էր օրինական հիմունքով իմ տուած հրամանագրերս գործադրել տալ, եւ զիս տարօրինակ կացութեան մը փրկել: Հակառակ պարագային՝ ուղղակի պատճառաբանելու հետագրով մը պաշտօնապէս պիտի հրաժարէի. եւ հրաժարագիրս ալ, որ նախապէս պատրաստած էի, իրենց յանձնեցի որ կուսակալին տային:

Մէկ-երկու ժամ ետք, կուսակալը տեղեկացուց որ ոստիկան-զինուորները պահականոցին մէջ վար դրուած են, իսկ ոստիկանը բանտ առաջնորդուած է, եւ թէ իրենց տնօրէնը պաշտօնանկ եղած ըլլալով հետեւեալ առտու կը մեկնի քաղաքէն:

Այդ պաշտօնագիրը բերողը (կուսակալին անձնական քարտուղարը), իմ հրաժարականս ինծի տալով, ծանօթ բողոքագիրն ալ ետ ուզեց: Այլեւս զայն վերադարձնելու մէջ ոչ մէկ անպատեհութիւն կը մնար:

Անշուշտ տարբեր տեղ եւ տարբեր ժամանակի մէջ իմ ընթացքս ոչ թէ գոհացուցիչ արդիւնքով կը վերջանար, այլ մեծապէս վնասակար կրնար ըլլալ: Բայց, ինչպէս կ'ըսեն թուրքերը, «ժամանակը փափուկ է» եւ հայ ընդհանուր դատախազին եւ կուսակալին միջեւ առաջ եկած տարակարծութիւնը քաղաքական բնոյթ մը կը ստանար, մինչդեռ ինքն ալ մէկն էր անոնցմէ, որոնք հայ եւ թուրք ուղղակի յարաբերութեանց միջոցաւ կ'ուզէին «լուծել» բարենորոգումներու հարցը:

Սպանեալին դիակը դեռ չէր թաղուած: Արտօնութիւն տալէ առաջ անհրաժեշտ էր դիագնոստիկան մը կատարել: Զինուորական հազարապետ բժիշկի մը նախագահութեամբ, քանի մը բժիշկներէ կազմեցինք յանձնախումբ մը, որուն կը մասնակցէին նաեւ հայ բժիշկներ: Ես ու հարցաքննիչ դատաւորն ալ ներկայ էինք: Երկու հայ բժիշկները, նախնական քննութեանէ ետք յայտարարած էին թէ գնդակը գանկի զազաթէն մտած եւ մէկ աչքէն դուրս եկած էր, եւ փամփուշտն ալ մեծ գէնքէ մը արձակուած պէտք է ըլլար: Արդ՝ դիագնոստիկամբ յայտնուեցաւ որ գնդակը աչքէն դուրս չէր ելած, այլ աչքին խոռոչին մէջ մնացած էր, եւ թէ այդ գնդակը մատուցելի պէս մեծ հրացանէ մը չէր արձակուած:

Պէտք չկայ բացատրելու որ այս արդիւնքը իմ վրայ անակնկալ եւ ցաւալի տպաւորութիւն մը թողուց: Հայ բժիշկներու հապճեպով յայտարարութիւնը թէ սպանեալը մեծ մառուգէրի գնդակով վիրաւորուած էր, ժողովուրդին՝ ոստիկան զինուորներուն հանդէպ բնականօրէն ունեցած ատելութիւնը գերազարգացած էր: Եւ երբ զինուորական փորձագէտները, որոնցմէ մէկը հայ, յետ քննութեան իրենց տեղեկագրով յայտարարեցին, թէ գնդակը մատուցել տասնոց ատրճամակի գնդակ էր, տեղական հայ թերթերը սկսան այս անգամ հայ զինագործը այպանել իբրեւ «հայանուն թուրք»:

Ես ոչ մէկ ծանօթութիւն ունէի գնդակներու տեսակի մասին, ուստի ճշմարտութեան իրազեկ ըլլալու համար, դատարանի հայ քարտուղար եւ ուշիմ Դաշնակցական երիտասարդ Դաւիթ Փափագեանին ցոյց տուի գնդակը: Ան ալ համաձայնեցաւ որ փորձագէտներու եզրակացութիւնը ճիշդ էր:

Բայց այս անգամ առարկուեցաւ որ ոստիկանները նաեւ վեց հարուածեայ կը կրէին, հետեւաբար այդ ատրճանակէն պէտք է ելած ըլլար գնդակը:

Կառավարական շրջանակները կը պնդէին որ ձեռք բերուած գրնդակը, զոր դիագնոստիկները կատարող բժիշկը ուղղակի ինծի յանձնած էր, բռնիքի յատուկ վեց հարուածեայի կապարը չէր, այլ հայ կուսակցականներու գործածած տասնոց մատուցելիքը: Իսկ հայկական շրջանակները կը պնդէին, որ ամէն մէկ ոստիկան՝ պետութեան կողմէ գրուուած գէնքերէն երկրորդ մըն ալ կ'ունենայ, հետեւաբար ոստիկանը իր երկրորդ գէնքն է գործածած (պահակախումբը միշտ կը պնդէր որ զինեալ հայերու հետ գործ ունեցած էր):

Իսկապէս, զինուորական հարիւրապետի մը, իմ եւ հարցաքննիչ դատաւորին կողմէ ոճիրին վայրը հետեւեալ առտու կատարուած մանրագնին քննութիւն մը ցոյց տուած էր որ գնդակները իրարու հակառակ երկու ուղղութեամբ արձակուած էին, ինչ որ գետնէն գտնուած քանի մը փամփուշտներէն ալ կը հասկցուէր: Նմանապէս այն տան տանիքէն, ուրկէ ըստ ոստիկան-զինուորներու՝ իրենց վրայ կրակուած էր, գիւղական կօշիկ մը գտնուած էր:

Կը տեսնուէր ուրեմն, որ այս պայմաններուն տակ սպանեալին թաղումը հանդարտօրէն չէր կրնար կատարուիլ: Կառավարութիւնը արգելած էր ցոյցերը, եւ ուժ տալու համար իր արգելքին, գումարտակ մը ձիաւոր զինուորներ եւ բազմաթիւ ոստիկաններ ուղարկած էր:

Ատամնաբոյժին դիակը, որ կը գտնուէր Հնչակեաններու ակումբը (ուր երկու օրէ ի վեր Փարամազ ամէն դասակարգի հայերու ցաւակցական այցելութիւնները կ'ընդունէր) երբ փողոց կը հանուի, երեք հազարէ աւելի ժողովուրդ կը շրջապատեն դազաղը: Սակայն ոստիկաններն ու ձիաւոր զինուորները զինեալ յարձակումի չեն անցնիր այլ՝ խելօքիկ մը կը տարտղնուին:

Կուսակալին թիկնապահը կ'երթար-կու գար եւ զիս կը հրաւիրէր տեսնելու իր պետը: Միշտ ալ ներողութիւն կը խնդրէի՝ չափազանց զբաղած ըլլալս յայտնելով: Բայց երթալ չուզելս ոչ թէ ինծի ընելիք դիտողութիւններուն պատասխանելու հաւանական անճրկութեանէս էր, այլ վստահ էի որ տեղական պաշտօնաթերթը, եւ Պոլսոյ թուրք թերթերու թղթակիցները չպիտի վարանէին յայտարարութիւններս իրենց ուզած ձեւով հրատարակելու, որով՝ ներկայ կացութիւնը աւելի պիտի ծանրանար:

Իմ վրաս ճնշում բանեցնելու համար ամէն միջոց կը մտածէին: Դատական տնօրէնին զիս ամբաստանող հեռագրին ի պատասխան, նախարարութիւնն ալ, որ ինչպէս կ'երեւի, անպատեհ կը գտնէր նոր անուանած հայ ընդհանուր դատախազը ետ կանչելը, վերաքննիչ Ատեանի ընդհանուր դատախազին ծածկագիր հեռագրով տեղեկութիւն պահանջած էր գործին էութեան եւ ընթացքին մասին:

Մեր գինով թաթարը ամէն պարագայի տակ աւելի մաքուր էր: Այս անգամ առանց վերապահումի հեռագիրը ինծի ղրկեց եւ ինձմէ գրաւոր պատասխան մը ուզեց: Գրեցի ամփոփ եւ եզրակացուցի թէ կողմնակալութիւն վերագրողները իրենք են որ այդպէս կ'ընեն: Եւ աւելցուցի որ եթէ ամէն արարք այսպէս հայու եւ թուրքի գատ ակնոցով դիտուի, թոյլ պիտի չտրուի որ դատաւոր մը ազատ եւ անկախ, օրէնքի սահմանին մէջ, իր հայեցողութեամբ կարենայ գործել: Ուստի աւելորդ պիտի ըլլար այլեւս իմ վան մնալս, ինչ որ իմ կողմէ արդէն զոհողութիւն մըն էր:

Քննութիւնները կը շարունակուէին: Կը լսէի որ ամենէն շատ ինծի դէմ խօսողն ու գործողը ոստիկան-գինուորներու հրամանատար Խալիլ պէյն էր: Ան ներկայացած էր նոյնիսկ հիւպատոսներուն, եւ պատուոյն վրայ պնդած որ ոստիկան-գինուորները ոչ մէկ յանցանք ունէին, որովհետեւ ինք վստահ էր թէ իր գինուորները իրեն ճիշդը ըսած էին, եւ թէ սպանեալը հայկական զնդակով ինկած էր: Նոյնիսկ համարձակեցաւ իբր թէ իրեն քով բանտարկուած ոստիկան-գինուորներէն մէկը աստիճանի բարձրացումով (չավուշ կարգած) ինծի ղրկելու ո'րեւէ պաշտօնազրով: Իրեն համար մեծ պարծանք կը նկատէր որ գինուորները կուտելէ չէին խուսափած, ինչպէս իր նախորդներուն ժամանակը եղած էր:

Թաղումէն վերջ փողոցային ցոյցերը բնականաբար մեղմացան, բայց զրիչները միշտ կը շարժէին: Ոստիկանը միշտ բանտն էր, բայց իրեն դէմ տկար հաւանականութենէ մը անդին ոչ մէկ փաստ կար: Ի հարկէ, չկրցանք հաստատել նաեւ զինարձակման պահուն զինեալ հայերէ բաղկացած խումբի մը գոյութիւնը, ինքնութիւնը եւ մասնակցութիւնը: Գրեթէ ամէն օր ոստիկանը աղերսագիր մը կու տար եւ ազատ արձակուիլը կը խնդրէր: Հարցաքննիչ դատաւորը իմ պահանջովս միշտ մերժողական պատասխան կու տար:

•
••

Ոճիրին գործուիլը Ե-Ց օր եղած էր: Ապարդիւն եւ սակայն մեծ աշխատանք կը տանէի՝ զրական եզրակացութեան մը յանգելու համար: Մեծ մտահոգութեան մէջ էի, որովհետեւ կողմերու բացայայտ սպառ-

նայիքին տակ կը գտնուէի: Օրը հազիւ քանի մը ժամ կը քնանայի, եւ ականջիս քովը արդէն ճերմկիլ սկսած քանի մը մազեր կը տեսնէի:

Վեցերորդ գիշերն էր, երբ կառքի եւ ձիերու ձայն մը առի: Կուսակալը եւ իր թիկնապահը ներս մտան, իսկ պահակ գինուորները դուրսը մնացին:

Քաղաքավարական ընթացիկ կարճ խօսքերէ ետք, մարդը ուղղակի իր այցելութեան նպատակին անցաւ եւ սպանեալ ատամնաբոյժին խնդրին մասին իր տեսակէտը պարզեց՝ աւելցնելով.

— «Ասիկա հասարակ ռիբազործութեան մը սահմանէն դուրս է: Մեմֆ՝ Ժէօն թուրքերս կ'ուզեմք բոլոր աշխարհիմ յայտնել, թէ մախկիմ վարչակարգիմ եւ մերկայիմ միջեւ մեծ տարբերութիւն կայ: Մեմֆ կրնամք Երոպական ըմբռնումով երկիր մը կառավարել, եւ մամուլաւոր արդար եւ անկողմնակալ վարմում գոյց տալով, կրնամք մաքի բաւարարել փոքրամասնութիւնները, եւ անոնց հետ սերտ գործակցութիւն մը հաստատել: Դուք մերկայ ձեր ընթացքով կը ֆաշայերէք այն հոսանքները, որ այդ սերտ գործակցութեան հակառակ են, եւ աչքերնիմ միշտ մեծ պետութիւններում վրայ է»:

Այս ուղղութեամբ դեռ երկարօրէն խօսեցաւ:

Կարգը ինծի եկած էր պատասխանելու: Ըսի իրեն, որ սկզբունքով ոչ մէկ առարկութիւն ունիմ: Եւ աւելցուցի.

— «Սակայն անհրաժեշտ է այդ սերտ գործակցութեան փափաքն սպացոյցը տալ, իսկ ներկայ խօսակցութեան առարկան եղող պարագային մէջ, ատիկա հաստատել ինծի շատ դժուար կ'երեւի: Եթէ կ'ուզենք եւրոպացիները, եւ ամենէն առաջ մեր ժողովուրդը համոզել որ փոխուած բան մը կայ, լա'ւ բան մը՝ երկիրը կառավարողներու մտքին եւ գործելակերպին մէջ, ատիկա գործնապէս պիտի փաստենք: Ի՞նչ օգուտ կառավարութեան արժանապատուութեան համար, եթէ յանցաւոր նրկատուած ոստիկան մը առանց քննութեան ազատ արձակուի: Եթէ ոստիկանը յանցաւոր է, զայն բանտարկել եւ պատժելը կառավարութեան արժանապատուութիւնը աւելի կը բարձրացնէ»:

Այս ուղղութեամբ դեռ երկար խօսեցանք, եւ ի վերջոյ խոստացայ իրեն, որ նախաձեռնութիւնը պիտի ստանձնեմ ոստիկանը ազատ արձակելու այն պահուն՝ երբ համոզուիմ թէ անմեղ է:

Կը կարծեմ, որ երկու ժամէն աւելի տեւող այս տեսակցութիւնը բաւական եղաւ որ մենք մինչեւ վերջ բարուք յարաբերութիւններ ունենայինք: Գէթ երեւոյթները փրկուած եղան:

Մէկ ամիս ետք, երբ քննութիւնները ո'րեւէ բացարձակ եւ դրական արդիւնք մը չտուին, ոստիկանին եւ ոստիկան-գինուորներուն համար «դատաւարութեան տեղի չկայ»ի որոշում տրուեցաւ:

6.- ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Այդ որոշումին դեռ չյամգած, երբ գիշեր մը ժամը տասուկէսին դարձեալ թղթածրարը կը քննէի, սպասուհին լուր տուաւ որ այցելու մը, Մանուկեան անունով՝ կ'ուզէ զիս տեսնել:

Նախ այդ անունէն բան չհասկցայ: Սպասուհին աչքովս ըրած հարցումին պատասխանեց — «Արամ փաշան է»:

Ի հարկէ, մեծ հետաքրքրութեամբ ընդունեցի այն մարդը, որուն վանի գործունէութիւնը ժողովուրդին առօրեայ խօսակցութիւններուն առանցքը կը կազմէր:

Միջահասակէն քիչ մը բարձր, թաւ պեխերով, լայն թիկունքով, աչքը սեւ ակնոց, 30-40-ի տարիքը ունեցող մարդու մը երեւոյթը ունէր, Իշխանին բոլորովին հակառակը: Առաջին հերթին իսկ լաւ տպաւորութիւն կը ձգէր: Արդէն սկիզբէն խօսակցութիւնը այնպիսի հանգամանք ստացաւ որ կարծես երկար տարիներէ ի վեր իրարու ծանօթ եղած էինք:

Ատամնաբոյժին սպանութեան ակնարկելով՝ ըսաւ.

— «Մեզ քիչ մը նեղ դրութեան մէջ ձգեցիր: Բարեբախտաբար, մէկ շաբաթ առաջ Ջարդարեանէն նամակ մը ստացայ, որ մեզ շատ ուրախացուց: Մենք զգոյշ մարդիկը կը սիրենք, բայց դուն քիչ մը չափազանցեցիր մեզի հետ ո՛րեւէ կապ չպահելով, եւ ժպտելով աւելցուց. — տրուած պահու մը այդ չափազանցութիւնը կրնար անախորժ հետեւանքներ ալ ունենալ: Ջարդարեանն ալ խնդրանքիդ վրայ կը յանձնարարէ զգոյշ ըլլալ: Չորս հինգ գիշերէ ի վեր կը սպասէի որ մինակ ըլլայիր, եւ ժամանակը յարմար՝ քեզ այցելելու համար:

— «Այսօր ի՞նչպէս իմացար որ մինակ էի», — ըսի խնդալով:

— «Սպասուհիէն», — պատասխանեց:

Անշուշտ, մինչեւ այդ օրը մտքէս իսկ չէի անցուցած թէ տանս մէջ Դաշնակցութեան հակողութեան տակ կ'ապրէի:

Կէս գիշերը շատոնց անցած էր, երբ Արամը մեկնեցաւ: Այդ երկար ժամերուն ան լայնօրէն պարզեց երկրին կացութիւնը, եւ բնականաբար ծանրացաւ դատական իշխանութեան հետ կապ ունեցող խընդիրներուն վրայ:

— «Ներկայիս ամենակարեւոր հարցը, — ըսաւ, — ուսուցիչ Ռաֆայէլի սպանութեան փոխ-վրէժի դատն է: Կազմակերպութիւնը ող-

բացեալին սպանութեան հեղինակները ծանր պատժի ենթարկած է, եւ այս առիթով կարգ մը մարդիկ ձերբակալուած են»:

Բնականաբար, խոստացայ թղթածրարը ուսումնասիրել:

Նոյնպէս երկարօրէն պարզեց կուսակալին հետ իրենց ունեցած փոխ-յարաբերութիւնները: Երկու կողմերն ալ բարւոք կապեր հաստատած էին, եւ համընթաց աշխատանք տանիլ կը փափաքէին:

Չափազանց գոհ մնացի Արամին այս սրտաց խօսակցութենէն, որովհետեւ ինծի համար ալ անհրաժեշտ էր գիտնալ թէ կարգ մը պարագաներու տակ ի՞նչ ընթացք պէտք է բռնէի:

Արամին հետ կարգադրեցինք նաեւ իրենց եւ իմ ապագայ յարաբերութեանց ընթացքը: Ես միայն Արամին եւ Իշխանին հետ պիտի յարաբերէի, եւ ինծի ըլլալիք բոլոր դիմումները այս երկուքին միջոցաւ պէտք է ըլլային:

Եւ իսկապէս, մինչեւ վերջն ալ այդպէս եղաւ: Դատական-անհատական հանգամանք ունեցող խնդիրներու մասին առաւելապէս կը դիմէր Արամը, եւ այդ՝ շատ անգամ պաշտօնատեղիս: Ասիկա ո՛չ մէկուն համար մասնաւոր ուշադրութիւն ներկայացնող պարագայ մըն էր: Արամը, կուսակալէն սկսեալ, ամէն պաշտօնեայի մօտ ազատ մուտք ունէր: Ամէն մարդու տէրտը, ցաւը կու գար Արամին գոգը ապաստան գտնելու: Ետեկային մէջ միշտ իր շուրջը բազմութիւն հաւաքուած կ'ըլլար, մեծ մասամբ գիւղացիներ, որոնց գործերուն կարգադրութեան համար ան առաջնորդ կը հանդիսանար: Ջարմանալի թող չթուի եթէ ըսեմ, որ այս բոլորը ես իմացեր էի ամենէն առաջ նոյնի՛նքն կուսակալէն, որ ամիսը քանի մը երեկոյ տունս այցի գալ սկսեր էր: Մտերիմ շրջանակի մը մէջ ան իր հիացումը կը յայտնէր Արամին առասպելական ըլլալու աստիճան կենցաղին համար: Կ'ըսէր թէ Արամը Աղթամարի շրջանի կրթական պիւտճէէն* ամիսը չորս ոսկի (հնչիւն) միայն կը ստանայ, եւ դրամին մեծ մասը կը յատկացնէ կառավարութեան հետ գործ ունեցող գիւղացիներու աղերսագրերուն պատրաստութեան եւ դրոշմաթուղթի ծախսերուն: Եւ օրեր կ'ըլլային, երբ գրպանը զրուշ մը չէր գտնուեր, ինչպէս նաեւ օրեր կ'ըլլային, երբ բան մը կերած չէր ըլլար: Այնքա՛ն կլանուած կ'ըլլար զանազան գործերով, որ կերակուրի մասին մտածելու ժամանակ չէր ունենար:

Իսկապէս, ես ալ յետոյ հաստատեցի որ Արամը երբեմն անօթի մնացած էր թէ կուշտ՝ կարծես ինքն ալ լուր չէր ունենար այդ մասին: Թէյ խմել շատ կը սիրէր, եւ կը խմեր առանց շաքարի: Երբեմն ալ շաքարի կտորը բերանը կը նետէր, եւ թէյը այդպէս կը խմէր: Երբ կէսօրուան մօտ դատարան գար, ճաշի համար եղած ընդմիջումի պահերուն միասին կտոր մը բան կ'ուտէինք: Կը նկատէի որ կարծես կանոնաւոր կերակուր

* Այդ կէտը առիթը չեմ ունեցած ճշդելու:

ուսելու վարժութիւնն ալ կորսնցուցած էր: Ասիկա աւելի յստակ կերպով կը հասկցուէր երբ երեկոյեան ճաշը միասին տունս կ'ընէինք:

Շատ ընկերական, չէնչող, զուարթ բնաւորութիւն ունէր: Իսկ եթէ հարցերը ազգային գետնի վրայ բարդանային, Արամը բոլորովին կը փոխուէր, բուռն թափով կը խօսէր, եւ երբեմն կարծես կը մոնչէր՝ առիւծ կտրած:

Ինչպէս ըսի, թէ՛ ինքը եւ թէ՛ կուսակալը իրարու հետ բարուք յարաբերութիւններ կը մշակէին: Բայց կային պարագաներ ալ, երբ իրերու բերումով այդ յարաբերութիւնները կը ցրտանային, նոյնիսկ կը ձգտէին, որովհետեւ ընդհանուր կամ մասնաւոր խնդիրներու մասին տարակարծութիւններ կ'ունենային: Եւ ատոր կարեւորագոյն առարկան քիւրտերու հետ կապուած հարցերն էին:

Հայ-թուրք, հայ-քիւրտ, թուրք եւ քիւրտ փոխ-յարաբերութիւններու մասին երկարօրէն խօսիլ մեզ հիմա շատ հեռու պիտի տանէր: Ուրեմն հպանցիկ քանի մը խօսք՝ որպէսզի հոս յիշուած հարցերը աւելի հասկնալի ըլլան:

Հանրածանօթ է որ մեր բնաշխարհին մէջ երեք ազգեր միայն կը գտնուէին — հայ, քիւրտ եւ թուրք: Հակառակ վերջին եկուտը, եւ փոքրամասնութիւն ըլլալուն, թուրքը սակայն ամբողջ երկրին տէրը դարձած էր, եւ զօրաւոր կերպով հաստատուած: Սկիզբը, վերոյիշեալ տարրերը ամէն տեղ միեւնոյն համեմատութեամբ չէին տեղաւորուած: Բայց իրենց իշխանութեան առաջին օրերէն իսկ թուրքերը հետեւողական կերպով գործադրած էին երկրին մէջ ամէն տեղ թուրք մեծամասնութիւն կազմելու ծրագիրը: Միջոցներու մէջ խտրութիւն չընող թուրքերը, անցեալին գործած էին կատարեալ սանձարձակութեամբ: Զանգուածային ջարդերը, տեղափոխութիւնները, իսլամացումը (իմա թրքացումը) «տէվրիմէն» (այսինքն չորս-հինգ տարեկան քրիստոնեայ մանուկներ հաւաքելն ու եմիշէրներու բանակին համար որդեգրելը), եւ երկրին վարչական այնպիսի բաժանում մը որ ոչ թուրքերու համար մեծամասնութիւն կազմող շրջաններ չհաստատուէին, որքան կարելի էր, ահա՛ իրենց քաղաքականութեան գլխաւոր ուղղութիւնները: Օրինակի համար կը յիշենք որ իրարու շատ մօտ գտնուող Հաճընը եւ Ջէյթունը իրարմէ բաժնած էին, մէկը կցելով Ատանայի, միւսն ալ Հալէպի կուսակալութիւններուն: Նոյն ձեւով հայկական Վանայ շրջանին կցած էին քրտական Հէքքեարին, կազմելով Վանի կուսակալութիւնը:

Թուրքերու քաղաքականութեան հիմնաքարն էր նաեւ «բաժնէ որ տիրես»:

Քիւրտերու պարագան տարբեր էր, եւ անոնց հանդէպ կառավարութիւնը միեւնոյն բժախնդրութեամբ չէր շարժեր:

Նախ քիւրտերը իսլամ էին, եւ որպէս այդ՝ գերծ մնալով շատ մը փորձանքներէ, հայերու հետ բաղդատելով աւելի աճած էին: Կառավարութիւնը անկարող ըլլալով այդ բազմածին եւ բազմաթիւ իսլամ

քիւրտ ժողովուրդը ջարդելու, հարկադրուած էր անոր հանդէպ տարբեր քաղաքականութիւն մը որդեգրել (որուն նպատակը սակայն նոյնն էր, այսինքն նօսրացնել անոր համրանքը):

Նախ՝ կը քաջալերէր խառն ամուսնութիւնները: Թուրքի աղջիկ առնելով քիւրտը «կ'ազնուանար» եւ տիրապետող ցեղին մաս կը կազմէր: Կառավարութիւնը անոնց առջեւ լայն ասպարէզ կը բանար, եւ թոյլ կու տար որ անպատիժ օգտուէին հայերու ինչքէն եւ աշխատանքէն:

Երկրորդ միջոցն էր աշխրաթապետերու միջեւ երկպառակութիւն, կազ ու կռիւ ստեղծել, եւ պարբերաբար մէկուսն եւ միւսին կողմնակից երեւնալով, չձգել որ ոչ մէկուն գլուխը շատ բարձրանար:

Երրորդը՝ Համիտիէի քիւրտ զօրազուգորդերը կազմելով զանոնք թրքական գոգին մէջ գուրգուրանքով կը խեղդէր:

Այս ամէնը այնքան երկար ատենէ ի վեր գործադրուած էին, որ այլեւս որեւէ թուրք պաշտօնեայի համար դարձած էին կարծես տեսակ մը բնական հարկադրանք: Նկատելի է նաեւ որ թուրք պաշտօնեան անհատապէս շատ կ'օգտուէր այդ գործելակերպէն:

Սահմանադրութեան հռչակումէն ետք անուրանալի է որ պայմանները փոխուեցան: Քիւրտին համար այլեւս հայերու վրայ անպատիժ բռնանալը եթէ ոչ անկարելի՝ գէթ դժուար դարձաւ: Քիւրտը իր շահէն, թուրքը իր ազդեցութենէն շատ կորսնցուցին: Եւ ազատ գործելու որոշ կարելիութիւններ ստացող հայն ալ անհրաժեշտօրէն օրուայ կացութեան համապատասխան միջոցներ ձեռք պիտի առնէր:

Պարզուեցաւ նաեւ որ քրտական չարիքը վերջնական եւ անդարմանելի հետեւանքներ չէր կրնար ունենալ, եւ չունէր: Եւ ինչպէս օր մը իշխանը կը բացատրէր, Համիտեան շրջանին բարեկամ կամ կուսակցական հայ գիւղացին առհասարակ պատառ մը աւելորդ հաց չունէր տալու համար լեռներու վրայ թափառող անօթի ֆէտայիին: Մինչդեռ սահմանադրական շրջանի քանի մը տարիներուն, երբ հայութեան մեծամասնութիւնը պարզապէս կրնար իր ցանածը քաղել, թշուառութիւնը սկսած էր զգալիօրէն նահանջել, եւ կեանքը աւելի բնականոն ընթացք մը ստանալ: Անշուշտ տակաւին Համիտեան շրջանէն ժառանգուած եւ լուծման կարօտ հողային հարցեր կային: Կար մանաւանդ կեանքի ապահովութեան հարցը, որ ղեկավարներու մտահոգութեան գլխաւոր առարկան էր: Այսինքն՝ ինչպէ՞ս արգիլել անցեալի ջարդերուն կրկնութիւնը, երբ թուրք կառավարութիւնը կը շարունակէր քիւրտերը քաջալերել, եւ երբեմն իր գինեալ ուժերով կը միանար անոնց՝ հայ կեանքը խայիները պատժելու համար:

Բայց ահա Արամին եւ կուսակալին միջեւ այս շատ կարեւոր հարցին շուրջ տարակարծութիւններ կային, ինչ որ անխուսափելի էր, քանի հայերը չէին ուզեր որ քիւրտը թուրքին ձեռքին մէջ շարունակէր հակահայ գործիք մը ըլլալ: Իսկ ապագային մասին մտածող թուրքը

կ'ուզէր միշտ շահագործել քիւրտ տարրը հայուն դէմ: Այս պատճառով էր, որ երբ կուսակալ Քահսին սաստիկ կը հետապնդէր Սըմէօն եւ քիւրտ յայտնի աւագակները, որպէսզի երկրին ապահովութիւնը չխանդարուէր, միւս կողմէն սակայն կը քաջալերէր այն քիւրտերը, որոնց միակ փոփոքն էր իրենց շուրջը գտնուող անպաշտպան հայերը խոշտանգել եւ դանոնք ճնշումի տակ պահելով, անոնց ինչքէն եւ աշխատանքէն օգտուիլ: Այս ձեւով թուրք կառավարութիւնը ուրիշ շահ մըն ալ կ'ապահովէր, այն է՝ հայ եւ քիւրտ տարրերուն միջեւ ո'րքիւ համաձայնութեան եւ համերաշխութեան անկարելիութիւնը:

Այսպէս ուրեմն, կային կարգ մը քիւրտ աղաներ, կամ թրքացման ուղղութեամբ պէյ գարձածներ, եւ նոյնիսկ համիրտիէ երկրապահ աւագակախումբերու պետեր, որոնք կուսակալին մասնաւոր շնորհներուն կ'արժանանային: Այսինքն անոնց գիրքն ու ազգեցութիւնը կը մեծնար, եւ նոյն համեմատութեամբ ալ հայերու հանդէպ անոնց յոխորտանքն ու վնասարարութիւնը կ'աւելնային:

7.- ՔԻՒՐՏ ԱՇԻՐԱՔԱԳԵՏ ՄՈՒՍԱ ԳԷՅԻ ՍԳԱՆՈՒԹԻՒՆԸ

Կարծեմ 1913-ի Օգոստոսի վերջերն էր, երբ օր մը անակնկալ այցելութիւնը վայելցի Վասմեանին: Մէկ-երկու ժամ անսակցեցանք:

Իր մասին ապաւորութիւններս գուցէ ուրիշ առիթով տամ: Այն ժամանակ ուշազրուութիւնս գրաւեց հետեւեալը. իր քանի մը օր տեւող վանի այցելութենէն մէկ շաբաթ ետք սպանուեցաւ Ոստանի կողմերը բնակող Մուսա պէյ կոչուած քիւրտ աշխրաթաղեա մը (ինծի տակաւին անծանօթ): Կ'ըսուէր թէ կառավարութեան ի նպաստ իր լաւ զգացումներուն բազմաթիւ ապացոյցները տուած, եւ անհանդուրժելի գարձած էր շրջանի հայութեան: Դարձած էր նաեւ սիրելի քանի մը ամիս առաջ վան հասած կուսակալին, Քահսինի ձեռքերուն մէջ կատարեալ հլու գործիք մը գտնուող: Կուսակալը — ի միջի այլոց — Մեհաբէ երկրորդ աստիճանի պատուանշանի արուիլը խնդրած էր կառավարութենէն, եւ Մուսա պէյի շնորհած հոգային եւ անասուային կարգ մը նիւթական առաւելութիւններ: Կ'ըսուէր նոյնիսկ թէ մօտ առեւնէն կատարուելիք երեսփոխանական ընտրութեանց համար ան կառավարութեան թեկնածուն պիտի ըլլար:

Այս պայմաններուն տակ շատ երես առած այդ ազան (կամ պէյը), բնակած վայրէն դէպի վան երթալ-գալու տանն 50-60 քիւրտ

ձիււոր համհարզներու հետ կը ճամբորդէր: Շքաւորուելու թէ ինքնապաշտպանման համար, չեմ գիտեր:

Արդ՝ երեկոյ մը, շնորհուած բարձր պատուանշանի մը համար շնորհակալութեան այցելութենէն վերադարձին, այդ 50-60 զինեալ քիւրտերը սակայն չկարողացան իր կեանքը փրկել: Յորենի դաշտերուն մէջ պահուած եւ պատսպարուած մարդիկ՝ որոնց թիւը քննութենէ ետք յայտնի եղաւ թէ 12-13 է եղած, անկիւնադարձի մը վրայ կը սկսին զինարձակման: Արդէն առաջին գնդակներէն Մուսան կ'իյնայ: Բայց իր հետեւորդներուն մեծ մասը, դիրքեր բռնած, կը սկսի փոխադարձել: Կոիւր կը դադրի, երբ կը մթնէ:

Հետեւեալ առտու կանուխ երբ պաշտօնատեղիս կ'իջնէի, նկատեցի որ դէմքերը մութ էին: Հայերը կծկուած եւ խուսափուկ նայուածքներով, թուրքերը՝ խոժոռ ու սպառնալից:

Գրասեղանիս առջեւ նստելուս պէս, հեռաձայնը բացուեցաւ: Կուսակալն էր, որ հատու ձայնով եւ բարկալից կ'ըսէր թէ Մուսան իր գիւղը վերադառնալու ատեն ճամբան սպաննուած էր, թէ վերաքննիչ Ատեանի ընդհանուր դատախազին տուելը իրենին մօտ ըլլալով, տեղւոյն վրայ քննութիւն կատարելու համար վաշտ մը զինուորով զինքը ոճրին վայրը զրկած էր: Եւ կ'աւելցնէր — «Այս կերպով ձեզի անհանգստութիւն մը խնայեցի»:

Անմիջապէս հասկցայ՝ որ ատամնարոյժին սպանութեան մէջ իր ստացած փորձառութենէն օգտուելով՝ զիս չէզոքացնել ուզած էր: Անշուշտ ապօրինի էր, բայց վաշտ մը զինուորով քննութիւն կատարելու հեռանկարն ալ ինծի համար ոչինչ ունէր հաճելի:

Աւելի վերջը, գործին լայնօրէն ծանօթանալէ ետք ընելիքս որոշելու պայմանաւ՝ շնորհակալութիւն յայտնեցի իր «բարեացակամ» արտայայտութեանը համար:

Մուսա պէյի սպանութեան դէպքը շատ մեծ կարեւորութիւն ստացաւ, եւ կարծես կառավարութեան եւ Դաշնակցութեան միջեւ ազդեցութեան պայքարի հանգամանք առաւ:

Արամը եւ Իշխանը — կ'ըսէին — շրջանները կը գտնուին: Անոնց հետ տեսակցելու կուսակալին փափաքը ի զուր անցած էր:

Քահսին պէյը շատ կարճ ժամանակի մէջ այլ եւ այլ տեղերէ բերուած մօտ երկու հազար զինուորով լայն շրջանակի մը մէջ առնել տուած էր ոճիրին վայրը: Անշուշտ, կ'ուզէր նաեւ իր ուժը եւ բարեացակամութիւնը ցոյց տալ միանգամայն քիւրտերուն՝ կառավարութեան հաւատարիմ եղողներուն հանդէպ իր հոգատարութեան ապացոյցը տալով:

Ամէն օր մեծ թիւով հայ ձերբակալեալներ կը հասնէին քաղաք: Կ'ըսէին թէ փոխադարձ զինարձակումներէ ետք, երբ հայերը քաշուած էին իրենց գարանակալ եղած ապաստաններէն, արիւնի հետքեր տես-

նրևած են: Ատկէ կարելի էր ենթադրել թէ անոնց մէջ ալ մէկ կամ անկի վիրաւորներ կային: Եւ կառավարական ուժերը, ահա այդ վիրաւորը կամ վիրաւորները գտնելու համար մեծ ջանք կը թափէին: Շրջակայ գիւղերուն մէջ տուն եւ մարագ չէր մնացած ուր թափանցած չըլլային:

Ի հարկէ, այս քննութիւններուն ատեն յաճախ անհամոզութիւններ ծագած էին: Հայերը սակայն կը մոլտային միայն: Շատ պոռալու ժամանակը չէր...

Վերջապէս, 5-8 օր ետք Վերաքննիչ Ատեանի ընդհանուր դատախազը վերադարձաւ: Երեսը կախ էր, որովհետեւ գոհացուցիչ արդիւնք մը ձեռք բերած չէր: Թղթածրարը յանձնեց ինծի:

Հարցաքննիչ դատաւորին հետ լծուեցանք օրինական ձեւակերպութիւններուն: Նախ անոնք, որոնց համար ամենատարրական ապացոյց կամ կասկած չկար, ազատ արձակեցինք: Մնացեալ 15-20 հոգին բանտին մէջ մնացին, մինչեւ թղթածրարին Ոճրադատ Ատեանին յանձնուիլը:

Անշուշտ, այս բոլորը բաւական ժամանակ առաւ: Իսկ ժամանակը անուրանալիօրէն շատ մը կիրքեր թուցուց, մինչեւ որ օր մըն ալ անոնք բոլորովին մարեցան: Իր ուժը եւ հոգածութիւնը հայուն եւ քիւրտին ցոյց տալէ ետք, կուսակալն իսկ հետզհետէ մեղմացաւ, եւ Արամն ու Իշխանն ալ չըջաններէն վերադարձան:

Արամ գիշեր մը տունս եկաւ եւ պատմեց, որ իրենց առաջին տեսակցութեան ընթացքին Թահսին պէյ շատ բուռն արտայայտութիւններ ունեցած էր: Բայց յետոյ հանդարտած էր, որովհետեւ յառաջիկայ ընտրութիւնները եւ այլ կարեւոր հարցեր կային լուծուելիք, որոնք երկու կողմերու գործակցութեան կը կարօտէին: Ի վերջոյ, Մուսայ պէյի սպանութեան հարցը երկրորդ գիծի վրայ եղած էր:

Արամին առջեւ սակայն կարեւոր խնդիր մը կար, այն է՝ ոճրի դատական մասը: Մտերմօրէն ինծի յայտնեց թէ բուն գործողները այլեւա չըջանին մէջ չէին գտնուեր, եւ բանտարկուածները առ հասարակ անմեղ տղաք էին:

Այդ ատեն Եղեռնադատ Ատեանին առջեւ կար նաեւ ուրիշ կարեւոր դատ մը: Ուսուցիչ Ռաֆայէլը սպաննողներուն դէմ սարքուած փոխ-վրէժի գործը, որ բնականաբար, տեղի տուած էր կարգ մը հայերու բանտարկութեան: Այս գործին նախնական քննութիւնը լրացած էր, երբ ես Վան հասած էի: Բայց այդ տեսակ դատավարութիւնները երկար կը տեւէին:

Թուրք պատժական եւ դատավարական օրէնքները, Փրանսականէն նոյնութեամբ թարգմանուած ըլլալով, նկատի չէին առած սակայն Փրանսական եւ Օսմանեան պետութիւններուն ներքին սարքաւորման տարբերութիւնները: Փրանսացիք կոչնագիր մը ամենէն կարճ ատենին կրնային տիրոջը հասցնել, որովհետեւ հեռաւորու-

թիւնները աւելի կարճ էին, լաւ ճամբաներ եւ ճամբորդութեան միջոցներ ունէին, եւ մանաւանդ ունէին (բաղդատաբար) իրենց գործին ծանօթ եւ պարտաճանաչ պաշտօնէութիւն: Այս բոլոր պայմանները կը պակսէին Օսմանեան կառավարութեան: Զարմանալի չէր ուրեմն եթէ կային պարագաներ, մանաւանդ արեւելեան գաւառներու մէջ, ուր մարդ մը ամիսներով առանց հարցաքննուելու բանտ մնացած ըլլար, եւ կամ անոր դատավարութիւնը մէկ տարիէն աւելի տեւէր:

Այսպէս ուրեմն, բանտը մեծ թիւով հայեր կային:

Պաշտօնիս բերումով՝ ամիսը անգամ մը պարտաւոր էի այցելել բանտ, բանտարկեալներու վիճակը ու բողոքները անձամբ տեսնելու եւ լսելու համար: Երբ օր մը գացի, բանտին տնօրէնը նախ իր սենեակը առաջնորդեց զիս, եւ աւանդական սուրճով մեծարելէ ետք, տուաւ երկարավիզ կօշիկ (գալչըն) որ մինչեւ ծունկին վրայ կ'ելլէր: Պատճառը հասկցած չըլլալով երեսը նայեցայ: Բացատրեց թէ բանտը շատ լուեր կային, որոնք որոշ բարձրութենէ վեր չեն կրնար ցատկել: Բանտին խուցերուն եւ սրահներուն յատակը հողով ծածկուած էր: Կար նաեւ խճողումը եւ անմաքրութիւնը, որոնք առիթ տուած էին որ լուերը անօրինակ կերպով բազմանային:

Բոլոր բանտարկեալներն ալ, բնականաբար, իրենց անմեղութենէն կը ճառէին: Անոնց մէջ դաժան երեւոյթով ցկեանս թիապարտութեան դատապարտուած քիւրտ աւազակներ կային, ինչպէս նաեւ այլեւայլ քրէական ոճիրներով ու թեթեւ յանցանքներու համար բանտարկուած հայեր: Իսկ Ռաֆայէլի փոխ-վրէժը կատարելու եւ Մուսայ պէյը սպաննելու ամբաստանութեամբ վար դրուածները զատ խուցերու մէջ կը պահուէին՝ մասնաւոր հոգածութեամբ: Ամենէն շատ զարմացողները քիւրտերը եղան, երբ առաջին անգամ ըլլալով հայ ընդհանուր դատախազ մը տեսան:

Կարգ մը դիտողութիւններ եւ յանձնարարութիւններ ընելէ ետք, մեկնեցայ առանց մեծ դժգոհանքի, որովհետեւ կրցայ հաստատել թէ առանց դատական որոշումի ո՛չ ոք կը գտնուէր հոն: Բանտն ալ, թէեւ բանտ՝ բայց Թուրքիոյ իմ տեսած կուսակալանիստ քաղաքներու բանտերուն մէջ, բաղդատաբար ամենէն լաւն էր:

*
**

1913-ի Հոկտեմբերը եկած էր եւ, ինչպէս երեւոյթները ցոյց կու տային, այդ տարի ձմեռը սաստիկ պիտի ըլլար:

Բնական տունս, ինչպէս Այգեստանի գրեթէ բոլոր տունները, ձմեռուայ համար շինուած տուններու առաւելութիւններէն բոլորովին զուրկ էր: Բաղէշի քարաշէն տունները չկային Վանի մէջ, որովհետեւ քար չկար եւ ոչ ալ կիր: Ամբողջ շէնքերը հողաշէն էին, բայց հող մը որ չափազանց կրոտ էր:

Տարիներու ընթացքին բոլոր մօտակայ անտառները փճացած էին, եւ նորերը հասցնելը գրեթէ անկարելի էր, քանի ջրերսը եւ այժմ գոյութիւն ունէին: Ինչ որ մէկուն կացինը կը խնայէր, միւսին ակռաները կ'ոչնչացնէին: Կ'ըսէին թէ գրեթէ մակերեսը գտնուող նորտուղի հանքածուխի խոշոր կտորները, որոնց երկուքը իշու մը բեռը կը կազմէին, դարձեալ եօթ օրէն կը հասնէին: Այս պատճառով զարմանալի պէտք չէ ըլլայ եթէ ըսեմ թէ Վանի մէջ վառելիքի փայտի գինը Պոլսոյ չորս անգամն էր, եւ տեղացի ժողովուրդն ալ, ըստ երեւոյթին՝ փայտի կրակի սովորութիւնը կորսնցուցած էր:

Արամը, որ շարաթը քանի մը անգամ կ'այցելէր ինծի, ցուրտին կամ կրակին հանդէպ անտարբեր էր: Իր այցելութիւններուն մեծ անհամբերութեամբ կը սպասէի: Պոլսոյ թերթերը ուր օրէն կը հասնէին մեզի, բայց ինքը միշտ նորութիւններ ունէր հաղորդելիք: Իսկ եթէ յանուն կուսակցութեան ինծի ըսելիք մը ունենային, Արամին կ'ընկերանար նաեւ Իշխանը:

Ահա այսպէս նոր սկսած ձմեռուայ ցուրտ երեկոյ մը, ուշ առտն, անոնք եկան եւ կարծիքս ու հաւանութիւնս առնել ուղեցին կուսակցական առաջարկի մը համար: Կը փափաքէին որ պաշտօնէս հրաժարէի եւ փաստաբանութիւնը ստանձնէի հայ բանտարկեալներուն, եւ որպէսզի նիւթապէս չվնասուէի, ինծի կը խոստանային կառավարութենէն ստացած թոշակիս մօտիկ գումար մը վճարել (ինչ որ իրենց սովորական վճարումներէն շատ վեր էր): Պաշտօնապէս Աղթամարի շրջանի կրթական քննիչի անունը պիտի ունենայի:

Որպէսզի լաւ ըմբռնէի թէ իրենց բուն ուղածը ինչ էր, քիչ մը բացատրութիւն ուղեցի եւ հասկցայ որ վերջին տնօրէններու պատճառով բանտարկուածներուն վիճակը զիրենք կրկնապէս կը մտահոգէր, ուստի ամէն գնով զանոնք ազատել կ'ուզէին:

Պատասխանեցի թէ այդ տեսակ պարագաներ կրնան կրկնուիլ, եւ թէ որքան ալ վտանգաւոր ըլլար դիրքս, պաշտօնի վրայ մնալս շատ աւելի նպաստաւոր կրնար ըլլալ, քան իրենց փաստաբանը դառնալը: Իրենք ալ զիտէին ասիկա, բայց կ'երեւի թէ կարգ մը ներքին ճնշումներ գոյութիւն ունէին: Գալով բանտարկեալներու ազատման խնդրին՝ քիչ մը հետեւելիք ձեւին մտածելով, եւ շատ աւելի երիտասարդական աւելնէ դրդուած, առանց ահազին դժուարութիւնները ըստ էութեան նկատի առնելու, խոստացայ այդ գործն ալ գլուխ հանել՝ առանց որ իրենք ստիպուէին նիւթական որեւէ զահգուցութիւն ընելու:

Մուտա պէյի թղթածրարը իմ ձեռքէս էր անցած, եւ ժամանակին առած նոթերս կը պահէի: Միւսն ալ քննելու առիթը ձեռք բերած եւ ուսումնասիրած էի: Երկու գործերուն մէջ ալ բանտարկուած ամբաստանեալներու համար տեսողութեան վրայ հիմնուած փաստերը չկային, այլ միայն կողմնակի երեւոյթներ, որոնց զնահատումը առաւելապէս

դատաւորին հայեցողութենէն եւ խղճէն կախուած էր: Այս պարագային ուրեմն դատաւորները ի նպաստ մեզի շահելու հարցը կար:

Դատաւորները հինգ հոգի էին: Նախագահը* ծննդեամբ պոսնացի մըն էր, որոշ հասկացողութեան տէր փաթթոցաւոր մը, որուն որեւէ ձեւով մօտենալ կարելի չէր: Կար նոյնպէս թուրք մը, զոր նմանապէս կարելի չէր ձեռք բերել: Երրորդը, Բաղէշէն նոր փոխադրուած քրտոս մը, որուն նկարագիրը դեռ ինծի անծանօթ կը մնար: Կային նաեւ երկու հայեր: Մէկը երիտասարդ մըն էր, որուն հետ միասին կ'ապրէինք. պատուական հայ մը որուն միջոցով կ'իմանայի արդէն ատենին մէջ եղած անցուղարձը: Միւս հայը յոյն կնոջ մը հետ ամուսնացած կեսաւրացի թրքախօս մըն էր, որուն վրայ բացարձակ վստահութիւն կարելի չէր ունենալ: Նախապէս ինքնարոյս փաստաբան եւ թուրք թերթերու թղթակից, չես գիտեր ի՞նչ ձեւով դատական պաշտօնի կոչուած էր, մինչ ասպարէզին պահանջած ոչ կարողութիւնը եւ ոչ ալ նկարագիրը ունէր:

Արամին եւ Իշխանին հետ խորհրդակցեցանք նաեւ փաստաբանի մը ընտրութեան մասին: Իրենց յանձնարարեցի Կարապետ անունով (մականունը չեմ յիշեր) մէկը, որ թէեւ կուրացած էր, բայց եղածներուն մէջ ամենէն կարողն ու վստահելի էր: Որոշուեցաւ նմանապէս անոր օգնական մը տալ յանձին դեռ նոր համալսարանը աւարտած եւ Վանի մէջ փաստաբանութեան սկսած Հրանտ Գալիկեանի:

Քանի մը ամսուայ ընթացքին, դատական կազմին մէջ փոփոխութիւններ տեղի ունեցան: Դատական տնօրէնը Պոլիս փոխադրուած էր, իսկ Վերաքննիչ Ատեանի գինով ընդհանուր դատախազը՝ Մուսուլ: Այս վերջինին տեղը կուսակալ Թահսինին Ռումէլիէն նախապէս ծանօթ անձ մը եկած էր, որ առաջին օրէն իսկ ինծի եւ հայերու հետ սիրալիր յարաբերութիւններ մշակելու տրամադրութիւն ցոյց տուաւ:

Ճիշդն ըսելով՝ ես շատ գոհ մնացի որ նորեկը կուսակալին համար շատ վստահելի էր: Այս կերպով իմ բեռս կը թեթեւնար (թէեւ ան դատարաններու գործէն աւելի հանրային եւ քաղաքական գործերով կը զբաղէր): Այսուամենայնիւ իբր դատական գործերէ հասկցող մարդ, աւելի դիւրին էր զինք պատրաստել որ միջամտէր, եւ համոզէր կուսակալը որ ետ քաշէր իր կարգ մը անգործադրելի¹ հրահանգները:

Դատական տնօրէնէն ետք քաղաքէն մեկնեցաւ նաեւ ոստիկան-գինուորներու հրամանատար Խալիլ պէյը, որ աստիճանի բարձրացումով դարձաւ Պոլսոյ կեդրոնի գինուորական հրամանատար:

Այսպէս ուրեմն, 2-3 ամսուայ ընթացքին այն երեք բարձրաստիճան պաշտօնեաները, որոնց հաճելի չէր եղած իմ գործեակերպը, ոստիկանութեան եւ դատական տնօրէնները եւ ոստիկան-գինուորներու հրամանատարը Վանէն մեկնեցան:

¹) Ամէն անգամ որ Գախագահ բաղը կ'արտասանէի, Արամը չէր կրնար զսպել խնդրքը, որովհետեւ կը հնչէի Գախագահ: Իսկ ես շատ աւելի առիթներ ունէի ժպտելու, երբ Արամը շարունակ կը կրկնէր իր «ի՞նչ ուզում ա, ի՞նչ ասում ա» ներք:

8.- 1918-Ի ՁՄԵՌԸ ՎԱՆԻ ՄԷՋ

Կուսակալին հետ մեր յարաբերութիւնները հետզհետէ աւելի մտերմացան: Ան հասկցաւ որ որեւէ ձեւով ես հլու կամակատար մը պիտի չըլլայի, եւ որ արդարութեան ու պաշտօնիս պարտականութեան ըմբռնումէն ո՛րեւէ չեղումի անընդունակ էի: Ինքը սակայն, իբր կորովի եւ խելացի մարդ՝ գիտնալով հանդերձ որ ես իր ուզածը չեմ, ինծի հանդէպ աւելի յարգանք ունեցաւ: Եւ սակայն ասիկա արգելք չեղաւ որ իր ըմբռնած ձեւով պետութեան գործերու ընթացքը ապահովելու համար միջոցներ ձեռք առնէր: Ամէն բանէ առաջ իրեն հնազանդ ընդհանուր դատախազ մը անհրաժեշտ էր...

1913-ի Դեկտեմբերի կէսին նախարարութեան հետագիր մը ստացայ, որով Վանի նախնական Պատժական Դատարանի նախագահ կ'անուանուէի: Ամսականի պզտիկ յաւելում եւ աստիճանի բարձրացում մը կ'ունենայի: Բայց ես երբեք գոհ չմնացի: Իբր ընդհանուր դատախազ գործելու աւելի լայն ասպարէզ ունէի: Ամէն բողոք, ամէն պահանջ, նախ ինծի կը ներկայացուէր: Եւ յետոյ՝ նախաձեռնութեան լայն միջոցներ ունէի: Մինչդեռ իբր դատարանի նախագահ ունեցած իրաւասութիւններս յանցապարտներու դատաւարութեանց նախագահելն էր, եւ որովհետեւ այդ դատերը ծեծ, կոուլտուք, թեթեւ վիրաւորում եւ գողութիւններու նման պզտիկ դատեր էին առհասարակ, մեծ շահեկանութիւն չէին ներկայացներ: Նախագահին միակ կարեւոր գործը հայկական գետնի վրայ հարցաքննիչ դատաւորին մէկու մը բանտարկութեան կամ ազատ արձակման համար տրուած որոշումները քննելէ ետք, հաստատելը կամ մերժելն էր:

Այսպէս, երբ այդ կարգի որոշում մը ընդհանուր դատախազը կը պահանջէր, հարցաքննիչ դատաւորը ընդունելու կամ մերժելու մէջ ազատ էր, եւ իր հայեցողութեամբ միայն որոշում մը կ'առնէր: Իսկ այդ որոշումը վերջնական կ'ըլլար միայն այն ատեն, երբ Յախագահը կը հաստատէր զայն: Հակառակ պարագային՝ այս վերջինը կրնար հրամայել յաւելուածական քննութիւն մը, եւ կամ հարցաքննիչ դատաւորին նկատումները անբաւական համարելով, կրնար ուղղակի մերժել այդ որոշումը: Նախագահին պահանջովը ձեռք առնուած որոշումը, եթէ ընդհանուր դատախազը օրինաւոր չգտնէր, կրնար զայն վերաքննութեան ենթարկել:

Այսպէս ուրեմն, պաշտօնի բարձրացումով կառավարութիւնը զիս կը գնահատէր, բայց իրականին մէջ զիս մեծ մասամբ կը չէզոքացնէր...

Ձմեռը այդ տարի, սաստիկ եղաւ: Ձիւնը, ինչպէս ինծի ըսին, նախորդ տարիներէն շատ աւելի առատ էր:

Նոյեմբերի սկիզբն էր: Առտու մը երբ արթնցայ, ամէն կողմ ճերմակով պատած էր, եւ ձիւնի փաթիլները իրարու վրայ կը դիզուէին:

Այգեստանի մեր տունէն, որ Խաչ Փողանի մօտ էր, միջեւ Քաղաքամիջի պաշտօնատունը քալելով երեք քառորդ ժամ կը տեւէր: Ձիւնին պատճառով այլեւս կառքով երթալ կարելի չէր, իսկ սահնակները դեռ չէին պատրաստուած: Ստիպուած 8-10 հայ դատաւոր եւ պաշտօնեայ, քալելով ճամբայ ելանք: Մինչեւ դատարան հասնիլինս, արդէն մեր ուսերուն վրայ մէկ թիզէն աւելի ձիւն էր հաւաքուած: Բարեբախտաբար, թէեւ չէնքը նախնական էր, բայց բոլոր սենեակները գորգապատ էին եւ վառարանները տաքէն կարմրած:

Ես անշուշտ ձիւնին վարժութիւնը ունէի: Պոլիս Բանկալթիէն իջած ժամանակս, մանաւանդ Քալիմամէի առջեւ, երբեմն ձիւնի փոթորիկներու ալ ականատես եղած էի: Վանի պարագան սակայն բոլորովին տարբեր էր:

Քանի օրերը կ'անցնէին, ձիւնը ա'լ աւելի առատօրէն կ'իջնէր եւ կը տեղաւորուէր: Շարունակաբար այդ տարի մինչեւ դարնան գրեթէ վերջերը, գետինը միշտ մէկ ու կէս մեթր ձիւն ունեցանք: Փողոցներու երկու կողմերը միշտ նեղ անցք մը կը բացուէր ամէն օր, իսկ լայն պողոտային վրայ այդ գործը սահնակները կը կատարէին:

Ամենէն նեղացուցիչ պարագան սակայն ա'յն զգայնոտութիւնն էր, որ առաջ կու գար պաշարուածի եւ բանտարկուածի տպաւորութեան: Ամէն կողմ միապաղաղ ճերմակութիւն մը, որ բնականաբար կարճ ճամբաներու մէջ որոշ ազդեցութիւն մը չէր ըներ, բայց երբ — կ'ըսէին — ժամերով պէտք է ճամբորդէիր, շարունակական ճերմակը կը խոցոտէր աչքերդ, եւ մարդիկ երկարատեւ ցաւերով կը տառապէին:

Անշուշտ, ձիւնը իր աղուորութիւնը եւ հմայքն ալ ունէր. մանաւանդ լուսին եղած գիշերները քաղաքը հրաշալի երեւոյթ մը կ'առնէր:

Գիշերները շատ երկար էին: Այլեւս ոճիր մը գործուած ըլլալուն համար ո՛րեւէ պահուն գալ զիս անհանգստացնելու պարագայ չէր մնացած: Հետեւաբար, ամէն երեկոյ տեղ մը այցելութեան կ'երթայինք, առաւելապէս պաշտօնակիցներու տուները, որոնց կարեւոր մասը մեզի պէս վանեցի չէր:

Երբեմն քանի մը տեղացի բարեկամներու ալ կ'այցելէինք: Բայց այդ պարագային կիները զատ սենեակի մէջ կը նստէին, էրիկ մարդոց չէին խառնուեր: Հայաստանի երկար գիշերները ժողովուրդը վարժուած էր անցընելու իրարու քով գալով: Պատմութիւններ հիւսելը եւ զուար-

Թարանելը տարրական անհրաժեշտութիւն էր: Առհասարակ երեկոյեան ճաշէն յետոյ դուրս կ'ելլէինք, եւ մեր գտնուած տուներուն մէջ սովորութիւնս կը յարգէին եւ խմիչք չէր գտնուեր:

Տարբեր էր պարագան սակայն, երբ մասնաւոր հրաւերով կուսակալը եւ բարձրաստիճան պաշտօնեաները կը խմբուէին, եւ գիշերը մինչեւ ուշ ատեն խմելէ ետք՝ կէս գիշերի մօտ կը ճաշէին: Այդ հրաւերներու սկզբնաւորումը ինքը կուսակալը ըրած էր: Ուրիշներ կարգով կը հետեւէին այդ սովորութեան:

Հայերու մէջ ամենէն առաջ Թէրզիպաշեանը սկսաւ, յետոյ Թիւթիւնճեանը: Կուսակցութիւնն ալ Իշխանին տունը կուսակալին եւ հետեւորդներուն համար ճաշկերոյթ մը սարքեց: Իսկ երկրորդ հրաւեր մը ըրաւ ի պատիւ հայ դատաւորներուն:

Նախնական դատարաններու մէջ հայ երկու դատաւոր եւ օգնական դատաւոր մը կային: Ուրեմն, ինձմով, չորս հոգի էինք: Երկու անգամ ալ Վերաքննիչ Ատեանին մէջ կային: Այս կերպով Վան քաղաքը այդ օրերուն վեց հայ դատաւորներ կը գտնուէին:

Տանուտէր Իշխանէն գատ, անշուշտ Արամն ալ ներկայ էր, եւ երեկոյթը անցաւ հաճելի եւ զուարթ: Մեզի հետ հոն հիւրաբար կար նաեւ տարեց հայ մը, զոր ներկայացուցին որպէս ռուսահայ ճարտարապետ մը: Խելօք մարդ կ'երեւէր, քիչ կը խօսէր եւ ներկաներուն ամէն մէկը ուշադիր քննութենէ մը կ'անցնէր:

Աւելորդ է ըսել, որ Թէ' Արամը եւ Թէ' Իշխանը ամէն ինչ կ'ընէին լաւ մթնոլորտ մը յառաջացնելու համար: Եւ որովհետեւ զուտ հայկական խմբաւորում մըն էր, հայկական հարց, հայկական դատ եւ յաւիտենական յանկերգը՝ կեանքի, պատուոյ եւ ինչքի անպահովութիւնը ամէն մէկ բաժակաճառի վերջին մաղթանքի նիւթը կը կազմէր: Ի վերջոյ, մեր ռուսահայ հիւրն ալ խօսք առաւ, եւ ըսաւ Թէ' զարմանքով եւ մեծ հաճոյքով կը տեսնէր որ ներկայ պետական հայ պաշտօնէութիւնը առհասարակ չի նմանիր այն դասակարգին, որուն նմոյշները լաւագոյն կերպով նկարագրած էր Բաֆֆին: Եւ ճիշդ է որ ոչ միայն ինձի պէս Սահմանադրութեան շրջանին անուանուածները, այլ նոյնիսկ հինէն մնացածներուն ալ մէկ մասը կը մտածէր որպէս հայ եւ կը գործէր որպէս այդ, մինչեւ կարելիութեան սահմանը:

Պաշտօնի կիրառման ընթացքին իրենց ազգային զգացումներուն հետեւողներուն մէջ կային նաեւ այնպիսիներ, որ վերջը ձեռնթափ եղած եւ լքած էին իրենց պաշտօնները: Դժբախտաբար սակայն Սահմանադրական շրջանը այնքան կարճ տեւեց, որ այս պարագան ժողովրդական լայն խաւերուն մէջ լաւ չգիտցուեցաւ: Ահա այս պատճառով «Քուրբի պաշտօնայն եղած է» բացատրութիւնը առհասարակ որոշ արհամարհանք կը յառաջացնէր:

Այս կէտը պարզեցի երբ վերջին խօսքը ինձի տրուեցաւ, եւ մեր ռուսահայ հիւրին երկարօրէն բացատրեցի ներկայիս հայ պաշտօնէութեան եւ կառավարութեան փոխ-յարաբերութիւնները:

Երեւակայեցէք իմ մեծ զարմանքս, երբ տարիներ վերջ Ամերիկա երթալու համար շոգենաւով Պոլսէն անցած միջոցիս այցելեցի Յովհաննէս Քաջազնունիին, նոր իմացայ՝ որ ան էր այդ հիւրը: Դաշնակցութեան դէմ Փեթերսպուրկի մէջ բացուած մեծ դատին մէջ ամբաստանուած մեր ընկերը իբր փախստական Թուրքիա անցած էր, եւ ապաստանած Իշխանին տունը: Աւելի վերջ անոր հետ Պոլիս եւ Ռումանիա գտնուեցանք, եւ Հայաստան մեկնելէն մէկ օր առաջ ալ վերջին անգամ գինք տեսայ Աթէնքի մէջ:

Կուսակալին ներկայութեան տեղի ունեցած երեկոյթներէն մէկուն մէջ (կարծեմ Թիւթիւնճեաններուն տունն էր), ճանչցայ անձ մը, որուն հայկական կեանքին մէջ կատարած չափազանց տխուր դերին համար կարժէ որ հոս իրեն քանի մը տող յատկացնենք: Բարձրահասակ, թուխ, առնական, գեղեցիկ դէմքով երիտասարդ մըն էր, 30-35 տարեկան, Հեքեբարիի կառավարիչ (միւթէսարքֆ) ՃէվՏէթ, Սուլթան Համիտի շրջանին Վանի եւ Բաղէշի երկար տարիներու կուսակալ Մոնթէնէկրոցի Թահիր փաշային զաւակը:

Հայրը առհասարակ հայերու հետ լաւ վարուած է, կ'ըսէին: Եւ ասիկա կը նշանակէր, որ եթէ շատ բարի չէր, գէշ ալ չէր: Ամէն պարագայի սակայն շատ խելացի մարդ մը պէտք է եղած ըլլար, որ ա'յնքան փափուկ շրջանի մը մէջ (Համիտի օրով) տասը տարի այդ շրջանը կրցեր էր պաշտօնավարել: Անշուշտ, Երլտըզի մէջ օրուայ իշխանաւորներէն ալպանացի հայրենակիցներու պաշտպանութենէն ալ օգտուած էր, եւ սակայն իրեն համար պատմուածներէն դատելով, եթէ գէշ բան մը ըրած էր, այն ալ մեծ ստիպումի մը տակ եղած պէտք էր ըլլար: Դէպքի մը համար, որ ժողովրդական ընդվզումի եւ կառավարական սաստիկ զսպումի տեղի էր սուած, պալատը օր մը իրեն հարցում մը կ'ընէ: Պատասխանը կ'ըլլայ չորս բառ՝ «ժողովուրդը՝ չքմեղ, կառավարութիւնը՝ ստիպուած»: Ինչ որ որոշ քաղաքացիական քաջութիւն կ'ենթադրէր:

Ուրեմն ձէվտէթ հայ ժողովուրդէն ճանչցուած էր դեռ պատանեկան հասակէն, եւ իր յարաբերութիւնները առհասարակ որոշ հակակրութեան մը դրոշմը չէին ձգած: Քաջ եւ զինավարժ, այլեւայլ քաղաքներու փոխ-կառավարիչ (գայմագամ) եղած, մասնաւորապէս փայլած էր աւագակներ հետապնդելու գործին մէջ: Ինչպէս ըսի, Հեքեբարիի կառավարիչ դարձած էր, եւ առաջին անգամ իբր այցելու Վան գալով, այդ գիշեր կուսակալին ընկերացողներուն մէջ ինքն ալ կը գտնուէր:

Այդ տունը ուր պատուասիրուած էինք, ըստ սովորութեան գիշերը մինչեւ տասնուկէս, տասնեւմէկ խմեցին: Քանի գլուխները կը

տաքնային, դիտեցի որ որոշ հակառակութիւն մը կար կուսակալին եւ իր միջեւ: Ծէվտէթը էնվերի քրոջ հետ պիտի ամուսնանայ, կ'ըսէին: Անշուշտ այսպէսով զօրաւոր հակառակորդ մը կը դառնար Վանի կուսակալին, որուն պաշտօնը, կ'երեւի, կը ցանկար:

Ծէվտէթի նկարագրին մասին աւելի յստակ գաղափար կարելի է կազմել հետեւեալ երկու անէքօտներէն.—

Հօրը կուսակալ եղած միջոցին, Վանի իտալական փոխ-հիւպատոսին հետ, չեմ գիտեր՝ ի՞նչ բանի համար վէճ կ'ունենայ, եւ զայն ծանր կերպով կ'անարգէ: Ի հարկէ, հիւպատոսը բարոյական հատուցում կը պահանջէ, եւ թահիր փաշան կ'որոշէ եւ կը հրամայէ, որ որոշ օր մը Ծէվտէթը երթայ հիւպատոսին մօտ եւ ներողութիւն խնդրէ: Ծէվտէթն ոյն օրը սենեակին մէջ ինքզինքը կը վիրաւորէ սրունքէն... եւ չերթար ներողութիւն խնդրելու:

Երկրորդ պատմութիւնը սա է: Նշանաւոր աւազակապետ Սըմկօն հետապնդուած ատեն, խումբ մը ոստիկան-գինուորներ Ծէվտէթի հրամանին տակ, կը սպասէին անցքի մը քովը, ուրկէ կը կարծէին թէ աւազակապետը պիտի անցնի: Քիչ յետոյ էջի մը վրայ հեծած քիւրտ մը կ'անցնի: Ծէվտէթ կը հրամայէ որ քովը բերեն, եւ կը սկսի հարց ու փորձ ընել՝ որեւէ տեղեկութիւն առնելու համար: Քիւրտը ինքզինքը բացարձակ կերպով անտեղեակ կը ցուցնէ: Եւ ոչ վարձատրութեան խոստում եւ ո'չ ալ սպառնալիք օգուտ կ'ընեն: Ստիպուած՝ թոյլ կու տայ որ մեկնի: Մարդը իշուս վրայ կրկին հեծնելու ատեն Ծէվտէթ կը տեսնէ որ կենդանիին վրայ կայ նաեւ խուրճին մը: Կը հրամայէ որ խուրճինը քննեն: Իսկապէս անոր երկու կողմերն ալ առատ փամփուշտ կը գտնուի. ուրեմն ո'չ մէկ տարակոյս որ քիւրտը Սըմկօյի մարդերէն էր: Կատաղութեան ծայրագոյն նպայէ մը բռնուած՝ Ծէվտէթ կը յարձակի քիւրտին վրայ, եւ ամորձիքները սեղմելով, տեղն ու տեղը կը սպաննէ զայն: Եւ, սակայն, հաւաստիօրէն կը վկայէին որ Ծէվտէթ սովորական պարագաներու տակ հաւ մը իսկ չէր կրնար կտրել, եւ ոչ ալ կտրուած հաւի մը վերջին թափուտները անկարեկիր դիտել...:

*
**

Հոս ստիպուած եմ երկու կարեւոր պաշտօնեաներու մասին ալ խօսելու, որոնք այն ժամանակ, եւ մանաւանդ յետոյ՝ մեր կեանքին մէջ նշանակալի դեր կատարեցին:

Առաջինը՝ ոստիկան գինուորներու հրամանատար Խալիլի յաջորդը, հազարապետ Քեազիմն է: Կուսակալին Ռումէլիէն ծանօթ գինուորականը, որ ծագումով ալպանացի կամ կէս ալպանացի էր, բառին բուն առումով գինուորական մը, եւ թթու ժէօմ բուրբ մը: Ոչ

մէկուն հետ մտերիմ, բայց ամէնուն հետ երեւոյթով լաւ էր: Կը նմանէր այն աղուհսին, որ համբերութեամբ կը սպասէ որ խաղողը հասուննայ:

Ահա այս Քեազիմն է, որ 1914-ի պատերազմի յայտարարութեան ժամանակ Վանի գինուորահաւաքման պետն էր, եւ յետոյ Վանի զօրաբաժնի հրամանատարը: Եղաւ նաեւ Մուսթաֆա Քէմալի առաջին աջակիցներէն, եւ վերջապէս «Ազգային Մեծ Ժողովի» նախագահ:

Երկրորդ անձը պետական քննիչ Ապտիւլգատերն է: Նախկին տեղակալ զնդապետ, բանակէն հրաժարած եւ Իթթիհատի «մուրախաս» ներկայացուցիչ-գործիչ եղած էր, եւ յետոյ պետական քննիչի պաշտօնով Վան եկած: Չափազանց անհանդարտ բնաւորութեան տէր, մոլեռանդ ազգասէր, ուր որ եղած էր — կ'ըսէին — միշտ օրուայ իշխանաւորին դէմ դիրք բռնած էր: Բանակէն հեռացած էր էնվերի անձին եւ գործելակերպին դէմ եղած ըլլալով: Իթթիհատի ներկայացուցիչի պաշտօնէն հեռացած էր անոր ընդհանուր կեդրոնիմ հետ խուլ հակառակութիւն մը ունեցած ըլլալուն համար:

Անշուշտ, Իթթիհատի գործունէութեան ներքին ծալքերուն ես անգիտակ էի: Նոյնիսկ ձեւի համար, երբ սկիզբները բոլոր պաշտօնեաներու Իթթիհատական դառնալը նորաձեւութեան կարգ անցած էր, ես զգուշացեր էի իրենց մօտենալէ: Բայց երբեմն ներկայ կ'ըլլայի իրենց օղիաբանական երեկոյթներուն, երբ անոնք մինչեւ կէս գիշեր կը խմէին եւ ես, առանց ուժով մը ալքով զննելու բերանս, ծայրագոյն համբել տարութեամբ մտիկ կ'ընէի գիրենք: Եւ այս կերպով հատուած մը մէկուն խօսակցութենէն, բառ մը մէկ ուրիշին արտայայտութենէն կու տային ինծի իրենց աօրեայ եւ ընթացիկ կեանքէն այնպիսի ծանօթութիւններ, որ իրենց ներքինը կարելի յստակութեամբ կը պատկերացնէին:

Այսպէս, իմացած էի որ Ապտիւլգատերը հայերուն հետ սիրալիր յարաբերութիւններ մշակելը ո'չ միայն անօգուտ, այլեւ վնասակար կը նկատէր: Ընդհակառակն, ինքը կ'ուզէր որ ամէն կերպով քիւրտերը քաջալերուէին ա'յնքան, որ քիւրտ եւ թուրք ձուլուէին եւ միանային: Եւ մա'նաւանդ քիւրտերը օտարներու, իմա, ռուսերուն ձեռքը գործիք չդառնային:

Չեմ գիտեր թէ Իթթիհատը Ապտիւլգատերին տեսակէտը գիտնալուն համար էր որ իբր հակակշռող ուժ գինք Վան դրկած էր, թէ այս վերջինը իրեն համար իբր սկզբունք, այս կէտին մէջ իր պետին՝ կուսակալին հակառակը կը մտածէր ու կը գործէր: Նոյնիսկ, երբ թահսին պէյ իր կառավարած շրջանը քիւրտ աւազակներէ կ'ուզէր մաքրել, քննիչը չէր փափաքեր որ այդ ձեռնարկը քիւրտերը վշտացնելու հանգամանք առնէր: Միայն Սըմկօյին դէմ եղած շարժումներուն ինքն ալ ուժ տուած էր, որովհետեւ անոր նախասիրութիւնը դէպի պարսիկները կ'ուղղուէր:

Ապտիւլգատերը բոլոր աշխրէթի պետերուն կ'այցելէր, հայոց հանդէպ անոնց ունեցած դատերը կ'իւրացնէր (այսինքն՝ եթէ հայ մը

քիւրտէ մը պահանջ ունենար, պէտք էր որ քիւրտը շահէր դատը), եւ հին համիտեան ձեւով կարծես հայերու գլխուն մեծ փորձանք մը պատրաստելու վրայ էր:

Չեմ գիտեր՝ ինչպէ՞ս եղաւ, օր մըն ալ իմացանք որ այդ տխուր անձնաւորութիւնը Վանը ձգած եւ մեկնած էր:

Ընդհանուր պատերազմի ընթացքին ո՞ր եւ ի՞նչ եղած էր, չեմ գիտեր: Ամէն պարագայի, շատ վերջը իմացանք որ էնվերի մեծ հակառակորդ ըլլալէ ետք, Մուսթաֆա Քէմալի ալ թշնամին եղած էր, երբ այս վերջինին շնորհիւ Անգարայի կուսակալն էր: Եւ ձապիտի, Գարա-Քէմալի եւ այլ իթթիհատական պետերու հետապնդման եւ ոչնչացման օրերուն, Ապտիւլգատերն ալ փախստական՝ Թուրքիայէն Պուլկարիա անցնելու ատեն սահմանին վրայ կը ձերբակալուի, եւ Անգարայի մէջ կախաղանի վրայ կը վերջացնէ իր անհանդարտ գոյութիւնը:

*
**

Հիմա կը մնայ ինծի խօսիլ անձի մը մասին եւս եւ վերջացնել այս գլուխը:

Արդէն ակնարկութիւն մը կատարեցի թաթար ընդհանուր դատախազի յաջորդին՝ Ասաֆի մասին, որ աւելի քաղաքականութեամբ կը պարապէր քան իր պաշտօնով: Բնականաբար, պաշտօնի բերմամբ եւ մեր առօրեայ յարաբերութիւններուն պատճառաւ, իրարու հետ մտերիմ դարձանք:

Պալքաններէն Պրուսա գաղթած ընտանիքի մը զաւակն էր: Եղած էր Թուրքիոյ եւրոպական մասը պաշտօնեայ, եւ հոն իբր օգնական դատաւոր ճանչցած էր կառավարիչ Թահսինը: Յետոյ յաջորդաբար եղած էր Երուսաղէմ եւ Տիգրանակերտ իբր դատարանի նախագահ, ուրկէ ալ կուսակալին փափաքով՝ իբրեւ վստահելի մէկը՝ անուանուած էր Վանի Վերաքննիչ Ատեանի ընդհանուր դատախազ:

Առաջին իսկ տեսակցութեան ինձմէ «ուսումնասիրելու» համար ուզած էր սպաննուած ատամնաբոյժին թղթածրարը: Յետոյ իրմէ իմացայ որ հակառակ սիրալիր երեւոյթին, կուսակալը չէր մարսած այդ ոճրի քննութեան — ըստ իրեն — հակակառավարական բնոյթը: Մէկ շաբաթ ետք վերադարձուց զայն, իր ջերմ շնորհաւորութիւններով: Ատկէ վերջն էր որ կուսակալն ալ յայտնի կերպով ինծի հանդէպ բարեփոխեց իր վերաբերումը: Եւ սակայն ատիկա չարգիլեց որ աշխատէր զիս չէզոքացնելու:

Ասաֆը միջակ կարողութեամբ դատական պաշտօնեայ մըն էր: Իր լաւագոյն ընդունակութիւնը եւ փափաքը իր պետերուն հաճելի ըլլալն էր: Իսկ իր կեանքի երազն էր երեսփոխան ըլլալ, եւ Պոլիս փոխադրուիլ:

Հրապարակային արտայայտութեան մէջ չափազանց տկար էր: Մտերիմ խօսակցութեան մէջ դիմացինը կը ջանար համոզել քծնանքի ճամբով:

Երուսաղէմ եւ Տիգրանակերտ եղած ատեն երեսփոխան ըլլալ չէր յաջողած, որովհետեւ տեղացի երեւելիները իրեն պատեհութիւն չէին տուած: Վան, սակայն, այդպէս չեղաւ: Առջի մէկ օրէն, կ'ըսէին, իթթիհատի տեղական կոմիտէի անդամ էր դարձած, եւ այդ ուղղութեամբ մեծ աշխատանք թափած: Արամի հետ խորհրդակցելէ յետոյ, յարմար նկատուեցաւ որ ես ալ քաջալերեմ զինքը, որ դնէր իր թեկնածութիւնը:

Մեզի համար պարագան առաւելութիւններ կը ներկայացնէր: Նախ դրսեցի ըլլալով, շրջանին մէջ անընդունակ կ'ըլլար լայն շրջանակ կազմելու, եւ յետոյ մեզի գլխու փորձանք դառնալու: Իր ընտրութիւնը մեզի կ'ապահովէր նաեւ կարգ մը անբաղձալի անձերու ձախողութիւնը: Միշտ վախը ունէինք որ սպաննուած Մուսա պէյի ձեւով մէկը յառաջ քշուէր: Մինչեւ ընտրութիւնը, կ'օգտագործէինք նաեւ դատարանի առաջ գտնուող բանտարկեալ ընկերներու ի նպաստ իր ստիպեալ բարեացակամութիւնը:

Մեզի համար նպաստաւոր եղող այս բոլոր պայմանները, անշուշտ, հակառակէն դիտելով՝ նոյնչափ աննպաստ էին կառավարութեան համար: Հետեւաբար, իթթիհատը իր թեկնածութիւնը ներքին երկար պայքարներէ վերջ միայն ընդունեց, եւ կարծեմ, քաղաքային քննիչ Ապտիւլգատերն ալ այդ պատճառով հեռացաւ Վանէն:

Ասաֆի յաջողութեան համար Դաշնակցութեան համակրանքը մեծ ազդակ մը եղաւ: Անոր ներկայացուցիչներն ալ (Արամը եւ Իշխանը) իր հետ երկար տեսակցութիւններով վերջնական համամտութեանէ առաջ, կ'ենթադրեմ թէ կարգ մը առաւելութիւններ ապահոված էին:

*
**

Վանի ներքին կացութիւնը եւ քաղաքական վիճակը իր գլխաւոր դերակատարներով ահա այս պատկերը կը ներկայացնէր, երբ 1914-ի Յունուարի մէջ, գիշեր մը ժամը տասին դուռս զարնուեցաւ, եւ կուսակալին թիկնապահ սպան հրաւիրեց զիս որ հետը բերած սահնակով երթամ իր պետին մօտ:

Մէկ ամիս անցեր էր, որ դադրած էի ընդհանուր դատախազ ըլլալէ եւ վարժուեր էի հանդարտ կեանքի. գիշերները բարեկամական այցելութիւններով կ'անցնէի: Ուստի զարմացած՝ հրաւերին պատճառը հարցուցի:

— «Չեմ գիտեր» ըսաւ եւ միայն աւելցուց. — «տէֆտէրտարը (ելեւմտական տնօրէն որ կարեւորութեան կարգով կուսակալէն ետք կու

զայ), բարձր դատարանի նախագահը եւ ընդհանուր դատախազը, նոյնպէս զինուորական եւ ոստիկան-զինուորներու հրամանատարները, մէկ խօսքով՝ կառավարութեան բոլոր յայտնի ղէմքերը արդէն կուսակալին տունը ժողովի հրաւիրուած են»:

Գացի, եւ հետաքրքրութիւնս շուտով փարատեցաւ երբ կուսակալը բացատրեց, թէ Բաղէշի կուսակալ Մուսթաֆա Ապտիւլխալիքէն լուր եկած է որ քրտական ապստամբութիւն մը ծայր տուած է: Ապստամբները կեդրոնի բոլոր պետական շէնքերը գրաւած, առաջարկած են Բաղէշի կուսակալին անձնատուր ըլլալ, այլապէս իր մորթը յարգով պիտի լեցնեն եւ բերդին դռնէն պիտի կախեն, իսկ քաղաքի բոլոր թուրք ժողովուրդը անխտիր սրէ պիտի անցնեն: Ինքը 100-150 հոգիով բերդը ապաստանած է, եւ կը խնդրէ անմիջապէս յարմարագոյն կարգադրութիւնը ընել:

— «Մեր ներկայ ընկերները հրաւիրեցի,— աւելցուց Թահսին պէյ,— որ այսպիսի կարեւոր խնդրոյ մը համար իրենց կարծիքն ալ առնեմ: Եւ որովհետեւ գիտեմ թէ անձնական կապեր կան քու եւ Մուսթաֆային միջեւ, քու տեսակէտդ ալ կ'ուզեմ իմանալ»*:

Կուսակալէն ետք ամէնքն ալ կարճ բառերով արտայայտեցին իրենց տեսակէտները: Իսկ ամենէն վերջ խօսք առնող զինուորականը, որ զօրաբաժնի հրամանատարն էր, ըսաւ թէ ինք չի կրնար պատասխանատուութիւն ստանձնել ո՛րեւէ զինուորական գործողութեան համար, երբ ճամբաները մէկ ու կէս մեթր ձիւնով ծածկուած են, երբ շատ արագ գնացքով իսկ զինուորները հագիւ հինգ օրէն կրնան հասնիլ Բաղէշ, ուր արդէն Ապտիւլխալիքը կամ սպաննուած եւ կամ յանձնուած պիտի ըլլայ: Յետոյ աւելցուց, պէտք չէ մոռնալ որ օրական 20-30 զինուոր թիֆլիսէ վարակուած՝ զօրանոցին մէջ կը մեռնին: Հետեւաբար, այս պայմաններուն տակ քանի մը հազար զինուոր զոհել չէր արժեր: Եւ եզրակացուց:

— «Զգե՛ք Բաղէշի կուսակալը իր բախտին, ու երբ ճամբաները ձեռնտու ըլլան, ինչալլահ բոլոր ապստամբները կ'ոչնչացնենք»:

Երկընտրանքի մը առջեւ էի: Բայց յիշեցի մէկ բան: Ռուս հիւպատոսները, ըլլայ Վան, Բաղէշ եւ կամ արեւելեան այլ քաղաքներ, սկսեր էին շատ բանիլ քրտական շրջանակներու մէջ: Հայերը այլեւս դիւրաւ իրենց ձեռքը գործիք չէին դառնար: Միտքս եկաւ նաեւ Ապտիւլըէզաք Պէտրխանի թիֆլիսի կեանքը եւ յայտարարութիւնները: Թրքական ակնոցով ո՛րեւէ քրտական շարժում, որ ռուսերու օժանդակութեամբ տեղի կ'ունենար, պէտք է սաղմին մէջ խեղդուէր: Հետե-

*) Իսկապէս Մուսթաֆա Ապտիւլխալիքը մօտէն ճանչցեր էի Եսմիայի մէջ, երբ Ռոն դատարար էի եւ ինքն ալ գիտաբաղադրի մը փոխ-կառավարիչն էր: Ծագումով ալպանացի, բայց բոլորովին թրքացած՝ Թալէաթի թիկնապահ սպայ տեղակալ-գնդապետ Էօսէրի Տօրեթօրոյիցն էր: Անոր պաշտպանութեամբ, Պալքանեան պատերազմէն ետք Սղերդի կառավարիչ, եւ քիչ յետոյ Բաղէշի կուսակալ դարձած էր:

ւաբար, յայտարարեցի թէ նախ՝ զինուորներու հիւանդութեանց բոյն դարձած զօրանոցներէն դուրս ելլելը բարիք պիտի ըլլար: Երկրորդ՝ երբ նահանգի մը պետը կ'ըսէ թէ նեղ դրութեան մատնուած է տեղական ապստամբութեան մը պատճառաւ, եւ եթէ ապստամբութիւնը անմիջապէս չզսպուի՝ անիկա շատ մեծ ծաւալ կրնայ ստանալ: Աւելին՝ չենք կրնար գուշակել թէ ուրիշ ի՞նչ վատ բաներ կրնան պատահիլ: Երրորդ՝ երբ մանաւանդ խնդրոյ առարկայ է պետութեան արժանապատուութիւնը, երբ քանի մը հազար քիւրտեր կը համարձակին մորթելու սպառնալիք ընել անոր ներկայացուցիչ կուսակալին, իմ կարծեօք որեւէ յետաձգում զսպողական միջոցներու մէջ՝ ոճիր պիտի ըլլար:

Խօսքերուս ընթացքին տեսայ որ Թահսին լարուած ուշադրութեամբ զիս կը դիտէր: Անմիջապէս մտքէս անցաւ թէ քննութիւն մը կ'անցնէի: Միայն չկրցայ հասկնալ, թէ ինքը իմ անհատական տեսակէտս կ'ուզէր իմանալ, թէ հայութեան: Ամէն պարագայի տակ միջամտութիւնս կ'երեւի իր որոշ ազդեցութիւնը ունեցաւ: Եւ երբ երկու ժամ վերջ տուն վերադառնալու համար կը ցրուէինք, որոշուած էր որ բանակը ժամը 3-ին ճամբայ պիտի ելլէր դէպի Բաղէշ:

Իսկապէս Մուսթաֆա Ապտիւլխալիքը կրցած էր դիմադրել մինչեւ Վանի զինուորներուն հասնիլը: Բանակը դիմադրութեան վերջին պահերուն հասած՝ կատարած էր իր պարտականութիւնը: Քիւրտերը, որոնք արդէն անկարգապահ խուժանային ուժերէ էին կազմուած, քիչ մը կորուստ տալէ ետք ցրուած էին: Իսկ իրենց պետը, Խալիֆա Սէլիմ, ռուսական հիւպատոսարանը ապաստանած էր:

Ի հարկէ, ցարական կառավարութիւնը, հակառակ թրքական պահանջքին եւ բուռն բողոքներուն, զայն չյանձնեց: Իսկ կուսակալը՝ յամառ ալպանացին՝ հիւպատոսարանը այնպիսի ձեւով մը հրահրութեան տակ առնել տուած էր որ առանց կառավարութեան գիտութեան՝ ոչ ոք կրնար մուտք գործել եւ կամ դուրս ելլել: Ասիկա տեսած էր մինչեւ ամառ, երբ պատերազմի յայտարարութեան վրայ հիւպատոսարանը թրքական իշխանութիւններու կողմէ գրաւուեցաւ, եւ Խալիֆա Սէլիմն ալ ձերբակալուեցաւ: Ինչ խօսք որ, Մուսթաֆա Ապտիւլխալիք բերդին դռնէն զայն կախել տուաւ ճիշդ այն ձեւով, որ այս վերջինը ժամանակին սպառնացեր էր իրեն:

*
**

Այդ օրերուն էր որ տեղի կ'ունենար Մուսա պէյի տէնօրիստներու դատը: Արամն ու Իշխանը, երբեմն երկուքը միասին, զոյգ փաստաբանները, հետոս պարբերաբար խորհրդակցութիւններ կ'ունենային:

Դատարանի նախագահը որեւէ արտաքին ճնշումի պէտք չունէր դատավարութեան ընթացքին լուրջ եւ մանրակրկիտ ըլլալու համար: Իսկ

մեզի համակիր ընդհանուր դատախազը ստիպուած էր թէ՛ հայերու դէմ յայտնի թշնամանք ցոյց չտալ, եւ թէ՛ միեւնոյն ժամանակ չկորսնցնել կուսակալին բարեկամութիւնը, որ նժարին մէջ աւելի կը կշռէր:

Առանց խնդրոյն մեծ կարեւորութիւնը (եւ հետեւաբար՝ ահագին դժուարութիւնը) նկատի առնելու, զգացումէ տարուած խօսք տուած էի բանտարկեալները ազատել, եւ բնականաբար առտու-իրիկուն միակ մտահոգութիւնս եւ աշխատանքս այդ ուղղութեամբ էին:

Ճիշդ է որ երկու հայ անդամներու ձայնով բանտարկեալները կրնային ազատիլ, եւ սակայն, թրքախօս հայ անդամը, մինչեւ որ իսլամ դատաւոր մըն ալ իրենց չմիանար, չէր համարձակեր առնելու այդ քայլը: Բազմանդամ ընտանիքի հայր՝ կը մտածէր (եւ հաւանաբար իրաւամբ) որ զինք անմիջապէս պաշտօնագրուրկ պիտի ընէին: Ուրեմն, ինծի կը մնար ինչպէս նախապէս յիշեցի՝ շահիլ քանի մը ամիս առաջ Բաղէշէն փոխադրուած եւ ծագումով քիւրտ դատարանի անդամը:

Չմեռ օրերը գործերը սակաւ էին, ճամբաները ձիւնակոյտերով ծածկուած, եւ քաղաքին հետ յարաբերութիւններն ալ դժուարացած: Չէինք կրնար կոչնագրերը ժամանակին իրենց տէրերուն հասցնել: Ուրեմն ազատ ժամեր շատ ունէինք, եւ կը զբաղէինք նոյն շէնքին մէջ փոխադարձ այցելութիւններով եւ... թէյ խմելով:

Այսպէս, օր մը Վերաքննիչ Ատեանի անդամ Շաքիրն ալ ինծի այցելեց: Միշտ հետամուտ իր տկար կողմը գտնելու՝ հետաքրքուեցայ իր անձնական կեանքով, եւ հասկցայ թէ մարդը ի՞նչ փորի ցաւ ունէր: Իր զաւակը նոր ամուսնացած՝ Բաղէշի դատարանին մէջ քարտուղար էր: Տեղական սովորութեան համաձայն, տղան իր հարսին հետ հօրը տունը կ'ապրէր, եւ երբ հայրը Վան փոխադրուած էր, հարսն ալ հետեւած էր: Իսկ տղան պաշտօնը չկորսնցնելու համար կը մնար Բաղէշ, եւ այդ պատճառով բնականաբար տան մէջ անհամուրթիւն կը տիրէր:

Կարեկից գտնուեցայ եւ իմ կուրելիս խոստացայ, որ տղան Վան՝ իմ դատարանս փոխադրել տամ: Անշուշտ, չափազանց գոհ եղաւ: Ամէն մարդ գիտէր որ խոստումս կը յարգէի:

Մեկնելու պահուն, ոտքի վրայ՝ — «Մուսա պէյի դատը ի՞նչ եղաւ» հարցուցի: — «Լմնալու վրայ է, — ըսաւ, — միայն թէ գործը ա՛յնքան մանուածապատ եւ զաղտնիքով չըջապատուած է, որ մարդ չի գիտեր թէ որո՞ւն հաւատայ»: Պատասխանեցի թէ այդ կարգի պարագաները օրէնսդիրներու կողմէ նախատեսուած են: Կասկածելի խընդիրները պէտք է որ ամբաստանեալներուն ի նպաստ վերջանան: Եւ այդ ուղղութեամբ բաւական բացատրութիւններ տալէ ետք՝ համարձակեցայ աւելցնելու որ իմ փափաքս ալ այդ է:

— «Հրաման կ'ընէք» ըսաւ եւ մեկնեցաւ:

Քանի մը օր ետք դատարանը իր վերջնական վճիռը պիտի տար: Երկու հայ դատաւորներու ձայնին կը միանար նաեւ Շաքիրը, եւ ներկայ ամբաստանեալները ամէնքն ալ ազատ կ'արձակուէին. իսկ ի բացա-

կայութեան ծանր պատիժներու կը դատապարտուէին անոնք որ փախըստական ըլլալով կարելի չէր եղած ձերբակալել:

Քանի մը շաբաթ վերջ ես ալ խոստումս կատարեցի: Շաքիրին տղան Բաղէշէն իմ գրասենեակս փոխադրուեցաւ:

Ինծի համար խղճի պարտք է ըսել հոս, որ հակառակ կուսակալին եւ պետական շրջանակներու մէջ այս վճիռն յառաջացուցած բուռն անդրադարձներուն՝ արդար էր այդ վճիռը (քանի Արամ ինծի հաւաստիք տուած էր որ բոլոր բանտարկեալներն ալ անմեղ էին, իսկ իրական մեղաւորները արդէն արտասահման անցած):

9.- ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒ ՅՈՅՍԵՐՈՎ...

1914-ի սկիզբը, Վանի մէջ բոլոր խօսակցութիւնները մէկ նիւթի շուրջ կը դառնային — ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ:

Թղթատարը շաբաթը անգամ մը կը հասնէր, որով Պոլսոյ թերթերուն վերջին թիւը մէկ շաբաթ առաջուան թուականը կը կրէր: Թերթերը ի հարկէ, քուլիսներուն ետեւ եղած խօսակցութիւնները կ'անգիտանային, կամ այդ մասին չէին կրնար գրել: Այդ ուղղութեամբ կուսակցական աղբիւրէ եկած հատուկտոր լուրերուն Արամէն կը տեղականայի, որուն հետ մտերմական կապերս հետզհետէ կը զօրանային:

Մուսա պէյի սպանութեան համար բանտարկուածներուն անպարտութեան վճիռը ամբողջ Վանի հայութեան, եւ մանաւանդ կուսակցական շրջանակներու մէջ մեծ խանդավառութիւն ստեղծած էր: Եւ ի՞նչ տարակոյս, որ ենթադրութիւնները եւ լաւատես տրամադրութիւնները կ'աւելնային: Ինծի պէս, ամէն մարդ գիտէր որ բանտարկեալները անմեղ էին: Բայց Թուրքիոյ մէջ պատահած էր արդեօք քաղաքական դրդապատճառով գործուած ոճիր մը, որուն դատավարութիւնը արդար վճիռով մը վերջանար: Ու ժողովուրդը կը մտածէր, որ եթէ հիմա արդէն այսպէս է, ուրեմն քարեկոտութիւններու շրջանին կեանքը (հանրային եւ տնտեսական), պիտի ըլլայ ինքնավարութեան նման բան մը, կամ գէթ պիտի ապահովուին հայերուն կեանքը, պատիւը եւ ինչքը:

Ինչպէս ամէնքս իմացեր էինք, բանակցութիւններ կը կատարուէին մեծ պետութիւններու եւ Թուրքիոյ միջեւ: Երեւոյթներէն դատելով՝ ցարական կամակոր հաստատամտութեան շնորհիւ, ողջ հայութիւնը կը սպասէր քարեկոտութիւններու ծրագրիմ ընդունելութեան եւ գործադրման: Միւս կողմէ՝ Թուրք կառավարութիւնը չէր դադրած

յուսակալէ, որ եթէ արտաքին աշխարհի մէջ Գերմանիոյ աջակցութեամբ կարելի չըլլար այս անգամ ալ վրիպեցնել բանակցութիւնները, գուցէ կարելի կ'ըլլար ատիկա ներքին կեանքի մէջ, ուղղակի հայերու հետ համաձայնութեամբ: Այս պատճառով ահա, ինչպէս նախապէս յիշեցի՝ կուսակալը ամէն առիթով եւ պատեհութեամբ կ'աշխատէր իր տեսակցութիւններուն միջոցին խօսիլ այդ ուղղութեամբ: Արամը եւ իշխանը եւս խօսակցութիւններ կ'ունենային կուսակալին փափաքով, կապը չէին խզեր, եւ ինծի ալ պարբերաբար կ'իմացնէին ինչ որ կը խօսուէր:

Հետեւեալ կէտին շուրջ համաձայն էինք: Պոլիս եւ Պոլսէն դուրս, եւրոպական թէ հայկական շրջանակներու մէջ ինչ որ խօսուի եւ ըսուի, ատիկա պատճառ պէտք չէ ըլլայ մերժելու կառավարական այն ձեռնարկները եւ փափաքները, որոնց անմիջական գործադրութիւնը հայութեան մեծ առաւելութիւններ կրնան ապահովել: Այսպէս, օր մը Արամը եւ իշխանը փափաք յայտնած էին որ Շատախի գայմագամը հայ մը ըլլայ: Կուսակալը անմիջապէս հաւանութիւն յայտնած էր, եւ իրենք ալ եկան ինծի առաջարկելու որ ընդունիմ այդ պաշտօնը:

Հակառակ այն իրողութեան որ Շատախի շրջանը կարեւոր էր, եւ իշխանին ալ սրտին մօտ՝ ես չընդունեցի, ո՛չ թէ փառասիրութենէ մղուած (այդ պաշտօնը իմ ունեցածէս աստիճան մը վար էր) այլ՝ որովհետեւ տիրող պայմաններուն տակ չէի կրնար մեծ օգտակարութիւն ունենալ: Երբ դատական գործերու մէջ իսկ վարչական պաշտօնէութիւնը միջամուկ կ'ըլլար, եւ ամէն մէկ վարչական պետ կը կարծէր որ միայն ինքը գիտակ է ամէն բանի, միայն իր կարծիքը ուղիղ է, եւ ամէն մարդ պէտք է հնազանդի ի՛ր հրահանգներուն, այլեւս ո՛ր կը մնային բուն իսկ վարչական գործերը, ուր ստիպուած էիր հնազանդիլ վերէն եկած հրահանգներուն, եթէ նոյնիսկ անոնք անտրամաբանական եւ անխիղճ ըլլային: Կեղբոնացման դրութեամբ ամէն ինչ կուսակալին կամքէն կախուած էր: Ամենէն պզտիկ իրողութիւն մը պարտաւոր էիր իրեն իմացնել: Նոյնիսկ ո՛րեւէ նախաձեռնութեան պարագային, եթէ ատիկա հաճոյ չէր պետիդ, պարտաւոր էիր ձեռնադրել ըլլալ:

Բնականօրէն, իմ մերժումիս պատճառները լայնօրէն պարզեցի Արամին եւ իշխանին, որոնք ի վերջոյ համաձայն եղան:

Կուսակալը սակայն, որ իմ մերժումիս բուն պատճառը կ'անգիտանար, կարծեց որ այդ պաշտօնը պզտիկ տեսնելու համար չեմ ուզեր, եւ առաջարկեց ինծի անմիջապէս վարդոյի փոխ-կառավարչութիւնը՝ երկու ամիս վերջ Մուշի կառավարիչ անուանել տալու խոստումով: Ահա պաշտօն մը որ չլացուցիչ էր: Բայց ես, ճի՛շդ մի-եւնոյն պատճառներով նախընտրեցի մնալ դատական ասպարէզիս մէջ, եւ չընդառաջեցի կուսակալին առաջարկին:

Մինչ այդ, կ'երեւի բարենորոգումներու հարցը լուծուելու վրայ էր: Կուսակալը ամէն առիթով ցաւ կը յայտնէր որ — «հայերը շատ

պահանջկոտ դարձած են, եւ օտարներու միջամտութիւնը նախամեծար կը համարեն»:

*
* *

Ապրիլի վերջին օրերուն (1914) վերջապէս ծառերուն վրայ տեսնուած առաջին կանաչ կտորութիւնները մեզի մեծ ուրախութիւն պատճառեցին: Զիւնն ալ զգալի կերպով քիչցաւ, եւ կարգ մը տեղեր հողը տեսանելի դարձաւ: Հակառակ այս կէս-ձմեռ, կէս-գարուն եղանակին, բոլորիս պէս անհամբեր կուսակալը, 10-15 պաշտօնեայ եւ քանի մը քաղաքի երեւելիներ Ուրբաթ օր մը Արտամետ ճաշի հրաւիրեց:

Արտամետի անունը ինծի շատ սիրելի էր, որովհետեւ կարգացած էի Սրուանձտեանց եպիսկոպոսին գիրքերը: Մեծ հետաքրքրութեամբ ընդունեցի կուսակալին հրաւերը, եւ յուսախաբ չեղայ:

Վանէն կառքով մէկ ժամը հեռու, լիճին հարաւային մասին վերէն անցնող Վան-Ոստան պողոտայէն եւ հին մեհեանի մը աւերակներէն դէպի վար՝ վայրէջքի մը վրայ երկարող պտղատու պարտէզներու ընդարձակ տարածութիւն մը կար, որ կու գար եզերելու լիճը: Այս վերջինը Այգեստանի մակարդակէն աւելի ցած էր: Բնականաբար հոն օդը, ջուրին բարեխառնող յատկութեամբ յազեցած, աւելի մեղմ էր: Հոս-հոն թէեւ ձիւնի պզտիկ կոյտեր կային, բայց այլեւս գարուն էր: Նոյնիսկ կեռասի, բալի եւ տեղ-տեղ ալ Արտամետի նշանաւոր խնձորի ծառերը արդէն ծաղիկ բացած էին:

Չեմ գիտեր, արդեօք պատանեկան շրջանին կարգացած Գարեգին եպիսկոպոսի կախարդական տողե՞րն էին պատճառը, թէ գրեթէ վեց ամիս ձիւնի մէջ թաղուածի միապաղաղ եւ ձանձրացուցիչ կեանքի ազդեցութիւնը, որ այդ օր Արտամետի մէջ անցուցած ժամերս բացառիկ վայելք պատճառեցին: Ներկաները կը խմէին, եւ ճոխ պիւֆէէն չէին բաժնուեր:

Ես ալ, քանի մը հոգիի հետ, լիճին եզերքը, բալենիի մը կոթնած, կը դիտէի ջուրերու յաւիտենական շարժումը, կոհակներու կազմութիւնը եւ փոփոքտ ալիքներուն հողին եւ քարին տուած անվերջ համբոյրները: Լճին ջուրը Արտամետի մէջ հողէն տասը մեթրի չափ վար է, ինչ որ տեսարանին կու տար ուրիշ գեղեցկութիւն մը: Արամն ու իշխանն ալ հոն էին, եւ երբ հարեւանները մեզի կէս ժամի չափ մինակ ձգեցին, կրնա՞ք երեւակայել թէ մեր խօսակցութիւնը ինչ գոյն եւ շեշտ ստացաւ Բզնունեանց ծովին դէմ...:

Կէսօրէ ետք, կուսակալին թելադրութեամբ, նշանառութեան փորձեր կատարուեցան: Լիճի եզերքէն հարիւր մեթր հեռաւորութեան վրայ նաւակով զացին եւ հաւկիթ մը դրին:

Առաջին յաջողուող քիւրա աշխրէթապետ մըն էր. երիտասարդ մը որ Պարսկաստանէն այս կողմ անցած եւ ապաստան գտած էր թուրք կառավարութեան մօտ* : Իր զէնքը մեծ մաուզէր մըն էր : Երկրորդը՝ սասիկան զինուորներու հրամանատար Քեազիմն էր, որուն հարուածը հակիրթին մօտ ջուրի ցայտք մը յառաջացուց միայն, առանց անոր վնասելու : Իր զէնքը տասնոց մաուզէր մըն էր, եւ երկու ձեռքով զէնքը բռնած նշան առաւ : Երրորդը Իշխանն էր, որ նոյնպէս տասնոց մաուզէր մը ձեռքը՝ մօտեցաւ եւ մէկ ձեռքով զէնքը վերցնելը, նշան առնելը եւ ընդհանուր հիացումի մէջ հակիրթը թոցնելը մէկ եղաւ :

Այս առիթով Արամ բացատրեց որ շրջանին եւ մանաւանդ քիւրաեքուծ մէջ, կը գնահատուէին եւ մեծ յարգանքի կ'արժանանային անոնք որ շատ լաւ նշանառու էին եւ ձիավար : Իսկ Իշխանին պէս մէկը, որ ժայռերու վրայէն եւ խոչընդոտներու մէջէն ձիով անցած միջոցին օգին մէջ թռչուն մը կը զարնէր, ալ գրեթէ կ'աստուածանար :

Չարմանալի չէր ուրեմն որ առաջին Իշխանին մօտեցող եւ շնորհաւորելու համար ձեռքը յարգանքով սեղմող քիւրա աշխրէթապետին ազան եղաւ : Իսկ սասիկան զինուորներու հրամանատարին զէնքը աչքան թթուեցաւ՝ որ պահ մը կարծեցի թէ անհամութիւն մը պիտի ստեղծուէր : Հաւանաբար միեւնոյն պատճառով մասհագուեցաւ նաեւ կուսակազը, որ Քեազիմին թելը մօտ՝ չեմ գիտեր իրեն հետ ի՞նչ խօսիչ սկսաւ, եւ ձախարակութեան պարագան մտայուեցաւ :



Արտամեծի փիլիսոփէն քանի մը որ ետք լուր տուին, որ կուսակազը պիտի այցելէ գասափան պաշտօնատունը :

Իր սովորութիւնն էր՝ ամիսը կամ երկու ամիսը անգամ մը գալ նախազաններու եւ ընդհանուր գասափաղներու մօտ եւ խօսիլ ընթացիկ ինքնօրէններու մասին, ինչպէս նաեւ օգէն եւ ջուրէն : Երբ պաշտօնատան դիւ եկաւ, քանի մը վայրկեան ետք — «ձախարակին հետ մասնաւոր անասկցութիւն մը պիտի ունենամ» — ըսաւ, եւ ներկայ գասաւորները նստիլեց :

Ի՞նչմը շատ լուրջ էր եւ դէպքը անօրինակ : Մասհագութեամբ ապաստելի որ խօսի : Երկուսը յատուաբար մէջ վերջ եղբայրացաց — «Հայրեր ալս անգամ իրան (տհաս) դարս եկան» — եւ աւելցուց :

*) Օսմանեան կառավարութիւնը Վանի կուսակալին Ռայդուփեան տակ, կը գրադէր Անե սահմանէն ամրին գոնտող քիւրտներուն վիճակով : Անոնց մէջ կողմնոր աստղծագ իրան Ռասասարին խմբատրումներ կազմակերպել, շարունակ անոնց մէջ գործելու Ռամար գործակալներ որով, դժգոհութիւնները շահագործել եւ պարսիկ կառավարութեան խառնութեան կամ պատրուներէն խտասփը ուղղութեամբ ապաստան տալ՝ իր սահմաններէն ընթացիկ գործուն էին :

— «Պէտք չէր որ պնդէին եւ պահանջէին օտարին միջամտութիւնը : Պալքանեան պատերազմէն քիչ առաջ, ես պուլկարներուն հետ ալ համաձայնելու վրայ էի, բայց պատերազմը կանխեց : Այս անգամ ալ նոյն տեսակի խօսակցութիւններ ունեցայ Իշխանին եւ մանաւանդ Արամին* հետ : Հաւանաբար, լաւ եզրակացութեան մը յանգինք» :

— «Կրնա՞մ հասկնալ թէ ինչ էին այդ խօսակցութիւնները» :

— «Ոնդիրը սա է : Երկիրը — մա'նաւանդ արեւելեան մասը — շատ յետամնաց է : Ամենէն առաջ կը կարօտի ապահովութեան եւ արդարութեան : Իմ վան զալէս առաջ ամէն կողմ աւազակներ կը վիտային : Հիմա այլեւս գոյութիւն չունին : Դուն ինքը լաւ գիտես արդարութեան գետնի վրայ եղած բարեփոխութիւնները : Թուրք եւ հայ, ձեռք ձեռքի տուած, շատ համերաշխօրէն կրնանք աշխատիլ : Մեր խրճիթին տէրը մենք կ'ըլլանք եւ օտարներու էնթրիկներէն ազատ կը մնանք» :

Անշուշտ, անմիջապէս միտքս եկաւ հարցնելու, թէ այս ամէնուն մէջ քիւրտերը ի՞նչ պիտի ընեն : Չանոնք զսպելու եւ եթէ ոչ օգտակար՝ գոնէ անվնաս տարր զարձնելու համար ի՞նչ կը մտածէք : Եթէ այդ գործը կատարելն ալ ձեզի կ'իյնայ, ուրեմն ճիշդ կու գանք Յ1-րդ յօդուածի տրամադրութիւններուն, երբ այդ շատ կարեւոր հարցն ալ Օսմանեան «բարեխնամ» կառավարութիւնը ստանձնած էր... :

Բնականաբար չըրի այդ հարցումը, որովհետեւ այլեւս ամէնքս գիտէինք որ հարցը անհատական բարեացակամութիւններով լուծուելու կարելիութիւնը շատոնց կորսնցուցած էր : Կուսակալին խօսքերուն մէջ սակայն իսկապէս անկեղծութեան շեշտ մը կար : Կ'անգիտանա՞ր կեդրոնի պետերուն իրական, ներքին մտածողութիւնը, թէ ինքը իր կորովին եւ ընելիքին վրայ վստահ՝ կը յուսար գլուխ հանել գործ մը, որ փտախտ եղած վէրք մըն էր, եւ սովորական դարմաններով՝ անբուժելի :

Այս ամէնը երկարօէն պարզելէ ետք — «դուք ի՞նչ կը մտածէք», ըսաւ :

Այդ պահուն հասկցայ իր այցելութեան բուն նպատակը : Կ'երեւի քննութեան մը բովէն պիտի անցնէի : Բայց ո՞ւր հասնելու համար, դեռ չէի գիտեր : Ըսի .

— «Նախ, Բարենորոգումներու հարցով չեմ զբաղած եւ զայն չեմ ուսումնասիրած : Կը կարծեմ որ փոխադարձ հասկացողութեամբ եւ բարեխիղճ վերաբերումով առհասարակ լաւ արդիւնքներու կարելի է հասնիլ» : Յետոյ բուն իր մտահոգութեան առարկային անդրադառնալով աւելցուցի . — «Ծն խորապէս համոզուած եմ, որ արեւելեան այս նահանգներու ուսական մականին տակ անցնիլը հայերու շահերուն հակառակ է» :

Այս ուղղութեամբ երկարօրէն խօսեցայ : Եւ պէտք է խոստովանիմ թէ կատարելապէս անկեղծ էին իմ խօսքերս : Այն ատեն ալ, ինչպէս

*) Ինքը չէր գիտեր անշուշտ, որ ես օրը օրիմ կը Ռետեւէի այդ խօսակցութեանց :

կայսրութեան տապալումէն ետք, եւ համայնավարական վարչաձեւի տակ՝ իմ մտածողութենէն նշանախեց մը փոխելու պատճառ չեմ տեսներ: Հայաստանը բարենորոգուած՝ այո՛. Հայաստանը անկախ՝ այո՛. բայց երբե՛ք ուսական տիրապետութեան տակ ծայրագաւառ մը:

Կը կարծեմ թէ կուսակալը համոզուեցաւ որ ես ուսաստիճան քաղաքականութեան բացարձակ դէմ էի:

Անշուշտ, կուսակալ Թահսին պէյ բաւական խելացի մարդ էր՝ հասկնալու համար որ ուսաստիճան քաղաքականութիւն չունենալով հանդերձ, մէկը կրնար նա՛եւ թրքական օրիանդասիոն չունենալ: Հայ մը այս երկու ուղղութիւններէն անկախ՝ կրնար պարզապէս ազատասէր ըլլալ, եւ հայկական անկախութեան ձգտիլ: Բայց կ'ենթադրեմ, որ իրեն համար — եւ իրենց համար — հայերու ազատասիրութիւնը նուազ վտանգաւոր էր քան ուսաստիճանը: Թուրքերուն համար ազատ Հայաստանի մը ծնունդը դժուար իրականալի ծրագիր մը կը թուէր ըլլալ այդ օրերուն, մա՛նաւանդ այն համոզումով որ իրենց մեծագոյն դաշնակիցը նոյնինքն Ռուսիան պիտի ըլլար, ընդդիմանալով հայկական անկախութեան: Իսկ եթէ որեւէ պատճառաւ՝ թուրք եւ ուս սահմաններուն միջեւ անկախ Հայաստան մը ստեղծուէր, վերջին հաշտով անիկա նուազ վնասակար պիտի ըլլար քան թէ այդ հողամասին ուսական տիրապետութեան տակ անցնիլը: Որովհետեւ հայերը իրենց սահմաններուն մէջ պահելը անելի դիրքին էր քան ուսերը:

*
**

Տեսակցութեան աւարտին կուսակալը հարցուց.

— «Եթէ հոս դրկուած օտար ընդհանուր քննիչին մօտ պաշտօն մը առաջարկուի կը ստանձնե՞ս»:

— «Սիրով, — պատասխանեցի եւ աւելցուցի, — կը բաւէ որ գործս դատական ճիւղի մէջ ըլլայ»:

Իրարմէ բաժնուելէն մէկ ժամ յետոյ կուսակալը գոց պահարանի մը մէջ զրկեց ինծի ներքին նախարարութեան ուղղուած հեռագրի մը պատճէնը, որով կ'առաջարկէր (մեծ գովեստներով) զիս ընդհանուր քննիչին մօտ դատական գործերու խորհրդական անուանել:

Անշուշտ, ուրախութիւնս շատ մեծ եղաւ: Նոր սերունդը այժմ գուցէ անգիտանայ, բայց այդ շրջանին թերթերու եւ ժողովրդական խօսակցութեանց, ինչպէս նաեւ անվերջ գանգատի եւ բողոքի առարկան հարստահարութեանց հարցն էր: Երկար տարիներու ընթացքին անհատ հայերու, եւ մա՛նաւանդ վանքերու ստացուածքին մեծ մասը խարդախ կամ բռնի միջոցներով անցած էր քիւրտերու կամ իսլամներու ձեռքը: Նոյնիսկ երբեմն իրենց գիւղերէն արմատախիլ ըլլալով, հոս հոն ցրուած Հայ գիւղացիներուն ամբողջ ունեցածը, երէկուան տկլոր, իսկ այսօր—

ուան աղա դարձած քիւրտին սեփականութիւնը դարձած էր: Իսկ հայ ժողովուրդը շատ-շատ բողոք կը բառնար թեմի Առաջնորդին, որ իր կարգին զայն կը փոխանցէր Պոլիս՝ Պատիարքարանին: Այս վերջինն ալ ամէն ամիս թափրիքով մը (յայտարարագիր) կը դիմէր Բ. Դուռը՝ իր զրկեալ հօտին համար արդարութիւն, եւ աւագակ բռնարարողներու պատժուիլը պահանջելով: Իսկ Բ. Դուռը, եթէ մէկ կողմ չնետէր թափրիք, կը փոխանցէր պատկան իշխանութեան առ ի քննութիւն: Այդ իշխանութիւնն ալ իր կարգին, այդ գրութեան մէջ յիշուած տեղույն փոխկառավարիչէն կամ միւտիւրէն տեղեկութիւն կը պահանջէր: Եւ որովհետեւ դէպքը այս վերջինին հաւանական գիտակցութեամբ կամ շահակցութեամբ, եւ գուցէ դրդումովն իսկ եղած կ'ըլլար, «յետ քննութեան» եզրակացութիւնը այն կ'ըլլար որ գանգատողը, եթէ յանցաւորը չէր, ապահովաբար անիրաւ էր:

Այսպէս, տարիներու ընթացքին, թափրիքները պատկառելի թիւի մը հասած էին, եւ կազմած «հարստահարութեանց» նոյնչափ պատկառելի թղթածրարը:

Ընդհանուր քննիչին անմիջական եւ մեծագոյն զբաղումի առարկան պիտի ըլլար այդ հողային հարցերուն լուծումը: Դատական գործերու խորհրդականին վիճակուած էր ուրեմն, լաւագոյն եզրակացութեան մը յանգեցնել այս շատ դժուար եւ ցաւոտ հարցը:

Ինչպէս յիշեցի արդէն, թեմի գլխավորութիւնները չէին որ զիս կրնային նեղել, այլ ներկայացող գործի մը համար մտքով եւ խղճով արդար լուծումի մը յանգելէ ետք, դեռ որոշումը գործադրութեան չդրուած՝ կառավարական վարչութեան գլուխը գտնուող անձին կողմէ անտեղի եւ համոզմանդ հակառակ միջամտութիւն մը: Այդ անպատեհութիւնը այլեւս իր կարեւորութիւնը կը կորսնցնէր, քանի իշխանաւորը պիտի ըլլար բանիմաց, եւ կը յուսայինք՝ արդար օտարական մը:

Քիչ յետոյ, Պոլսոյ թերթերը արդէն մեզի մանրամասն տեղեկութիւններ տուին արեւելեան նահանգները զրկուելիք քննիչներուն մասին: Անձերու անուանումը կատարուած էր: Մէկը հոլանտական գաղթավայր Պօրնէոյի նախկին կառավարիչ ՎէՍՅԵՆՆԵՆԿը, որուն վիճակուած էին Կարին, Սեբաստիա եւ Տրապիզոնի նահանգները, իսկ միւսը Նորվեգիոյ պատերազմական նախարարի օգնական գնդապետ ՀՕՅը, որ Վան, Բաղէշ, Սարբերդ եւ Տիգրանակերտի շրջանին մէջ պիտի գործէր:

Հոս պիտի չխօսիմ այն ամէն անցուդարձերուն մասին, որոնք Պոլիս, Փարիզ եւ Պերլին տեղի ունեցած էին: Այս մասին կոմսը բաւականին տեղեկութիւններ տուած է Բարենորոգումներու հարցին յատկացուցած ուսումնասիրութեան մէջ: Ինծի կը վիճակուի միայն գրել, ինչ որ խօսուած եւ եղած է մեր շրջանին մէջ:

Քանի օրերը կ'անցնէին, կուսակալը եւ իր շրջապատը աւելի մտահոգ կը դառնային: Աւելորդ է ըսել թէ մեր շրջանին մէջ ալ, խոտոր

Համեմատութեամբ յոյսը եւ ուրախութիւնը կ'աւելնային: Եթէ հրապարակաւ չէինք արտայայտուեր, սակայն ամէնուս սրտին մէջ երկար դարերէ վերջ, մեր ազգային ազատութեան վերածագման առաջին նշոյլներն էին որ կ'ընդնշմարէինք: Մեր ամբողջական պահանջները, ինչպէս կը լսէինք, տակաւին չէին իրականացած, բայց ինչ արդիւնք որ ձեռք բերուած էր, ամուր պատուանդանի մը երաշխիքը կու տար՝ կեանքի, պատուոյ եւ ինչքի ապահովութեամբ:

Ա.- Նախ՝ բոլոր պաշտօնեաներուն անուանումը պիտի ենթարկուէր եւրոպացի ընդհանուր քննիչին վաւերացման: Անիկա ուզածը պահելու եւ գործին չեկածը չընդունելու իրաւունք պիտի ունենար: Միայն, եթէ պահանջէր կուսակալի մը հրաժարեցումը, ստիպուած պիտի ըլլար Բ. Դրան հաւանութեան դիմել, եւ եթէ այդ հաւանութիւնը կարճ ժամանակի մը մէջ, (կարծեմ երեք օրէն) չգար, իրաւունք պիտի ունենար ամէն պարագայի զայն ալ ճամբու դնել: Ասիկա ամենածանր հարուածն էր թուրք պետական վարչութեան:

Բ.- Երկրորդ կարեւոր պայմանը այն էր, որ այդ եօթը նահանգներուն զինուորացուները նոյն նահանգներուն մէջ միայն պիտի ծառայէին: Ուրեմն, այլեւս թուրքին եւ քիւրտին համար ալ մինչեւ արաբական շրջանները երթալ, եւ անապատներուն մէջ վաչկատուններու կամ ապստամբներու դէմ կուրի չկար: Այս պարագան մօտ ապագային մեծ կարեւորութիւն պիտի ստանար, որովհետեւ այդ նահանգները կայսրութեան ամբողջութենէն զատուած Անթիօի մը պիտի ըլլային: Արդէն այս մտահոգութեամբ տողորուած՝ թրքական կառավարութիւնը ի'նքն իսկ ուզած էր որ ՏՐԱՊԻՉՈՆՆ ալ միւս վեց նահանգներու միանար, որպէսզի այս առանձնաշնորհեալ շրջանը՝ զուտ հայկական անուն եւ քաղաքական միաւորի երեւոյթ չստանար:

Գ.- Երրորդ կարեւոր կէտը այն էր, որ պաշտօնէութեան կէսը իսլամ եւ միւս կէսը ոչ-իսլամ պիտի ըլլար: Եւ որովհետեւ ամբողջ վեց նահանգներէն Սեբաստիոյ եւ Երզնկայի մէջ միայն քանի մը հարիւր հայախօս յոյներ կային, ինչպէս նաեւ Վանի հարաւը՝ Հեքքեարիի մէջ սակաւաթիւ հրեաներ եւ ասորիներ, ոչ-իսլամ ըսելով պիտի հասկնային հայերը միայն: Իսկ իսլամի մէջ կը մտնէին շատ մեծ թիւով քիւրտեր, գրգրապաշներ, եւայլն, որոնց մէջ բուն թուրքը, մա'նաւանդ Վանի եւ Բաղէշի շրջանին մէջ, փոքր թիւ մը կը ներկայացնէր:

Այսպէս ուրեմն, պաշտօնէութեան մէջ հայերու թիւը, զատ-զատ առած, թուրքէն եւ քիւրտէն աւելի պիտի ըլլար: Իսկ վարչութեան մէջ պաշտօնէութեան մեծամասնութիւնը քանակով, եւ քանի մը տարուան փորձառութենէ վերջ, ապահովաբար նաեւ որակով հայերը պիտի ըլլային: Ասիկա կարելի կ'ընէր ենթադրել թէ ի'նչ մեծ առաւելութիւններ պիտի վայելէինք:

Դ.- Չորրորդ եւ կարեւոր կէտ մըն ալ այն էր որ ոստիկաններէն զատ, նաեւ ոստիկան-զինուորներուն կէսը հայ պիտի ըլլար (ինչպէս նաեւ սպաները):

Տարիներ վերջ դեռ խնդուքս չեմ կրնար բռնել, երբ կը յիշեմ Արամին հայհոյանքը այն հայ երիտասարդներուն, որոնք չէին ուզեր ոստիկան-զինուոր ըլլալ: Ամէն մէկը, եթէ յիշողութիւնս զիս չի խաբեր, տասներկու մէնիտ ամսական պիտի առնէր, իսկ երկրին տնտեսական վիճակն ալ բաւական յառաջդիմած ըլլալով՝ այդ գործին յարմարագոյն երիտասարդները գումարը քիչ կը գտնէին: Անշուշտ, դեռ մէջտեղը ո'րեւէ գործադրութիւն չկար, բայց կուսակցութիւնը քատրերը կազմելու համար արդէն լուռ, բայց տենդագին աշխատանքի լծուած էր:

Ե.- Կարեւոր ուրիշ կէտ մը այն էր, որ հայն ալ թուրքին եւ քիւրտին պէս զինուոր պիտի ըլլար, գէնթ պիտի ստանար ու ծառայէր իր երկրի մէջ, հայ սպաներու հրամանիմ տակ, որովհետեւ այս վերջիններուն թիւն ալ պիտի հաւասարէր իսլամներու ունեցած թիւին: Դաշնագիրներով եւ հազար դժուարութեամբ ձեռք բերուած այս առաւելութիւնները ոչինչ արժէք պիտի ստանային, եթէ այս ամէնը թուրքի վրայ մնային: Ուստի ոգեւին ամէն տեսակ աշխատանք կը կատարուէր՝ անմիջապէս կենդանի գործի անցնելու համար:

Զ.- Ուրիշ մեծ բարիք մը. — վանեցիք եւ առհասարակ արեւելեան նահանգներու հայերը թրքերէն գէշ կը խօսէին: Իսկ այդ լեզուով գրել կարգալ գիտցողներուն թիւը քիչ էր: Ուրեմն, Բարենորոգումներու բոլոր առաւելութիւններէն օգտուել գրեթէ անկարելի պիտի ըլլար, եթէ հայերէնը ընդունելի չըլլար պաշտօնատուններուն մէջ, ըլլայ որպէս խօսակցական լեզու, ըլլայ մատուցուած գրութիւններու պարագային: Նոյն առաւելութիւնը նաեւ անուանուելիք հայ պաշտօնեաներուն համար, որոնք պաշտօնական նկատուած երկրորդ լեզուով մըն ալ գործելու կարելիութիւնը պիտի ունենային:



Մ. Մ. Էպիդաթեանի այցնարողը

10.- ՄԵԾ ՓՈԹՈՐԻԿԷՆ ԱՌԱՋ

1914 Մայիսի վերջն էր երբ կուսակալը հաղորդեց որ կեդրոնի կառավարութիւնը ընդունած էր իմ թեկնածութեանս մասին իր կողմէ եղած առաջարկը: Միւս կողմէ՝ կուսակցական աղբիւրէ կ'իմանայի շատ մը մանրամասնութիւններ Պոլսոյ անցուղարձեւումն մասին:

Հայկական բոլոր շրջանակները, Պատրիարքարանէն սկսեալ՝ բոլոր թափով աշխատանքի լծուած էին: Սանդակավարութիւնը շատ մեծ էր: Անշուշտ, թերթերն ալ կարելի բոլոր տեղեկութիւնները կու տային. կը բացատրէին ժողովուրդին այն ամէն բարիքը, զոր ան իրաւամբ կրնար սպասել ՄԱՐԶՊԱՆՆԵՐԷՆ: Այս բառը Վոսմեանը դրած էր յօդուածաչարքի մը գլուխը: Ուսումնասիրութիւն մը, որուն նմանը իբր քաղաքական հասունութեան կոթող՝ շատ քիչ տեսած եմ նոյնիսկ եւրոպական ամենէն մեծ քաղաքագէտներուն գրիչին տակ:

Ուրեմն այսպէս, ամէնքս անձկանօք կը սպասէինք: Եւ մեզի ամէն ատենէ աւելի, հիմա ծանր կը կշռէր մէկ շաբաթով փոստի ուշացումը: Անշուշտ հեռագիրներն ալ կը գործէին: Եւ կարծեմ այդ օրերուն, կուսակալէն ետք՝ Արամն էր, որ միշտ հեռագրային յարաբերութեան մէջ էր Վանի երեսփոխան դարձած Վոսմեանի հետ:

Ութ-տաս օր յետոյ կուսակալը զիս կանչեց: Գացի քովը: Երկար յառաջաբանէ մը ետք հասկցուց որ դատական գործերու խորհրդական անուանումս ջուրը ինկած է: Կ'երեւի Պոլսոյ մէջ մարզպանին քով տեղաւորուելիք ամէն պաշտօնեայի պարագան մի առ մի քննութեան բովէն կ'անցնէին, ո՛չ միայն կառավարութիւնը*, այլեւ ֆրրգան, այսինքն՝ իթթիհատական երեսփոխաններու խմբաւորումը: Արդ՝ դատական գործերու գլուխը հայու մը զետեղումը բոլուն ընդդիմութեան հանդիպած էր մանաւանդ արեւելեան շրջաններու երեսփոխաններուն կողմէ, որոնք հողային հարցերով ուղղակի շահագրգռուած էին:

*) Այս եւ յարակից տեղեկութիւններուն մէկ մասը Ոսկան Մարտիկեանը ինծի տուած է: Ինքը այն ժամանակ թրքական դահլիճին կը մասնակցէր իբր փոստի նախարար, եւ Կ'երեւի թէ Իթթիհատական երեսփոխանային խմբաւորման ժողովներուն ներկայ կ'ըլլար:

Ըստ երեւոյթին, շատ աւելի երկար եւ համոզկեր բացատրութիւններ տուած էր Թալէաթ, որ իբր ներքին գործոց նախարար կուսակալին անմիջական պետն էր, ինչպէս նաեւ անձնական բարեկամը: Ահա՛ թէ ինչո՞ւ Թահսինն ալ, իր կարգին, ջերմ կերպով պաշտպանեց կեդրոնին որոշումը: Մինչդեռ եղած էին պարագաներ, երբ ինք համաձայն չէր ըլլար կեդրոնի որեւէ որոշումին, իմ առջեւ իսկ չէր քաշուէր գայն քննադատելէ:

Անշուշտ անմիջապէս հասկցայ թէ հարուածը ո՞ր կողմէն կու գար, եւ «հաւատացի» անկեղծութեանը այն առարկութեան, որ ներկայ պաշտօնիս աստիճանին, եւ ինծի համար խօսուած դատական խորհրդականին միջեւ մեծ տարբերութիւն մը ըլլալով՝ կեդրոնը որոշած էր այդ գործին գլուխը բերել Բաղէչի Վերաքննիչ Ատեանի նախագահը: Կուսակալը աւելցուց նաեւ որ զիս կ'ուզեն անուանել թարգմանութեան դիւանի պետ, թէեւ աստիճանով առաջինէն վար՝ բայց քաղաքային քըննիչի եւ կամ կառավարիչի (Միւթեսարըֆ) համահաւասար պաշտօն մը:

Ես իսկոյն մերժեցի: Ինչպէս ուրիշ անգամներ ալ պատահած էր, առարկեցի թէ դատական գործերէ եւ ասպարէզէ չեմ ուզեր հեռանալ: Ծատ պնդելէ ետք, երբ անդրդուելի մնացի մերժումիս մէջ, ըսաւ.

— «Ուրեմն; քանի որ երեսփոխան դարձած Վերաքննիչ Ատեանի ընդհանուր դատախազին տեղը բաց է*, այսօր իսկ կը գրեմ, որ քեհոն անցնեն»:

Շնորհակալ եղայ: Այս ալ ուրիշ միջոց մըն էր միշտ դատական գործերու գլուխը գտնուելու: Թէեւ աստիճանով եւ թոշակով ներքին գործոց նախարարութեան առաջարկած պաշտօնէն վար էր, բայց ես համոզուած էի որ այս կերպով աւելի մեծ օգտակարութիւն կրնայի ունենալ:

Չորս-հինգ օր յետոյ կուսակալը կրկին կանչեց զիս եւ բացատրութիւններ տուաւ Պոլսոյ անցուղարձեւումն մասին: Բիւրտ երեսփոխանները (աւելի ճիշդ կ'ըլլար ըսել՝ մէկ օրէն միւսը ինքզինքնին իբր քիւրտ մէջտեղ նետողները) բոլուն կերպով բողոքած էին, ըսելով որ ինչո՞ւ թարգմանութեան դիւանին պետը հայ մը պիտի ըլլար: Կ'երեւի, գործերը այնպիսի հանգամանք առած էին Պոլիս, որ ամէն մէկ ազգ աշալուրջ գործի լծուած, չէր ուզեր որ մէկը միւսին վրայ ամենէն պզտիկ առաւելութիւն մը ձեռք բերէ: Եւ որպէսզի հայի եւ քիւրտի տեսակէտները հաշտուէին, որոշուած էր երկու դիւան կազմել եւ երկու պետ նշանակել՝ նոյն աստիճանով:

Կուսակալը ըսաւ.

— «Կառավարութիւնը կը պնդէ քու մասին, եւ կ'ուզէ որ ընդունիս հայերէնի թարգմանութեան դիւանապետութիւնը»:

*) Ընդհանուր դատախազ Ասաֆը, վերջապէս իր փափաքին հասած էր, եւ երեսփոխան ընտրուած:

Ես նախկին առարկութիւններս կրկնելով՝ կտրուկ կերպով մեր-
ժեցի այդ պաշտօնը, եւ կուսակալն ալ անմիջապէս պատասխանս հեռագ-
րեց նախարարութեան:

Իմ երկրորդ մերժումէս քանի մը օր ետք, գիշեր մը Արամը տունս
եկաւ հեւիհեւ, ձեռքը հեռագիր մը բռնած: Բովանդակութիւնը սա էր.

— «Ըսէք էպիլիպսեանցի, որ իրեն առաջարկուած հայերէնի
թարգմանութեան դիւանապետի պաշտօնը ընդունի: Չափազանց կարե-
ւոր է»:

Աւելորդ է ըսել, որ Արամին հետ երկար խորհրդակցեցանք, եւ
ստիպուեցայ ընդունիլ այդ պաշտօնը:

Առտուն երթալ եւ ըսել կուսակալին, որ քանի մը օր առաջ մեր-
ժած պաշտօնս հիմա կ'ընդունիմ անվայել էր, մանաւանդ որ գիտէի թէ
բոլոր կարեւոր հեռագրային լուրերուն պատճէնները փոստի վարչու-
թեան կողմէ իրեն կը հաղորդուէին:

Երեկոյեան կուսակալը ինք տունս եկաւ եւ դարձեալ երկարօրէն
պնդեց, որ ինծի առաջարկուած պաշտօնը ընդունիմ: Ինք կ'երեւի կար-
ծած էր որ Արամին դիմումն ալ ապարդիւն մնացած էր:

— «Գ. կուսակալ, — ըսի, — այս թարգմանութեան դիւանապետի
գործին մէջ ի՞նչ կայ այդչափ կարեւոր, որ կը զբաղեցնէ նախարարը
եւ Ձեզ»:

— «Միթէ չհասկացա՞ր գործին էութիւնը: Գիտցիր ուրեմն որ
երբ ընդհանուր քննիչը հոս գայ, ով որ գրաւոր դիմում մը կատարէ
անոր, ասիկա քու խողովակովդ պիտի ըլլայ. դուն իր ականջը պիտի
ըլլաս: Ինք կարճ ժամանակի մէջ պարտաւոր է, ըստ պայմանագրի՝
թրքերէն սորվիլ եւ կարենալ այդ լեզուով յարաբերուիլ: Չէինք կրնար
ստիպել գինքը, որ հայերէն եւ քրտերէն ալ սորվի: Ուրիշ կէտ մըն ալ,
ես անձնապէս չեմ հաւատար որ երկար տարիներէ առաջ թրքերէնով
վարժ խօսակցութիւն կարենայ ընել: Քանի քատրին մէջ իրեն անձին
յատկացուած թարգման մը գոյութիւն չունի, հաւանաբար այդ գործն
ալ դուն պիտի ընես: Բայց առայժմ այս կէտը կարեւոր չէ. ինք իր անձին
վերաբերեալ գործերը ուզածին պէս թող կարգադրէ: Մեզի առաւելապէս
չահագրգռողը հայերուն հետ կապ ունեցող խնդիրներն են», եւ քմի-
ծաղով մը աւելցուց — «ահա քեզի հայերու ԲՈՆՍՈՂՈՍ կ'ընենք եւ դուն
դեռ նա՛զ կ'ընես»*:

Հաւանութիւն յայտնեցի. հետեւեալ օրն իսկ սկսայ տենդագին
աշխատանքի, որպէսզի օր առաջ առկախ մնացած դատերը եւ յարակից
գրական աշխատանքը լրացնեմ եւ յաջորդիս փոխանցեմ:

* Իր ձեռագիր նոթերուն մէջ Ռեդիմակը Ռետեւեալ բացատրութիւնը տուած է. —
«Իրականին մէջ ընդհանուր քննիչին մօտ պաշտօնս Ռայկական Բարցերու բաժնին
պետը ըլլալն էր, իսկ «քրտերէնի թարգման» տիտղոսը ունեցող պաշտօնակիցս ալ
քրտական Բարցերով գրադելու սահմանուած բաժնին պետը (արդէն ծանօթ է որ
քրտերէնը, գէթ այդ ատեն՝ գրատր լեզու չէր):»:

Ալ ամէն տեղ ուրիշ խօսք չկար: Թէ եւրոպական երկու ընդհա-
նուր քննիչները եկած են Պոլիս, թէ բանակցութիւններ կը կատարեն
եւ կարգադրութիւններ կ'ընեն, թէ Վանի շրջանը զալիք անձը աւելի
մեղմ, աւելի հաշտարար բնաւորութեան տէր է, եւ թէ ընդհակառակն,
Կարինի շրջանը զացողը խիստ նկարագրով դժուարահաճ մարդ մըն է,
եւայլն, եւայլն:

Այսպէս Յունիս ամիսն ալ անցաւ սպասումի, յոյսի եւ ուրախ
հեռանկարի մէջ, երբ ամէն մարդ իր փափաքը իրականացնելու միջոց-
ներու մասին կը մտածէր, տիրապետող գիծն ըլլալով հայրենասիրու-
թեան եւ ազատութեան տենչը:

Մինչ հայերը այնքան յուսալից եւ ուրախ էին, նոյն համեմատու-
թեամբ ալ թուրքերը մտահոգ եւ տխուր կը դառնային երեւութական,
բայց դաժան անտարբերութեան մը մէջ: Կուսակալին քանի մը մտերիմ
պաշտօնեաները (որոնք իրեն հետ Ռումելիէն եկած էին) լուր մը տարա-
ծած էին, թէ իրենց պետը հեռագրով հրաժարագիրը դրկած էր ներքին
գործոց նախարարին, երբ այլեւս ոչ մէկ կասկած կը մնար որ մօտ
ատենէն քննիչները իրենց պաշտօնատեղին պիտի հասնէին:

Կ'երեւի — մտածեցի — Թալէաթ փաղաքչանքի դիմելու պէտք
տեսած էր երբ իմացայ որ ո՛չ միայն մերժած էր ընդունիլ հրաժարա-
կանը, այլեւ հաղորդած որ նախարարաց խորհուրդի որոշումով՝ ընդ-
հանուր քննիչի հաստատուած կեդրոնին մէջ գտնուող կուսակալը, երբ
պէտք ըլլայ, իր նախագահութեան տակ պարբերաբար ժողովի պիտի
հրաւիրէ միւս կուսակալները: Որպէս տեղւոյն պայմաններուն ծանօթ
եւ փորձառու անձ՝ Վանի մէջ իրեն կը վստահուի այդ պարտականու-
թիւնը: Թալէաթ կ'աւելցնէր որ Թահսինի հայրենասիրութենէն կ'ակըն-
կալէ կառավարութեան անցուցած այս փափուկ շրջանին, աւելի քան
երբեք աշալուրջ եւ զոհաբերող ըլլալ:

* * *

1914 Յուլիս 10-ի տօնին (Սահմանադրութեան վերահաստատման
թուականը) աւելի փայլ եւ շուք տալու համար, կուսակալը որոշած էր
Վանէն ժամ մը հեռու սարահարթի մը վրայ ձիարշաւ մը կազմակերպել:
Բաւական կարեւոր մրցանակներ ալ հաստատած էր՝ առաջին մրցանակը
ըլլալով 100 օսմանեան ոսկի: Այս առիթով մեծ վրան մը հաստատուած
էր, եւ պատրաստուած ճոխ պիւլֆէ մը:

Հեքքեարիէն եկած էր կառավարիչ Ճէվտէթը: Ներկայ էին նաեւ
կուսակալութեան բոլոր աչքառու ղէմքերը, ինչպէս նաեւ օտար պետու-
թեանց հիւպատոսներն ու փոխ-հիւպատոսները:

Հոս պիտի յիշատակեմ որ Վան իբր սահմանին վրայ գտնուող
կարեւոր կեդրոն՝ ունէր իտալական, ֆրանսական եւ ռուսական

փոխ-հիւպատոսներ եւ հիւպատոս: Կարինի գերմանական հիւպատոսն ալ պարբերաբար կու գար Վան:

Զիարչաւէն առաջ վազքի եւ այլ մրցումներ ալ տեղի ունեցան: Երբ ամէն մարդ, իբր նորութիւն, որոշ հետաքրքրութեամբ կը հետեւէր անոնց, կուսակալին թիկնապահ սպան եկաւ իր պետին կողմէ զիս կանչելու: Վրանին մէջ պիւֆէին գլուխը կը գտնուէին միայն կուսակալը, ձէվտէթը եւ ներկայ հիւպատոսները, որոնց մէջ կար նաեւ գերմանականը, որ մէկ ամսուան համար երկու օր առաջ Վան էր եկած:

Թահսինը ինծի պաշտօնագիր-հեռագիր մը ցոյց տուաւ, որ Հօֆի մօտ ծանօթ պաշտօնի անուանումս կը հաղորդէր: Ծնորհաւորեց եւ — «ա՛լ դատարանի նախագահ ըլլալէ դադրեցար» ըսաւ:

Հօֆի առաքելութեան մաս կազմող ուրիշ մէկը չկար Վան, եւ բնականաբար այդ օր հիւպատոսներու ուշադրութեան առարկան դարձայ: Քանի մը վայրկեան ետք գերմանական հիւպատոսը մեկուսի հարցուց թէ ի՞նչ օտար լեզուներ գիտէի: Կ'երեւի, կը խորհէր որ գիտէի նաեւ գերմաներէն, որովհետեւ Կարինի մէջ (Սանասարեան Վարժարանը) կային բաւական թիւով հայեր, որոնք այդ լեզուն կը սորվէին: Ժխտական պատասխանիս վրայ շրթունքները պրկեց: Դիտեցի որ ուշադրութեամբ շարունակեց զիս զննել:

Բարեկամներու եւ ծանօթներու շնորհաւորութիւնները ընդունելէ ետք, դատաւոր բարեկամիս հետ կառքով պտոյտ մը ըրինք դէպի Ուրբաթ Առու, եւ երբ երեկոյեան վերադարձայ տուն, առանց լոյսը վառել տալու՝ երկարեցայ բազմոցին վրայ, ու սկսայ խորհրդածել: Նոր կեանք մը պիտի սկսէի: Դեռ պատանեկութեան շրջանէն մեծանուն ուսուցչիս՝ Մատթէոս Մամուրեանի «Սեւ լեռան մարդը» միտքս եկաւ, Բաֆֆիի «Կայծեր»էն անմիջապէս ետք: Ամէնքս ալ Բաֆֆիին ընդգծած ուղիին մէջն էինք, որովհետեւ ազատութեան բարձր իտէալին ձգտող մարդը, եթէ անյաջողութեան ուրուականն իսկ աչքին առջեւը ցցուած տեսնէ, միշտ անոր ճամբէն պիտի քալէ...: Ի վերջոյ, ո՞վ իրաւունք պիտի ունենար, Մամուրեանը, թէ Բաֆֆին...:

Ամէն պարագայի տակ բարդ էր, շատ բարդ հայկական հարցը: Եւ սակայն, հայութիւնը յատկանշող կորովը եւ յարատեւողական ոգին հրաշքներ գործած էին: Ո՛չ. հայը, ասորիին կամ քաղղէացիին բախտին պիտի չարժանանար: Հայը պիտի ապրէր, եւ պիտի ապրէր ի՛ր երկրիմ մէջ: Երկիրը հետզհետէ, գուցէ դեռ երկար տարիներու ընթացքին հազիւ պիտի ձերբազատուէր օտար տարրերու ներկայութենէն: Ի վերջոյ սակայն, մենք, միայն մենք հոն պիտի ապրէինք, եւ զայն պիտի վերածէինք պանծալի «ածու»ի մը:

Յաջորդ շաբաթը դատարանի գրասենեակային գործերու կարգադրութեամբ անցուցի: Իսկ առտու-իրիկուն կը հաւաքուէինք Խաչ Փողանի սրճարանի մը առջեւ, ծառի մը շուքին տակ, եւ ամէն մէկս

պատմութիւն մը ունէր պատմելիք, նախորդ օրը տեսածներէն եւ լսածներէն:

Սկսած էինք մտահոգուիլ Եւրոպայի կացութեամբ: Մթնոլորտը ծանր էր: Աւստրիոյ կայսրութիւնը չէր ուզեր թեթեւօրէն անցընել իր զահաժառանգին սպանութեան պարագան: Անիշխանական կամ մոլեռանդ ազգայնական սերպիացի մը եթէ զահաժառանգին ահաբեկիչն էր եղած, կայսրութեան ղեկավարներն ալ ամբողջ ազգ մը կ'ուզէին իբր այն դատել եւ դատապարտել: Ու մենք, որ մէկ շաբաթ ուշացումով հասած թերթերու լուրերը միայն ունէինք, մեծ շահագրգռութեամբ կը լսէինք ամէն անոնք, որ թրքական Աժաֆաէն լուր մը ունէին: Որքան ալ սակաւ, եւ սակայն այդ թորեալ կաթիլով հասած տեղեկութիւնները կարծես որոշ բան մը կը սորվեցնէին. այն՝ թէ միջազգային կեանքը հեռու էր բնականոն վիճակ մը ունենալէ, եւ կարծես կիրքերը պատրուակ մը կ'որոնէին անօրինակ ուժգնութեամբ պոռթկալու համար:

Տակաւին թարմ էր Մերձաւոր Արեւելքի մէջ Պալքանեան պատերազմին նախընթացը, որ շատ կարճ ժամանակի մէջ խախտած էր մինչ այդ պահուած հաւասարակշռութիւնը: Իրական անձկութիւն մը կ'ապրէինք, որովհետեւ դեռ պատրաստ չէինք նոր եւ մեծ ցնցում մը դիմագրաւելու համար. մեր ժամը չէր հնչած: Ժամանակի կը կարօտէինք որպէսզի մեր դիրքերը ամրացնենք:

Քանի մը օր յետոյ Բ. Դրան ընդհանուր քննիչներու անձնակազմէն երեք հոգի հասան Վան գրասենեակային գործերու կազմակերպութեան համար: Երկուքը թուրք էին եւ մէկը հայ՝ Աստիկ Կէզողուպէօյիւքեան: Անոնց յաջորդեց Բաղէշի դատարանի նախագահը, որ ժամանակին դատական քննիչ Պ. Ստամպուլեանի իբր օգնականը Եանիս եկած ըլլալով, ինծի ծանօթ էր. որով կուսակալը իբր հիւր զայն իմ տունս զրկեց*:

Կուսակալին հեռագրուած լուրէ մը տեղեկացանք նաեւ որ գնդապետ Հօֆը խորհրդականներով եւ պաշտօնեաներով Պոլսէն ճամբայ ելած էր Վան գալու համար:

Թահսինին հրահանգով՝ ամէն օր իրեն կը հանդիպէի, ըլլալիք որեւէ կարգադրութեան կամ յանձնարարութեան համար:

Քանի մը օր վերջ ալ լսեցինք, որ Հօֆը Տրապիզոն հասած է իր հետեւորդներով: Ծի՛ղը նոյն օրը իմացանք նաեւ որ Աւստրիոյ կայսրը պատերազմ յայտարարած է Սերպիոյ դէմ, եւ արդէն թնդանօթները կը գոռան...:

*) Վանի մէջ Աերկայանալի պանդոկ գոյութիւն չուներ:

Այդ օրերուն Թուրքիոյ բոլոր գաւառական քաղաքները պանդոկի անուան արժանի շէնքեր չունէին: Իսկ Աերքիմ սարքաւորումի եւ մաքրութեան մասին խօսք իսկ չէր կրնար ըլլալ, այնքան որ եղածները անպանդոկ, աղտոտ եւ մգոտած էին:

Տրապիզոնէն Կարին ճամբան եօթ օր կը տեւէ (այն ատենուան ճամբաները եւ ճամբորդութեան միջոցները նկատի առնելով՝ եօթ օրը չափազանց չէր)։ Եւ սակայն եւրոպական դէպքերը այնքա՛ն արագ կը զարգանային որ Հօֆը տակաւին Կարին չհասած, Թուրքիան ալ, առանց պատերազմին մէջ նետուելու՝ իր արեւելեան Թրակիայով ինքզինքը Պալքանեան երկիր եւ սահմանամերձ նկատելով՝ զօրաշարժ յայտարարեց։

Չեմ գիտեր թէ այդ շրջանին, Պոլիս եւ այլուր ի՞նչ էր եղած թուրքերուն տպաւորութիւնը ի լուր պատերազմի պատրաստութեանց։ Բայց վստահ եմ թէ ամէն իսլամ մեծ հաճոյքով կ'իմանար որ քրիստոնեայ պետութիւններ իրար ինկած, զիրար բզքտելու կը պատրաստուէին։ Ամէն պարագայի տակ մեր շրջանին թուրքերը, իրենց գլուխն ունենալով կուսակալը եւ շուրջի մեծ պաշտօնեաները, տրամաբանականէն շատ աւելի մեծ ուրախութեան արտայայտութիւններ կ'ունենային, որովհետեւ ըստ իրենց՝ պատերազմին եւ հետեւաբար եւրոպական խառնաշփոթութեան առաջին եւ անմիջական հետեւանքով՝ օտարական մը իր «պիղծ» ոտքերով պիտի չգար աղարտելու թրքական վարչութիւնը, եւ լղրճելու իրենց մաքրամաքուր իշխանութիւնը։

Այդ արդիւնքը շուտով ձեռք բերելու համար, կուսակալը սկսաւ էմքրիկներ սարքել։

Հօֆի մինչեւ Կարին հասնիլը՝ արդէն Եւրոպան պատերազմի մէջ էր։ Թուրքիան դեռ պատերազմէն դուրս կը մնար, բայց զօրաշարժէն ետք սկսած էին պատերազմական բռնագրաւումները։ Յայտնապէս մեծ ջանք կը թափուէր պատրաստութիւնները լրացնելու համար։ Բնականաբար, զինուորական իշխանութիւնները ծանր աշխատանքի տակ էին, եւ սկսած էին փոխարին լիզել։

Կուսակալն ալ, Պալքանեան պատերազմի փորձառութեամբ՝ բռնագրաւումներու գործը անձնապէս կը ղեկավարէր։ Քանի մը օր ետք յայտարարեց որ ներքին գործոց նախարար Ճավիտ պէյին* հեռագրած է, թելադրելով որ Հօֆ Կարինէն ասդին չանցնի։

Այլեւս Հօֆի վերաբերեալ խնդիրներուն մէջ իր լեզուին շեշտը բարձրացած՝ կը բացազանչէր — «Այս գործերու առատութեան մէջ ո՞վ պիտի զբաղի իրեն հետ»։

Մէկ օր ետք Ճավիտ իմացուց իրեն որ ընդհանուր քննիչին հեռագրած էր գտնուած տեղէն ետ վերադառնալ։

Յաջորդ օրը սակայն թուրք կառավարութիւնը իր դասը առաւ։ Գնդապետ Հօֆ կարեւորութիւն չէր տուած նախարարին հրահանգին՝ եւ Կարինէն ճամբայ ելած էր դէպի Վան։

*) Թալէաթ այդ օրերուն Սիմայա (Ռումանիա) գացած էր քանակցութիւններու համար, եւ ելեւտական նախարար Ճավիտ գայն կը փոխարինէր։

Թուրք պաշտօնական շրջանակները կատրած էին։ Հեռագիրները Պոլսոյ հետ անդուլ կը գործէին։ Վերջապէս, ընդհանուր քննիչը Արճէշ հասնելու վրայ էր, ուրկէ կարելի էր երկու օրէն Վան հասնիլ։

Այս անգամ կուսակալը հեռագրեց Ճավիտին, որ ներկայ քաղաքական պայմաններուն եւ զօրաշարժին հետեւանքով ժողովուրդը գերագրգռուած է, եւ ինք պատասխանատուութիւնը չէր կրնար ստանձնել ա՛յն անպատեհութիւններուն համար, որոնք Հօֆի ընդունելութեան եւ Վանի մէջ բնակութեան միջոցին կրնային ծագիլ։

Մարզպանին իբր բնակավայր եւ կեդրոն կ'ուզէին յատկացնել ասորիներու Վանի Առաջնորդարանը, կամ ուրիշ յարմար վայր մը։ Այդ աշխատանքն ալ մէկ կողմ դրուեցաւ։ Ճավիտ կուսակալէն եկած հեռագրին պատճէնը Արճէշի մէջ Հօֆին էր հասցուցած, եւ յանձնարարած Վանի մօտ քաղաքէն դուրս տեղ մը մնալ, մինչեւ որ յառաջիկային եւ համաձայնաբար անհրաժեշտ կարգադրութիւնը ըլլար։

Հօֆ արդէն Վանի կուսակալութեան (այսինքն մեր կուսակալին իշխանութեան սահմաններուն) մէջն էր։ Կառավարութիւնը ստիպուած՝ հեռագրած էր տեղական իշխանութիւններուն որ հարկ եղած աջակցութիւնը եւ պատիւը ընծայէին անոր։ Մէկ օր յետոյ, վերջին կայանէն երբ մարզպանը կը մեկնէր Վան, հասնելու հաւանական ժամը յայտնի եղաւ։ Ճշդուեցաւ Վանի քաղաքամէջէն վար յայտնի տեղ մը զինքը դիմաւորելու համար երթալիք անձերուն ցանկը, որուն վրայ անշուշտ ես ալ կը գտնուէի։

Ջարմանքով տեսայ որ դիմաւորողներու անուանացանկին սկիզբը, փոխանակ կուսակալին, Մեքթուպիին (ընդհանուր քարտուղար) անունը կար։ Պատճառը հարցուցի։ Ըսին, որ ընդհանուր քննիչը քաղաք պիտի չմտնէ, այլ ուղղակի Արտամետ պիտի երթայ եւ հոն, ինչպէս բոլոր իր ճամբորդութեան ընթացքին, իր հետ բերած վրաններուն տակ պիտի բնակի։ Ուրեմն, վերջապէս Թահսին ձեւը գտած էր յաչս տեղացի ժողովուրդին՝ ստորադաս դիրքի մէջ չգտնուելու համար։

*
**

Ենթադրելով որ նոր պաշտօնիս բերմամբ ձիով ճամբորդելու բազմաթիւ առիթներ պիտի ունենամ, բարեկամի մը միջոցաւ լաւ ձի մը գնեցի, եւ Հօֆը դիմաւորելու համար ես ալ ճամբայ ելայ։ Քաղաքէն դուրս հանդիպեցայ միջնորդ Յովհաննէս աղային (մականունը չեմ յիշեր)։ Պատուական մարդ էր, եւ յատկապէս հոն կը սպասէր կենդանիին մասին կարգ մը յանձնարարութիւններ ընելու համար։

Այս խօսակցութիւնը պատճառ դարձաւ որ խուժբէն ետ մնամ։

Քաղաքամէջէն դէպի լիճին եզերքը բաց զետին մըն էր ուր ոչ որոշ ճամբայ կար, ոչ ալ բուսականութիւն (լիճին ջուրերը բոթաս կը պարունակէին): Նախապէս շրջակայքը ձիով բաւական պտըտած էի, այցելելով Ս. Գրիգոր Սառնապատու, Շուշանաց եւ Վարազի վանքերը, բայց առաջին անգամ կ'անցնէի այդ տեղէն: Լսած էի սակայն որ Վարազի վանքին ճամբուն վրայ ձիւնով ծածկուած խորշեր եւ փոսեր կային: Մայիսէն առաջ այդ խորշերը եւ փոսերը շատ վտանգաւոր կը դառնային, որովհետեւ վրայէն անցած ժամանակ մարդ ձիով մէկտեղ մէջը կը խրէր, եւ եթէ ձիւնհալը մօտեցած էր եւ ձիւնախաւին տակը լպրծուն ցեխ դարձած, վա՛յ էր եկեր ճամբորդին գլխուն. ամբողջովին խրիւր, եւ երբեմն ալ մահը անխուսափելի կ'ըլլար: Հետեւաբար, այդ ճամբաներէն միշտ ծանօթի մը հետ կ'անցընէի:

Յովհաննէս աղայէն բաժնուելէ ետք ուզեցի պաշտօնեաներու խումբին մօտենալ, ուստի ձիուն ընթացքը արագացուցի: Տեղ մը եկաւ, ուր կենդանին քիչ մը ընկրկեցաւ: Որովհետեւ բնութեանը դեռ անծանօթ էի, կարծեցի թէ քմահաճոյք մըն էր, եւ մտրակեցի: Ձին ուստում մը ըրաւ: Տեսայ որ ոտքերը վեր չէր կրնար վերցնել: Քսան-երեսուն քայլ հեռու գտնուող քանի մը մարդիկ սկսան պոռալկանչել եւ ձեռքով նշան ընել որ կենամ:

Արդէն չէի կրնար ուրիշ բան մը ընել, քանի ձին չէր կրնար ելլել: Վերահասու եղայ որ պզտիկ ճահիճի մը վրայ կը գտնուիմ: Ձեռքիս մտրակին կոթով փորձեցի հասկնալ թէ շուրջս ամուր հող կա՞ր: Աջ կողմը ձիուն քամակին մօտ հողը ամուր էր: Թամբին վրայ կայնիլս եւ այդ կողմը ցատկելս մէկ եղաւ:

Նախ ես ազատեցայ (առանց վրաս-գլուխս աղտոտելու): Յետոյ օգնութեան հասնողներու աջակցութեամբ ազատեցաւ նաեւ ձին:

Այս պզտիկ պատահարը — որ կրնար չարաբաստիկ հետեւանքներ ունենալ եթէ Հօֆի գալստեան լուրին վրայ այդ ամայի վայրը հետաքրքիրներ չգտնուէին — պատճառ դարձաւ սակայն որ դիմաւորող շքախումբէն քանի մը ըրպէով հեռու մնամ: Երբ քառասմբակ մօտեցայ, հեռուէն Մէքսուպին ձեռքով նշան ըրաւ որ շուտ իր քով երթամ:

— «Տե՛ս, ի՞նչ կ'ուզեն, մէկը կը փնտռեն» ըսաւ:



11.- «ՄԱՐԶՊԱՆ» ԳՆԴԱՊԵՏ ՀՕՖ ՎԱՆԻ ՄԷՋ

Մօտեցայ մեծ խումբին, եւ երբ կը պատրաստուէի յարգանքներս ներկայացնել անոր որ կու գար հաստատելու նորաստեղծ բարօրութիւն մը մեր հայրենիքին մէջ, եւ զետեղելու անոր ապագայ ազատութեան հիմնաքարը, օտար երիտասարդ մը, յայտնապէս հիւսիսային եւրոպացիի թիփով, եկաւ եւ քաղաքավարութեամբ հարցուց թէ կը ճանչնայի՞ Էպլիդաթեանը:

— «Նս ինքս եմ» ըսի:

Ժպտեցի, բռնեց ձեռքէս, եւ մօտեցանք Գնդապետ Հօֆին:

Միջահասակէն քիչ մը բարձր, 45-46 տարեկան, բաւական առոյգ, արեւակէզ դէմքով, պարզ մարդու մը երեւոյթն ունէր: Չափազանց փութկոտութեամբ ձեռքը երկարեց եւ զիս ներկայացուց կանխահասօրէն մազերը թափած երկարահասակ ու կարմրաթուշ 35 տարեկան անձի մը, որ իր անձնական քարտուղարն էր. նաեւ այն երիտասարդին որ զիս առաջնորդած էր, իր թիկնապահը, հարիւրապետ կրէյվ:

— «Ձեզ կը փնտռէի» ըսաւ, «որովհետեւ Պոլսէն ինձի յանձնարարուած էք: Խնդրեմ, քովէս մի՛ հեռանաք, որովհետեւ զիս ապահովցուցին թէ ձեր վրայ կրնամ կատարեալ վստահութիւն ունենալ»:

Շնորհակալութիւն յայտնեցի եւ քանի մը ըրպէ ուշ մնացած ըլլալու պատճառը բացատրեցի: Արդէն ձին ալ իր ցեխէն աղտոտած վիճակով կը հաստատէր ըսածս:

Այդ ժամանակ Մէքսուպին մօտեցաւ եւ հարցուց թէ զո՞վ կը փնտռէին.

— «Ձիս»:

— «Հապա ուրի՛շ անուն կու տային»:

— «Մականունս է» պատասխանեցի:

— «ԱՅայիպ (զարմանք), մենք հոս չենք գիտեր մականունդ, եւ անոնք որ դուրսէն նոր կու գան, գիտեն»:

— «Գիտէք թէ ձեր մէջ մականուն գործածելու սովորութիւն չկայ: Կ'երեւի իրեն պաշտօնէութեան ցանկը ներկայացուցած են ամբողջական անուններով» ըսի:

Կը յիշատակեմ այս պզտիկ պատահարը, որպէսզի պարզ ըլլայ ընդհանուր քննիչի եւ հայերու փոխ-յարաբերութիւններուն հանդէպ թուրքերուն որքան ուշադիր եւ զգայուն ըլլալը:

Գալով Հօֆի Պոլսոյ մէջ եղած յանձնարարութեան, անիկա յայտնապէս կատարուած էր Վանի երեսփոխան Վոսմեանի կողմէ, որ կազմակերպութեամբ կողմէ նշանակուած էր Հօֆի հետ կապ եւ յարաբերութիւն պահելու համար: Բայց չեմ հասկցած թէ ինչո՞ւ մականուն «եանց»ով կը վերջացնէր, ուստի հայերու սովորութեամբ, քանի ոչ ես, եւ ոչ ալ ինք ուստի հայ էինք:

Կուսակալին դիւանապետին հետ, որ քիչ մը Ֆրանսերէն կը կակազէր, բացատրեցի ընդհանուր քննիչին որ իր հետեւորդներով պիտի բնակէր քաղաքէն քիչ հեռու, Արտամետ կոչուած գիւղին լճափ-նեայ մասը:

Ամէնքն ալ թուղթէ տուփերու մէջ պահած էին իրենց ֆէւերը: Չէ՞ որ Օսմանեան պետութեան պաշտօնեաներ էին:

Հօֆ հարցուց թէ Արտամետ երթալու համար քաղաքէ՞ն պիտի անցնէինք: Ճիշդը ես ալ չէի գիտեր: Ըստ կարգի, հարցուցի թուրք դիւանապետին: Կ'երեւի ան ալ չէր գիտեր, եւ կամ կարեւորութիւն չտուած հարցումին եւ պատասխանեց որ առանց քաղաքէն անցնելու՝ հարաւի կողմէն ճամբայ կայ:

— «Լաւ, — ըսաւ Հօֆ, — երթանք ուրեմն այդ ճամբայէն»:

Թուրք դիւանապետը անպիտան եւ սիմիֆ բնաւորութեամբ մարդ մըն էր: Ինչ որ կուսակալը քաղաքավար ձեւերու տակ կը պարտըկէր, ան կ'աշխատէր յայտնի եւ կոպիտ ձեւով պարզել, եւ այդպէս միշտ ցաւալի պահատարներու տեղի կու տար: Իր պետը զինքը այս ձեւի արտայայտութիւններուն համար կը սաստէր, սակայն անօգուտ: Մինչեւ հիմա ինծի համար գաղտնիք մնացած է, թէ ինչո՞ւ թահսինի պէս խիստ պետ մը չափազանց բարեացակամ էր այդ սինլիքորին հանդէպ:

Ճամբայ ելանք: Մարզպանին հրահանգով՝ ձիւ մէկու մը յանձնեցի: Իր դիւանապետը թուրք դիւանապետին կառքը փոխադրուեցաւ, եւ ես անցայ Հօֆին քով:

Բաւական յառաջանալէ ետք տեսանք որ քաղաքէն դուրս, հարաւէն չէ որ կ'երթայինք, այլ քաղաքին ծայրամասին, աղքատ ընտանիքներէ բնակեալ թաղի մը մէջէն: Հօֆ հրամայեց կառապանին կենալ: Դարձաւ երկրորդ կառքին մէջ գտնուող թուրք դիւանապետին եւ ըսաւ.

— «Կը տեսնեմ որ քաղաքին մէջէն կ'անցնինք: Հետեւաբար, ես պարտաւոր եմ այս քաղաքին պետական մեծագոյն պաշտօնեային այցելելու: Խնդրեմ, մէկը ղրկեցէք կուսակալին եւ յայտնեցէք փափաքս»:

Մէքթուպին (թուրք դիւանապետը) այլալեցաւ: Ինչ որ կուսակալը չէր փափաքած, կրկին տեղի կ'ունենար, եւ Հօֆ քաղաք պիտի

մտնէր: Հրամանը այնքան պաղ եւ կտրուկ ձեւով տրուեցաւ որ մեր շնորհունակը անմիջապէս գլուխը ծռեց, եւ հեծեալ ոստիկան մը կանչելով եղածը պատմեց, ու հրամայեց քառասմբակ հեռանալ:

Բնականաբար, կառավարական պալատին մէջ ոչ մէկ պատրաստութիւն կար: Երբ մենք մօտեցանք, գումարտակ մը ոստիկան-զինուորներ միայն կային, բարեւի կեցած, եւ կուսակալը որ քանի մը պաշտօնեաներով դրան մօտ կը սպասէր:

Հօֆին կրումը (նորվեկիացի պատանի մը) թուղթէ տուփին մէջէն տուած ֆէւեր եւ առաւ իր եւրոպական գլխարկը: Այսպէս, Հօֆ Օսմանեան կառավարութեան պաշտօնեայի խորհրդանշանը գլուխը՝ իջաւ կառքէն եւ դիմաւորուեցաւ կուսակալէն: Միասին վերը, սրահը ելան:

Հոն հազիւ օշարակ մը առած՝ 6-7 բոպէ միայն մնացին: Կուսակալը ներողութիւն խնդրեց որ զօրաշարժի բացառիկ աշխատանքը իրեն արգելք եղած էր դիմաւորելու պարտականութիւնը լաւագոյն ձեւով կատարելու համար: Հօֆն ալ տաքէն եւ ճամբու նեղութենէն խօսեցաւ, եւ բաժնուեցան:

Կուսակալը ինծի պատուիրեց որ մինչեւ Արտամետ ընկերանամ մարզպանին, եւ անկէ ալ խնդրեց որ որեւէ մէկ փափաքը իմ միջոցաւ հաղորդէ:

Այսպէս, այս առաջին շփումը տեղի ունեցաւ քիչ մը շփոթ եւ շատ աղօտ պայմաններու տակ:

Երբ Արտամետ հասանք օտարականները չափազանց գոհ եղան: Իսկապէս տեղւոյն դիրքն ու գեղեցկութիւնը հրաշալի էին: Ինչպէս կը յիշէ ընթերցողը, նախապէս Մայիս ամսուայ սկիզբը գացած էի հոն, երբ դեռ ծառերը նոր ծաղիկ կը բանային: Հիմա՝ Յուլիսի վերջերը, արդէն պտուղները ծառերէն կախուած էին, եւ ամէն մէկուն գեղեցկութիւնը բնութեան այդ հրաշակերտ տեսարանին վրայ ուրիշ փայլ մը, ուրիշ անուշուրթիւն մը կ'աւելցնէր:

Լոնտոն գնուած վրանները, ինչպէս ճամբորդութեան բոլոր կազմածները շուտով պատրաստուեցան:

Կանաչ մոմլաթէ շինուած վրանները (աւելի երկար քան քառակուսի) սելիլոիտ ապակիներով պատուհաններ ունէին: Կը պարունակէին ճանճարգելով շրջապատուած զինուորական մահճակալներ, բացուող-գոցուող սեղաններ եւ աթոռներ, նոյնիսկ լոգանքի տաշտեր: Յատակը սփռուած կանաչ մոմլաթ մը գորգի դեր կը կատարէր: Այս բոլորը քաղաքին ամենալաւ սենեակներէն աւելի հանգստաւէտ կը դարձնէին վրանները: Կէս ժամէն ամէնքս մեկնեցանք: Իրենց հրամանին տակ, քիչ մը հեռուն՝ քոմիսէր մը եւ քանի մը ոստիկան ու ոստիկան-զինուորներ մնացին միայն: Արդէն ուրիշ երկու վրաններու տակ խոհարարապետը եւ օգնականները սկսած էին առօրեայ պատրաստութիւններուն:

Միջնելու մօտ էր երբ տունն հասայ: Հազիւ քիչ մը հանգստացած էի, լուր տուին որ կուսակալը եկած է:

Ըստ սովորութեան՝ քանի մը ժամ նստաւ ու խմեց: Բնականաբար խօսակցութեան գլխաւոր առարկան մարզպանը եւ հետեւորդներն էին: Ամէն մէկուն մասին գատ-գատ հարցումներ ըրաւ, եւ մանաւանդ ուզեց գիտնալ թէ Հօֆ ի՞նչպէս տպաւորուած էր իրմէ:

Այդ հարցումին չկրցայ պատասխանել, նախ որովհետեւ Հօֆ ինծի կարծիք չէր յայտնած: Եւ բնականաբար, նոյնիսկ եթէ բան մը լսած ըլլայի՝ պիտի նախընտրէի լռել: Կուսակալը յայտնեց թէ հետեւեալ օրը կէսօրէ առաւ կ'ուզէր Հօֆին այցելութիւնը փոխադարձել: Փափաք յայտնեց որ ես ալ ներկայ ըլլայի իրենց տեսակցութեան, եւ մինչեւ Արտամետ գալը սպասէի:

Գացինք: Կուսակալը կէս ժամի չափ մնաց մարզպանին մօտ, եւ երբ մեկնեցաւ, Հօֆը զիս ճաշի վար դրաւ եւ հարցումներ ուղղեց երկրի պաշտօնական եւ անպաշտօն ղեկավարներու ինչպէս նաեւ հայ, քիւրտ եւ թուրք փոխ-յարաբերութիւններուն մասին:

Աշխատեցայ պատասխանել կարճ նախադասութիւններով եւ վերապահ լեզուով, եւ սակայն ամբողջ մտածումներս ջանացի իրեն հասկցնել: Կ'երեւի այս ձեւի խօսակցութիւնները իր նկարագրին ալ կը համապատասխանէին: Նկատեցի որ իրենք այսինչ կերպը լաւ է ըսելու փոխարէն՝ կ'ըսէին աւելի խոհեմ է: Հետեւաբար, եզրակացուցի որ իրենց մօտ տիրապետող գիծը խոհեմութիւնն էր: Պարզ չէր միայն թէ այս խոհեմութիւնը մինչեւ ո՞ր պիտի երթար: Այնքան մը խոհեմ պիտի ըլլային որ ի վերջոյ վախի սահմանը հասնելով՝ մօրուքը թուրքին ձեռքը պիտի տային...:

Պոլսէն ստացուած տեղեկութիւններու համաձայն Հօֆը, բողոքատմամբ վէսթէնենկին՝ աւելի մեղմ կը գտնէին: Շատ չանցած սակայն հասկցայ որ ատրիկա ճիշդ չէր: Ոսակցութեան աւարտին Հօֆ կանչեց իր դիւանապետը եւ հարցուց թէ իր ըսած ծրագիրը պատրաստա՞ծ էր: Հաստատական պատասխանէն յետոյ կարդաց գրուածը, եւ յայտնի եղաւ որ մարզպանը պաշտօնական ընդունելութիւն մը կը պահանջէր: Ընդունելութիւն մը որ կատարելապէս իշխանական պէտք է ըլլար:

Պատուիրեց ինծի որ հետեւեալ օրը իր դիւանապետին ընկերանայի կուսակալին մօտ, եւ այդ ընդունելութեան ծրագիրը ընդունիլ եւ հաստատել տայի այս վերջինին:

Կ'երեւի կուսակալն ալ ինծի պէս մեղմ մարդու տեղ դրած էր մարզպանը, եւ կը կարծէր թէ կրնար ուզածին պէս խաղալ անոր հետ: Որքա՞ն մեծ եղաւ իր զարմանքն ու կատաղութիւնը, երբ դիւանապետ Պլէր յստակ եւ հատու արտայայտութեամբ մը ծրագիրը ներկայացուց թահսինին, եւ յաջորդ օրուայ համար պահանջեց անոր գործադրութիւնը:

Իր մեկնելէն յետոյ կուսակալը ա՛յնքան ազդուած էր, որ անմիջապէս թղթակցութեան դիւանի պաշտօնեան կանչեց եւ իմ ներկայութեանս (ինչ որ նշան էր թէ իր հակաշիրտը կորսնցուցած էր) պատուիրեց ազդու հեռագիր մը գրել ներքին գործոց նախարարութեան: Մարզպանին պահանջած ընդունելութիւնը կծու եւ դառն բառերով բացատրել էտք, հեռագրով կուսակալը կ'ըսէր թէ ներկայ գորաշարժի օրերուն այս տեսակ ձեւականութիւններ ժողովուրդին վրայ յոռի տպաւորութիւն պիտի ձգեն, եւ թէ ինք կը վախնայ ժողովրդական պոռթկումէ մը. եւ եթէ կառավարութիւնը պատերազմի ստեղծած շփոթ վիճակը պիտի չկարենայ օգտագործել եւ Հօֆը ետ կանչել, ապագայ անհամուժեանց պատասխանատուութիւնը ինք չ'ուզեր ստանձնել, եւ կը խնդրէ ընդունիլ իր հրաժարականը:

Անշուշտ, ամէն մարդէ աւելի նախարարութիւնը կը հասկնար թէ ի՞նչ կ'ուզէր կուսակալը: Թուրքիոյ մէջ ժողովրդային բողոք եւ պոռթկում չէր ըլլար, եթէ կառավարութիւնը ատրիկա չուզէր: Թահսին այդ ամէնը կը փափաքէր սարքել, եւ պարզապէս կ'ուզէր կառավարութեան հաւանութիւնը ստանալ:

Չեմ գիտեր թէ նախարարութիւնը ի՞նչ պատասխանեց: Ամէն պարագայի տակ, կ'երեւի թէ կեղրոնն ալ այդքան կարեւոր որոշում մը չուզեց առնել, քանի որ երբ հետեւեալ առտու կանուխ, Հօֆէն նախապէս առած հրահանգիս համաձայն իրեն ներկայացայ, քիչ յետոյ կուսակալին ղրկած կառքերն ալ հասան:

Առաջին լաւ կառքին մէջ Հօֆը նստաւ միայն եւ ձախը՝ ես: Երկրորդ կառքին մէջ իր դիւանապետը եւ թիկնապահ հարիւրապետը: Քսան ձիաւոր ոստիկան եւ ոստիկան-զինուորներ, իրենց տնօրէնին եւ ոստիկան ձիաւորներու հարիւրապետին հրամանին տակ, կառքերու երկու կողմերէն կը յառաջանային: Երբ քաղաքին մուտքը հասանք, անկէ մինչեւ կառավարական պալատ ամէն մէկ երեք քայլին, ոստիկան զինուորներու շղթայ մը՝ (ընդամէնը 150 հոգի) կը բարեւէին թափօրը: Իսկ երբ հասանք պաշտօնատան ընդարձակ հրապարակը, ութ հարիւր զինուորներու վաշտ մը (թապուր) մեծ քառակուսի մը կազմելով դիրք բռնած էր: Քառակուսիին մուտքին առջեւ կառքերը կեցան:

Հօֆ, գլուխը ֆէս դրած՝ ինչպէս իր հետեւորդները՝ կառքերէն իջան: Մեզի մօտեցաւ կուսակալը եւ խոնարհութիւն մը ընելով բարեւեց: Ես քիչ մը ետ մնալ ուզեցի, բայց մարզպանը ձեռքէս բռնելով, բռն վրա պահեց: Եւ այսպէս՝ ինքը, ես եւ մեր ետեւը կուսակալը՝ սկսանք զինուորներուն առջեւէն անցնիլ: Մարզպանը կը բարեւէր բոլոր զինուորները: Քառակուսիին ամբողջացնելով՝ երբ կառավարական դուռը հասանք, խոնուած բազմութիւնը մեզի տեղ բացաւ, եւ վերի սրահը ելանք:

Մեծ դահլիճին մէջ փաթթոցաւոր գատըն (կրօնական գործերու դատաւորը), զինուորական հրամանատար գնդապետը, դատաւորները,

ելեմտական տնօրէնը եւ վարչական ճիւղերու պետերը, ինչպէս նաեւ հայ, թուրք եւ քիւրտ երեւելիները խումբ մը կազմած էին: Կուսակալը մի առ մի ամէնքն ալ ներկայացուց, եւ ամէն մէկը, նոյնիսկ փաթթոցաւորները, խոնարհութիւն մը ընելով մէկ կողմ կը քաշուէին:

Յետոյ Հօֆը առաջ անցաւ, ձեռքը թուղթ մը, բայց առանց կարդալու արտասանեց կարճ ճառ մը: Ըսաւ թէ մեծ պետութիւններու որոշումով եւ Օսմանական կառավարութեան հաւանութեամբ՝ եկած էր Վանի, Բաղէշի, Տիգրանակերտի եւ Խարբերդի նահանգներուն մէջ բարենորոգման ծրագիրը գործադրելու համար: Ըսաւ նոյնպէս թէ իրեն համար ամէն անհատ եւ ցեղ նոյն արժէքը ունին, եւ ո՛չ մէկը առանձնապէս մենաշնորհեալ է, թէ արդարութիւնը հաւասարապէս պիտի գործադրուի: Իր գլխաւոր պարտականութիւնն է նաեւ այս հողամասին մէջ ապահովութիւնը երաշխաւորել, եւ զայն խանգարելու ամէն ձեռնարկ իր սաղմին մէջ իսկ խեղդել: Յանձնարարեց ժողովուրդին հանդարտօրէն իր գործով զբաղիլ: Յետ այսորիկ, աւելցուց, ինքզինքնին անիրաւուած նկատողները պէտք է կառավարութեան միայն դիմեն, եւ տարբեր ու ապօրինի միջոցներու պէտք չէ ձեռնարկեն: Այս սկզբունքները մեծ ու պզտիկ պաշտօնեաներն ալ պէտք է հասկնան եւ գործադրեն: Քմահաճ կարգադրութեանց շրջանը անցած է, եւ ինք չ'ակնկալիր որ զանցառու պաշտօնէութիւնը պատժելու առիթ պիտի ունենայ:

Կուսակալը պատասխանեց նախապէս պատրաստուած յարմար ճառով մը, եւ խոստում տուաւ իր եւ ստորադաս պաշտօնեաներու անունով, որ ամէն արդար որոշում եւ հրաման լրջօրէն պիտի գործադրուի, եւ ամէնուն փափաքը եղող անդորրութիւնն ու արդարութիւնը լայնօրէն պիտի գործադրուին:

Քսան ըոպէի չափ ամէն մարդ նստաւ: Սուրճով եւ օշարակով մեծարուեցան:

Կուսակալը եւ հայ Առաջնորդարանը տեղեկութիւն ունէին որ մարզպանը, կառավարութեան պալատէն ելլելէ յետոյ Այգեստանի մէջ հիւպատոսարանները պիտի այցելէր եւ իր քարոզ ձգէր. ապա պիտի վերադառնար քաղաքամէջ, եւ պիտի այցելէր հայոց Առաջնորդարանը:

Չորս-հինգ կառքով, ձիաւոր 40-50 ոստիկան եւ ոստիկան-զինուորներով շրջապատուած, կուսակալի դիւանապետին եւ ոստիկանութեան տնօրէնին ընկերակցութեամբ, ամբողջ Այգեստանը կտրեցինք Սըխազայի ճամբով: Ժողովուրդը խանդավառութեամբ մեզ կը դիտէր: Հիւպատոսարանները քարոզեր ձգելէ ետք, վերադարձանք քաղաքամէջ եւ ուղղուեցանք դէպի Առաջնորդարան:

Կառավարութիւնը, երթեւեկը ապահովելու պատրուակով, չէր ձգած որ ժողովուրդը արդէն նեղ փողոցներուն մէջ խռնուէր: Բայց չէր կրցած արգիլել որ տուներու առջեւ մէկ երկու կարգ այրեր եւ կիներ կայնէին, իսկ տանիքներու բազմութիւնը չորսէն հինգ հազարի կը

հասնէր: Եւ եղան տանիքներ ալ, ուրկէ մէքթուպիին եւ ոստիկանութեան տնօրէնին ծանր նայուածքին տակ՝ ծաղիկներու փունջեր նետուեցան:

Առաջնորդարանի դրան առջեւ իսկապէս մեծ դժուարութեամբ մեզի ճամբայ բացուեցաւ: Վարժապետանոցի Փանֆարի խումբը արդէն տեղ բռնած էր, եւ կ'երեւի նախապէս պատրաստուած յայտագրի հիման վրայ, ամենէն առաջ Հնչակեանները սկսան երգել Տալուրիկի երգը: Հօֆ կամաց մը ինծի հարցուց թէ ի՞նչ երգ է այս — «Ազգային երգ մըն է» — ըսի:

Երբ Առաջնորդարանի դռնէն ներս մտանք, այս անգամ Ռամկավարներու որդեգրած եւ յետոյ Ազգային Սահմանադրութեան նուիրուած երգը սկսաւ: Քիչ մը ետք սանդուխներէն դէպի սրահ ուղղուած միջոցին Դաշնակցականներու «Անդրանիկը քաջ» երգուեցաւ: Հօֆ երեսս նայեցաւ, եւ կարծեցի թէ նորէն հարցում մը պիտի ընէր: Բայց ո՛չ. ժպտելով ըսաւ — «Գիտեմ այդ անունը»:

Սրահին մէջ, ոտքի վրայ, ներկաները մի առ մի ներկայացուեցան:

Աւանդական սուրճէն եւ թէյէն ետք, Իշխանը կանգնեցաւ եւ սկսաւ խօսիլ: Կարծես աչքերէն կրակ կը ցայտէր: Ըսաւ*.

— «Դուք 5-6 տարիէ ի վեր մեր սպասած Մեսիան էք: Այս տառապակոծ ժողովուրդը, իր ազատութեան պայքարէն վերջ, ահա կը տեսնէ արշալոյսը»:

Պախարակեց Օսմանեան ըեփիմը, առանց բառերը ծամծմելու: Եւ այդ ճառէն ետք խնդրեց որ իր ըսածները նորիմ Վսեմութեան թարգմանեմ:

Ի՞նչ ըսէի, ի՞նչպէս թարգմանէի: Խղճովին ես համաձայն էի Իշխանի այդ կրակ ու բոց արտայայտութեանց, որոնց վրայէն թեթեւ անցնիլ չէի ուզեր: Գալով բառացի թարգմանութեան՝ անձնապէս կը կարծէի որ անյարմար պիտի ըլլար թարգմանել այդ ձեւով: Կարելի էր իր ըսածները ներկայացնել պաշտօնական ընդունելութեան մը համար աւելի յարմար ոճով: Ուստի Երամեան Վարժարանի Փրանսերէնի ուսուցչին դիմեցի, եւ խնդրեցի որ Իշխանին խօսքերը թարգմանէ, իսկ ես ալ գնդապետ Հօֆին պատասխանը թարգմանեցի:

Ուսուցչիչը աղէկ-գէշ մէջէն ելաւ: Ի հարկէ, շատ մեղմացած բացատրութիւններով՝ բայց ոգին պահելով:

Մարզպանը նստած տեղէն, բայց յայտնապէս յուզուած՝ կարճ նախադասութիւններով յարմար պատասխան մը տուաւ Իշխանին: Խոստացաւ անաչառօրէն քննել իրեն ներկայացուած բոլոր հարցերը,

* Դժբախտաբար, Վանի «Աշխատանք» եւ «Վան-Տոսպ» թերթերը երկար ճամբորդութեանց ընթացքին չեմ կրցած պահել: Այլապէս այդ կարճ, բայց չափազանց ազդու ճառը մոյճութեամբ պիտի տայի հոս:

անդորրութիւնը ապահովել եւ տարրերու միջեւ համերաշխ գործունէութիւն մը ստեղծել:

— «Ասոր համար, — աւելցուց, — բոլորն ալ նոյն ոգիով պէտք է ինծի աջակցին, որպէսզի աշխատանքս արդիւնաւոր ըլլայ»:

Բուռն ծափահարութիւններով ընդունուած այս յայտարարութենէն ետք, Գնդապետ Հօֆ ելաւ, եւ նոյն ձեւով հեռացանք Առաջնորդարանէն: Ինծի դարձեալ պատուիրեց հետեւեալ օր իրեն հանդիպիլ: Պաշտօնապէս տակաւին գործի ձեռնարկած չըլլալով՝ Վան հասնող միւս հայ եւ թուրք խորհրդականներուն հետ գործ չունէր:

Եւրոպական պատերազմը իր ամբողջ սաստկութեամբ կը շարունակուէր: Թրքական հեռագրական գործակալութիւնը ամէն օր լուրեր կու տար, եւ կը յայտնէր որ գերմանները յաղթանակէ յաղթանակ կը սուրային: Թուրք ժողովուրդը, եւ այսպէս ըսած, մտաւորական եւ կէս-մտաւորական դասակարգը չափազանց ուրախ էին:

Միսլ է այն կարծիքը թէ էնվեր եւ իր կարգ մը զինուորական համախոհներն էին միայն Գերմանիոյ համակիրները: Այս ուղղութեամբ եթէ պրոպականդ կար, ատիկա ամէն պարագայի տակ կը տարուէր բերրի հողի վրայ, որովհետեւ մտաւորական կամ ո՛չ մտաւորական ամէն դասակարգէ թուրքեր տրուած լուրերուն ուրախութեամբ կը հետեւէին, գլխաւորապէս այն պատճառով որ բնագոյրէն եւ աւանդապահօրէն չէին սիրեր իրենց թիւ մէկ թշնամին՝ ռուսը: Սերունդներէ ի վեր թուրքերը ստիպուած էին գէնքով դիմադրել ռուսին, կամ Ռուսիոյ դրդուամով ապրստամբած Բայային: Իսկ Անգլիոյ խաղերը արդէն առակի կարգ անցած էին: Անգլիացի ըսելը իրենց համար անվստահելի ըսել կը նշանակէր:

Շատ զարմանալի էր որ ռամիկին այս մտածումը կը բաժնէին նաեւ այն պետական անձնաւորութիւնները, որոնք շատ մօտէն գիտէին որ եթէ Օսմանեան կայսրութիւնը տակաւին ոտքի վրայ կը մնար, ատիկա կը պարտէր Ալպիոնի «հաւասարակշռութեան» քաղաքականութեան: Ամէն պարագայի տակ, ռուսին ուժը եւ անգլիացիին խելքը հաճելի չէին թուրքերուն: Իսկ Գերմանները իրենց նորաստեղծ եւ հզօր կայսրութեամբ՝ դեռ ոեւէ շօշափելի վնաս չէին հասցուցած իրենց: Ընդհակառակը, տնտեսապէս եւ զինուորապէս ամէն աջակցութիւն ընծայած էին ու կ'ընծայէին Օսմանեան պետութեան, եւ միշտ աւելին ընելու խոստում ու հաւաստիք կու տային:

Բայց իրատես համարուող թուրքերը կ'ենթադրէին նաեւ թէ գերմանները ռուսի ոյժին եւ անգլիացիի խելքին դիմադրելու ի վիճակի չէին: Միւս կողմէ կէս դարէ ի վեր գերման զինուորական առաքելութիւններ կը գործէին թուրքիոյ մէջ: Անոնց լուռ աշխատանքը, կամ յախուռն եւ անպատկառ արտայայտութիւնները թուրքերու սրտին եւ նկարագրին շատ մօտ էին: Որով թուրքերը կարծես նախասահմանուած էին գերմաններուն յարելու: Սպայութեան մէջ գերմանական վտանգը

հասկցող եւ գնահատող Մուսթաֆա Բէմալին պէս շատ քիչեր կային: Այդ քիչերը կը հասկնային որ թրքական ամբողջական կործանումի մը առաջը միայն Անգլիան կրնար առնել: Դեռ գերմաններու անսահման փառասիրութիւնը լրիւ չէր ճանչցուած, ինչպէս նաեւ իրենց կարելիութիւնները: Եւ այսպէս, քանի հեռագիրները գերմանական յաղթանակներու լուրերը կու տային, ժողովուրդը մեծ ուրախութիւնով եւ ակնկալութիւններով կ'իւրացնէր զանոնք: Օր մը նոյնիսկ, ծագումով քիւրտ թուրք աղա մը, երբ իմ ներկայութեան ուրիշ թուրքերու կը բացատրէր կիւրմի (վրացի) աղջիկներուն շատ գեղեցիկ ըլլալը, բացազանչեց — «Անոնց համար Կովկաս պէտք է երթալ»:

Պաշտօնական ընդունելութենէն քանի մը օր ետք ներքին գործոց նախարարութենէն հեռագիր մը եկաւ մարզպանին: Կառավարութիւնը կը կրկնէր նոյն յանկերգը — այսինքն թէ՛ զօրաշարժ է, թէ՛ երկրին կեանքը բնականոն չէ, թէ՛ ներկայ պայմաններուն մէջ եւրոպական ընդհանուր քննիչը ո՛չ միայն օգտակար գործունէութիւն չի կրնար ունենալ, այլեւ սահմանամերձ այդ շրջանին մէջ իր մնալը ուրիշ անպատկառութիւններ առաջ կրնայ բերել: Հետեւաբար, քաղաքավար ձեւով մը կ'առաջարկուէր անոր Պոլիս վերադառնալ, ուրկէ միւս մարզպանը՝ Վէսթէնենկ իր պաշտօնատեղին չէր իսկ մեկնած:

Հաւանաբար հեռագիրը կուսակալ Թահսինի դիմումին արդիւնքն էր: Ամէն պարագայի տակ այդ հեռագիրը գնդապետ Հօֆին շատ տալ ըրինակ չերեւցաւ: Միայն թէ անմիջապէս տեղի տալ չուզեց: Այցելութիւններ փոխանակեց Ֆրանսական եւ ռուսական հիւպատոսներուն հետ:

Ֆրանսական հիւպատոսը ինծի ըսաւ որ աշխատիմ համոզելու ընդհանուր քննիչը, որ տեղի չտայ: Կ'ենթադրեմ թէ իրենց տեսակցութեան նիւթն ալ այդ հարցն էր:

Այսպէս, «վերադառնալ թէ ոչ»ի միջեւ կացութիւնը անորոշ կը մնար:

Երկրորդ անգամ ռուս հիւպատոսին հետ տեսակցելէ ետք սակայն, գնդապետ Հօֆ որոշեց վերադառնալ: Կարելի է ուրեմն եզրակացընել որ իր առնելիք քայլին համար ռուս դեսպանատան դիմած էր՝ անկէ հիւպատոսին միջոցով մեկնելու հրահանգ ստանալու համար:

Իր մեկնումին որոշումը լսելուն պէս, կուսակալը մեղրի նման անուշցաւ եւ կակուղցաւ, եւ օտարներուն հանդէպ աւելի քան սիրալիր վերաբերմունք ցոյց տուաւ: Այս ալ թրքական քաղաքականութեան յատկանշական մէկ գիծն էր:

Նոյն օրը կէսօրուայ մօտ կուսակալը զիս տեսնել ուզեց: Երբ բացի, յայտնեց որ Հօֆին պահանջով, եւ իր ալ փափաքին համաձայն՝ որոշած են որ ես մինչեւ Պոլիս իրեն ընկերակցիմ:

Ասիկա ինծի դիւր չեկաւ: Պատասխանեցի որ մինչեւ իրերու բնականոն վիճակ ստանալը (կը կարծէինք այն ատեն, որ պատերազմը 5-6

ամիսէն աւելի պիտի չտեւէր) եւ նախամեծար կը համարէի Վան մնալ, մանաւանդ որ, ինչպէս ինքն ալ գիտէր, նշանուած էի եւ 3-4 շաբաթէն Վանի մէջ պիտի ամուսնանայի:

— «Փոխանակ օրիորդը Պոլսէն հոս գալու, դուն հոն կ'երթաս եւ քիչ մըն ալ Պոլիս կը հանգստանաս» ըսաւ:

— «Ուրիշներ այս կողմերը չեն ուզեր գալ ու պաշտօնավարել, եւ երբ ինծի պէս մէկը կ'ուզէ հոս մնալ, այն ալ կը ճամբէք» պատասխանեցի:

— «Միրելիս, ուշադրութիւն ըրէ՛ ըսելիքներու: Զօրաշարժի սկիզբն ենք տակաւին: Ես Պալքանեան պատերազմի միջոցին Րումէլի էի եւ շատ փորձառութիւն ունիմ: Վաղը միւս օրը ի՞նչ կ'ըլլայ-չըլլար, չես գիտեր: Այս օտարականը մեզի աւանդ է: Թալէաթէն հիմա հեռագիր ստացայ: Իրեն համար կարգ մը հրահանգներ կու տայ, եւ մասնաւոր կերպով կը պատուիրէ որ հետը շատ քաղաքավար ըլլանք: Չ'ուզէր որ վերադարձին թուրքերը իրեն հետ պաղ վերաբերուին: Չի փափաքիր նաեւ որ հայերը չափազանց խանդավառ ընդունելութիւն ընեն: Ներկայ պայմաններուն մէջ ասիկա ապահովելու համար ես ինքս պէտք է իրեն ընկերանայի, եթէ իմ ներկայութիւնս հոս բացարձակ անհրաժեշտութիւն մը չըլլար: Ուրիշ յարմար մէկը չեմ տեսներ: Ուրեմն, դուն պէտք է ընկերանաս Հօֆին»:

Ճամբան երկարօրէն մտածեցի եւ աշխատեցայ վերլուծել կուսակալին խօսքերը: Պարզ էր, որ ներկայ պաշտօնս վերջ գտած ըլլալով՝ կ'ուզէին զիս Վանէն հեռացնել: Բայց ինչո՞ւ: Ատոր պատասխանը այդ ատեն դեռ չէի գտներ: Ապագայ դէպքերը սակայն շատ բան բացատրեցին:

Տունը երկտող մը գտայ: Զիս Արտամես կը կանչէին: Հոն մարգպանը ինծի ըսաւ թէ կուսակալը ի՛նքն առաջարկած էր որ իրեն ընկերանայի, ինչ որ շատ շնորհակալութեամբ ընդունած էր:

Ամէն պարագայի տակ ես Հօֆի արտայայտութեան անկեղծութեան մասին չկասկածեցայ: Իրապէս, Վան հասնելէն ի վեր ինծի հանդէպ այնքան սիրալիր եւ յարաճուն վստահութեամբ կը վերաբերուէր, որ մտքէս չանցաւ անոր խօսքերն ալ մեկնաբանել: Յետոյ, անիկա թուրքի մը կողմէ գրուած, եւ Ուրբերդէն քաշուած բաւական ընդարձակ հեռագիր մը ներկայացուց ինծի: Հեղինակը, ըստ երեւոյթին տեղւոյն երեւելիներէն էր: Կալուածական գործի մը համար Ուրբերդէի կուսակալին բռնած կողմնակալ եւ հակաօրինական ընթացքը երկարօրէն կը բացատրէր, եւ իր իրաւունքներուն պաշտպանութիւնը եւ չարաշահներու պատժուիլը կը պահանջէր:

Իմաստը բացատրեցի իրեն: Թեթեւ ժպիտ մը ուրուագծուեցաւ դէմքին վրայ:

— «Ի՞նչ զարմանալի է աշխարհ, — ըսաւ, — կառավարական բարձրաստիճան պաշտօնեայի մը դէմ հողային հարցի մը համար առաջին գանգատը ինծի, թուրքի մը կողմէ կու գայ»...:

Ուրբերդէն եկած հեռագիրը նոյնութեամբ փոխանցեցինք տեղւոյն կուսակալին՝ պատշաճ կարգադրութեան հրահանգով:

12.- ՏԵՍՈՒՐ ՎԵՐԱԴԱՐՁ

(Վերջ Մարգպան Հօֆի Առաքելութեան)

Մեկնելու պատրաստութիւնները սկսած էին, բայց թէ ո՞ր ճամբով պիտի երթայինք. այդ մասին ամէն մարդ իր սեփական կարծիքը ունէր:

Կուսակալը կը յանձնարարէր վերադառնալ Հօֆին եկած ճամբով՝ գուցէ ժողովուրդին ըսել տալու համար, որ մարդը եկածիմ պէս գնաց:

Մարգպանին դիւանապետը կը նախընտրէր Ռուսիա անցնիլ (150 քիլոմետր), որ յարաբերաբար ամենէն դիւրին ճամբան էր, եւ կ'աւելցընէր թէ այդ կերպով առիթը կ'ունենային էջմիածնի կաթողիկոսին իրենց յարգանքները յայտնելու: Իսկ ինքը՝ Հօֆ կը փափաքէր Բաղէշ-Տիգրանակերտ-Հալէպ-Պէյրուս ճամբով Պոլիս երթալ:

Բնականաբար Հօֆին խօսքը քալեց, թէ եւ կուսակալը ճամբուն երկարութիւնը եւ տաղտուկները մի առ մի թուեց:

Դժուարութիւն մըն ալ ծագեցաւ փոխադրութեան միջոցներու մասին: Վանէն Բաղէշ եւ անկէ Տիգրանակերտ կառքի ճամբայ չկար, եւ միայն կենդանիի վրայ հեծեալ կարելի էր ճամբորդել:

Եթէ պաշտօնի վրայ մնացած ըլլայինք, ըստ ընդհանուր քննիչի պայմանագրին՝ տարւոյն մէկ երրորդը կեդրոնատեղի նկատուած քաղաքէն դուրս քննական ճամբորդութիւնով ստիպուած պիտի ըլլայինք անցընել: Ամառը, այսպէս թէ այնպէս կարելի էր այդ: Բայց ճամբորդ ձիւն ու փոթորիկի մէջ օրերով դեգերիլ, իսկապէս դժուար էր: Այս պարագան նկատի առնելով՝ մարգպանը Տանըմարքայէն անցած ժամանակ քսան շուն գնած էր՝ յուսալով զանոնք բախիլի կամ սահնակի լծել, եւ փոխանակ տասներկուքի, երեք օրուան մէջ հասնիլ Տիգրանակերտ: Ի հարկէ, անմիջապէս հեռագրեց որ շունները չղրկեն:

Զօրաշարժի պատճառաւ զինուորական իշխանութիւնը բռնազրաւած էր բոլոր ձիերը, ջորիները եւ նոյնիսկ էջերուն մեծ մասը: Քաղաքային եւ զինուորական իշխանութիւնները, մէկ օր տեւող բանակցու-

Թիւններէ ետք՝ հաւանեցան մեզի հայթայթել պէտք եղած կենդանիները մինչեւ Բաղէշ, ուրկէ զանոնք պիտի վերադարձնէինք: Հոն տեղական իշխանութիւնը, իր կարգին, մեզի նորեր պիտի ճարէր:

Վերջապէս, քանի մը օրուան մէջ բոլոր պատրաստութիւնները տեսնուեցան, եւ մենք ճամբայ ելանք 1914 Օգոստոս 17-ին, Աստուածածնայ Կիրակի օրը:

Առտուն կանուխ Արամը եւ իշխանը բարի երթի եկած էին Կարմիր Մօրուսենց տունը, զոր վարձեր էի մինակս, եւ կը կահաւորէի մօտալուտ ամուսնութեանս առթիւ:

Հօֆի Վան ընկուցեան մօտ երկու շաբաթներու ընթացքին, մերթ մէկը կամ միւսը, եւ երբեմն երկուքը միասին ամէն օր հանդիպած էին ինծի, եւ երկար խորհրդակցած էինք օրուան հարցերուն մասին: Այդ առաւօտ արշալոյսը նոր ծագած էր, երեքս միասին նախաճաշեցինք, եւ մօտիկ ապագայի խնդիրներուն մասին դարձեալ երկարօրէն խօսեցանք:

Մեր մեջ իշխանն էր, որ ո՛չ թէ կը կարծէր, այլ վստահ էր որ զիս անուշիկ մը կը հեռացնեն: Ան կ'ըսէր թէ անպայման պէտք է մնայի Վան: Եւ երբ կ'առարկէի թէ իբր պաշտօնեայ ուրիշ միջոց չունէի, կ'ըսէր.

— «Հիմա այլեւս ամէն բան ներելի է»:

Երկուքս ալ խանդավառ էին եւ արդէն բարենորոգումներով չէին գոհանար...

Մերիններուն կեանքը շատ դժուարացած էր՝ զօրաշարժի պատճառով: Մեզի ծանօթ ոստիկան-զինուորներու հրամանատար Քեազիմը բանակի ծառայութեան վերադարձած էր, եւ Վանի զինուորազրուցեան ճիւղի պետ նշանակուած: Առջի օրէն թուրք կառավարութեան այն որոշումը, թէ ցարդ զինուոր չեղած ոչ-իսլամ տարրերն ալ պահեստներու վաշտներուն մէջ իբր զինուոր պէտք է առնուէին, շատ մեծ նեղութիւն կը պատճառէր հայերուն: Առհասարակ ամուսնացած մարդիկ, որ ո՛չ զինուորական կրթութիւն տեսած էին, եւ ո՛չ ալ անոր ականգնութիւններուն տեղեակ էին, կը խուսափէին այդ նորօրինակ հրահանգին ենթարկուելէ:

Ասկէ կը ծագէր դժուարութիւն մը, որ կազմակերպութեանց ղեկավարներուն համար անլուծելի կը մնար: Կառավարութիւնը կը պահանջէր, բայց ժողովուրդը կ'ընդդիմանար: Ի հարկէ, ղեկավարներն ալ հոգիով ժողովուրդին հետ էին, որովհետեւ չէին կրնար փափաքիլ որ ան տրորուէր զինեալ ուժերու կողմէ: Ուստի այլեւայլ միջոցներով կը միջամտէին իշխանութեան մօտ, եւ կ'աշխատէին ձգձգումներ ձեռք բերել:

Ըսի իրենց թէ վերջի վերջոյ այդ յետաձգումներն ալ կէս միջոցներ էին, եւ թէ ի՞նչ պիտի ընէին եթէ ստիպուէին զինուորացուները

յանձնել: Երկուքն ալ երեսս նայեցան ժպտելով, եւ Արամը ըսաւ.— «Աստուած ողորմած է»...

Հակառակ այլեւայլ պատճառներու զորս դիւրին էր գուշակել, արդէն կը տեսնէի որ Վանի կեանքը դժուար փուլի մը մէջ կը մտնէր: Եւ բաժանումի պահը քանի կը մօտենար, մեր տիրութիւնն ալ կ'աւելնար:

Լուր տուին, որ ոստիկանական քովիսէր մը եկած է եւ կ'ըսէ թէ ամէն բան պատրաստ է, եւ թէ ինծի կը սպասեն: Ողջագուրուեցանք իրարու հետ, եւ սակայն մտքէս չանցաւ որ ատիկա մեր վերջին տեսակցութիւնը պիտի ըլլար...

Կուսակալը, որ բարի գալուստի համար Հօֆը դիմաւորելու չէր ելած, երթաք-բարովի համար մինչեւ Արտամետ եկաւ: Հոն, մարգպանին տրամադրութեան տակ դրին երեսունի մօտ ոստիկան-զինուորներ իրենց սպայով, ինչպէս նաեւ 10-15 ոստիկաններ եւ քովիսէր մը: Իսկ Ոստանի գայմագամը (որ Իզմիրի պետական վարժարանը ինծի դասընկեր եղած երիտասարդ մըն էր) կուսակալէն հրահանգ ստացած էր մինչեւ Դատուան ընկերանալու մեզի: Արդէն մեր անցնելիք ճամբան ալ գրեթէ իր շրջանէն կ'անցնէր:

Այսպէս, պետութեան պաշտօնական աչքը մեր վրան էր: Գայմագամը իր ընթացքով այնքա՛ն յայտնի կ'ընէր իր հսկողութիւնը, եւ այնքա՛ն իրեն չվերաբերեալ բաներով կը զբաղէր, որ Հօֆ իր դիւանապետին պատուիրեց միշտ անոր հետ ըլլալ, որպէսզի զինք անհանգիստ չընէր:

Նորվեկիացիները Հայաստան գալու ատեն օտար լեզուով մեր երկրի մասին գրուած երկասիրութիւններ փնտռած եւ գտած էին: Ի հարկէ, անոնց գլխաւորը՝ փառաւոր Լինչն էր: Հիմա, որ անգլիացի հեղինակին նկարագրած երկրէն պիտի անցնէին, փափաք յայտնեցին առաջին հերթին այցելել Աղթամար կղզին:

Պոլիս երկար տարիներ Մեծ Կղզի ապրած ըլլալով՝ ես ալ կ'ուզէի մե՛ր կղզին տեսնել, մանաւանդ եկեղեցին, որուն նկարագրութիւնը Լինչ այնչափ գեղեցիկ կերպով էր ըրած:

Մեր փափաքը իրագործելու համար գտնուեցաւ մակուկավար մը: Դժբախտաբար մեր չար բախտէն, ծովը հովին պատճառով այդ օրը հակառակեցաւ մեզի: Չորս ժամ քրտնաթոր աշխատելէ ետք, նաւավարը յայտնեց թէ կարելի պիտի չըլլար այդ սովորաբար մէկ ժամ տեւող ճամբան կտրել, ուստի ստիպուեցանք ետ դառնալ:

Աղթամարի դուրսի տան հիւրասիրութիւնը մարգպանին շատ հանելի եղաւ: Վանահայրը, պատուական կարագ եւ սերէն գատ, ապուր մըն ալ պատրաստել տուած էր, որ նորվեկիացիներուն սովորական եւ սիրածն էր:

Առհասարակ Վանէն դէպի Բաղէշ հայկական գիւղերէ կ'անցնէ-
ինք, եւ մեր հիւրերուն հետաքրքրութիւնը կ'աւելնար: Կ'ըսէին թէ Կա-
րինէն դէպի Վան ճամբորդութեան ընթացքին շատ հայ գիւղերու եւ հա-
յերու չէին հանդիպած, մինչ հոս կատարեալ հայնոց էր: Երբ գիւղի
մը մէջէն կ'անցընէին կը հետաքրքրուէին գիւղացիին կենցաղով, տու-
նով, ընտանիքով ու աշխատանքով, եւ իրենք իրենց մէջ երկարօրէն կը
խօսէին (նորովեկերէն):

*
**

Մեր ճամբան առհասարակ լիճին եզերքէն կը յառաջանար: Ինչ-
պէս ամէն ճամբորդ, մենք ալ կը հիանայինք լիճին այդ հարաւային
մասի գեղեցկութեամբ: Հայկական շրջան էր, հետեւաբար աւելի ապա-
հով: գիւղացին ազատօրէն իր դաշտն ու պարտէզը մշակած էր: Ամէն
կողմ պտղատու ծառեր եւ մանաւանդ խնձորենիներ, լիառատ բեռնա-
ւորուած:

Ցերեկը բաւական տաք կ'ընէր: Եւ ձիով ճամբորդողներու
համար, ծարաւը յագեցնելու լաւագոյն միջոցը խնձորն էր, զոր առատօ-
րէն կը վայելէինք:

Թուրք ոստիկաններն ու ոստիկան-գինուորները կը զարմանա-
յին, երբ կը տեսնէին որ ծախսարար-տնտես Հայկ Սանոսեանը, Հօֆին
հրամանով ինչ որ կ'առնէր, փոխարժէքը կը վճարէր: Մանաւանդ կեն-
դանիներու համար առնուած յարդին ու գարիին փոխարժէքը հատու-
ցանելը իրենց համար տարօրինակութիւն մըն էր:

Անգղ Գեղ, Հայոց Զոր, Նոր Գիւղ եւայլն, — ասոնք բոլորն ալ
հայ նորագոյն դէպքերուն մէջ իրենց պատմութիւնն ունէին: Բայց իմ
վրայ շատ մեծ ազդեցութիւն գործեց մանաւանդ Սորբ (Սուրբ ?) գիւղը
եւ իր վանքը: Պզտիկ խորշի մը մէջ տեղաւորուած եւ ծառերուն մէջ
թաքնուած այդ վայրը «Նարեկացիին գիւղը եւ վանքն է», ըսին ինծի:

Ռուբէն իր յուշերուն մէջ տեղ մը ազգասէրի եւ հայրենասէրի
տարբերութիւնը կը սահմանէր եւ կը շեշտէր.

«Ազգասէր կրնայ ըլլալ ամէն հայ, որ հայ ընտանիքի մէջ ծնած
ու մեծցած է, հայկական ականդութիւններով է սնած, հայ դպրոց է յա-
ճախած, հայ գիրքի եւ թերթի ընթերցումներով է պարապած, իր ցեղին
ծագումով, զարգացումով եւ պատմութիւնովն է զբաղած, եւ ասոնց
համար իր միտքը, երեւակայութիւնն ու աշխատանքը ի սպաս է դրած:
Հայրենասէրը, սակայն, աւելի շատ կ'ապրի իր հայրենի հողին վրայ,
եւ հողը կը խօսի իրեն եւ կը թրթռացնէ իր հոգին»:

Վրանիս մէջ երկարած, որուն մեծ ճեղքէն լուսնի ճառագայթներ
գողտուկ մը ներս կը թափանցէին, միտքովս կ'երթայի դէպի հին ժամա-
նակները: Եւ գեղատեսիլ պատկերներ մի առ մի աչքիս առջեւէն կ'ան-

ցընէին: Յետոյ կը յիշէի այն պատմութիւնը զոր ինծի ըրած էր թուրքե-
րուն հետ մօտիկ յարաբերութիւններ ունեցող բարձրաստիճան հայ
պաշտօնեայ մը, որ սակայն սրտով հայ մնացած էր: Սուլթան Համիտ
երբ ջարդերէն յետոյ Մեծ Պետութիւններուն պահանջով, տեղւոյն վրայ
քննութիւն կատարել կու տայ, իր հարէմին գեղուհիներ հայթայթելու
պաշտօն ունեցող Գապա-Սագալ Մէհմէտ փաշային կը յանձնարարէ
մասնաւոր առաքելութեամբ մը Հայաստանէն անցնիլ: Ան ալ ինծի պէս
կ'երեւի Ռուսիոյ ճամբով Վան կու գայ: Երբ Բերկրին կ'անցնին, եւ
ամէն մէկ քառորդ ժամուն իրեն մատուռ մը, վանք մը, հայկական գե-
րեզմանատուն մը, սրբատեղի մը, աւերակ մը կը ցուցնեն, կը բացա-
զանչէ. «Քանի այս աւերակները, մատուռները եւ վանքերը գոյութիւն
ունին, դուք ա... (հոս շատ կոշտ բառ մը) հայկական ոգին չէք կրնար
ընջել այս երկրէն»:

Վերջապէս, հինգերորդ օրը հասանք Դատուան, որ լիճին արեւ-
մտեան-հիւսիսային կողմը բնական նաւահանգիստով պզտիկ գիւղ մըն
է, Բաղէշէն մօտ քսան քիլոմետր հեռու: Նաւահանգիստին քով, հանրա-
յին պարտէզի դերը կատարող եղեւինի բարձրաբերձ քանի մը հարիւր
ծառերու անտառակ մը կար: Մեր վրանները հոն գետեղեցինք:

Բաղէշէն մեզ դիմաւորելու եկած էր կուսակալ Մուսթաֆա Ապ-
տիւլ Սալիքը, իր բարձրաստիճան պաշտօնեաներով: Մեզի բարի գա-
լուստ մաղթեց, եւ կէս ժամի չափ տեսակցելէ ետք մեկնեցաւ: Թարգ-
մանի պէտք չունէր: Եանիայի պետական վարժարանի ուսուցիչ եւ ապա
տնօրէն Արմենակ Զօրիկեանը, որ Կալաթա Սէրայի լիսէի աշակերտ
եղած էր, իրեն լաւ Ֆրանսերէն սորվեցուցած էր: Վրամեանի եւ բազ-
մահազար հայերու նահատակութեան պատճառ եղող այս մեծ ոճրագոր-
ծը, քաղաքավար երիտասարդ ալպանացի մըն էր, խրոխտ եւ քաջ ապա-
հովաբար, քանի Ալպանիոյ մէջ աւազակներու բազմաթիւ հետապնդում-
ներուն ընթացքին ատոր ապացոյցը տուած էր: Միեւնոյն ատեն հլու
հնազանդ գործադրողն եղած էր իր պետերու հրահանգներուն: Վանի
կուսակալ Թահսինէն աւելի զարգացած էր, բայց անոր ինքնատիպ հե-
ղինակութիւնը ունենալէ շատ հեռու էր: Լաւ պետի մը ձեռքը հրաշալի
օգնական մը կրնար ըլլալ, ինչպէս որ Թալէաթի մը կամ Պէհաէտտին
Շաքիրի մը ձեռքը՝ կատարելագործեալ դահիճ մը եղաւ:

Բաղէշին մէկ ժամ մնացած վրան մը հաստատուած էր, ուր կրկին
կուսակալը եւ մեծ բազմութիւն մը մեզ դիմաւորեցին: Վերջապէս Բաղէշ
հասանք, ուր զինուորական պատիւներ եղան Հօֆին, եւ նախապէս
պատրաստուած տուն մը դրուեցաւ իր տրամադրութեան տակ: Իրեն
այցելութեան եկողներուն մէջ կրակուբոց սեւ աչքերով երիտասարդ հայ
Առաջնորդը գրաւած էր իր մասնաւոր ուշադրութիւնը:

Հոն ես քիչ մը աւելի ազատ եղայ: Մարզպանին հետ ճաշելու
պէտք չկար: Քաղաքին մէջ քանի մը նախկին ծանօթներ ունէի: Ուզեցի
զանոնք, ինչպէս եւ քաղաքը տեսնել:

Քաղաքը իր կառուցուածքով, բնականաբար, նախնական վիճակ մը կը ներկայացնէր: Նահանգի մը կեդրոնին արժանի ոչինչ ունէր, ո՛չ կանոնաւոր շէնքեր եւ ո՛չ ալ կանոնաւոր փողոցներ: Ամէն կողմ քար միայն կը տեսնէիր, ճի՛շդ Վանին հակառակը: Տուներն ալ կարծես խոշոր քարերու երկյարկանի կոյտեր էին:

Իսկ քաղաքին կեդրոնէն քիչ հեռու տեսարանը չնաշխարհիկ էր: Ես ոչ մէկ տեղ այդքան հարուստ բուսականութիւն տեսած եմ քան այն հողէ բլուրներուն վրայ, որոնք կ'եզերեն Բաղէշի մէջէն անցնող գետակը: Ո՛չ մէկ տեղ լսած եմ այն դայլայլը բազմահազար թռչուններուն, որոնք այդ բլուրներու պուրակներուն մէջ կը վխտային: Ըմպելի ջուրն ալ առատ եւ պաղ՝ Վանի աղբիւրներուն նման, բայց շատ աւելի հաճելի:

Շատ կը ցաւէի որ մեր ճամբորդութեան ճամբողջ ընթացքին տեսական հսկողութեան տակ էինք, եւ պարտաւոր՝ շատ զգոյշ ըլլալու: Ոստանի կառավարիչը թէեւ Դատուանէն արդէն ետ դարձեր էր, բայց ոստիկանապետներ եւ ոստիկաններ մեր շուրջը կը վխտային, իբր թէ մեզ պատուելու համար:

Բաղէշի մէջ, Մուսթաֆա Ապտիւլ Խալիքը պատերազմի մասին խօսեցաւ այնպէս, որ կարծես այսօր-վաղը պիտի վերջանար: Հոն իմացանք թրքական գործակալութեան լուրերը: Գերմանացիները կ'երեւի քանի մը թեւերով դէպի Փարիզ կը յառաջանային, եւ Ֆրանսացիք նեղ դրութեան մէջ կը գտնուէին: Կուսակալը կ'աւելցնէր թէ Փարիզի գրաւումով Ֆրանսական բանակը փճացած պիտի ըլլար, եւ անգլիացիք առիթ ու ժամանակ պիտի չունենային իրենց խեղճուկրակ զինուորներով մասնակցելու պատերազմին:

Հօֆ անտարբեր մտիկ կ'ընէր: Ինք, որ ոչ միայն իրաւաբան եւ գիտութեանց տոքթոր էր, այլեւ վկայեալ զինուորական բարձրաստիճան սպայ՝ անշուշտ պատերազմական գործողութիւններու մասին շատ աւելի բան կը հասկնար քան մենք: Բայց ան որեւէ կարծիք կամ մեկնութիւն չտուաւ եւ կողմ չբռնեց: Մինչդեռ կուսակալը այնպիսի ձեւով մը կը խօսէր, որ կարծես գերմանները իր եղբայրներն ըլլային:

Վերջը, երբ նորվեկիացիները իրենց սենեակը քաշուեցան, ինձմէ հեռագրական գործակալութեան Ֆրանսերէն գրաւոր թարգմանութիւնը ուղեցին: Երբ ներկայացուցի զայն, քարտէսի վրայ հետեւեցան պատերազմական գործողութիւններուն: Եւ հոն, Բաղէշի մէջ էր որ առաջին անգամ նշմարեցի մտահոգութիւն մը իրենց դէմքերուն վրայ: Մառնի ճակատամարտին նախընթաց օրերն էին...

Քանի մը օրուան մէջ լրացուցինք մեր պատրաստութիւնները: Կենդանի գտնելը հետզհետէ կը դժուարանար: Վերջապէս, իրենց համար ձի եւ ինձի համար ալ ջորի մը գտնուեցաւ:

Առջի մէկ վայրկեանին այդ ջորին իրենց ծիծաղը շարժեց: Բայց նոյն երեկոյ իսկ, դիւանապետ եւ քարտուղար առաջարկեցին իրենց ձիերուն հետ փոխանակել զայն: Իսկապէս հրաշալի կենդանի մըն էր,

ամենէն աշխոյժը եւ տոկունը: Ջորիին տէրը՝ որ մեզի հետ պիտի գար մինչեւ Տիգրանակերտ, կը յուսար զայն վարձելով փրկել զինուորական գրաւումէ:

Բաղէշէն դէպի հարաւ պիտի ճամբորդէինք ուղիղ գիծով:

Թէեւ ամէնքս ալ կը փափաքէինք Մուշի կողմէն երթալ, բայց թուրք իշխանութիւնը, միշտ զօրաշարժի ստեղծած այլեւայլ անպատեհութիւնները առաջ քշելով, մեզ ստիպեց անցնիլ հայկական կեդրոններէն հեռու, գրեթէ անապատային շրջաններէ:

Բաղէշի հարաւային ճամբուն վրայ, բլուրներու շարունակութիւն մը կար, որոնք գաճաճ եղեւիներով ծածկուած էին: Առաջին անգամ անտառ անունը յեշեցնող բան մը կը տեսնէինք: Միեւնոյն ժամանակ կը դիտէի որ Հօֆը կամ թիկնապահը, առանց բան մը ըսելու ձիերէն վար իջան, եւ խուզարկու նայուածքով սկսան բաներ մը գննել: Հոս քարի կտոր մը, հոն ափ մը հող առնելով՝ մասնաւոր տուփի մը մէջ դրին եւ վրան անուն մը գրեցին՝ առնուած տեղին դիրքը արձանագրելով:

Լսած էի որ այդ բլուրներուն տակ այլազան եւ առատ հանքեր գոյութիւն ունին: Նոյնիսկ մէկ երկու Ֆրանսացիներ, որ Վան եղած միջոցիս ինձի այցելեցին, ի միջի այլոց շատ հարուստ ալիւմինիումի հանքերու մասին խօսած էին: Ամէն պարագայի տակ չկրցայ հասկնալ թէ Հօֆը եւ իր մարդիկը այդ քարի կտորներուն եւ հողերուն մէջ ճիշդ ի՞նչ կը փնտռէին:

Անգամ մը ճամբաներու մասին խօսուած միջոցին, մարզպանը անուն մը տուաւ Կարինի եւ Արճէշի մէջ, եւ ըսաւ որ այնտեղի քարն ու աւազը ճամբաներու շինութեան ամենայարմարն են: Տրուած ըլլալով իր գիտական եւ այլ ծանօթութիւնը եւ ձեռք բերած մեծ փորձառութիւնը, տարօրինակ չէին թուեր այդ բոլոր քննութիւնները, հարցումները եւ առած նոթերը, որոնք կ'ապացուցանէին թէ մարդը հիմնապէս կ'ուզէր ճանչնալ եւ ուսումնասիրել այն երկիրը որ ըստ իր պայմանագրութեան՝ տասը տարի կառավարելու պաշտօնը ստանձնած էր:

*
**

Երկու օր մեր ճամբորդութիւնը շատ լաւ անցաւ: Առջի երեկոյ մեր վրանները յարմար վայր մը գետեղած էինք. իսկ երկրորդ օրուան վերջը, ջաղացքի մը կից ծառաստանի մը մէջ:

Բաղէշէն եկող գետը հոն Տիգրիսին կը միանար: Այդ երկու օրերու ընթացքին մեզի ընկերացող Բաղէշցի ոստիկան եւ ոստիկան-զինուորները ամէն կէս ժամը, կամ ամէն մէկ ժամը՝ մեզ կ'առաջնորդէին ճամբուն վրայ կամ ճամբէն 5-10 վայրկեան հեռու

գտնուող ջուրի ակի մը քով, մէկը միւսէն լաւ: Զուրերը կ'երեւի ա'յն-
քան լաւ էին, որ մեր մարսելու կարողութիւնն ալ կը կրկնապատկուէր:

Մարզպանը Պոլսէն մեկնելէ առաջ, իբր ծախսարար-տնտես Հայկ Սանոսեանէն զատ հայ խոհարարապետ մըն ալ վարձած էր, որ Պոլսոյ մէջ մեծ համբաւ կը վայելէր, եւ որ Հօֆին ծառայութեան մէջ մտած էր պարզապէս իր հայրենի քաղաքը մնալու համար*: Աւելորդ է ըսել թէ արեւմուտքէն առաջ, ամէն մէկ կայան հասնելնուս, քանի մը օգնականներով իր վրանը գետեղելէ եւ կրակները վառելէ ետք, մեզի եւրոպական եւ երբեմն ալ արեւելեան համադամներ կը պատրաստէր: Մէկ կողմէ՝ կը պարծենար, որ իր երկիրը (Բաղէշի գիւղերէն էր) այն-
քան ախորժաբեր ջուրերով կը ներկայանար մարզպանին, միւս կողմէ սակայն կը նեղուէր՝ տեսնելով, որ ճամբու համար պատրաստուած ուտելիքները իր ակնկալութենէն աւելի շուտ եւ շատ կը սպա-
ռէին:

Երկրորդ երեկոյեան ջաղացքի ծառաստանին մէջ հաստատուած վրանը նստած էինք: Ըստ սովորութեան՝ ասէղիլէնի լամբը վառուած էր, եւ պրիմի սեղանին շուրջը բոլորուած էինք: Նորվեկիացիները սկը-
սեր էին իրենց արքերիքիվները առնել, երբ մեզի ընկերացող ոստիկան-
ներուն պետը յայտնեց թէ կուսակալութեան հրահանգով, իրենց պաշ-
տօնը հոս կը վերջանար, եւ թէ յետ այսու մարզպանին պիտի ընկերա-
նային 20-ի մօտ ոստիկան-գինուորներ միայն՝ իրենց սպայով:

Հօֆը երեսուս նայեցաւ: Ըսի իրեն, որ ներկայ պայմաններուն մէջ արդէն իր կողմէ տրուելիք հակահրաման մը հաւանօրէն պիտի չգործադ-
րուի, իսկ ապահովութեան տեսակէտէն, մեկնիլ ուզողները մեծ արժէք
չեն ներկայացներ: Եւ իրենց պաշտօնը արդէն ոչ թէ մեզ պաշտպանելն
էր, այլ մեր վրայ հսկելն ու լրտեսելը:

Հօֆ շնորհակալութիւն յայտնեց ոստիկաններուն իրենց ծառա-
յութեան համար, — «բարեւեցէք կուսակալը», — ըսաւ, եւ մեկնեցաւ:

Առաջին անգամ ըլլալով մենք զմեզ ազատ կը զգայինք՝ մեր խոր-
հրդածութիւնները լայնօրէն արտայայտելու համար: Մարզպանին շուրջ ա'լ ոստիկան չկար. իսկ ոստիկան-գինուորները հեռու հաւաք-
ուած էին: Եւ յայտնի եղաւ որ մարզպանն ալ, անոնց ճնշիչ ներկայու-
թենէն ազատուելով, ինքզինքը ուրախ կը զգար: Վերջին օրերուն մա-
նաւանդ հասկեցած էր թէ իր ներկայութիւնը որքա՛ն անհաճոյ էր թուր-
քերուն: Իսկ հայերու անվերապահ համակրանքն ալ, առջի մէկ վայրկ-
եանէն յայտնի էր: Ծիշդ է որ ինք եկած էր հայերուն ջերմ փափաքին
վրայ՝ եւ թուրքերուն ակամայ հաւանութեամբ, բայց կարծես կը հա-
ւատար որ թուրքերն ալ շատ գոհ պիտի մնային, մանաւանդ երբ իր վար-
չութեան բարիքները տեսնէին: Հիմա, այլեւս ո'րեւէ պատրանք չունէր

*) Այն ժամանակ դեռ յայտնի չէր, թէ Հօֆի կեդրոնը Վա՛ն թէ Բաղէշ պիտի ըլլար:

այդ մասին: Թուրքերը, գերմանական շանթահարիչ յաղթանակներու
լուրերէն արբշիռ, երեւութական կեղծ ձեւերէ մերկացած էին:

Նորվեկիացիներու այս տպաւորութիւնը երբ զգացի, ինքս ալ
սկսայ քիչ մը աւելի ազատ կերպով արտայայտուիլ:

Երկու նոր բան սորվեցայ: Առաջինը այն էր, որ Հօֆ Պերլինի
մէջ տեսնուած էր Պօղոս Նուպար փաշայի հետ, եւ ընդունած անոր ճաշի
հրաւերը: Մանրամասնութիւններ կու տար իրենց խօսակցութեան մա-
սին: Ինծի համար, հարկաւ, թուրքերու մասին լսածներս նորութիւն
չէին: Թուրք վարչութիւնը, ես այդ տարիքիս մէջ իսկ փաշայէն աւելի
լաւ կը ճանչնայի: Նմանապէս գիտէի հայրենի երկրին իրական պէտքե-
րը, եւ աւելի լաւ կը զգայի թէ ի՛նչ պէտք էր ընել, որպէսզի մեր հայրենի
երկիրը զարգանար այնպիսի ձեւով մը, եւ կեանքը հոն ըլլար ա'յնքան
անդորր ու ապահով՝ որ հայկական նահանգներէն դուրս գտնուող ողջ
հայութիւնը ինքնաբերաբար հոն դիմէր ու հաստատուէր:

Երկրորդ՝ մեր վերադարձի ուղեգիծին գաղտնիքը պարզուեցաւ:

Ամէնուս զարմանք պատճառած էր մարզպանին Պոլիս վերադառ-
նալու համար ընտրած ուղեգիծը: Զէ՞ որ զօրաշարժի յայտարարութենէն
ետք, երկրին ներքին կեանքը եւ մանաւանդ քաղաքակրթեալ կեդրոն-
ներէ հեռու եւ կէս ամառի վայրերու մէջ ճամբորդութիւնները կրնային
դժբախտ պատահարներու առիթ տալ: Անգամ մը որ վերադարձի որո-
շումը տրուած էր, նախնական զգուշութիւնը կը պահանջէր որ ամենէն
կարճ եւ ապահով ճամբան ընտրէինք: Բայց Հօֆ ասոր ճիշդ հակառակը
ըրած էր:

Օր մը վերջապէս, ուզեցի այս մասին իրմէ լուսաբանութիւն մը
ստանալ:

— «Երբ ես Պոլսէն կը մեկնէի Եւրոպայի ընդհանուր կացութիւնը
չփոթ էր, — ըսաւ, — գրեթէ ամէնքս ալ գիտէինք որ դէպի պատերազմ
կ'երթանք: Մեկնումէս առաջ այլեւայլ անձնաւորութիւններու մնաք
բարովի այցելութեան գացի: Երբ ուսական դեսպան Պ. Կիրսին ներ-
կայացայ, ան ինծի երկարօրէն խօսեցաւ իմ առաքելութեանս եւ ընդհա-
նուր կացութեան մասին, եւ մասնաւորապէս յանձնարարեց, որ եթէ
թուրք կառավարութիւնը, ճամբու ընթացքին կամ պաշտօնատեղիս հաս-
նել ետք՝ ինձի հրահանգէ ետ վերադառնալ, առանց տեղական հիւպա-
տոսին միջոցով իր կարծիքը հարցնելու՝ տեղէս չշարժիմ: Իսկ եթէ
որեւէ ձեռով վերադառնալու ստիպուիմ, ճամբաս կարելի չափով պէտք
է երկարեմ, եւ կառավարելու կոչուած նահանգներուն համար կարելի
ամէն տեսակ տեղեկութիւններ պէտք է փառեմ, որպէսզի վեց ամիս
վերջ, երբ հաշտութեան բանակցութիւնները սկսին, կարեմամ ընդար-
ձակ տեղեկագիր մը ներկայացնել»:

Երբ Կիրս «վեց ամսուան» խօսք ըրած էր, Հօֆն ալ իր կարգին
կը մտածէր թէ 1914-ի ձմեռը անցընելու համար, չէր արժեր մինչեւ
Նորվեկիա երթալ: Կը մտադրէր Պոլսէն ուղղակի Եգիպտոս անցնիլ, ուր

ազգականուհի մը ունէր: Հոն իր դիւանապետին գրամեքենային վրայ առած նոթերը կարգի դնելու հանգիստ պայմաններ եւ ժամանակ կը յուսար ունենալ: Ինքը ամուրի էր եւ (ամուսնանալու ծրագիրս անգիտանալով) կը կարծեր թէ կարելիութիւն կ'ունենայի իրեն միանալու եւ աջակցելու: Կը յուսար նաեւ որ Եգիպտոսի մէջ դիւրութիւններ կ'ունենար տեսնելու եւ խորհրդակցելու Պօղոս Նուպար փաշային ու անոր գործակիցներուն հետ:

— «Արձակուրդս անցընելու համար Եգիպտոս մեկնելէ առաջ, — ըսաւ, — պէտք է շաբաթ մըն ալ Պոլիս մնամ, եւ քննիչական մարմնոյ նախագահ անգլիացի Բոպլերթ Կրէյվսին հետ տեսակցիմ: Իր ամբողջ կեանքը Թուրքիա անցուցած ըլլալով, ան տեղական պայմաններուն շատ լաւ ծանօթ է»:

Այս կերպով ինծի պարզ կ'ըլլային նաեւ կարգ մը խնդիրներու մասին իր յայտնած տեսակէտները, որոնք Արեւելքի մէջ ապրած օտարականի մը մտայնութիւնը կը յայտնաբերէին: Այսպէս օրինակ, երբ կուսակալներու անուանումի հարցի մասին կը խօսէինք, կ'ըսէր թէ կը մտածէր Վանի համար թուրք մը անուանել, քանի որ քաղաքին մեծամասնութիւնը հայ էր, իսկ Բաղէշի համար ալ՝ հայ մը, քանի որ հոն թուրքերու (իմա՛ իսլամներու) գերակշիռ թիւ մը կար: Կ'երեւի թէ նոյն իսկ այլեւայլ անձերու մասին Կրէյվսին հետ խորհրդակցութիւններ ունեցած էր, եւ այս վերջինը քանի մը անուններ էր տուած՝ իրեն յանձնարարելով անոնց գործունէութեան հետեւիլ, եւ փորձառական կարճ շրջանէ մը ետք կուսակալ անուանել զանոնք:

Այս մեր երկար խօսակցութեանց ընթացքին, երբ ապագայի կարելիութիւններուն կ'անդրադառնայինք, երբեմն մտայն պատկեր մը կու գար ցցուելու մեր աչքին առջեւ: Քանի մը օրէ ի վեր զրկուած էինք նոյնիսկ թրքական գործակալութեան լուրերէն: Փարիզը պաշարուած էր, ինկած էր, թէ Փրանսացիք իրենց սահմաններէն դուրս նետած էին գերմանները, — բանէ մը լուր չունէինք:

*
**

Երրորդ օրը Բաղէշի հարաւային գեղեցիկ բլուրները ձգեցինք: Եկանք հասանք տեղ մը, ուր Հայկական Բարձրաւանդակը վերջ կը գրտնէր: Կարծես սեպածեւ երկու հարիւր մեթր բարձր պատ մըն էր, որուն քովէն, կենդանիներու պախուրցէն բռնած, հազիւ ոտք դնելիք կածաններէ վար կ'իջնէինք, հասնելու համար դէպի Միջագետք առաջնորդող հարթ, անապատային չոր դաշտի մը սկիզբը:

Ուրիշ աշխարհ մը կը մտնէինք կարծես: Առջի օրերու այնքա՛ն լաւ կլիման եւ գեղեցիկ տեսարանները անհետացած էին: Զկային նաեւ նախորդ օրերուն անմահական ջուրերը: Օգոստոսի վերջերն էր, տաքը

սոսկալի, եւ միշտ ծարաւ էինք, բայց 5-6 ժամ վերջը միայն ջուրի հանդիպեցանք, այն ալ գրեթէ անըմպելի, տաք ու պղտոր:

Զիարէթի ճամբուն վրայ, շրջակայ գիւղերէն մեզի այլեւայլ ուտելիքներ բերին, ի միջի այլոց, հնդկահաւեր եւ սագեր, ինչպէս նաեւ խաղող եւ սեխ: Խաղողի շատ մեծ կողովի մը համար երբ 50 փարայ պահանջեցին, օտարները զարմանքով երեսս նայեցան: Իրենք Նորվեկիոյ մէջ քիլօն կէս ոսկիի կը գնէին, իսկ հոս քսան օխան՝ հինգ տասնոց կ'արժէր: Հնդկահաւերը՝ երկու արծաթ դրուշ, իսկ սագերը յիսուն փարայ:

Զիարէթ, Զօխ, Պիսմիլ մեր ճամբու կայանները եղան:

Զօխը, գազայի մը կեղերոն, խեղճ ու կրակ գիւղաքաղաք մըն էր: Հոս կառավարիչը (գայմագամ) մեզ պատուեց ոչխար մը մորթել տալով: Մարգպանին կարգ մը հարցումները կառավարիչը նեղ դրութեան մատնեցին:

Մեր ուշադրութիւնը գրաւեց բանտ կոչուած ախոռէ մը աւելի գէշ եւ աղտոտ տեղ մը, ուր մարդ մը հարց ու փորձ ըրինք եւ տեսանք որ ութ ամիսէ ի վեր բանտն է, մինչ հարցաքննութիւնն իսկ չէ սկսած, եւ ոչ ոք գիտէր թէ ինչո՞ւ այդ մարդը բանտարկելու հրաման էր տրուած: Տեսայ որ բանտարկութեան հրամանագիրն ալ ո'չ օրինաւոր էր, եւ ո'չ ալ տրուած ձեռնհաս պաշտօնեայէ մը:

Հասկնալի է որ կառավարիչը սկսաւ քրտնիլ, բայց քիչ յետոյ հանգստացաւ, որովհետեւ Հօֆ յանձնարարեց ինծի որեւէ դիտողութիւն չընել: Բայց տեսայ որ իր դիւանապետը այս առիթով կարգ մը նոթեր առաւ:

Պիսմիլի մէջ Նորվեկիացիները գետի մը մէջ լողանք առին:

Մինչեւ Տիգրանակերտ արձանագրութեան արժանի որեւէ բան չպատահեցաւ: Արդէն վերջընթեր օրն էր որ հայկական միակ գիւղախումբի մը հանդիպեցանք: Իրարու մօտ էին վեց-եօթ այդ գիւղերը: Հեռուէն իսկ կ'երեւէր որ հայկական աշխատասիրութեան նմոյշներ էին:

Հանգստանալու համար, կէսօրին քանի մը ժամ մնացինք գիւղապետին տունը, որ մեզ պատուեց նաեւ աւանդական ոչխարով եւ համադամներով: Նահապետական տուն մը, ուր ամուսնացած զաւակներ եւ թոռներ միասին կ'ապրէին, ու տանտէրերը եւ դուրսէն եկած մշակն ու աշխատաւորը, նոյն սփռոցներուն շուրջ կը բոլորուէին եւ կը վայելէին Աստուծոյ բարիքները, տան մեծին օրհնութենէն ետք:

Ոչ միայն ինծի, այլեւ մեր բարեկամներուն շատ հաճելի եղաւ այդ ընտանեկան պատուական կեանքը:

Եօթներորդ օրը հասանք Տիգրանակերտ:

Քաղաքէն մէկ-երկու ժամ հեռաւորութեան վրայ, երեսփոխաններ եւ կարգ մը երեւելիներ դիմաւորեցին մեզ: Ընդունելութիւնը լաւ էր: Զինուորական պատիւներ ալ եղան:

Ամենէն շատ մարդպանին շուրջը դարձան երեք թուրք երեսփոխաններ: Ասոնցմէ մէկն էր Բիրիւնչի գառէ Ֆէյզի, երկրորդը՝ Զիւլֆի եւ երրորդը՝ Քեմալի կամ Քեմալ անուանով մէկը, որ կ'երեւի թէ Պոլսոյ մէջ Հօֆին քով շատ եկած-գացած էր, եւ հոս ալ քաղաքէն դուրս ունեցած իր մէկ գեղեցիկ շէնքին մէջ հիւրասիրեց զինք:

Բնականաբար, ինչպէս Անատոլուի բոլոր միւս քաղաքներուն մէջ, հոս ալ պանդոկ անունին արժանի տեղ մը չկար: Եւ նախապէս եղած կարգադրութեան համաձայն, Զիւլֆիին եղբայրը՝ Ատել, քաղաքապետը Տիգրանակերտի, եւ ինծի պաշտօնակից (իբր քրտերէնի դիւանապետ) հիւրասիրեց զիս:

Զիւլֆին աղուէս էր, բայց երբեք չէր հաւասարեր Ֆէյզիին, որուն նկարագիրը մէկ բառով կարելի չէ որակել:

Հայրը արդէն ծանօթ հայասպան մըն էր, Տիգրանակերտի հայկական ջարդերը կազմակերպող գլխաւոր «հերոսներէն» մէկը, որ Սահմանադրութեան վերահաստատութենէն ետք, առաջին երեսփոխանական ժողովին անդամ ընտրուած էր: Իր ընտրութիւնը մերիններուն հետագրական բուռն բողոքին էր տեղի տուած: Կ'ըսէին թէ այդ հետագրին առթած յուզումէն մեռած էր: Տղան իբր երեսփոխան իրեն յաջորդած էր:

Տիգրանակերտ ալ քանի մը օր մնացինք՝ հանգստանալու եւ մեր ճամբորդութեան պատրաստութեանց համար:

Այցելեցի տեղւոյն գեղեցկաշէն հայ եկեղեցին, եւ Առաջնորդ Շուշտակ վարդապետին, որ Այտրնէն ինծի ծանօթ էր: Հոն տեսայ նաեւ քանի մը տեղացի հայեր: Ամէնքն ալ, բարենորոգումներու նոր շրջանի ուրախութիւններէն ետք՝ մեծ յուսախարութեան մէջ կ'ապրէին: Անսահման թախիծ մը պարուրած էր անոնց դէմքերը, մինչ թուրքերունը օրէ օր իրենց հանդէպ աւելի դաժան կը դառնար:

Երեսփոխան Զիւլֆիին տան մէջ, շատ մեծ սրահի մը մեծութեամբ եւ խոր, ջուրի աւազան մը կար, որուն շուրջը կը նստէինք զովանալու համար: Երեք-չորս տարի ետք լսեցի որ այդ աւազանին մէջն է որ թուրք տպագրայ բռնակալը, աղջիկներու եւ պատանիներու ընկերակցութեամբ՝ իր կեանքին ամենէն խենեշ շրջանը ապրած էր:

Տիգրանակերտի տաքը անտանելի էր: Հաստ պարիսպներու մէջ պարփակուած քաղաքը կարծես ուղղակի կ'այրէր: Շուկան, մէկ ծայրէն միւսը փողոց նետուած սելի եւ մանաւանդ խոշոր ձմերուկի կեղեւներու, ազտ ու կեղտի մէջ թաթխուած գարշահոտ ընդարձակ աղբանոց մըն էր: Այդ անպիտան սեւ պարիսպներէն քաղաքը ազատելու համար, կ'ըսէին, կուսակալ մը միայն աշխատած էր եւ ամբողջ տարուան մէջ միայն մէկ-երկու մեթր տեղ կրցած էր քակել տալ, այնքա՛ն հաստ էին եւ հաստատուն շինուած: Այդ պայմաններուն տակ ձեռնարկը անշուշտ լքուած էր:

Վերջին տարիները միայն կարգ մը կալուածատէրներ, քաղաքէն դուրս, այգիներու մէջ տուներ շինել տալու ոյժ տուած էին, իբր

ամարանոց: Ժողովուրդը համոզուած էր որ յառաջիկայ տարիներու ընթացքին պարիսպէն դուրս շինուած տուներու թիւը այնքան պիտի աւելնար, որ Տիգրանակերտի մէջ ալ Այգեստան մը պիտի ստեղծուէր:

Չորրորդ օրը առտուն մեկնեցանք դէպի Սեւերեկ: Ճամբան աւելի կանոնաւոր եւ տանելի էր: Զիբըր լքած էինք եւ կառքով (Խայլը)* կը ճամբորդէինք:

Երեկոյեան, երբ կէս ճամբան հասեր էինք, հորի մը մօտ դաշտի մէջ գիշերեցինք: Վրաններու գետեղումէն ետք եւ դեռ Պրիմի չնստած՝ տեսայ որ Հօֆ խօսելու տրամադրութիւն ունէր: Իր (եւ ընկերներուն) վրայ Բաղէշի մէջ նկատած էի մտահոգ երեւոյթ մը: Այժմ կարծես թէ այդ վիճակը շատ մեղմացած էր: Ենթադրեցի որ Տիգրանակերտի մէջ կարողացած էր պատերազմի ընթացքին մասին ստոյգ տեղեկութիւններ ստանալ: Յայտնեց թէ պատերազմը շատ պիտի երկարէր, եւ մօտիկ ապագային համար իր նախատեսութիւններուն մասին սխալած ըլլալով՝ անոնց վրայ հիմնուած իր ծրագիրներն ալ անիրականանալի դարձած էին:

Երկարօրէն խօսեցաւ նաեւ թուրք պաշտօնէութեան, ղեկավարող իթթիհատական տարրին եւ ժողովուրդին մասին եւ ժպտելով՝ աւելցուց.

— «Մեր առժամեայ ձախորդութիւնը պատճառ եղաւ որ ես աւելի շուտ եւ աւելի լաւ հասկնամ կացութիւնը: Հայերը երբեք չեն չափազանցած: Բայց ի՛նչ կորով եւ դիմադրական ուժ ունին ձերինները, որ դարերու ընթացքին եթէ թիւի համեմատական աճում չեն ունեցած, եւ սակայն չեն լքած, չեն ընկճուած, չեն չքացած, եւ մա՛նաւանդ իրենց ինքնուրոյն յատկութիւնները չեն կորսնցուցած»:

Այս խօսքերը այնպիսի ուժգնութեամբ եւ անկեղծութեան շեշտով մը ըսաւ, որ կուրծքս հպարտութեամբ լեցուեցաւ: Ակամայ ձեռքը բռնեցի եւ ըսի.

— «Հայը իսկապէս պարծանք պիտի զգար, եթէ ձեզի պէս անձնաւորութեան մը վիճակուէր իր նորակերտ ազատութեան հիմը դնել»:

Հետեւեալ օրը հասանք Սեւերեկ: Քաղաքը մեծ աւան մըն էր: Ո՛չ կանոնաւոր շէնքեր եւ ո՛չ ալ փողոցներ: Միայն հարթ գետին եւ հողի գոյն պատեր:

Նահանգին կառավարիչը նոր եկած էր (ինծի ծանօթ էր Եանիս-յէն): Տիգրանակերտի կուսակալին սիմիֆ պաղովութիւնը չունէր: Անգամ մը արդէն Ռումէլիէն վտարուած՝ կեանքի ելեւէջները եւ դժբախտութիւնները ճաշակած, լուրջ եւ խոհեմ անձի մը տպաւորութիւնը կը թողուր:

*) Կառքեր, որոնց մէջ անկողին կարելի է փռել եւ պառկիլ: (Խմբ.)

Հոս ալ ստիպուեցանք մէկ օր մնալ կառքեր գտնելու համար: Կէսօրին, կառավարիչին խնդրանօք, հիւրասիրուեցանք թաղապետութեան նախագահէն, որ Համիտի շրջանի տեղական փաշաներէն աւատապետ մըն էր: Ինչպէս ամէն մարդ, ինքն ալ գիտէր որ ներկայիս օտար ընդհանուր քննիչ մը ալ ո'րեւէ գործ չունէր երկրին մէջ: Շատ-շատ եւրոպացի կարեւոր անձնաւորութիւն մըն էր, եւ սակայն, հին աղուէսի փորձառութեամբ — է՛հ ինչ կ'ըլլայ-չ'ըլլար — յարմար տեսած էր իշխանական ընդունելութիւն մը ընելու, փառաւոր ճաշ մը պատրաստելով: Սեղանին վրայ տասնեւվեց տեսակ կերակուրներ շարուած էին: Լեցուած գառնուկէն եւ հնդկահաւէն սկսեալ մինչեւ խաշած, ստկուած եւ ճերմակը կարմիրով ներկուած հաւկիթի պնակներն ալ մէջը հաշուած:

Հօֆ զարմանքով դիտեց որ կառավարիչը իր քով տեղ առած հիւրերուն եւ իր գաւաթները գինի կը լեցնէր, բայց տանտէրը միշտ ոտքի վրայ, սեղանին շուրջ կը դառնար: Կարծեց որ մոլեռանդութեան հետեւանքով էր այդ: Կառավարիչը բացատրեց որ ընդհակառակն, իր մեծանուն հիւրը անձամբ սպասարկելու համար չէր մասնակցեր սեղանին: Այդ մտայնութիւնը տարօրինակ թուեցաւ Հօֆին, եւ ինչ որ ըսաւ չկրցաւ համոզել տանտէրը որ իր քովը նստէր:

Երկու օր վերջ Եղեսիա (Ուրֆա) հասանք: Հակառակ անոր որ Սեւերեկի կառավարիչը նախապէս հեռագրած էր մեր գալուստի մասին, ոչ ոք դիմաւորեց մեզ:

Մեր ճամբուն վրայ, առաջին անգամ բաւական կանոնաւոր քաղաքի մը կը հանդիպէինք: Կարծես Հալէպի մանրանկարն էր: Արտօնութիւն առնելէ եւ հետեւեալ օրուան համար ժամադրուելէ ետք, գացի քաղաքին լաւագոյն պանդոկը, ուր բաւական մաքուր սենեակ եւ մահճակալ մը գտայ: Ծաշասրահ մըն ալ կար մօտը, ինչպէս նաեւ անուշափաճառ մը, որմէ ճամբան ուտելու համար տուփ մը կարկանդակ գնեցի:

Հետեւեալ օրը քանի մը ժամուան ճամբայ ունէինք՝ Սորուճ եւ անկէ ալ թեւ Ապետ հասնելու համար, ուր վերջապէս պիտի կրնայինք հասնիլ երկաթուղիի գնացքին:

Մեր նորվեկիացի բարեկամները շատ սիրեցին կարկանդակը, եւ ամէն մէկ դադարին այցելեցին իմ կառքս, եւ տուփին յատակը շոտով յայտնուեցաւ:

Ներկայիս ճամբորդութեան միջոցները շատ են, եւ մէկը միւսէն հանգստաւէտ: Բայց այն երանելի օրերուն, իմ տեղս պէտք է ըլլայիք՝ հասկնալու եւ գնահատելու համար այն հաճոյքը զոր զգացի, երբ օրերով ձիու եւ ջորիի վրայ, սայլի ու կառքի մէջ շարժարուելէ ետք՝ յոգնատանջ մարմինս վալկոնի մը թաւապատ բազմոցին վրայ երկարեցաւ:

Հալէպէն մինչեւ Ճարապուս գնացքի ճամբան ինծի ծանօթ էր արդէն: Մէկ ու կէս տարի առաջ Հալէպ եղած միջոցիս, անոր բացումին մասնակցած էի, բայց հիմա էր որ աւելի լաւ կը հասկնայի անոր արժէքը:

*
*
*

Հալէպի կայարանը մեզի հաճելի անակնկալ մը կը սպասէր: Կուսակալը հայերուն շատ սիրելի դարձած ձէլալ պէյն էր, ազնիւ անձ մը: Տիգրանակերտի կուսակալին եւ Ուրֆայի կառավարիչին բոլորովին հակառակը ըլլալով, անձամբ մեզ դիմաւորելու եկած էր, եւ կարգադրած որ վաշտ մը (800 զինուորէ բաղկացեալ) մեզի իշխանական ընդունելութիւն մը ընէր:

Հօֆ իր հետեւորդներով Պարոմ պանդոկը իջեւանեցաւ, ուր տեղի ունեցան նաեւ պաշտօնական ընդունելութիւնները:

Երկու շաբաթէ աւելի արեւին տակ եւ փոշիի մէջ նեղացուցիչ ճամբորդութենէ մը ետք, ուզեցի օգտուիլ չափազանց հանգստաւէտ այդ պանդոկին ի տես նորվեկիացիներուն զգացած անպատում ուրախոթութեան պատճառով լաւ տրամադրութենէն: Փափաքեցայ քանի մը օրո՞ւյ համար — այնքան ատեն որ Հալէպ պիտի մնային — կարճ արձակուրդ մը վայելել: Բացատրեցի իրենց թէ հազիւ տասնվեց ամիս առաջ այդ քաղաքը կ'ապրէի ուր բարեկամներ ունէի, որոնց քով կ'ուզէի մնալ:

Քանի մը օր ես ալ կ'ուզէի բոլորովին մինակ ըլլալ եւ օրուան կացութեան մասին լիակատար տեղեկութիւններ առնել: Պատերազմը մեծ թափով կը շարունակուէր: Հոս առիթը ունէի ուղղակի շփումներ ունենալու բոլոր հոսանքներու ներկայացուցիչներուն հետ:

Մեկնումի համար որոշուած օրէն քսանեւէորս ժամ առաջ, Հօֆ գիս իր մօտ կանչեց եւ ըսաւ, որ այս զինուորական պատիւներով եղած ընդունելութիւնները երկրին կացութեան անհամապատասխան մտայնութիւն մը կը ստեղծէին: Հետեւաբար փափաք յայտնեց որ իրենցմէ առաջ անմիջապէս Պէյրութ մեկնէի, տեսնէի կուսակալը եւ խնդրէի անկէ որ իր մուտքը աննշմար եւ անփայլ անցնէր:

Զարմացայ, բայց առարկութիւն չրրի: Ենթադրեցի սակայն, որ Հալէպի մէջ ալ հիւպատոսարանի մը միջոցով, Պոլսոյ հետ հեռագրային յարաբերութիւն ունեցած էր:

Մեկնեցայ ուրեմն Պէյրութ: Հոն այն ատեն, կուսակալն էր հայերու շատ ծանօթ Պէքրի Սամին: Չէրքէզ մը, որ Եւրոպայի իբր կառավարիչ, եւ ապա Վանի կուսակալ՝ մեր ազգայնոց հանդէպ շատ լաւ վերաբերմունք ունեցած էր: Սիրալիը ընդունելութիւն մը ըրաւ եւ երկար-բարակ հարցումներ ուղղեց մարզպանին մասին:

Տեղեկութիւններ ուզեց նաեւ Վանի իր ծանօթներուն մասին:

Մօտ երկու ժամ տեւող խօսակցութենէն յետոյ անակնկալի եկայ երբ ինծի Պէյրուսի մէջ դատական պաշտօն մը առաջարկեց: Այնքան քաղաքավար էր, եւ իր առաջարկը անկեղծութեան այնպիսի դրոշմ մը ունէր, որ ստիպուեցայ փոխանակ չոր ու ցամաք մերժումի, բացատրել որ մարզպանին մինչեւ Պոլիս ընկերանալու պաշտօնը ունէի, եւ յետոյ միայն կրնայի նոր գործի մասին խորհիլ*:

Գնդապետ Հօֆին Պէյրուս հասնելը, իր փափաքին համաձայն, գրեթէ աննշար անցաւ: Պէյրուս Սամին մինակը եկած էր կայարան: Մինակ ինքն էր նորէն մինչեւ քարափ մեզի ընկերացողը, երբ երկու օր վերջ Աւստրիական «Լոյտ» ի մէկ շոգենաւով ճամբայ ելանք դէպի Պոլիս:

Մովը հանդարտ էր եւ ճամբորդութիւնը հաճելի: Կէսօրէն առաջ եւ ետքը օրը երկու անգամ պրիմ կը խաղայինք:

Հոս իբր երկրի բարքերու պատկեր, լուսթեամբ չեմ ուզեր անցնիլ պատահարի մը վրայէն, որ այդ ճամբորդութեան ընթացքին տեղի ունեցաւ:

Հօֆին մօտ կը ծառայէր մօտ տասնեւութ տարեկան սպասաւոր պատանի մը, զոր իրենք կրում կը կոչէին: Տղան միշտ իր տիրոջ անձնական ծառայութիւնը անխօս կերպով կը կատարէր. սենեակը, անկողինը, հագուստները եւ կօշիկները կը մաքրէր, ճերմակեղէնը կը լուար, կ'արդուկէր (իսկ միւսները այդ ամէնը իրենք կ'ընէին, ի մեծ զարմանք մեր Սանոսեան բարեկամին, որուն խելքը չէր ընդուներ, որ ամիսը հարիւր յիսուն հնչուն ոսկի առնող դիւանապետ մը ճերմակեղէնը մոմլաթէ տաշտի մը մէջ ինք լուար եւ արդուկէր):

Առաջին կարգի ճամբորդներուն մէջ կը գտնուէր թաւ, խարտեաչ, ներկուած պելսով 55-60 տարեկան մարդ մը, Համիտի շրջանէն գնդապետ մը, զոր իթթիհատական կառավարութիւնը ճամբած էր, եւ այժմ որպէս թէ առեւտրական գործով Պէյրուս եկած էր, եւ կը վերադառնար Պոլիս:

*) Ջարմանալի գուգադիպութեամբ, մօտ Ռիգ տարի յետոյ ինծի վիճակուեցաւ, Հ.Յ. Դաշնակցութեան մարմնի որոշումով՝ զինքը եւ իր երկու ընկերները, իբր Չերքէզներու ներկայացուցիչ ընդունիլ «Մակատամարտ»ի վերի յարկը, ուր ընկեր Յ. Ամատունի եւ եւ ժամերով մտիկ ըրինք Սեբաստիոյ Աստուծոյ Ազիզիէի մէջ եւ շուրջը բնակող բազմաթիւ շերքէզներու համար իրենց կարգ մը խնդրանքը: Նոյնպիսի եւ ատիկ զարմանալի գուգադիպութեամբ, ատիկ մէկ ու կէս տարի ետք, զինքը տեսայ իտալական դեսպանատունը՝ Պոլիս: Ինքը Մուսթաֆա Քէմալի Աորաստեղծ կառավարութեան արտաքին գործոց նախարար դարձած՝ եկեր էր Ռոմ բանակցելու դեսպան կոմս Սֆորցայի հետ, երբ մեզ ալ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ Յ. Թախթաճեանի հետ գացեր էինք Գէորգ Ե. վշտալի կաթողիկոսին կողմէ՝ Իտալիոյ թագաւորին ձօնուած գեղափոխ մէկ կոնգրակը յանձնելու: Այն օրերուն խօսք կար, որ Հայաստանի մասնաւոր Իտալիոյ յանձնուէր...:

Օր մը կրումը, իր պետին սենեակը եւ անկողինը կարգի դնելու ժամանակ մարդը կը մօտենայ, կը սկսի անտեղի շօշափումներ ընել, եւ գրպանէն 1-2 ոսկի հանելով տղուն կը ցուցնէ:

Նորվեկիացին նախ բան չի հասկնար: Յետոյ սակայն, որքան ալ այդ բարքերուն անտեղեակ՝ երբ դիմացինին շարժումները շատ պերճախօս կը դառնան, գնդապետին կուրծքին հարուած մը կու տայ: Հեւհեւ սրահ եկաւ, բարկութենէն կաս-կարմիր կտրած: Ամբողջ մարմնով դողդղալով՝ նորվեկերէն բաներ մը ըսաւ:

Բանի մը բառով Հօֆ ինծի պատմեց եղելութիւնը, եւ ըսաւ որ դէպք մը ստեղծել չէր ուզեր: Միայն թէ կը փափաքէր որ երթայի եւ այդ մարդուն երկու խօսք ըսէի:

Բապիմներու մօտ նաև սպասաւորին հարցուցի թէ ո՞ր էր այդ մարդը, կ'ուզեմ տեսնել զինքը. պատասխանեց թէ պէյը ըսեր էր իրեն, որ օտարներու քով շատ կը ճանճրանար, եւ քիչ առաջ իր իրերը երկրորդ կարգը փոխադրել տուած էր:

Ասիկա երբ պատմեցի Հօֆին ըսաւ. — «Ալ պէտք չկայ զինքը հոն երթալ փնտռելու»: Եւ խնդիրը փակուեցաւ:

Բանի մը օր ետք, երբ մեր նաւը Հոռոզու կղզիին առջեւ խարիսխ նետեց, հրահանգ ստացաւ, փոխանակ Պոլիս երթալու՝ ուղղակի Իզմիր ուղղուիլ: Թուրք կառավարութիւնը արգիլած էր Տարտանելի անցքը:

Երբ Իզմիր ելանք, Նորվեկիացիները երկաթուղիով Մարմարայի վրայ նաւահանգիստ եղող Պանտրմա մեկնեցան, ուրկէ չորս-հինգ ժամէն նաւով մը Պոլիս կրնային հասնիլ: Իսկ ես (որ քանի մը օր ծննդավայրս կ'ուզէի այցելել) բաժնուեցայ իրենցմէ՝ չորս օր վերջ Պոլսոյ մէջ իրենց միանալու խոստումով:

Բայց երբ Պոլիս հասայ, ի զուր փնտռեցի զիրենք: Հօֆ իր հետեւորդներով վեց ամսուան արձակուրդ առած էր, եւ ժամ առաջ հեռացած թրքական հողէն:

Աւելորդ է ըսել, թէ այլևս չտեսայ զանոնք:

Գրպանս նամակ մը ունէի Վանի կուսակալէն, ներքին գործոց նախարար Թալէաթին ուղղուած: Հետեւալ օրն իսկ գացի անոր ներկայանալու: Այլանացի դռնապան մը լուր տուաւ: Իրուր բացուելուն պէս խօսակցութեան ձայն մը լսեցի: Պուկար դեսպանն էր: Զիս քովի սրահը տասը ըոպէ սպասցուցին:

Երբ ներկայացայ, տեսայ խոշոր փորով, թուխ դէմքով, 45-50 տարեկանի երեւոյթով մարդ մը, որ ձեռքէս նամակը առաւ եւ ուշադրութեամբ կարդաց: Յետոյ աչքերը վեր վերցնելով եւ քահ-քահ մը փրցնելով ըսաւ.

- «Ինչպէ՞ս, բարենորոգումները ըրի՞ք, լմնցուցի՞ք»:
- «Ձեր վսեմութեան շնորհիւ», — պատասխանեցի:



Մատթեոս Էպիդարթեան, Պոլիս, Վանէն վերադարձին (1914):

Թուիս դէմքը կարծես սեւցաւ եւ չափազանց լուրջ հանգամանք մը առաւ: Կարծեցի որ մեծ կափ մը ըրած եղայ:

— «Նստեցէ՛ք, — ըսաւ՝ սեղանին դէմը թիկնաթոռ մը ցոյց տալով եւ աւելցուց. — Թահսին պէյը կը գրէ որ դուք խելացի երիտասարդ մըն էք: Կը տեսնեմ որ ճիշդ է: Հիմա որ բարենորոգումներու հարց չկայ, դուք անգործ պիտի մնաք: Ո՞ւր կ'ուզէք որ ձեզի պաշտօն մը տանք»:

— «Հրաչեայ էֆենտիի (Աբրահամեան) հրատարումով Վանի շրջանի քաղաքային քննիչի պաշտօնը թափուր է. գոհ կ'ըլլայի եթէ հոն վերադառնայի», — ըսի:

Դէմքը նորէն կծկուեցաւ, բայց մերժումին պատճառը առանց բացատրելու ըսաւ.

— «Հիմա որ քաթիլիւսիոնները ջնջեցինք, Բերայի ընդհանուր դատախազութիւնը շատ նուրբ հանգամանք մը առաւ: Ի՞նչ կ'ըսես: Կ'ուզե՞ս, որ դատական նախարարին խօսիմ»:

Այս պաշտօնը բնականաբար շատ փայլուն էր, եւ ամենէն դժուարահաճ դատաւորն ալ կրնար շլացնել: Բայց ես պաշտօնի հետամուտ էի որոշ նպատակով մը, իսկ Բերայի օտար շրջանակներուն հետ շփումի մէջ ըլլալ եւ աշխարհիկ կեանքի մը վայելքները ունենալ՝ ինծի համար ոչ մէկ արժէք ունէր: Միշտ աչքիս առջեւն էր իմ Վանի տան դրան ետին մեկնումի պահուն Արամին եւ Իշխանին մէկ-մէկ ձեռքս բռնելնին, «շուտ շուտ վերադարձիր, քեզի կը սպասեմք» ըսելնին:

Հետեւաբար, առարկելով որ տունս-տեղս եղածին պէս հոն ձգած եմ, նորէն պնդեցի որ զիս նախկին պաշտօնատեղիս դրկեն: Մինչեւ այդ ժամանակ չէի հաւատար Իշխանին պնդումներուն, որ մարդիկ զիս քաղաքավար կերպով անկից հեռացուցեր էին:

— «Հիմա գացէք, կը մտածենք, բան մը կ'ըլլայ», — պատասխանեց Թալէաթ:

Դուրս ելլելէս վերջ գացի մօտերը գտնուող սրճարան մը: Իմ սովորական կլկլակա* ապսպրեցի, եւ անոր ծուխին ոլորտներուն մէջ երկար ու խոր մտածումներու մէջ թաղուեցայ: Եւ հետզհետէ ինծի աւելի յստակ երեւցաւ այն անդամանելի սխալը, զոր գործեր էի Վանէն հեռանալով:

*) Մատթեոս Մ. Էպիդարթեանի համար կլկլակը շատ անլի բան մըն էր քան ծխելու պարզ հաճոյքը: Անոր կանոնատր եւ յարատե գործածութիւնը (իր պարագային՝ օրը 3-էն 5 անգամ, յիսուն տարի շարունակ) առիթը կը ստեղծէր առանձնանալու եւ անբնական խօսակցութիւններուն եւ պատասխաններուն, մտածելու եւ իր պատասխանը կամ որոշումը պատրաստելու: Ամէն պարագային՝ այս հիմնարկումներով է որ կը ջանար համոզել իր զաւակները, որպէսզի անոնք ալ կլկլակին... բարիքներէն օգտուին: Եւ կ'ազդարարէր — «չըլլայ որ սիկատէ գործածէք, որ ջղային կը դարձնէ, եւ ձեզ կը մղէ անմիջական հակադարձութիւններ ունենալու»: (Խմբ.)

Գ. ՄԱՍ

ՄԵԾ ԵՂԵՌՆԷՆ ՅԵՏՈՅ

«1918-ին Պոլիս թափած էին մերկ
եւ բոկոտն հայ գաղթականներու բազմու-
թիւններ, նաեւ լեռներէ, ձորերէ, թրքական
տուներէ ու որբանոցներէ հաւաքուած բազ-
մահազար որբեր»:

«Ի պատիւ պոլսահայութեան պէտք
է յայտարարել, որ այդ պատմական վայրկե-
անին՝ պատշաճ բարձրութեան վրայ գլու-
նընցաւ ան, եւ իր սիրտն ու քսակը լայն
բացաւ դժբախտներուն փրկութեան հա-
մար»:

1.- ԹՐՔԱԿԱՆ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Մատթեոս Մ. Էպլիդաթեան 1915-ի Հայկական Ցեղասպանութեան վերապրած գաղթականներու եւ որբերու օգնութեան համագայիմ կազմակերպումիմ պատմականը, անոր աշխատանքի ընթացքը, եւ ստացուած արդիւնքներուն մանրամասն ու առարկայական նկարագրութիւնը հանրութեան սեփականութիւնը դարձուցած է առանձին հատորով մը, որ լոյս տեսաւ 1920 թուականիմ, Պոլսոյ մէջ:

«ԱԶԳԱՅԻՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆ — ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ — ԱՌԱՋԻՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ» խորագիրը կրող այդ հատորը կը պարունակէ նաեւ բազմաթիւ վիճակագրական տուեալներ, անուաններու ցանկեր եւ հաշուական տախտակներ:

Շնորհիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի նախաձեռնութեան՝ վերոյիշեալ տեղեկագիրը վերահրատարակուեցաւ Հայկական Ցեղասպանութեան 70-ամեակիմ առիթով (28 Մայիս 1986, Անթիլիաս-Լիբանան), լուսապատճէնի դրութեամբ, ուղղակի վերարտադրելով առաջին տպագրութիւնը:

Ազգայիմ այդ մեծ իրագործումիմ մասնակից եւ ակամատես հեղինակը, հետեւեալ էջերում մէջ կը փոխանցէ առաւելապէս իր անձնական տպաւորութիւններն ու դատումները, եւ այդ տարիներում տիրող մթնոլորտը (1919-1921):

(Խմբ.)

1918-ի ամրան օրերն էին: Պոլիս, օր ցերեկով, թշնամիին երկու օդանաւերը այցելեցին միայն, բայց ժողովուրդին խուճապը կարելի չէր նկարագրել: Տարտանէլի պատերազմի ամենասաստիկ օրերուն իսկ, երբ գիշերանց Ռումէլիի երկաթուղիով հազարաւոր վիրաւորներ կը փոխադրուէին, մարդիկ թշնամիին մօտիկութեան ու պարտութեան հաւանական արհաւիրքէն այնքան չէին ազդուած, որքան օդին մէջ սաւառնող այդ մեծ թռչուններէն:

Ղալաթիոյ կողմը կը գտնուէի եւ Մեծ Կղզի պիտի երթայի: Բազմաթիւ ուրիշներու պէս ես ալ վազէ-վազ հասայ կամուրջ, եւ ինքզինքս նետեցի նաւին մէջ: Հոն արդէն ապաստան գտած էին ամէն ազգի կղզեցի ծանօթներ, եւ ամէն ոք լսածն ու տեսածը կը պատմէր:

Խուլ որոտումի նման ձայն մը եւ օդին մէջ թռիչքի մը աղմուկը շքեցուց ամէնքս: Սրահէն դուրս նետուեցանք: Ըսին որ օդանաւ մը Ղալաթիայէն Պէշիկթաշ գացող ճամբուն վրան ոտմը մը նետած էր, եւ բնականաբար մարդկային կորուստը եւ փլած տուներու քանակը, պատմողին երեւակայութեան հետ ուղիղ համեմատութեամբ կ'աւելնային:

Այդ շփոթ կացութեան մէջ լսեցինք երկրորդ օդանաւին կամուրջի կողմը ուղղուիլը: Խուճապը գազաթնակէտին հասաւ: Պայքար մը սկսաւ վարէն դէպի վերնայարկը ձգուող սանդուխին վրայ: Վերջինները վարը կ'ուզէին ապաստանիլ, իսկ վարը գտնուողներն ալ կ'ըսէին թէ բաց օդին մէջ ըլլալը նախամեծար էր, գոնէ կը տեսնէիր թէ ի՞նչ կ'ըլլար:

Առաջին օդային ուժակոծումն էր, եւ ժողովուրդը դեռ ոչ մէկ փորձառութիւն ունէր: Այս «վար իջնենք» եւ «վեր ելլենք» ընթացքին, վաթսուն տարեկանի մօտ անձ մը պոռաց — «Ո՛վ Աստուած իմ, ի՞նչ է այս մեր բաշածը: Եթէ պարտուած եմք, ինչ գնով կ'ուզէ թո՛ղ ըլլայ, պէտք է հաշտութիւն կնքուի, եւ ազատիմք այս փորձանքէն»:

Ուրիշ ժամանակ այդ պարտուողական խօսքերը անշուշտ չափազանց սուղ պիտի արժէին ենթակային: Բայց շրջապատի մտայնութիւնը այնպիսի կացութիւն մը ստեղծած էր, որ ամէնուն շատ բնական թուեցան անոնք, եւ ամէն ոք գլխով կամ լեզուով հաւանութիւն յայտնեց:

Ճիշդ այդ պահուն շատ մօտէն լսեցինք ահուելի ձայն մը: Թշնամին իր երկրորդ ուղմբը արձակած էր: Ըսին թէ շատ մօտ ինկած էր, հաւանաբար Ղալաթիոյ վրայ: Յայտնապէս կամուրջն էր թիրախը:

Խուճապը աւելցաւ եւ ամէն ոք իր պաղարիւնը կորսնցուց: Նաւին մէջ գտնուողները որոշ կերպով երկու խումբի բաժնուեցան: Մէկ մասը պաշարեց նաւապետը՝ ստիպելու համար զայն որ անմիջապէս շարժման մէջ դնէ նաւը, եւ կամուրջի վտանգաւոր շրջանէն վայրկեան առաջ դուրս հանէ: Իսկ երկրորդ խումբը կ'ուզէր որ կեցած տեղերնիս մնայինք, այն առարկութեամբ որ բաց ծովին մէջ ումբակոծուիլը շատ աւելի վտանգաւոր հետեւանքներ կրնար ունենալ մեզի համար:

Այս վիճաբանութեան ընթացքին երկու օդանաւերը հեռացան Մարմարայի ուղղութեամբ: Ժողովուրդը հանդարտեցաւ, եւ նաւն ալ որոշեալ ժամուն ճամբայ ելաւ դէպի Մեծ Կղզի:

Մեծ սրահին յարակից մէկ-երկու պատիկ խուցեր կային թուրք կիներու յատուկ: Եւ եթէ անոնք պարապ ըլլային, հաճելի էր հոն տեղ մը ունենալ: Բախտը այնպէս բերաւ որ այդ սրահներէն մէկուն մէջ քով-քովի նստած ըլլամ այն անձին հետ, որ յուզուած վայրկեանի մը մէջ իր մտածածը դուրս էր տուած՝ օր առաջ պատերազմին դադրիլը խնդրելով:

Կը ճանչնայի զայն: Լսած էի թէ Տրապիզոնի նախկին տէֆթերտարն էր (կուսակալութեան ելեւմտական տնօրէնը), եւ թէ հայերու տարագրութենէն ետք՝ լքեալ գոյքերու յանձնաժողովին իրբեւ նախազա՛հ՝ իր շահատակութիւնները այն աստիճանի հասցուցած էր որ կառավարութիւնը զինք պաշտօնանկ ըրած էր: Անշուշտ, հասկնալի է որ իր յանցանքը հայերու գոյքին կողոպուտը չէր, այլ գողօնին մեծագոյն մասը իրեն համար վար դնելը, քանի առիւծին քով անօթի շատ գայլեր կային...: Պաշտօնանկութիւնը սակայն շատ ուշ եկած էր: Ինքը արդէն այնքան յղփացած էր որ այլեւս պէտք չէր տեսներ որոշ գոհողութեամբ մը անցուկը-մոռցուկ ընելու, եւ նոր պաշտօնի մը հետամուտ ըլլալու: Առ այժմ Մեծ Կղզիին մէջ կը հանգստանար...:

Ակնարկելով իր ըսածներուն եւ իր ողջմտութիւնը գովելով՝ քանի մը խօսք գլխորեցի, եւ մարդը սկսաւ խօսիլ: Առ հասարակ մեզի՝ քրիստոնեաներու անծանօթ եղող կամ շփոթ կերպով արձագանգող լուրերու իր տալրակը բացաւ, եւ շատ յստակ կերպով պարզեց թուրքիոյ այդ օրուան կացութիւնը: Ռուսերը նախապէս հասած էին մինչեւ Սեբաստիոյ մօտերը: Թէեւ ցարական կառավարութեան անկումը մեծ շունչ մը առնել տուած էր թուրքերուն, բայց ապագան տակաւին մռայլ էր:

— «Ալէքսիս միշտ կը յառաջանայ, — կ'ըսէր, — եւ թուրք զինուորը բարոյալքուած է: Կեդրոնը կը տեսնես թէ ի՞նչ վիճակի մէջ է: Այս պայմաններուն տակ անխիղճ վերաբերմունք է ժողովուրդին հանդէպ,

երբ մեծերը, անձնական շահերու կորուստի ի գին՝ չեն ուզեր խաղաղութիւն կնքել:

Հարցուցի.

— «Ներկայիս, հաշտութեան մը պայմանները շատ ծանր պիտի ըլլա՞ն»:

— «Ինչո՞ւ ծանր պիտի ըլլան, — ըսաւ, — արարները մեզմէ պիտի զատուի՞ն եղեր, հայ Ալլահ բագի օլսուլմ (թող Աստուած բարեհաճի). արդէն ի՞նչ տեսած ունինք փ... Փեյլահներէն: Արեւելքի կողմէն հողամաս մը ուսերը՞ պիտի առնեն եղեր. թո՛ղ առնեն էֆէնտիմ, ի՞նչ կ'ըլլայ: Ես, իբր ելեւմտից տնօրէն, գիտեմ թէ պետութիւնը որքան վնասի մէջ է այդ նահանգներու պիտոճէին բացը գոցելու համար: Մեր կեդրոնի նահանգներն իսկ բաւական խիտ բնակչութիւն չունին: Ահազին տարածութիւններ անմշակ կը մնան: Մեզմէ բաժնուելիք նահանգներու թուրք ժողովուրդը, բնականաբար՝ ինչպէս Ռումէլիի եւ Պալքաններու մէջ եղաւ, պիտի լքէ նորահաստատ կառավարութեանց հողը, եւ պիտի գաղթէ իր ազգակիցներու իշխանութեան տակ եղող մասը: Այնպէս որ թուրքը միշտ թուրքին քով, թուրքի տիրապետութեան տակ պիտի ապրի: Ալ ի՞նչ կ'ուզենք. ինչպէս որ առիմֆ, այնպէս ալ կու տանք»:

— «Շատ լաւ: Բայց Պոլիսը ի՞նչ պիտի ըլլայ»:

— «էֆէնտի՛, աշխարհ կործանի, Պոլսոյ համար ո՛րեւէ վտանգ չկայ»:

— «Ինչո՞ւ համար»:

— «Բանի գոյութիւն ունին ուս եւ անգլիական կառավարութիւնները, մէկուն Պոլսոյ տիրանալու փափաքը միւսը միշտ պիտի չէզոքացնէ: Անգլիացիները ո՞ր պիտի գտնեն մեզմէ աւելի լաւ պահպաններ...»:

Մեծ Կղզիին արդէն մօտեցեր էինք: Նաւը երբ իր ճամբորդները ցամաք հանեց, տեսայ որ մեր ծերուկը օրուան յուզումները լայնօրէն բացատրեց սովորականէն աւելի թիւով հոն հաւաքուած բազմութեան:

Այդ օրերուն ամենուն ջիղերու տկարութիւնը ծայր աստիճանի հասած էր: Երկրին վիճակը մխիթարական ոչինչ ունէր: Եւ սակայն իթթիհատականներ, իրենց վարպետները եղող գերմանացիներէն օգտուած էին, գո՛նէ պոռոտախօսութեան եւ փրփականտի մարզերուն մէջ: Թերթերը լեցուն էին ուսական կեանքի տարօրինակութիւններով, եւ կարծես այնպէս մը հաւատացնել կ'ուզէին որ մեծ արջին բզկտուիլը իրենց յաղթանակին արդիւնքն էր. կարգ մը մոլեռանդներ դարձեալ կը խօսէին կիրքի աղջիկներու գեղեցկութենէն...:

Պոլսոյ քրիստոնեայ տարրը սակայն, գիտնալով որ մեծ եւ հաճելի ակնկալութիւններու նախօրեակին կը գտնուէր, անհամբերութեամբ կը սպասէր պատերազմի վերջաւորութեան:

Մասնաւորաբար մենք, հայերս, ամէն ազգէ աւելի պատճառներ ունէինք անհամբերութեամբ սպասելու գո՛նէ զինադադարի մը լուրին:

Նախ՝ հայութեան ահագին բազմութիւններ տարագրուած էին, եւ անոնց մասին մէկը միւսէն աւելի տխուր տեղեկութիւններ կու գային: Բոլորը, բնականաբար կ'ուզէին օր առաջ իրագեկ ըլլալ իրենց սիրելիներու կացութեան: Խեղճերը դեռ չէին գիտեր, որ դառնագոյն իրականութիւնը կը գլխը կ'անցնէր իրենց լսածին եւ երեւակայութեան բոլոր սահմանները: Եւ յետոյ, շրջապատին մէջ չափազանց զգուշաւոր շշուկներ կային, որոնք կարծես թէ դարերու երագին իրականացումը կ'աւետէին:

Շատ սեղմ, շատ մտերիմ շրջանակի մէջ իմացած էի որ Կովկասի մէջ մերինները արդէն անկախութիւն հռչակած են: Մեծ Կղզի բարեկամ մը ունէի, պատուական մարդ մը եւ սրտացաւ հայ մը, Լեւոն Տէմիր-ճիպաշեան, Օսմանեան «Հանրային Պարտքի Վարչութեան» գլխաւոր հաշուապահը: Օր մը երբ կղզիի շոգենաւին վրայ բացօթեայ անկիւն մը նստած էինք, կամացուկ մը ականջիս փսփոսաց թէ հայ կառավարութեան ներկայացուցիչներ եկած էին, իբր բանագնաց: Լուրին աղբիւրը հարցուցի: Ըսաւ թէ Տիգրան Զաւէնէն լսած է. իսկ այս վերջինը՝ իբր լրագրող պետական հսկողութեամբ հրատարակուած Փրանսերէն թերթի մը, առիթ ունեցեր էր այլեւայլ օտար թերթեր տեսնելու եւ լուրեր ստանալու:

Քանի մը օր ետք արդէն Ա. Ահարոնեանի անունն ալ լսեցինք: Այլ կասկած չէր մնար որ հայկական իշխանութիւն մը գոյութիւն ունէր:

Տակաւին չէինք գիտեր թէ նորաստեղծ Հայաստանի սահմանները ի՞նչ էին: Թուրք պաշտօնական զեկուցումները Կովկասի ճակատի մասին յստակ տեղեկութիւններ չէին տար: Վերջէն միայն իմացանք այն պատմական ճակատամարտներուն մասին, որոնք Հայաստանի մը գոյութիւնը ապահոված էին: Յայտնի էր սակայն որ այլեւս հայրենիք մը ունէինք, հայ անունով եւ հայերով կառավարուած:

1914-1918-ի պատերազմի ընթացքին թրքահայոց հանդէպ գործուած սպանդը եւ ատկէ մագապուրծ ազատուողներուն տառապանքը որքան ալ ահաւոր եւ անօրինակ եղած ըլլային, անոնց յաջորդող ազատ եւ անկախ Հայաստանի իրականութեան առթած յոյզերն ալ, նոյն համեմատութեամբ՝ մեր սրտերը անպատու ուրախութեամբ լեցուցին:

*
**

Վերջապէս հասաւ զինադադարի օրը: Ստորագրուեցաւ Մուստրոսի զինադադարի պայմանագիրը (30 Հոկտեմբեր 1918):

Դեռ զինուորի տառատակին տակն էի, երբ թուրք բարեկամ մը լուրը բերաւ: Զինքը հետաքրքրողը այդ պայմանագրին թուրքերոյ

պարտադրուած զոհողութիւնները չէին, այլ թէ կառավարութիւնը ո՞ր անձերէն պիտի կազմուէր:

Իմ հարցումիս պատասխանելով ըսաւ.
— «Եթէ իթթիհատականները գործի գլուխ դան, ներքին խռովութիւնը նոյնքան ծանր պիտի ազդէ թուրքին, որքան պատերազմը»:

Պոլսոյ մէջ ամէն մարդ լսած էր որ իթթիհատի կեդրոնին մէջ էնվեր եւ Թալէաթ իրարու հակադրուած են: Սակայն չէինք գիտեր որ իթթիհատը ստիպուած էր նկատի առնել նաեւ արտաքին երկու ուղղութեամբ զարգացող հակադրութիւն մը, որ պատերազմի վերջին ամիսներուն աւելի շեշտուած կերպ ու ձեւ էր ստացած: Մէկ գիծը կ'երթար նոր գահակալ Վահտէթտինի ուղղութեամբ. իսկ միւսը՝ բանակի երիտասարդ պետերէն Մուսթաֆա Քէմալի: Այս երկուքին հակառակութիւնը Գերմանիա միասին ճամբորդութենէ վերադարձին աւելի շեշտուած էր, եւ կողմերը վերջնական կերպով ձեւաւորուած էին: Երկուքն ալ հակա-իթթիհատական էին:

Բնականաբար Մուսթանին զօրավիզ պիտի ըլլային բոլոր անոնք, որ շոգենաւին մէջ ինծի խօսող պաշտօնատարին պէս կը մտածէին: Անոնք կազմակերպուած ուժ մը չէին: Արդէն կազմակերպուելու պէտք ալ չկար. թուրք ժողովուրդի բացարձակ մեծամասնութիւնը կրօնամոլ էր եւ յետադիմական, ցեղին առհաւեայ կիրքերուն անսացող, ջարդի եւ կողոպուտի պատրաստ, միշտ վերէն՝ Մուսթանէն եկած հրահանգներուն ենթակայ:

Միւս ուղղութիւնը ինծի համար նորութիւն էր: Գիտէի որ էնվերի եւ Մուսթաֆա Քէմալի միջեւ հակառակութիւն մը կար: Ատիկա շեշտուած էր մանաւանդ Թրիբունի թուրք-իտալական պատերազմի միջոցին, եւ ամէն առթիւ մէկն ու միւսը չէին քաշուեր զիրար բամբասելէ: Սակայն էնվեր, իր ամենագոր եղած միջոցին իսկ չէր կրցած հակառակորդը մէջտեղէն վերցնել, պարզ այն պատճառով որ Քէմալի քաջ զինուորականի համբաւը բանակին մէջ աւելի ուժեղ էր, քան իրեն հանդէպ տածուած զգացումը: Աւելի կազմակերպուած հակառակութիւն մը սակայն ծնունդ առած էր այն օրէն երբ Մուսթաֆա Քէմալ, պատերազմի վախճանին՝ չէր գոհացած գերմաններու քաղաքականութեան մասին ունեցած իր կարծիքը յայտնելով անմիջական գործակիցներուն միայն, այլ Հէյպէլիի մէջ, իր ճաշ-խմիչքի հրաւերին առիթով բազմաթիւ զինուորական եւ ոչ-զինուորական հրաւիրեալներուն բացատրած էր իր հիմնական տեսակէտները, երկիրը վերջնական կործանումէ մը փրկելու համար:

Վերոյիշեալ թուրք բարեկամս, հակառակ ջերմ իթթիհատական մը ըլլալուն, գնահատելով հանդերձ Մուսթաֆա Քէմալի առաջադրած կարգ մը միջոցառումները, սարսափով եւ նողկանքով կը յիշէր այն միտքը որ կ'երթար մինչեւ խալիֆայութեան ջնջուիլը: Կրօնքով իսլամ

մնալով հանդերձ Մարգարէի փոխանորդութեան մէջ կողմ նետուիլը թէ՛ անտրամաբանական, եւ թէ՛ ուժի աւելորդ վատնում կը նկատէր:

Եւ այսպէս, Սուլթանական (յետադիմական), Իթթիհատական եւ Քէմալական ուղղութիւններու բախումը շատ մեծ վախ կ'ազդէր բարեկամիս, որ կը կարծէր թէ իշխանութեան գլուխ գալիք հակառակորդները, իրենց աթոռները պահելու եւ անհատական կիրքերուն գոհացում տալու համար ստիպուած պիտի ըլլային թշնամիին ի նպաստ յաւելեալ զոհողութիւններ կատարելու: Բայց երբ իմացաւ թէ ներքին գործոց նախարար պիտի ըլլայ Ֆէթհի պէյը (Սոֆիայի նախկին թուրք դեսպանը), լայն շունչ մը առաւ: Ֆէթհին թէեւ անձնական հակառակորդ եւ մրցակից էր Թալէաթին եւ էնվերին, բայց Իթթիհատական մըն էր, եւ հայրենասէր մը: Ուստի բարեկամս չէր վախնար որ անիկա այդ երկու դեկավարները յանձնէր թշնամի անգլիացիներուն:

Իսկապէս իր ենթադրութիւնը ճիշդ ելաւ, եւ այդ անիծեալները առաջին օրերուն շփոթ վիճակէն օգտուելով կրցան հեռանալ Պոլսէն եւ ազատիլ, ոչ թէ անգլիացիներու ձեռքէն՝ որոնք շատ-շատ կղզիի մը մէջ պիտի խնամէին զանոնք, մինչեւ այն օրը երբ իրենցմէ օգուտ մը քաղելու ժամանակը հասնէր — այլ մանաւանդ թուրք հակառակորդներու ձեռքէն, որոնք մաքրելիք հաշիւներ ունէին իրենց հետ:

Նպատակ չունիմ հոս գինադարարի անցուղարձերուն պատմութիւնը ներկայացնելու: Պատերազմին առթած նեղութիւնները եւ տառապանքը զիս քսան քիլոյով նրբացուցած էին: Հետեւաբար քաշուեցայ Մեծ Կղզի, ուր տոկտ. Խնդիրեանի յանձնարարութեամբ պատերազմի շրջանին փոխադրած էի հիւանդ եղբայրս: Հոն, կատարեալ հանդարտութեան մէջ քանի մը ամիս հանգստացայ: Երբեմն կը տեսնէի դրացի Տիգրան Զաւէնը որ ազգային հերոս մը դարձած էր, եւ հակաթուրք գործունէութեան շամբիռնը կը հանդիսանար իր թերթով:

Չուզեցի մասնակցիլ քրիստոնեայ պաշտօնեաներու այն յանձնախումբին, որոնք պատերազմի շրջանին կառավարութեան կողմէ իրենց պաշտօնէն արձակուած ըլլալով՝ այժմ հատուցում եւ պաշտօն կ'ուզէին: Ա՛լ հաստատ միտքս դրած էի ո՛րեւէ թուրք կառավարութեան տակ չաշխատելու:

Այսպէս, երբ 1919 Յունուարի սկիզբները դատական նախարարէն հեռագիր մը ստացայ Բաղէշի Վերաքննիչ Ատեանի ընդհանուր դատախազի պաշտօնին առաջարկով՝ անմիջապէս մերժեցի (ինչ որ այն օրերու թերթերն ալ գրեցին): Մերժեցի նաեւ հետզհետէ ինձի առաջարկուած Սկիւտարի կառավարիչի, ապա Իզմիրի (յոյներու կողմէ գրաւուածէն առաջ) կուսակալին օգնականի պաշտօնները:

Սակայն կը վարանէի նաեւ անմիջապէս Հայաստան* մեկնելու,

*) Մատթեոս Մ. Էպիղաթեան կ'ակնարկէ այն հրաւերին, որ իրեն ուղղուած էր Առաստեղծ Հայաստանի հանրապետութեան մէջ դատական արդիական վարչութիւն մը կազմակերպելու առաջարկով: (Խմբ)

որովհետեւ հիւանդ եղբայր եւ մայր ունէի, նոր ամուսնացած էի եւ քանի մը ամիսէն հայր պիտի ըլլայի: Հետեւաբար առ այժմ անոնցմէ բաժնուիլը շատ դժուար էր: Ատեն մը մտածեցի փաստաբանական գրասենեակ մը բանալ, բայց այդ ծրագիրն ալ խորթ երեւցաւ: Երբ թուրք պետութեան դատաւորը կը մերժես ըլլալ, ալ ինչպէ՞ս թուրք դատաւորին առջեւ կրնաս դատ պաշտպանել:

Այսօր նման մտածելակերպ մը հաւանաբար շատ զգացական թուի: Սակայն անհրաժեշտ է նկատի առնել որ մենք պատերազմի տարիներու ընթացքին շատ քիչ լսած էինք հայկական տեղափոխութեան տառապանքներու եւ ջարդերու մասին: Հիմա որ կարելիութիւն կար զանոնք լրիւ իմանալու եւ գիտնալու, ամէն օր նոր ոճիրներու եւ աննախընթաց թրջական շահատակութիւններու գոյժ մը կ'աւելնար մեր սրտամորմոք ցաւերուն վրայ: Այո՛, այդ օրերուն մեր մէջ կ'ամրապնդուէր շատ դառն զգացում մը, որ առհասարակ թուրք եւ թրքական անունը մեզ կը պատճառէր: Դեռ բաւական ժամանակ չէր անցած, մեր վերքերը դեռ բաց էին եւ թարախոտ...:

Ամէն բանէ առաջ, այժմ ամէն ընտանիք իր մարդահամարով գրադած էր: Քաղաքներ եւ գիւղեր, շրջաններ եւ նահանգներ պարպուած էին հայերէ: Միայն Պոլիս քաղաքի, Իզմիրի կուսակալութեան, եւ Կուտինա (Քէօքահեա) քաղաքի հայերը տեղահանութեան չէին ենթարկուած: Պոլիսը ամբողջովին հայերէն պարպելով չէին յանդգնած եւրոպացիներու աչքին առջեւ իրենց վայրագութեան փաստը տալ: Ներքին գաւառներու մասին ինչ գէշ բան որ լսուէր, կարելի էր հերքել, բայց նոյնը դիւրաւ կարելի պիտի չըլլար ընել Պոլսոյ համար: Ուստի գոհացած էին մասնակի գործողութիւններով, ձեռքակալելով մտաւորական ընտրանին, մեծ մասամբ Դաշնակցական, եւ բոլոր այն պանդուխտ հայերը, որոնք տրուած վայրկեանի մը մէջ վտանգաւոր կրնային ըլլալ: Կեանքերնուն մէջ երբեք զինուոր չեղած հայերը, մինչեւ 45 տարեկանները զինուորագրելով՝ արդէն փաստօրէն հայ մարդ չէին ձգած հրապարակը, քանի որ հայերու զինուորագրութիւնն ալ մասնաւոր պայմաններու կ'ենթարկուէր...:

Իզմիրի կուսակալը, Ռաիմի պէյ, զօրաւոր անհատականութեան տէր անձնաւորութիւն մըն էր: Թալէաթ գայն Իզմիր նշանակած էր իրմէ հեռու պահելու համար ազդեցիկ մրցորդ մը: Ռահմի պէյ չէր ուզած վտարել Իզմիրի կուսակալութեան մէջ գտնուող բոլոր հայերը: Հայ Առաջնորդին գործակցութեամբ, անիկա գոհացած էր հազարի մօտ դժբախտ հայրենակիցներ միայն տեղահան ընելով: Իզմիրի համար վտանգը աւելի յոյներուն կողմէ կու գար, իսկ յոյները չքանալէ ետք՝ գո՛նէ հայերը հոն պէտք է մնային, որպէսզի քաղաքը կարենար ապրիլ...:

Իսկ Քէօթահիոյ պարագան բոլորովին բացառիկ էր: Կառավարիչը, Ֆայիդ Ալի, որ տիրահռչակ բանաստեղծ Սիւլէյման Նազիֆի եղբայրն էր, իր մտաւորական մարդու արժանիքին կը միացնէր նաեւ

ազնիւ սիրտ մը, եւ փորձառու վարիչի մը յատկութիւնները: Անիկա երիցս պնդած էր Թալէաթին որ հայերը իր շրջանէն չարտաքուսին: Անձնապէս երաշխաւոր եղած էր որ հայերը Քէօթահիոյ մէջ անկարող են ո՛րեւէ կերպով վնասակար ըլլալու: Հակառակ պարագային, կը սպառնար հրաժարիլ, քանի արհեստաւորներէ զուրկ քաղաքին կեանքը տնտեսապէս շատ պիտի տուժէր, եւ տարիներով ետ պիտի երթար:

Այսպէս՝ ամէն ընտանիք փնտռուէր մէջ էր եւ մնացորդացին մէջ եռուզեռ մը կար: Շատեր կը տեղափոխուէին: Իրենց ծննդավայրը վերադառնալու անկարող գաղթական հայերը — նոյնիսկ անոնք որ ժամանակի ընթացքին յաջողած էին իրենց ապրուստը ճարել — կը լքէին պատերազմի տարիներուն իրենց գտնուած վայրերը: Գրեթէ ամբողջ հայ ժողովուրդը շարժումի մէջ էր, քացի Իզմիրէն եւ Պոլիսէն:

Բնականաբար, յարաշարժ բեկորներուն մեծ մասը Պոլսոյ ուղղութեամբ կ'ուզէր յառաջանալ: Մայրաքաղաքը միշտ մեծ կեդրոնն էր թրքահայութեան: Անգամ մը որ Պոլիս հասնէին, կը յուսային ազգային եւ ընտանեկան իրենց վիճակը աւելի յստակօրէն տեսնել: Հոն պիտի կարենային աւելի շուտ եւ ստոյգ տեղեկութիւն առնել իրենց քաղաքակիցներուն ու ազգականներուն մասին, եւ մա՛նաւանդ պիտի կարենային ճշդել թէ ո՛ւր պիտի վերահաստատուէին եւ իրենց նոր բոյները շինէին:

Մեծ էր թիւը նաեւ անոնց որոնք կ'ուզէին Հայաստան հաստատուիլ, բայց փոխանցուած հատուկտոր տեղեկութիւնները այդ ուղղութեամբ քաջալերական չէին: Այսպէս՝ կ'ըսուէր թէ հոն սահմանները չափազանց նեղ են, թէ ժողովուրդը երկար պատերազմէն քամուած՝ տակաւին անօթութեան եւ տեսակ-տեսակ հիւանդութեանց ենթակայ է, թէ ռուսական ներքին խռովութիւնները կը շարունակուին: Վերջապէս, Հայաստան հասնելու փոխադրական միջոցներու դժուարութիւններն ալ տակաւին մշուշոտ երազի մը հեռանկարին մէջ կը գետեղէին հայրենիքը:

Կար նաեւ ուրիշ կարեւոր պարագայ մը: Աքսորէ վերադարձող հայերը ուրիշ սահմաններով Հայաստան մը կը փափաքէին ունենալ — Հայաստան մը որ պարփակէր նա՛եւ այն հողամասը, որուն ազատագրման համար կէս դարէ աւելի գործնական աշխատանք տարուած էր, եւ հայրենակիցներու լաւագոյն զաւակները զոհաբերած էին իրենց կեանքերը:



2.- ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եւ այսպէս, Պոլիս հասնողները իրենց ուզած վայրը անմիջապէս մեկնելու անկարող՝ հոն կը մնային: Պատերազմի շրջանին Թալէաթի կառավարութիւնը ջնջած էր հայոց Ազգային Սահմանադրութիւնը, եւ իր հասկցած ձեւով կանոնադիր մը պատրաստած էր: Իր կողմէ հաստատուած կարգ մը վստահելի հայեր, խամաճիկ կրօնականի մը գործակցութեամբ՝ իբր թէ ազգին ներքին գործերը կը վարէին: Զինադադարը ինքնաբերաբար լուծած էր այդ մարմինը, եւ նոր պայմաններու եւ նոր պահանջներու համապատասխան կազմակերպութիւններ յառաջացնելու, սահմանադրական կարգերը վերահաստատելու եւ անոնց գլուխը ազգընտիր պատրիարքը բերելու պահանջը հրամայական կը դառնար:

Թուրք «բարեացակամ» կառավարութիւնը ընդհանուր կամ մասնակի ջարդերէ ազատուողները լքած էր այլեւայլ վատառողջ վայրերու մէջ, որպէսզի կամաց-կամաց անոնք ալ ոչնչանային հիւանդութիւններու (մանաւանդ մալարիայի) եւ անսուսողութեան հետեւանքով: Բնականաբար, պատերազմը դադրելուն պէս անոնց առաջին գործը պիտի ըլլար վայրկեան առաջ հեռանալ այդ աղետաբեր վայրերէն:

Թուրք պետական ղեկավար պաշտօնեաներն ալ կարծես կքած, ճզմուած էին պարտութեան պարտադրած ծանր կացութեան տակ: Ոմանք կը հասկնային պարտութեան ամբողջական իմաստը. կային եւ այնպիսիներ, որոնք դեռ չէին հասկցած կամ չէին ուզեր մարսել: Միշտ վերէն եկած հրամանին կուրօրէն ենթակայ՝ անոնք չէին ուզեր, չէին կրնար հասկնալ, թէ ի՛նչպէս կ'ըլլայ որ երէկուան հայերը, կեանքովուրները, մէկ օրէն միւսը գլուխ կը ցցէին, մեկնիլ կ'ուզէին, եւ սեփական փափաքի կամ կամքի արտայայտութիւններ կ'ունենային:

Զինադադարի չորրորդ յօդուածը կը հրամայէր թուրքերուն իրենց ծննդավայրը վերադարձնել բոլոր տեղահանուած բազմութիւնները: Պետականօրէն ասիկա ահագին գործ էր. պէտք էր խորհիլ, միջոցներ ձեռք առնել, ամէն տեղ պաշտօնէութիւն եւ յանձնախումբեր կազմել: Նոյնիսկ բնական պայմաններու տակ, նման գործի մը կազմակերպութեան շնորհը միշտ պակասած էր թուրքերուն: Կար վերջապէս

աւելի ծանրակշիռ պարագայ մը: Թուրքերը գիտէին որ տարագրուած հայերէն շատերը արդէն ոչնչացած էին, իսկ ազատուողներն ալ եթէ վերադառնային, պիտի պահանջէին իրենց սեփական գոյքը, ստացուածքը: Մինչդեռ թուրք կառավարութիւնն ու ժողովուրդը զանոնք վերջնականօրէն սեփականացուցած էին:

Սակայն յաղթական պետութեանց բարի տրամադրութիւնները չահելու համար թուրք կառավարութիւնը՝ առանց մտածելու իսկ թէ տրուած հրահանգները գործադրելի՞ են թէ ոչ՝ շրջաբերական-հրահանգով մը կը պատուիրէր իրենց նախկին բնակավայրերը վերադարձնել բոլոր տեղահանուածներն ու աքսորեալները, եւ այդ ընել լաւագոյն պայմաններու տակ:

Այս կերպով, ամենէն առաջ Գոնեայի մէջ գտնուող հայերը եւ մերձակայ երկաթուղիին մօտ վայրերու ժողովուրդը սկսաւ խուժել դէպի կայարանները: Կեդրոնը Գոնեայի կայարանն էր, որ ամէն օր մաս մը գաղթականներ կը հասնէին, եւ ուր կարճ ժամանակի մէջ մեծ բազմութիւն մը կը կեդրոնանար: Պատերազմի շրջանին իսկ ածուխի պակասէն կամ այլ քէմիք պատճառներով կանոնաւոր գործունէութիւն չունեցող երկաթուղիի վարչութիւնը շէնք էր, եւ չէր գիտեր թէ գլուխը ո՞ր քարին զարնէր:

Գոնեայի մէջ տեղացի եւ աքսորական քանի մը սրտցաւ հայեր կը միանան, եւ ո՛վ հրաշք, բողոքականն ու կաթողիկէն կը մոռնան կրօնական տարբերութիւնները, եւ ազգային գետնի վրայ Յանձնախումբ մը կը կազմեն: Յանձնախումբը անմիջապէս կը սկսի նպաստահաւաքի գործին, որուն կը միանայ նաեւ կրօնական թէ աշխարհական՝ կարգ մը ազնիւ հայ եւ օտար անձերու մասնաւոր աշխատանքը:

Քանի օրերը կ'անցնին, Գոնեայի Յանձնախումբին նիւթական պահանջները կ'աւելնան, քանի ամէն օր նոր գաղթականներ կու գային, իսկ մեկնողներու թիւը միշտ սահմանափակ կը մնար: Կը դիմեն Իզմիր եւ Պոլիս, եւ իրերօգնութեան տարերային աշխատանք մը կը սկսի: Չէ՞ որ հայը նեղութեան եւ տառապանքի մէջ գտնուող իր ազգակիցներուն հանդէպ միշտ ալ եղած է սրտաբուխօրէն աջակից:

Ղալաթիա միշտ եղած է ծովի ճամբով Պոլիս եկող հայերուն առաջին հանգրուանը: Յամաքի ճամբով՝ երկաթուղիով եկողներուն մէկ մասն ալ, եթէ դիմացը՝ Ղալաթիա չեն անցած, մնացած են Հայտար Փաշա եւ Գատը Գիւղ:

Ժրաջան Յանձնախումբը կրցած էր Ղալաթիոյ Ս. Փրկիչ եկեղեցւոյ շրջափակին մէջ (նաեւ Կեդրոնական Վարժարանը) մաս մը գաղթականներ պատսպարել, եւ զինուորական իշխանութեան կողմէ գրաւուած ուսական վանքը ձեռք անցնելով, բազմաթիւ հայ գաղթականներ ալ հոն գետեղել:

Գատը Գիւղի վարժարանը գտնուող գաղթականներն ալ հետզհետէ Հայտար Փաշայի կայարանին մօտ հաստատուած մեծ կայանը կեդրոնացուեցան:

Մարմարայի ծովեզերեայ շրջանները՝ Կէմլէյիկ, Մուտանիա, Պանտրմա, նաեւ Պրուսայի եւ Նիկոմիդիոյ շրջակայ գիւղերու ժողովուրդը, կարճ ժամանակ մը պատսպարելէ ետք, հետզհետէ կարելի եղաւ իրենց ծննդավայրը վերադարձնել:

Բայց հետզհետէ Պոլիս հասնող, եւ անմիջապէս իրենց քաղաքը կամ գիւղը դրկել կարելի չեղող ահագին բազմութիւնները պատսպարելու համար պէտք եղաւ նաեւ Սամաթիա, Օրթագիւղ եւ այլ տեղեր եւ կայաններ հաստատել:

Այսպէս, մէկ կողմէ եկող եւ միւս կողմէն մեկնող բազմահազար ազգայինները ընդունելու, պատսպարելու, տեղաւորելու եւ առաքելու համար, ամէն մէկ կայանի մէջ, տեղական յանձնախումբերէն զատ, անհրաժեշտութիւնը զգացուեցաւ կազմելու նաեւ Կեդրոնական Մարմին մը, որուն զբաղման գլխաւոր առանցքը պիտի ըլլար՝ ա) նպաստահաւաքել, բ) զայն մատակարարել, գ) տեղաւորման եւ առաքման գործը կատարել եւ կանոնաւորել, եւ դ) գաղթականներու մէջ առողջապահական պայմաններու իրագործման սատարել:

*
**

Վերադարձող գաղթականներուն մէջ կային նաեւ մեծ թիւով որբեր: Տեղահանութեան միջոցին, մինչեւ իրենց համար սահմանուած տեղերը հասնելը, այրերէն շատերը — անոնք որ իբր զինուոր ամէլէ քապուրիներու մէջ չէին առնուած տարիքի անյարմարութեան կամ այլ պատճառներով, իրենց ընտանիքներէն պոկուելով ջարդուած էին թուրքերուն կողմէ, եւ կամ անսուաղութեան եւ այլեւայլ պատճառներով մահացած էին: Իսկ դեռ զինուորական տարիքը չունեցող կարգ մը պատանիներ, եւ աւելի պզտիկ տարիք ունեցող տղաք, յանձնուած էին փափաքողներուն: Ոմանք ալ, նուազ բախտաւորները՝ ջարդուած էին: Կարգ մը մայրեր միայն յաջողած էին դրամի ուժով, եւ կամ այլ պարագաներու բերմամբ՝ ազատել իրենց հոգեհատորները:

Առաջին հերթին ուրեմն անհրաժեշտ էր որոշ կարգադրութիւններ ընել գաղթականներու մէջ անոնց համար, որոնք ա) հօրմէ եւ մօրմէ զուրկ էին, եւ բ) այն պզտիկներուն համար, որոնք միայն մայր եւ մօտ ազգականներ ունէին:

Պոլսոյ կեդրոնը օգնութեան գործը երկու ուղղութեամբ կազմակերպեց, եւ առաջին հերթին կազմեց երկու յանձնախումբեր, «Տարագրելոց» եւ «Որբախնամ»:

Տարագրելոց Յանձնախումբը կը մատակարարէր գաղթական-
յանները: Իսկ Որբախնամ Յանձնախումբը կը զբաղէր թաղերու մէջ
հիմնուած, եւ կամ անձնուէր թաղեցիներու ջանքերով հաստատուած
որբանոցներու հսկողութեամբ եւ մատակարարութեամբ, ինչպէս նաեւ
նպաստահաւաքի գործով: Եւ որպէսզի խաչածեւումներ չպատահին, իր
հաւաքած դրամին քսան առ հարիւրը կը յատկացնէր գաղթականներուն
(Տարագրելոցի միջոցով):

Յետոյ կար ուրիշ ստիպողական եւ շատ կարեւոր հարց մը: Հայ
չափահաս տղոցմէ ոմանք յանձնուած էին թուրք ընտանիքներու: Ասոնք
ալ պէտք էր ազատել: Ահագին գործ, որուն համար կարեւոր նիւթական
միջոցներ անհրաժեշտ էին: Ի պատիւ վերապրող հայութեան՝ պէտք է
ըսել որ ան ըրաւ իր կարելին:

Պոլսոյ մէջ յաղթական պետութեանց դիմում եղաւ, եւ անոնց
աջակցութիւնը խնդրուեցաւ ազատելու համար այն որբերը որոնք թուրք
ընտանիքներու եւ թուրք որբանոցներու մէջ կը գտնուէին: Եւ հայ
քահանաները յաղթականներու աջակցութեամբ լծուեցան որբահաւաքի
գործին:

Գաղթականներու մէջ գտնուող որբերը եւ նոր եկողները կը
գետեղուէին հետզհետէ հաստատուող Արնաւուտ Գիւղի, Բերայի,
Կէտիք Փաշայի, Նարլը Գաբուի, Պոյաճի Գիւղի, Պէշիք Թաշի,
Սկիւտարի, Պալաթի, Օրթա Գիւղի, Գատը Գիւղի, Մաքրի Գիւղի, Խաս
Գիւղի որբանոցներուն մէջ: Ուրիշներ կը պատասպարուէին դպրոցասէր
Տիկնանց, Անարատ Գերձ եւ Սամաթիոյ Ս. Աննա գիշերօթիկ վարժա-
րաններուն, Գալֆայեան եւ Գարակէօզեան որբանոցներուն մէջ:

**Յ.- ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԸ
«ԱԶԳԱՅԻՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ» ՍՏԵՂԾՈՒՄԸ**

Ճիշդ է որ Պոլսոյ բոլոր թաղերուն մէջ — հոն ուր համախումբ
հայութիւն կ'ապրէր — ստեղծուած զանազան կազմակերպութիւնները
իրենց կարելին կ'ընէին, բայց ծով կարիք կար: Ամէն օր, ալիք առ ալիք
գաւառներէ տեղահանուած եւ երկրին հարաւային շրջանները աքսոր-
ուած վերապրող հայեր կը շարունակէին խուժել Պոլիս եւ մօտակայ
ծովեզերեայ շրջանները: Անոնց հոգատարութիւնը հետզհետէ աւելի
դժուար դարձաւ: Նոյնպէս նպաստահաւաքի խաչածեւումները, եւ
մա'նաւանդ տեղական եւ Համաձայնական իշխանութեանց մօտ
նիւթական եւ բարոյական աջակցութիւն խնդրելու առաջադրանքով
տարբեր (եւ բազմաթիւ) անձերու ներկայացուցչութիւնը մեծ
անպատեհութիւններ ստեղծած էր:

Որով անխուսափելի կը դառնար աշխատանքները մէկ ուղղու-
թեամբ եւ որոշ ծրագրի վրայ կեդրոնացնելու հրամայականը:

Վերջապէս որբերու եւ տարագիրներու անջատ կազմակերպու-
թիւնները միացան, եւ կազմուեցաւ «ԱԶԳԱՅԻՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ»
թիւնը, որպէս կեդրոնական եւ համազգային հաստատութիւն:

Ազգային Խնամատարութիւնը սակայն իր կազմաւորութեան մէջ
սխալ մը գործեց, եւրոպական ըմբռնումով իր վարչական կազմին մէջ
լիազօր պատուիրակի պաշտօն մը ստեղծելով: Այդ լիազօր պատուիրակը
ա) վարչական ժողովի որոշումներուն գործադրութեան պիտի հսկէր.
բ) պաշտօնեաները պիտի անուանէր. գ) ընթացիկ գործերը պիտի
վարէր, եւ մա'նաւանդ դ) յարաբերութիւններ պիտի պահէր:

Ինքնազուլտ պաշտօնեաներ անուանելու հարցը, մանաւանդ այդ
համազգային մեծագոյն կազմակերպութեան մէջ, կարգ մը անպա-
տեհութիւններու ծնունդ տուաւ: Իսկ տրուած որոշումներու գոր-
ծադրութեան հսկելու եւ ընթացիկ գործերը վարելու համար, ամբողջ
օրը աթոռի մը վրայ զամուած, աշխատանքէ յօգնիլ չգիտցող մարդ մը
պէտք էր. մինչդեռ վարչութեան անդամներէն ընտրուած անձը, թէեւ
ազնիւ եւ կարող երիտասարդ մը, ունէր նաեւ իր երկրաչափի սեփական
գրասենեակը եւ գործը, ինչ որ արգելք կ'ըլլար միշտ ներկայ գտնուելու
եկող-գացող, եւ մանաւանդ օտար անձնաւորութիւններու այցելու-
թեան միջոցին: Այցելուները քիչ մը սպասելէ ետք կը մեկնէին:

Ազգային Խնամատարութիւնը տեսակ մը կեդրոն դարձած էր:
Տարբերային մղումով մը ամէն հայ, այր կամ կին, եւ նոյնիսկ չափահաս
պատանի, հոն կը դիմէր: Այդ բոլոր դիմողները պատասխանատու գլուխ
մը չգտնելով, թիւրիմացութիւններու եւ յուսախաբումի կը մատ-
նըլէին: Նոյնիսկ օտար անձնաւորութիւնները յայտնած էին որ հայերը,
իրենց անձնական գործերուն մէջ ճարպիկ եւ ձեռնհաս՝ գրեթէ իր
բախտին ձգած էին այդքան կարեւոր գործ մը:

Ահա այդ օրերուն (1919-ի, Ապրիլ ամսոյ վերջերը), Մեծ Կղզիի
մէջ ընդունեցի այցելութիւնը մեր դրացի Լեւոն Տէմիրճիպաշեանին:

— «Է՛, ի՞նչպէս էք, ինքզինքնիդ բաւական հանգստացած կը
զգա՞ք» հարցուց:

— «Այո՛, — պատասխանեցի, — եւ արդէն գործի կամ գործերու
մասին կը մտածեմ»:

Իրեն պատմեցի թուրք կառավարութեան զանազան առաջարկ-
ները, եւ մերժելու պատճառները: Նոյնպէս՝ թէ ինչո՞ւ կը վարանէի
փաստաբանի գրասենեակ մը բանալու:

— «Ես, — ըսաւ, — աւելի լաւ բան մը ունիմ ձեզի առաջարկելիք:
Թէեւ նիւթապէս մեծ օգուտ պիտի չքաղէք, բայց ներկայ պարագա-
ներուն մէջ, երբ ազգը իր պատրաստուած զաւակներուն մեծ մասը
կորսնցուցած է, երբ ամէն ժամանակ աւելի պէտք ունի անոնց
աջակցութեան, մենք ամէնքս ալ պարտաւոր ենք մեր կարելին իսկ

աւելին ընելու, խմբուելով, գործակցելով եւ բազմապատկելով մեր ջանքերը: Վէրքերը այնքա՛ն շատ են, եւ դարմանումը այնքա՛ն դժուար է...»:

Եւ երկարօրէն բացատրեց որբերու եւ վերադարձող գաղթականներու համար ազգային շրջանակի անցուղարձերը: Իբր նորակազմ Ազգային Խնամատարութեան Ընդհանուր Ժողովի անդամ, թուեց այն դժուարութիւնները, որոնց դէմ-յանդիման եկած էին: Մանաւանդ կարող եւ նուիրուած ղեկավարի մը պակասին վրայ ծանրացաւ:

Զինքը ուշադրութեամբ մտիկ ընելէ ետք, տեսայ որ առաջարկը սրտիս շատ մօտ էր, եւ սկզբունքով հաւանութիւն յայտնեցի: Որոշեցիք որ նախ Խնամատարութեան Վարչական Ժողովին անդամակցիմ, եւ յետոյ, գործին մօտէն տեղեակ ըլլալէ ետք միայն, եթէ յարմար գտնեմ, ստանձնեմ գայն ղեկավարելու պաշտօնը:

Այդպէս ալ եղաւ: Հրաժարած անդամի մը տեղ հրաւիրուեցայ, եւ մէկ-երկու ժողովի ալ ներկայ գտնուեցայ:

Ինչպէս արդէն բացատրեցի, այդ մեծ գործը անգլուխ խոշոր մարմին մըն էր: Շարքեր անգամ մը գումարուող վարչական ժողով մը կու տար որոշումներ, որոնց գործադրութեան հսկող գրեթէ չկար, որովհետեւ լիազօր պատուիրակն ալ, եթէ նոյնիսկ ամէն օր հանդիպէր պաշտօնատեղին, հազիւ մէկ ժամ կրնար մնալ հոն, եւ այդ ալ անհրաժեշտ այցելութիւնները ընդունելով կ'անցընէր:

Սակայն ամենէն մտահոգիչը հաստատութեան նիւթական կացութիւնն էր: Առաջին թափով հաւաքուած դրամը հատնելու վրայ էր, եւ ամփոջակամ մեծ գումարի մը անհրաժեշտութիւնը կար: Օրուայ հացի եւ սնունդի սպասողներու թիւը հարիւրաւոր չէր, այլ հազարաւոր: Եւ կրնաք երեւակայել թէ ի՛նչ դառն վիճակ մը ստեղծուած էր Պոլսոյ մէջ:

Մօտէն քննելով ամէն ինչ, առանց բառերը ծամծմելու արտա-յայտուեցայ 1919-ի Յունիսի առաջին կէսին գումարուած այն ժողովին մէջ, որուն օրակարգին կարեւորութեան համար Զաւէն Պատրիարքը եւ Բաղաքական Ժողովի ատենապետ տուկտ. Դաւիթեանն ալ հրաւիրուած էին:

Իմ երկար բացատրութիւններէս ետք պահ մը լուռութիւն տիրեց. յետոյ, Վարչութեան Ժողովի դեր-ատենապետ Եղուարդ Շիրինեանը ոտքի ելաւ: Նախ Պատրիարքին եւ տուկտ. Դաւիթեանի հետ քանի մը վայրկեան խօսելէ ետք, պզտիկ փսփսուք մը ունեցաւ նաեւ ատենապետ Նուրիճեանի եւ անդամներուն հետ, ապա դառնալով ինծի, եւ յանուն ներկաներուն՝ առաջարկեց որ ընդունիմ Ազգային Խնամատարութեան Ընդհանուր Տնօրէնի պաշտօնը:

Սպասելի էր որ Խնամատարութեան նիւթական կացութիւնը աւելի ծանրանար, եթէ անմիջական դրամական միջոցներ չստեղծուէին: Գանձապահ Սարգիս Գարակէօզեան կ'ըսէր, թէ հազիւ 3-4 շաբաթ կարելի էր դիմանալ: Եւ ես առանց այդ վիճակին իրական պատաս-

խանատուն ըլլալու, հանրութեան մօտ քաւութեան նոխազ պիտի ըլլայի: Ոչ ոք, իր ներկայութեան՝ վարչական պատուիրակին ըսաւ թէ իր գործը վերջ գտած էր: Ես ալ չհարցուցի թէ իմ պաշտօնիս սահմանները ի՞նչ պիտի ըլլային: Միայն խոստացայ առժամապէս, տասնեւհինգ օրուան համար ընդունիլ այդ պաշտօնը, եւ վերջը ազատ ըլլալ՝ գայն շարունակելու համար կամ ո՛չ:

Ամէնուն դէմքը զուարթ երեւոյթ մը առաւ, կարծես մեծ բեռէ մը ազատած էին...:

Հետեւեալ առտու Մեծ Կղզիի առաջին շոգենաւն առնելով՝ ուղղակի գացի Ազգային Խնամատարութեան (Բերա, Ասմալը Մէսճիտ փողոց) պաշտօնատեղին: Զորս-հինգ յարկանի, Կիւմիւլեան կտակով ազգապատկան եղած այդ շէնքը առժամաբար ազգին յանձնուած էր, վարձակալ Ֆրանսացի պանդոկապետին բացակայութեանը: Իր երկրորդ յարկի մեծագոյն սրահը, ուր ընդհանուր եւ վարչական ժողովները կը գումարուէին, միեւնոյն ժամանակ հիւրասրահ էր, նաեւ վարչական պատուիրակին գործատեղին: Հոն գացի նստայ եւ սկսայ գործի:

Ամենէն առաջ, իբր ժողովական ինծի նախապէս ծանօթ քանի մը պաշտօնեաներէ գատ, ծանօթացայ նաեւ մնացեալներուն: Տասնեւհինգ-քսանի մօտ անձեր, որոնց սակայն ո՛չ մէկուն պաշտօնի հանգամանքը վերջնական կերպով ճշդուած էր: Ամէն մէկը իրեն յանձնուած ո՛րեւէ գործ կ'ընէր: Ոմանք նախկին Տարագրելոց մարմինի կողմէն պաշտօնի կոշուած էին, ոմանք ալ Որբախնամէն եկած էին: Իսկ Ազգային Խնամատարութեան կազմութեանէն ասդին, վարչական պատուիրակն ալ իր կողմէն քանի մը քարտուղար նշանակած էր:

Առաջին հերթին, բնականաբար, չէի կրնար ասոր կամ անոր օձիքէն բռնել եւ ըսել — «Դուն հոս գործ չունիս»: Ոչ ալ կրնայի այսինչը կամ այնինչը պաշտօնի կոչել: Արդէն Պոլսահայ կեանքին մէջ իրապէս նոր կը մտնէի: Դիտեցի բան մը, որ շատ բնական էր: Այսինքն՝ Տարագրելոցէն եկողները կը զբաղէին առաւելապէս տարագիրներու, եւ Որբախնամէն եկողներն ալ՝ որբերու գործերով: Բայց անոնց մէջ պետի եւ ստորադասի հանգամանքները յստակօրէն ճշդուած չէին:

Այս ամէնուն քննութեան հազիւ կարելի եղաւ քառօրէ ժամ տրամադրել: Սրահին դրան առջեւ կեցող սենեկապանը ըսաւ թէ մօտ քսան հոգի կարգով կը սպասեն միջանցքին մէջ, եւ զիս տեսնել կ'ուզեն: Եւ իսկապէս, այցելուներու շարանը սկսաւ: Մէկը եկած էր որբ մը զետեղելու համար: Միւսը տարագիր մըն էր, որ տեղ մը երթալ կը փափաքէր: Մէկը տեղեկութիւն մը կ'ուզէր, միւսը որբանոցի մը խնամակալներէն էր, եւ խնդրանք մը ունէր: Ուրիշ մը ազգային որբէ գործի համար տեղեկութիւն կը պահանջէր: Եւ այսպէս, մէկը միւսին ետեւէն, այցելուները իրարու կը յաջորդէին: Ուրեմն, ամէն բանէ առաջ եւ արագօրէն անհրաժեշտ էր ներքին կազմակերպութեան սկսիլ:

Ճաշի յատկացուած մէկ ժամէն ետք, երբ կը յուսայի թէ բազմութիւնը պիտի քիչնար, հակառակը պատահեցաւ: Ժամը չորսի ատենները արդէն թեթեւ տաքութիւն մը եկաւ վրաս: Սեղանիս առջեւ, ոտքի վրայ սկսայ ընդունիլ այցելուները: Հեռախօսը շատ անգամ ձեռքս, մէյ մը հեռուէն խօսողներուն հետ կը կապուէի եւ մէյ մըն ալ դէմս կեցողին հետ:

Իսկ Վարչական Ժողովի խնամակալութեան անդամներուն եւ օտար այցելուներուն շարանն ալ երեկոյեան սկսաւ: Մինչեւ ժամը 9-ը աշխատատեղիս գամուած մնացի:

Թեթեւ ընթրիքէ մը ետք, ըստ սովորութեանս սրճարանի մը մէջ, կլկլակը ձեռքս, սկսայ մտածել: Օրը սպառիչ էր, տաքութիւնս դեռ չէր անցած: Վախցայ որ պատերազմի տարիներուն զիս տառապեցնող ջերմը* դարձեալ զիս պիտի զգեսնէր: Բայց միւս կողմէ՝ մէջս եռանդը, աշխատելու փափաքը կ'եռար: Գիտէի որ ստանձնած գործս շատ ծանր էր, բայց այդ բեռան տակ չէի կրնար կքիլ:

Կամաց-կամաց կլկլակի ծուխը բարերար հանդարտութիւն մը բերաւ գրգռուած եւ յոգնած ջիղերուս: Պաղարիւնով սկսայ մտածել եւ եկայ հետեւեալ եզրակացութեան. — նախ, գործերը իրարմէ անջատել եւ աշխատանքի բաժանում կատարել. այսինքն՝ դիւանները կազմել, եւ ամէն մէկ պաշտօնեային ընելիք գործը որոշել: Այս կերպով ինքս աւելի ժամանակ կրնայի ունենալ հիմնական եւ կարեւորագոյն աշխատանքին համար: Այդ գործը լրացնելէ ետք, զբաղիլ դրամական եւ տնտեսական կացութեամբ:

Դիւաններու կազմութիւնը, ներկայ պարագաներուն մէջ շատ դիւրին էր եւ բնականօրէն ճշդուած. այն է՝ ա) Տարագիրներու, բ) Որբերու, գ) Թղթակցութեան, դ) Հաշուապահութեան, ե) Որբահաւաքի: Անոնց գործերուն համար չէնքին մէջ մէյ-մէկ սրահ յատկացնելը հետեւեալ առտու առաջին գործս եղաւ. իսկ առժամեայ կարգադրութեամբ մը, ճշդեցի նաեւ պաշտօնեաներն ու պետերը:

Բնականաբար, տնտեսական գործերը նոյն դիւրութեամբ չէին կրնար կարգադրուիլ:

Երեկոյեան տեսակցեցայ գանձապահ Ս. Գարակէօզեանի հետ, որ սրտցաւ ազգային մըն էր: Այս 2-3 ժամ խօսակցութեան ընթացքին, հաստատութեան նիւթական կացութեան կատարելապէս տեղեկացայ:

Հետեւեալ երեկոյ Չաւէն Պատրիարքին այցելեցի: Մէկ ժամ ետք երբ իրմէ բաժնուեցայ, աւելի քան երբեք համոզուած էի որ Խնամատարութեան ներկայ դժուար կացութեան վերջ տալու համար՝ առաւելապէս պիտի վստահէի իմ աշխատանքիս, որովհետեւ Պատրիարքն ալ իր գործերով կլանուած էր: Ամէն պարագայի տակ սակայն, այս մեր առաջին տեսակցութիւնը հիմը դրաւ այն գործելակերպին որ մեր միջեւ

*) Ակնարկութիւնը մալարիայի մասին է: (Խմբ.)

հաստատուեցաւ: Զարմանքով հասկցայ որ մէկ-երկու անգամ, դրամական պահանջքի առիթով իրեն ներկայացող ժողովականներէն դուրս՝ հաստատութեան ներքին գործերէն անտեղեակ մնացած էր: Բան մը խնդրելու համար միայն իրեն դիմում կատարած էին, եւ ոչ թէ իբրեւ վերին պետի մը, որ իրաւունք ունէր ամէն բան գիտնալու, եւ ի պահանջել հարկին ցուցմունքներ կատարելու: Ազգային Խնամատարութիւնը համահայկակաւ հանգամանք ունէր իր կազմութեամբն իսկ, որով թէ՛ կաթողիկէ Պատրիարքարանը, եւ թէ՛ բողոքական Ազգապետը, Զաւէն Պատրիարքին հետ՝ անոր նախագահներն էին: Գործնապէս սակայն հաստատութիւնը, իր վարչութեան եւ վարչական լիազօր պատուիրակով՝ կը գործէր որպէս անկախ մարմին մը, ենթակայ միայն երեք յարանուանութիւններուն կողմէ նշանակուած «Ընդհանուր Ժողով»ին:

Որոշեցի Զաւէն Պատրիարքը պարբերաբար տեղեակ պահել Խնամակալութեան գործերուն, եւ այս կերպով ամէն կարգի խաչածեւումներու առաջին առնել:

Երրորդ օրը արդէն թափանցած էի Խնամատարութեան ընդհանուր կացութեան՝ իր բոլոր մանրամասնութիւններով:



Հակառակ դիւաններու կազմութեան, ամէն պաշտօնեայ դեռ լիովին չէր ըմբռնած իր գործը, եւ ամէն դիմում, մեծ ու պզտիկ, մինչեւ ինծի կը հասնէր իր լուծումը գտնելու համար: Իսկ ժամանակը կ'անցնէր, եւ պատրաստ դրամը հատնելու վրայ էր:

Այդ օրերուն Ամերիկեան կազմակերպութիւն մը հաստատուած էր Մերձաւոր Արեւելքի մէջ, իբր նպաստամատոյց (Ռըլիֆ) մարմին աշխատելու տրամադրութեամբ, եւ արդէն Զաւէն Պատրիարքի եւ վարչութեան ատենապետ տոկոտ. Դաւիթեանի հետ յարաբերութեան էր մտած: Մտածեցի Խնամատարութեան կացութիւնն ու իր պէտքերը անոնց յայտնել, եւ մշտական սերտ յարաբերութիւն հաստատել:

Գիշերները աշխատելով հայերէն ընդարձակ տեղեկագիր մը պատրաստեցի եւ յանձնեցի Բիւզանդ Կէօզուպէօյիւքեանին, որ իբր անգլիագէտ կ'աշխատէր մեզ մօտ: Թարգմանութիւնը լրանալէ ետք, ան գնաց Ամերիկեան նպաստամատոյցի տնօրէն Մէյճըր Արնոլտի մօտ, որպէսզի ժամադրութիւն մը խնդրէ ինծի համար: Քանի մը օր ետք, երբ տեղեկագիրը գրպանս ներկայացայ անոր, զարմանքով եւ հաճոյքով տեսայ որ իր թարգմանն էր Պ. Թէգաթլեանը, որ ատենին Իզմիրի Մեսրոպեան վարժարանին մէջ, երեկոները մեզի անգլերէնի դասեր կու տար:

Մեր տեսակցութիւնը մօտ ժամ մը տեւեց: Կարելին ընելու խոստումով խնդրեց որ շաբաթ մը ետք, նոյն ժամուն, իրեն հանդիպէի: Իր քովէն բաժնուեցայ լի յոյսով:

Որոշեալ օրը, հեռաձայնով կրկնեց իր հրաւերը: Աւելորդ է ըսել թէ շատ յուզուած էի երբ իրեն ներկայացայ, քանի տասնեակ հազարաւոր որբերուն եւ տարագիրներուն բարւոք վիճակը իմ առնելիք պատասխանէս կախում պիտի ունենար: Սկսայ անմիջապէս պարզել տեսակէտներս, մեր պահանջները եւ մեր ուղեգրի՞ծը: Քիչ վերջ, գրեթէ համաձայն էինք բոլոր կէտերու մասին:

Իր նստած գրասեղանին քով դրամարկղ մը կար: Բացաւ զայն, թղթիկ մը հանեց եւ ինծի երկարելով ըսաւ.

— «Ձեզի կը յանձնեմ 110,000 տոլարի չէք մը: Միայն կը խնդրեմ որ ասոր գանձումը վաղուան ձգէք, որպէսզի հրապարակի վրայ խոշոր քանակութեամբ տոլար գտնուիլը չնուազեցնէ անոր արժէքը»:

(Ինծի անծանօթ մնաց այս խնդրանքին իրական պատճառը, որովհետեւ մէկ օր առաջ թէ մէկ օր վերջ՝ հետեւանքը միեւնոյն պիտի ըլլար):

— «Անշուշտ կը հասկնաք, — աւելցուց, — որ կը վստահիմ ձեր խոստումին՝ ձեր ազգակիցներէն նպաստահաւաքը շարունակելու համար, միշտ ինծի իմացնելով քանակը. որովհետեւ Բըլիֆը Անրկայիս իրեմ սկզբունք ըրած է Ապաստել այն քանակով՝ որքան դուք ձերիմներէն կը հաւաքէք»:

— «Բըլիֆի այս նպաստին համար շատ շնորհակալ եմ: Ես ալ իմ կողմէս կարելին պիտի ընեմ, հարկաւ: Ատիկա կը խոստանամ» պատասխանեցի:

Նոյն օրն իսկ ժողովի հրաւեր ուղղեցի Վարչութեան անդամներուն, եւ հետեւեալ երեկոյ լիագումար նիստի մը ընթացքին, երբ յայտնեցի ձեռք բերուած արդիւնքը, ամէնուն ուրախութիւնը մեծ եղաւ (Ձաւէն Պատրիարքը արդէն տեսած էի, եւ բարի լուրը տալով խնդրած որ ժողովին ներկայ ըլլար):

Երբ ներկաները ինծի քանի մը գնահատական խօսքեր ուղղեցին, յիշեցուցի որ տասնեակնեք օրուայ փորձի շրջանը անցած էր, եւ ես պատրաստ էի շարունակելու գործը, եթէ ինծի կատարելապէս պիտի աջակցէին, որպէսզի կարենայի նպաստամատոյցի տնօրէնին տուած խոստումս յարգել — այսինքն նոյնքան գումար մըն ալ կարճ ժամանակի մէջ մեր ազգակիցներէն հաւաքել:

Ժողովականներէն մէկը առարկեց, ըսելով որ առ այժմ քանի մը ամիս տակաւին կրնանք տոկալ, յետոյ հանգանակութիւնն ալ կ'իրագործենք: Չբաւականացայ այդ խոստումով, եւ պնդեցի որ անմիջապէս գործնական միջոցներու մասին խորհրդակցինք: Եւ մինչեւ որ դրական ձեռնարկներու որոշումներով չապահովուեցայ, չբաժնուեցանք իրարմէ:

4.- ՈՐԲԱՆՈՑՆԵՐ ԵՒ ԳԱՂԹԱԿԱՅԱՆՆԵՐ

Որբերու անմիջական ապագան ապահովելէ յետոյ կը մնար մտածել անհրաժեշտօրէն ըլլալիք ուրիշ կարգադրութիւններու մասին:

Ամէն օր, ամէն կողմէ որբեր կը բերուէին: Նախնական քննութենէ մը ետք, անոնք կը զրկուէին կայան-որբանոցը, ուրկէ (մանրակրկիտ քննութենէ ետք) կ'անցնէին իրենց յատկացուած թաղային որբանոց մը:

Կայան-որբանոցը կը գտնուէր հայ կաթողիկէ հասարակութեան Ս. Յակոբ հիւանդանոցին մէջ (մասնաւոր շէնք մը): Սկիզբը, ստիպողական պարագաներու մէջ, հիւանդանոցին վարչութիւնը հաւանութիւն յայտնած էր հոն 10-20 որբեր պատսպարել: Յետոյ երբ անոնց թիւը շէնքին տարողութենէն շատ աւելի բարձրացաւ, բնականաբար դժգոհութիւնը ծայր տուաւ: Մանաւանդ որ այդ նորեկները անկարագրելի չափով աղտոտ եւ խղճալի էին. շէնքին նեղութիւնը եւ ուրիշ անյարմարութիւններ անմիջականօրէն արգելք կ'ըլլային մաքրութեան գործին:

Բայց ո՞րը զրկել: Թաղերու մէջ առհասարակ որբանոցի վերածուած շէնքերը ճարուած էին ափ յափոյ, եւ առժամեայ կարգադրութիւններով: Որ թաղամասին մէջ ուր ազգը հազուադէպօրէն պզտիկ շէնք մը ունէր, որբանոցի վերածուած էր: Պատրիարքին կարգադրութեամբ որբահաւաքի գործով զբաղող Պ. Առաքել Չազըրեանը, Անգլիական Իշխանութեանց դիմում կատարելով յաջողած էր հոս-հոն քանի մը շէնքեր ճարել: Բայց պէտքը յարաճուն էր, եւ խճողումը արգելք կ'ըլլար ապահովելու որբանոցներու ներքին կեանքին մաքրութիւնն ու կանոնաւորութիւնը:

Ուրեմն, առաջին հերթին անհրաժեշտ էր յարմար շէնք գտնելու հարցը լուծել: Հրահանգեցի բոլոր թաղերու մարմիններուն որ լուր տան Կեդրոնին, երբ իրենց մօտ պարապ շէնք տեսնեն: Այդ ձեւով կարճ ժամանակէն կարելի եղաւ քիչ մը քեթեւեւ կայանիմ բերլ:

Անշուշտ, մէկ-երկու շէնքով մեր կարիքներուն գոհացում չէինք կրնար տալ: Պէտք եղաւ այդ ուղղութեամբ յարատեւ աշխատանք տանիլ:

Գաղթականներու հարցն ալ մեծ դժուարութիւններ ստեղծած էր: Ամառը ժամանողները եկած եւ խոնոտած էին կարգ մը թաղերու ազգային վարժարաններուն մէջ, եւ տուն-տեղ եղած: Անոնց մէջ կային այնպիսիներ որ պիտի մեկնէին գաւառ՝ բայց կը յամենային այլեւայլ պատ-

ճառներով: Ոմանց ծննդավայրը տակաւին վտանգաւոր շրջանի մէջ կը գտնուէր, եւ բնականաբար չէին կրցած դուրսը, քաղաքին մէջ յարմար բնակավայր գտնել: Մէկ մասն ալ — նոյնիսկ բարեկեցիկ — դպրոցին մէջ սենեակ մը ապահոված՝ խնայողական պատճառներով կը մերժէր կայանէն հեռանալ: Բայց մեծամասնութիւնը թշուառ, խեղճ ու գրեթէ մերկ, անապատի տօթէն եւ այլեւայլ հիւանդութեանց ճիրաններէն եւ անօթութենէ քամուած ու սպառած՝ իրական եւ իսկական խնամքի եւ հոգածութեան կարօտ էր:

Այդ կարգի կայանաբնակներուն համար, անշուշտ հաց եւ տաք կերակուր բաժնելը Ազգային Խնամատարութեան աւագ պարտականութիւնն էր: Եւ սակայն, այդ հոգածութեան կարօտ եղողները ինչպէ՞ս զանազանել նիւթական որոշ միջոցներու տէր եղողներէն:

Ազգային միջոցներով անոնց մէջ կարգապահութիւնը պահելը շատ դժուար էր: Մէկը կերակրել, իբր միջոցներէ գուրկ, իսկ միւսին նոյն այդ աջակցութիւնը մերժել՝ ենթադրելով որ անիկա նպաստի կարօտ չէ, երբեմն դուռ կը բանար մեծ անպատեհութիւններու, եւ դժուարին կացութեան կը մատնէր կայանին խնամակալութիւնն ու պաշտօնէութիւնը:

Ամէն պարագայի տակ խնամակալութիւնները եւ պաշտօնէութիւնը հրահանգ ստացած էին խօսիլ, համոզել, խրատել, յանդիմանել, զգաստութեան հրաւիրել եւ նոյնիսկ Համաձայնական ոստիկանութեան դիմելու սպառնալիք ընել (իմչ որ երբե՛ք չպատահեցաւ): Եւ այս բոլորը որպէսզի միջոցներու տէր եղողները, նախ նպաստ չստանային եւ յետոյ՝ իրենց կարելին ընէին կայանէն հեռանալու համար:

Անշուշտ, մենք կարելի չափով կը փութացնէինք զաղթականներու առաքումները: Երբեմն շոգենաւով հարիւրաւոր ճամբորդ կը զրկէինք իրենց ծննդավայրերը: Ուրիշներու կ'ընծայէինք դրամական աջակցութիւն: Եւ սակայն կայանաբնակներու թիւը, առաջին ամիսներէն մինչեւ 1919-ի վերջերը զգալիօրէն չպակսեցաւ, որովհետեւ շարունակ նոր զաղթականներ կը հասնէին:

Երբեմն գիշերը ուշ ատեն հեռախօսը կը ձայնէր, եւ հերթապահ պաշտօնեան կը ստիպուէր նորեկներու համար անմիջական կարգադրութիւններ ընել, որպէսզի քարափը չմնային:

Աշխատանքի ժամերը այնքան կ'երկարէին որ վարչական ժողովներուն օրերը կը գիշերէի Խնամատարութեան շէնքին մէջ. քանի մը ամիս յետոյ սակայն Վարչութիւնը խնդրեց որ տեւականօրէն մնամ շէնքին մէջ: Վերի յարկի ուրիշ մէկ սենեակն ալ, որ իբր պահեստանոց կը գործածուէր՝ պարպուեցաւ, եւ կիսն ու նորածին զաւակս հոն փոխադրեցի:

Նոյն ատեն որբերուն թիւն ալ կ'աւելնար: Ս. Յակոբի հիւանդանոցին վարչութիւնը կ'ուզէր որ պարպենք շէնքին մէջ առժամեայ կերպով տրամադրուած կայանի մասը, որպէսզի հիւանդանոցն ալ կա-

րենար գործել իր կոչումին համապատասխան ձեւով: Ի՛նչ խօսք, որ չէի կրնար անմիջականօրէն գոհացում տալ իրենց: Ես ալ կը դիմէի Զաւէն Պատրիարքին, որ իր կարգին Պ. Չազրբեանի միջոցաւ կը դիմէր Անգլիական Իշխանութեան (որ գրաւած էր Պոլիսը):

Զինադադարի առաջին օրերուն, երբ թուրքերուն մէջ քաղաքէն փախչող կամ բացակայողներ կային, քրիստոնեայ եւ իսլամախառն թաղերուն մէջ անոնց պարպած տուններէն քանի մը հատը մեզի տրամադրուած էին իբր որբանոց: Բայց այժմ, երբ նոր շէնքերուն յարաճուն անհրաժեշտութիւնը կը զգայինք, անգլիացիք կը պահանջէին որ պարպէինք մինչ այդ մեզի տրամադրուածներէն մէկ-երկուքը, որպէսզի իրենց տէրերուն յանձնէին:

Պ. Չազրբեանը իր կարելին կը փորձէր որպէսզի մեր պարպած շէնքին տեղ ուրիշ մը մեզի տրամադրուէր:

Ս. Յակոբի հիւանդանոցի կայանին նման այլ պարագաներ ալ կային, ինչպէս օրինակ Ղալաթիոյ կայանի եւ վարժարանի խնդիրները: Կար նաեւ Արնաւուտ գիւղի որբանոցի պարագան, որ մեծ մտահոգութիւն պատճառեց: Անգլիացիք պահանջեցին որ անմիջապէս պարպէինք չէրքէզ բարձրաստիճան անձի մը պատկանող այդ շէնքը: Բարեբախտաբար, Արնաւուտ գիւղի Որբախնամի անդամ տիկին Հ. Յակոբեանի շնորհիւ, ծովեզերեայ խոշոր շէնք մը գտնուեցաւ եւ վարձուեցաւ:

Հարցը նիւթականի հետ չէր կապուած: Ազգային Խնամատարութեան հարիւր հազարաւոր ոսկիներու հասնող պիւտճէին մէջ՝ վարձքերու համար քանի մը հազար ծախսելու տրամադրութիւնը չէ որ կը պակսէր այլ՝ յարմար վարձու շէնքերու չգոյութիւնը:

Մինչ շէնքերու պակասի պատճառով նեղ դրութեան մատնուած էինք, որբանոցներու ներքին կեանքն ալ գոհացուցիչ չէր: Խճողումը արգելք կ'ըլլար բնականոն վիճակի մը ստեղծման: Յետոյ, աքսորէ վերադարձած կամ թուրքերու ձեռքէ առնուած առաւելապէս մանչ որբերու մէջ շատ մը բորոտ ու քոսոտ տղաք կային: Բնականաբար, ասոնց համար մասնաւոր խնամք, առողջապահական եւ բժշկական միջոցներ անհրաժեշտ էին, ինչ որ խճողումը որբանոցներու մէջ դժուար, եւ գրեթէ անկարելի կը դառնար:

Հոս հաճոյքով պիտի խօսիմ անձի մը մասին, որ ամբողջ Պոլսոյ ծանօթ էր «որբերու հայր» անունով: Պատիկ տարիքէն ինքն ալ որբացած, եւ Եէտի Գուլէի Ազգային Հիւանդանոցին որբերու բաժնին մէջ պատասպարուած: Պատանի տարիքին արդէն հրապարակ նետուած էր իր բնութագրին յարմարող ապահովագրական գործով զբաղելու համար, ինչ որ առիթ ընծայած էր իրեն շատ մարդ ճանչնալու, եւ ամենէն ճանչցրելու: Միշտ ազգային երեսփոխան, հիւանդանոցի հոգաբարձութեան անդամ, իր տրամադրելի ժամանակին մեծ մասը ազգային գործերու յատկացուցած Ներսէս Օհանեանը մէկն էր այն ազնիւ անձնաւորութիւններէն, որ առանց Խնամատարութեան վարչական ժողովի անդամ

ըլլալու, առաջին օրէն յարաբերութեան մէջ մտաւ ինծի հետ, եւ օգնեց որբերու գործին մէջ:

Այլապէս օգտակար եղաւ նաեւ թանկագին տեղեկութիւններ հաղորդելով, երբ գործի մը համար պէտք ըլլար մարդ մը տեսնել:

Պոլսոյ գրեթէ բոլոր թաղերուն մէջ խնամատարութեան որբանոցները կամ գաղթականները խնամակալական մարմիններու հսկողութեան տակ էին, իսկ այդ մարմինները կազմող անձերը ունէին իրենց այլեւայլ թերութիւնները, որոնց հետեւանքով միշտ խնդիրներ կը ծագէին: Այդ խնդիրները պէտք է իրենց գոհացուցիչ լուծումը գտնէին, եւ այս գործին համար Ներսէս Օհանեան մէկ հատիկ էր: Խնամատարութեան ի հաշիւ իր ըրած երթեւեկներուն համար ճամբու ծախս անգամ չէր առներ (մինչդեռ որքան գիտէի, իր նիւթական վիճակն ալ փայլուն չէր): Թէեւ մեծ զարգացում չունէր, եւ արտայայտուելու ուսմիկ ձեւեր ու լեզու կը գործածէր, սակայն ժողովի մը մէջ իր արդար նկատած մէկ կէտը պաշտպանելու առիթով կարծես հոետոր կը դառնար:

Օր մը երբ որբանոցի մը խնամակալները եկած էին գանգատելու թէ բորոտն ու քոստոր աւերներ կը գործէին առողջ տղոց մէջ, մտածեցի Եփեսոսի Գուլէի Ազգային Հիւանդանոցը օգտագործել հիւանդ որբերու դարմանման համար: Ներսէս Օհանեանին հետ այցելեցինք այդ ընդարձակ շէնքը, որուն տնօրէնը, բաւական զարգացած՝ բայց քիչ մը տարօրինակ բնավորութեան տէր՝ նախկին պետական պաշտօնեայ մըն էր (գաւառակի կառավարիչ):

Վերադարձին ծրագիրս պարզեցի Օհանեանին, բացատրելով որ որբանոցները խճողուած էին, եւ այլեւս կարելի չէր հիւանդն ու առողջը միասին պահել: Միակ դարմանը մեծ շէնք մը գտնել, եւ բոլոր հիւանդները հոն մէկտեղելն էր:

— «Ուրեմն, — ըսի, — նախ անհրաժեշտ է յարմար շէնք մը, եւ յետոյ զօրաւոր ազգային զգացումով տոգորուած, անշահախնդիր եւ գոհաբերուող հայ բժիշկ մը: Առաջին պայմանը միայն ազգապատկան շէնք մը կրնայ լրացնել: Տեսայ որ Ազգային Հիւանդանոցը որոշ յարմարութիւններ կը ներկայացնէ: Յիմարանոցին մօտ գտնուող, բայց անկէ անջատ շինութեան առաջին յարկը կրնայ ծառայել որպէս դասարան, իսկ երկրորդ յարկը որպէս ննջարան: Ես վաղն իսկ մեր Վարչական ժողովին առաջարկը կը ներկայացնեմ, եւ Պատրիարքն ալ կը տեսնեմ: Կը խնդրեմ որ դուն ալ հոգաբարձութիւնը համոզես: Ըսեմ որ մեր որբերու հոգն ու ապրուստը, ինչպէս նաեւ դպրոցական գործը մենք պիտի վարենք: Ծիշդ է որ այդպէս՝ հաստատութեան մէջ ուրիշ հաստատութիւն մը պիտի ստեղծուի, եւ ատկէ կարգ մը անպատեհութիւններ կրնան ծագիլ»:

— «Հապա, — ըսաւ, — կարելոր բան մը կը մոռնաս: Ի՞նչ պիտի ըսէ հիւանդանոցին տնօրէնը: Գիտես թէ դժուարահաճ մարդ մըն է»:

— «Գիտեմ Պ. Օհանեան, — ըսի, — բայց ես այդ դժուարութիւնը կրնամ հարթել»:

— «Ինչպէ՞ս»:

— «Որպէսզի հիւանդանոցին եւ որբանոցին վարչութեանց միջեւ ամենօրեայ թիւրիմացութիւններ չծագին, հիւանդանոցին տնօրէնը անուանապէս կը նշանակենք նաեւ տնօրէն որբանոցին: Նկատելով որ բացուելիք որբանոցը իր մօտ չորս հարիւր որբերով կարելոր հաստատութեան մը պիտի վերածուի, կը նշանակենք նաեւ մնայուն ուսուցչապետ-տնօրէն մը, եւ այդ ձեւով կարծեմ գործը կը քալէ»:

Ներսէս Օհանեան համաձայն եղաւ: Ինքն ալ իր կողմէ ընելիքներն ու ըսելիքները բացատրեց. եւ այսպէս իրարմէ բաժնուեցանք:

Եւ իսկապէս, քանի մը օրուան մէջ Ազգային Խնամատարութեան Վարչութիւնը, Հիւանդանոցին Հոգաբարձութիւնը եւ Պատրիարքը համաձայնեցան: Կարճ ժամանակի մէջ կատարուեցան նաեւ մանր-մուկը նորոգութիւնները, մաքրութիւնը, դպրոցական գրասեղաններուն զետեղումը, եւլն.:

Որբանոցները հրահանգ ստացան անմիջապէս իրենց բժիշկներուն դիմելու (ամէն մէկը իր թաղին մէջ հայ բժիշկ մը ունէր), որպէսզի հիւանդանոց ուղարկուելիք որբերու ցանկերը պատրաստուէին: Կը մնար անձնակազմի հարցը, եւ մանաւանդ յարմար, մնայուն բժիշկ մը ճարելու պարագան:

Որբանոցներուն համար ուսուցիչ ճարելու նեղութիւն չբաշեցի: Իսկ ուսուցչապետի պաշտօնին համար նշանակեցի Սանասարեանցի կողմէ Գերմանիա ղրկուած աշխոյժ եւ փորձառու ուսուցիչ մը:

Այդ օրերուն ինծի այցելեց Պոլիս նոր ժամանած բժիշկ Արշակ Պօղոսեանը (որուն պատմութիւնը լսած էի), եւ այդ այցելութիւնը հիւանդ որբերուն համար նախախնամական եղաւ: Դրամական անհաւատալի ըլլալու աստիճան նուազագոյն պայմանով ան յանձն առաւ մնալու Որբանոց-Հիւանդանոցին մէջ, եւ խնամելու բոլոր բորոտներն ու տազերը*: Եւ կրնամ ըսել թէ հրաշք գործեց: Կարճ ժամանակի մէջ բոլոր բորոտները բուժուեցան, եւ եօթանասունի մօտ տազերն ալ՝ իր հետաքրքրութեամբ եւ պրպտուքով՝ Թագսիմի հիւանդանոցը յոյն մասնագէտ բժիշկի մը խնամքին յանձնուեցան, որպէսզի ելեքորաբուժումի ենթարկուին: Ասոնց մեծ մասն ալ դարմանուեցաւ:

Այս կերպով «Որբանոց-Հիւանդանոց» անունով բացուած այդ հաստատութիւնը քանի մը ամիսներ յետոյ «Հիւանդանոցի Որբանոց» անունը առաւ: Գրեթէ հիւանդ չէր մնացած, բայց շէնքը շարունակեց գործել որպէս որբանոց, քանի հակառակ մեր գանազան միջոցառումներուն՝ կարելի չէր եղած նուազեցնել խճողումը որբանոցներուն մէջ:

*) Գլխու մագամորթի փոխանցիկ Ռուսոսթիւն: (Խմբ.)

*
**

Կայաններու հարցն ալ հետզհետէ մտահոգիչ կը դառնար: Առհասարակ դպրոցներու, կամ անոնց մօտ հաստատուած գաղթականները ալ տեղեր փոխադրելը անհրաժեշտութիւն դարձած էր: Բնականաբար դպրոցները միշտ փակ չէին կրնար մնալ, իսկ եկեղեցիի մը կամ դպրոցի մը մօտ հաստատուած կայան մը մեծ անպատեհութիւններ կը ներկայացնէր: Այլեւայլ տեսակի պատմութիւններ, մէկը միւսէն պատկերազարդ, ընդհանուր դժգոհանքի դուռ կը բանային: Ջարդերէ ազատուելէ ետք, աքսորականի կեանքին անլուր տառապանքները ցմրուր քամած ըլլալով, ոմանք իրենց պարկեշտութիւնը, ուրիշներ ալ իրենց բնածին ամօթխածութիւնը կորսնցուցած էին: Չափազանց դժուարին աշխատանք մըն էր նո՛յնիսկ անջատ բնակարաններ, շատ մը առաւելութիւններէ զուրկ վայրեր գտնել եւ հոն, առանց կազ ու կոխի, առանց նիւթականի եւ բարոյականի հետ կապ ունեցող անպատեհութիւններու, գաղթականներ տեղաւորել՝ նեղ շրջանակի մէջ: Իրենց մէջ ամէն տեսակ բնաւորութեան տէր անձեր, նա՛եւ անլուր շահատակութիւններու ընդունակ տարրեր կային: Չանոնք կարգի բերելը, եւ խօսք հասկցնելը երբեմն անկարելի կը դառնար, մանաւանդ որ Համաձայնական Իշխանութեանց դիմում ընելէ կը խուսափէինք: Ինչե՛ր ըսես չէին ըներ: Օրինակ մը.

Սկիւտարի վարժարանը պէտք էր պարպել: Կայանաբնակներուն համար բնակութեան աղէկ-գէշ ուրիշ վայրեր գտնուած էին: Բայց կարգ մը գաղթականներուն ատիկա հաճելի չէր թուած: Իրենց մէջ կային անշուշտ այնպիսիներ, որոնք այդ թաղին մէջ մնալ ուզելու համար ազգականական կամ նիւթական կապեր ունէին: Ուրեմն քանի մը պարագլուխներու առաջնորդութեամբ, ամէնքը միացած, դպրոցին դուռը գոցած, պատերը կարծես պատնէշ դարձուցած, չէին ձգեր որ առանց իրենց հասնութեան՝ ո՛րեւէ մէկը ներս մտնէր կամ դուրս ելլէր:

Ստիպուեցայ անձամբ երթալու, եւ ինչ որ ըսի անօգուտ եղաւ: Իրենց խօսքերէն եւ շարժումներէն դատելով՝ կասկածեցայ ուղղամտութեանը վրայ նաեւ կայանին մէկ-երկու պաշտօնեաներուն: Վերադառնալէ առաջ, անոնց ներկայութեան յայտարարեցի որ Պատրիարքը պիտի տեսնեմ, եւ պիտի համոզեմ զինքը որ Անգլիական Իշխանութեանց դիմում կատարէ, եւ բռնի զանոնք դուրս նետել տայ:

Կասկածս ճիշդ էր, որովհետեւ իմ մեկնելէս ետք կ'երեւի սպառնալիքս պարագլուխներուն իմացուցած էին: Հետեւեալ առտու իրենց կողմէ քանի մը հոգի ներկայացան: Գաղթականներէն որոշ մասի մը ուրիշ տեղ փոխադրուելիքները, եւ սեփական բաւարար միջոցներ ունեցողներուն թիւը հաստատուած ըլլալով՝ դուրս մնալիքներուն մասին ներկայացուցին կարգ մը խնդրանքներ: Կարելիութեան սահմանին մէջ

խոստացայ իրենց փափաքներուն գոհացում տալ: Այս կերպով ըմբոստութիւնը վերջ գտաւ:

Մասնաւոր ուշադրութիւնս գրաւեց 28-30 տարեկան երիտասարդ մը, որ յանձնախումբին պետն էր: Յետոյ իմացայ, որ ըմբոստութիւնն ալ ինք կազմակերպած էր: Իր ընկերները մեկնեցան, բայց զինք վար դրի, եւ շատ մեղմ ոճով հետը խօսեցայ: Հետաքրքրուեցայ իր կեանքով: Համալսարանի բժշկական ուսանող եղած էր, եւ աքսորէ վերադարձին կարողացած էր ուսումը շարունակել. այժմ կը գտնուէր վերջիմ դասարանը: Կը բնակէր Սկիւտարի կայանը՝ ուր ապահոված էր ուտելիքը, բայց այլ ծախսերու միջոցներէն բացարձակապէս զուրկ էր: Բնական էր որ իրեն մասնաւոր օգնութիւն մը ընծայէի (ինչպէս բազմաթիւ ուրիշներու, որոնք նման պայմաններու տակ կ'ապրէին): Բայց մեր միջոցները չափազանց սահմանափակ էին բոլորին հասնելու համար:

Այսուհանդերձ գաղթականական կայաններու հարցը աւելի արագ լուծում գտաւ քան որքերունը: Նախ խիստ քննութենէ մը ետք հեռացուեցան բոլոր անոնք որ սեփական միջոցներ ունէին, եւ յետոյ կարելի եղաւ բազմաթիւ գաղթականներ իրենց ծննդավայրերը ուղարկել: Մեկնողներու թիւը հետզհետէ զլեց անցաւ նոր հասնողներու թիւը, եւ կայաններու բնակչութիւնն ալ սկսաւ նուազիլ:

*
**

Մնամատարութեան զբաղման առարկայ եղող գործերը որոշ դիւաններու մէջ պէտք է կարգադրուէին: Բայց փափաքելի կանոնաւորութիւնը հազիւ քանի մը ամիս վերջ կարելի եղաւ տեսնել: Թէ՛ դիմում կատարողները եւ թէ՛ պաշտօնէութիւնը սովորութեան նուիրագործումին պէտք ունէին:

Որբերու դիւանը բնականաբար շատ զբաղած էր: Մանաւանդ ըսկիզբները որոշեցինք եւ գործադրեցինք վիճակացոյցերու (ֆիշերու) դրութիւնը, ինչ որ մեծապէս կը դիւրացնէր պրպտումները: Հազարաւոր անուններու մէջէն ուզածդ անմիջապէս գտնելու եւ դիմումը կատարողին պատասխանելու գործը շատ դիւրացաւ: Մեզի համար ալ որբի մը համար քննութիւն կատարելը, եւ արդիւնքը իր վիճակացոյցին մէջ արձանագրելը մեծապէս օգտակար եղաւ:

Ձրի սնունդ, բնակավայր եւ դպրոց գտնելու կարելիութիւնը գրգիռ կ'ըլլար կարգ մը աղքատ՝ կամ նոյնիսկ միջակորեար ընտանիքներու որ այլեւայլ միջոցներու դիմէին նոյնիսկ խարդախութիւն գործէին՝ որք չեղողները իբր այդ որբանոցի մը մէջ զետեղելու համար:

Մենք մեր սովորական քննութիւնը (Ազգային մարմիններու կողմէ նեկայացուած վկայագիր, եւայլն) ընելէ ետք միայն որբ մը կ'ըն-

դուռնէինք: Բայց որքերուն կէսէն աւելին սկիզբը առանց քննութեան, այսինչին կամ այնինչին յանձնարարութեամբ՝ կամ պարզապէս պաշտօնեայի մը բարեացակամութեամբ ընդունուած էին: Բնականաբար, վիճակացոյցներու պատրաստութեան ատեն ընդունելութեան պարագան եւս կը ճշդուէր փաստաթուղթերու վրայ: Եւ եթէ ոչ մէկ թուղթ գոյութիւն ունենար, ըստ այնմ որք մը կը պահուէր կամ ներկայացնողին կը վերադարձուէր: Երբեմն ալ կը պատահէր որ կասկածներ ունենայի ցոյց տրուած վկայագրերուն մասին: Այդ պարագային Որբահաւաքի մարմիններէն մէկուն պատուէր կու տայի հարկ եղած քննութիւնը կատարելու, որբը ղրկող թաղին կամ թաղեցիին մօտ, եւ գործելու արդիւնքին համաձայն:

Կարգ մը «աչքը բաց» մարդիկ, մայրը իբր սպասուհի տունը կ'առնէին նպաստաւոր պայմաններով, որովհետեւ յանձն կ'առնէին իրենց ազդեցութեան շնորհիւ հաստատագիր մը ստանալ ազգային մարմինէ մը՝ կնոջ զաւակը իբր ծնողագուրկ ներկայացնելու համար: Այդ կարգիներու համար ալ թաղերու մէջ քննութիւն կը կատարուէր:

Այսպէս, կարելիութեան սահմանին մէջ զտուժ մը կատարեցինք, ինչ որ պարտադիր հանգամանք առաւ նիւթական եւ բարոյական պատճառներով:

Տարագիրներու դիւանը որոշ ժամանակ մը չափազանց զբաղած էր: Երբ հազարաւոր բազմութիւններ կը խուժէին, կատարեալ հակակշիռ մը գործադրելը դժուար էր: Բայց միշտ նոր եկողներ ըլլալով հանդերձ՝ 1919-ի ձմեռնամուտին այդ դիւանին գործերն ալ թեթեւացան:

Նախապէս այս դիւանին մէջ քանի մը մասնագէտ պաշտօնեաներ կային, որոնք շոգենաւային գործակալութեանց, հաւաքական վիզայի, մեկնող գաղթականներու սնունդի եւ այլ յարակից գործերով կը զբաղէին: Ամէն գնով կը փափաքէի որ առաջ ազատիլ այդ մասնագէտ պաշտօնեաներէն: Շուկայէն եկած մարդիկ էին, որոնք շուկայիկ մտայնութեամբ կ'աշխատէին:

Այս դիւանին կապուած էին նաեւ կայաններու պաշտօնեաները: Անոնց թիւին մէջ ալ տակաւ առ տակաւ կարելի եղաւ խնայողութիւն կատարել:

Թաղային որբանոցները ունէին իրենց մարմինները, որոնք շատ մօտէն կը հսկէին, եւ իրենց խնամքին յանձնուած որբերու մատակարարութիւնը գրեթէ մեծագոյն մասամբ ամբողջ թաղին հակակշիռն տակ կը գործէր: Մինչդեռ՝ Տարագրելոցի տեղական պաշտօնեաները կեղքոնական մարմնի հակակշիռն տակ կը գործէին, եւ սակայն առաջումի գործը պաշտօնէութեան ձեռքով կը կատարուէր:

Այդ գործին մէջ Տարագրելոց մարմնի հսկողութիւնը եւ հակակշիռը շատ տկար եղած էին գլխաւորաբար երկու պատճառներով: Նախ՝ որովհետեւ այդ հակակշիռը դիւանի մը մէջ կ'ըլլոր սեղանի շուրջ ժողով գումարելով չէր կրնար կատարուիլ. իսկ գործող պաշտօնէու-

թեան գլուխը կը գտնուէր անձ մը, որուն նիւթականի տեսակէտով պարկեշտութիւնը որքան ստոյգ էր, չեմ գիտեր. բայց բարոյական գետնի վրայ իր նկարագիրը ինծի շատ խախտուած երեւցած էր, երբ տնօրէնութեան կոչուելէս առաջ, քանի մը անգամ, իբր վարչութեան անդամ այցելութեանս ընթացքին ճիւղին գործունէութեան մասին գաղափար մը կազմելու պատահութիւնը ունեցեր էի:

Որբախնամի եւ Տարագրելոցի դիւաններէն ետք՝ կարեւորութեան կարգով կու գար թղթակցութիւնը:

Հոն, սկիզբը կային Վահէ Հայկը, Վահրամ Թաթուրը եւ Գաբրիէլ Սարգիսեանը: Առաջինը կարճ ժամանակ ետք մեկնեցաւ: Հետզհետէ առժամապէս հոն աշխատեցան նաեւ, եթէ չեմ սխալիր, Ահարոնը, Պէշիկթաշլեանը եւ ուրիշներ: Տեւականօրէն մնացին Վ. Թաթուրը եւ Գ. Սարգիսեանը: Վարչական գրութիւններու համար, երկրորդը լաւ էր: Վ. Թաթուրը դանդաղ էր մտքով, եւ իր գրածներն ալ, թէեւ մաքուր լեզուով՝ բայց նպատակը պարզ չէին բացատրեր: Շատ անգամ ըստիպուած կ'ըլլայի ստորագրութիւն դնելէ առաջ շտկելու զանոնք: Երկրորդը սակայն գրագէտի կամ բանաստեղծի հովեր չունէր, ըսածս կը հասկնար եւ ամենէն կարճ տողերու մէջ կ'ամփոփէր:

Ունէինք բաւական կարող հաշուապահ մը, նախկին առեւտրական, որ սակայն դժբախտաբար շուտ մեկնեցաւ: Շատ դժուար եղաւ իր տեղը յարմար անձ մը գտնել: Ի վերջոյ, Վարչութեան անդամներէն Մ. Ալէմշահի յանձնարարութեամբ այդ գործին գլուխը եկաւ Հ. Յ. Պատուհասեանը, որ թէեւ մեծ կարողութեան տէր չէր, բայց գործը բաւական լաւ տարաւ: Ունէր օգնական մը, եւ առօրեայ վճարումները կատարող զանձապահի օգնական մը*:

Այս չորս դիւաններէն զատ, կային նաեւ մթերանոցի պաշտօնեաներ, քանի մը գործակալներ, որոնք կը զբաղէին մանր գնումներով, կը ստանային պետական նպաստ եղող հացը եւ կը բաժնէին որբանոցներուն: Աւելի վերջը նշանակուեցաւ քննիչ մը որ կոչուած էր քննելու հաստատութեան, եւ մանաւանդ մասնաճիւղերուն հաշիւները:

Ինծի յատկացուած սրահին դէմը, գործելու դիւրութեան համար զբասնեակ մը յատկացուցած էի Բ. Կէօզուպէօյիւքեանին, որ լաւ անգլերէն գիտնալուն՝ Ամբրիկեան նպաստամատոյցի եւ Լորտ Մէյլըս անգլիական ընկերութեան հետ մեր ունեցած թղթակցութիւնները կը խմբագրէր, ու անոնցմէ տնօրէնը կամ պաշտօնեաներէն մէկը, եւ կամ անգլիախօս այցելու մը ընդունած միջոցիս թարգմանի պաշտօն կը կատարէր:

Կային նաեւ ուրիշ պաշտօնեաներ որոնք դիւանապետի գործը կը տեսնէին:

*) Խնամատարութեան գանձապահներն էին Մ. Իրրանուսեանը եւ Ս. Գարսիէօգեանը:



Մատթեոս Էպլիդաթեան, Պոլիս Ազգային Խնամատարութեան օրերուն (1919):

Ազգային Խնամատարութիւնը, որպէս առաջին վարչական մեծ կազմակերպութիւն՝ յայտնութիւն մը եղաւ հայ հանրային կեանքին մէջ: Մինչ այդ՝ միայն Պատրիարքարանը կը պահէր հայ պաշտօնեաներ, որոնց թիւը գրեթէ կէս դարէ ի վեր ութէն տասի մէջ կը տարուբերէր: Անոնք բաւական չէին որոշ կնիք մը դնելու ընդհանուրին վրայ, ճշդորոշելով անոնց ընդունակութիւնը, աշխատասիրութիւնը եւ ուղղամտութիւնը: Հայ պաշտօնեան աւանդութեան կարգը անցած ընդհանուր դիմագիծ մը չունէր տակաւին: Անկասկած, ո՛րեւէ հաստատութեան համար առհասարակ՝ բայց վերոյիշեալ պատճառներով մա՛նաւանդ Ազգային Խնամատարութեան համար՝ կենսական եւ դժուար լուծելի հարցեր էին.

– Պաշտօնէութեան ընտրութիւնը

– Պաշտօնէութեան դէպի գործը, եւ դիմում կատարողներուն հանդէպ ունեցած վերաբերմունքը. — եւ մասնաւորապէս՝

– Պաշտօնէութեան պարկեշտութիւնը:

Ես որ նախապէս պետական գործերու մէջ տարբեր ցեղէ եւ կրօնքէ գործակիցներ ունեցած էի, մասնաւոր հետաքրքրութեամբ կը հետեւէի հայ պաշտօնեաներու գործունէութեան: Անգամ մը, չեմ յիշեր ինչ առիթով, Չաւէն Պատրիարքը գանգատեցաւ պաշտօնեայի մը ընթացքին համար եւ ըսաւ.

— «Նուիրում չունի իր գործին հանդէպ, սակայն պաշտօնեայի մը հոգեբանութեամբ կ'աշխատի»:

Պատրիարքը վարչական որոշ ընդունակութիւններ ունէր, բայց եթէ ինծի պէս այլացեղ գործակիցներ ունեցած ըլլար, նոյն ձեւով պիտի չարտայայտուէր: Բնականաբար, շուկայէ հասածները առհասարակ փորձառու էին եւ ընդունակ, բայց իրենց մէջ տասէն մէկը միայն պարկեշտ էր: Իսկ մտաւորական կամ կէս-մտաւորական, եւ առհասարակ ուսուցչութենէ եկածները, բնականաբար փորձառութիւն չունէին, բայց խորքին մէջ գրեթէ ամէնքն ալ (ինը տասներորդը), պարկեշտ էին եւ իրենց ընդունակութեան չափով լաւ պետական պաշտօնեաներ կ'ըլլային, եթէ արժանաւոր պետեր ունենային:

*

**

Յիշեցի արդէն որ Ազգային Խնամատարութիւնը իսկապէս համազգային հաստատութիւն մըն էր: Հոն լուսաւորչական, կաթողիկէ կամ բողոքական չկար, ամէնքն ալ հայ էին: Այս սկզբունքը ամրապնդելը իմ աւագ պարտականութիւնս նկատեցի, եւ առաջին օրէն չհետաքրքրուեցայ նոյնիսկ թէ ո՞վ բողոքական, կամ ո՞վ կաթողիկէ էր:

Ճշգրեմ նաեւ որ Հայաստանի հանրապետութեան կազմութիւնը այդ առընչութեամբ նպաստաւոր պայմաններ ստեղծած էր, հանրային կարծիքին մէջ մեծ փոփոխութիւն մը յառաջացնելով: Նոյնպէս թուրքին գործելակերպը, որ եաթաղանին տակ ինկածներուն կրօնքը չէր պըրպըտած, հաւասարապէս կոտորելով լուսաւորչականը, կաթողիկէն կամ բողոքականը, ճամբան հարթած էր որ հայերը նախ եւ առաջ ինքզինքնին հայ դաւանին:

Ազգային խնամատարութեան վարչութեան մէջ, տասնեւեկ անդամներէն երկուքը բողոքական եւ երկուքն ալ կաթողիկէ էին: Բողոքականներու մէջ կուսակցական կեանք եւ շերտաւորում չկար: Առ հասարակ Պայալը Հաուզի կապուած էին: Նոյնիսկ Ամերիկեան Բըլիֆի հետ մեր գործակցութեան ընթացքին իրենցմէ որեւէ մասնաւոր աջակցութիւն մը չտեսայ*: Իսկ կաթողիկէ հասարակութեան կողմէ նշանակուած երկու անդամներէն մէկը, Միքայէլ Ալէմշահը (երգահան Գրիգոր Ալէմշահի հայրը, որ հաշուապահ եղած էր ծովային նախարարութեան մէջ) կարող եւ վարչական ընդունակութիւններով օժտուած անձ մըն էր, եւ եթէ գործի մը մէջ մասնաւոր նպատակ մը չհետապնդէր, իր առողջ տեսութիւններով օգտակար կ'ըլլար, մանաւանդ հաշուական քննութեանց մէջ: Միւսը, Արամ Ինճիճեանը, Ռամկավարներու օրկան «Ժողովուրդի Ձայն» թերթի արտօնատէրը, քիչ մը կրօնական եւ շատ մը կուսակցական տեսակէտներով կը մօտենար ամէն գործի: Չեմ գիտեր, ջերմ Ռամկավար ըլլալը որոշ նպատակի մը հասնելու մտադրութեամբ էր, թէ համոզումի արդիւնք միայն: Ամէն պարագայի տակ շատ խօսող, բայց քիչ գործող մարդ էր:

Այս չորսին ներկայութիւնը սակայն ոչ մէկ կերպով Ազգային խնամատարութեան գործերուն բնականոն ընթացքին արգելք հանդիսացաւ:

Տեղեակ չէի նաեւ թէ անոնք արդեօք կաթողիկէ Պատրիարքարանին կամ բողոքականներու Ազգապետին հետ մօտէն շփում ունէի՞ն, եւ գործերու ընթացքէն զիրենք տեղեակ կը պահէի՞ն թէ ոչ: Ամէն պարագայի յարանուանութեանց պետերուն հետ գործ ունեցած ատենս ես անձնապէս պէտք եղած դիմումն ու աշխատանքը կը տանէի, եւ այս կերպով աւելի շեշտուած կ'ըլլար խնամատարութեան համագործակցի հաստատութիւն մը ըլլալու հանգամանքը:

Այսուհանդերձ՝ դաւանական հարցերու հետ կապուած երկու խնդիրներ ունեցանք:

*) Սկիզբէն միջեւ վերջը, Խնամատարութեան վարչական կազմին մասնակցեցաւ Պայալը Հաուզի կողմէ կրօնական գիրքեր ծախելու կոչուած Գրիգոր Ծախապետան անունով անձը: Դժբախտաբար բողոքական հասարակութիւնը աւելի յարմար մէկը չէր գտած:

Այսպէս, օր մը Խարբերդի մեր վարչութեանն նամակ մը ստացայ*: Շատ քաղաքավար, բայց յստակ ձեւով կ'իմացնէին թէ հոն գտնուող երկու ծանօթ անձեր (պատուելի կամ փրոֆեսոր) սեղմ աշխատանք կը տանին քաղաքին մէջ 2-3000 որբերու եւ որբեւայրիներու կեդրոնացած տեղը՝ Ժողովուրդը բողոքական դարձնելու համար. թէ նպաստաբաժանումը իրենց գլխաւոր միջոցը դարձուցած էին, եւայլն: Տեղւոյն ներկայ վիճակին մէջ ցաւալի հետեւանքներ կանխելու համար, կը խնդրէին որ Կեդրոնը անմիջապէս զբաղէր այդ հարցով:

Նախ խնդիրը վարչութեան նկատուումին յանձնեցի. յետոյ ներկայացայ Պատրիարքին եւ խնդրեցի որ Ազգապետներու հետ պարբերական տեսակցութիւններու ընթացքին մասնաւոր խօսակցութիւն մը ունենայ Ձ. Պէզճեանի հետ: Ձաւէն Պատրիարքը, չեմ գիտեր ինչո՞ւ, չուզեց ընել այդ (գուցէ վախնալով որ իրենց սիրալիք յարաբերութիւնները կը խանգարուէին) այլ յանձնարարեց որ այդ գործը ես կատարեմ: Ստիպուեցայ ուրեմն Ազգապետին այցելելու համար ուրիշ պատճառ մը գտնել: Խնամատարութեան գործերուն մասին բաւական խօսելէ ետք, անդրադարձայ Խարբերդի նամակին եւ տուի որ կարգայ:

Ազգապետը նամակին բովանդակութեան ճիշդ ըլլալուն համոզումը չունէր:

— «Կրնաք իրաւունք ունենալ, — պատասխանեցի: Բայց ամէն պարագայի տակ երբ երկու անձերու դէմ գանգատ կայ, կարելի է գրել անոնց՝ որ դուք անձնապէս չհաւատալով հանդերձ եղած ամբաստանութեանց՝ կը գտնէք որ ներկայ պայմաններուն մէջ դաւանափոխութեան աշխատանքի լծուիլը — այն ալ նիւթական աջակցութեան յենելով — կրնայ շատ գէշ տպաւորութիւն յառաջացնել, հետեւաբար ո'րեւէ մէկը այդ կարգի ձեռնարկէ պէտք է զգուշանայ»:

Յետոյ Խարբերդէն եկողէ մը իմացայ որ բողոքականներու Ազգապետը կատարած էր իր խոստումը, եւ զրգուցիւնը դադրած էր:

Դժբախտաբար նոյն ապահովութիւնը չունեցայ կաթողիկէներու հետ կապուած ուրիշ դէպքի մը պարագային:

Լուր տրուած էր թէ Բերայի եւ Սամաթիոյ հայ կաթողիկէները իրենց Ս. Աննա վարժարաններուն մօտ գտնուող մօտ 150 որբուհիները — որոնց ապրուստը Ազգային խնամատարութիւնը կը հոգար — այլեւայլ միջոցներով կ'աշխատէին քոյրեր դարձնել: Պէտք է ըսել թէ իրենց խնամքին յանձնուած որբուհիները մեծ մասամբ կաթողիկէ ծնողներու զաւակներ էին: Բայց նախապէս երբ խճողումը շատ էր, երկար-բարակ քննութիւն չէր եղած, եւ ամէն դաւանանքէ որբ ու որբուհիներ խառն

*) Ընդհանուր Տնօրէն անուանուելու ետք, գաւառի Գամակները Պատրիարքին, վարչութեան ատենապետին եւ իմ ստորագրութիւնովս դրկուեցան. իսկ ամիս մը ետք միայն ես կը ստորագրէի:

դրուած էին որբանոցներուն մէջ: Ամէն պարագայի տակ մենք զմեզ բնականաբար կը նկատէինք փոխանորդը այն բիւրաւոր ծնողներուն, որոնց զաւակները մեր խնամքին էին յանձնուած, եւ որոնց ապրուստը մեր միջոցաւ ազգը կը հոգար: Եւ ինչպէ՞ս ծնողք մը պիտի հանդուրժէր, որ իր զաւակը բարոյական ճնշումի կամ այլ միջոցներով կրօնաւորուհի դառնար: Ուրեմն մեր պարտականութիւնն էր այդ անախորժ կացութեան առաջը առնել:

Այցելեցի քոյր Թերեզային (Բերա, Չէօփլիւք փողոց) եւ քոյր Գրիստինէին (Սամաթիա), եւ երկուքին հետ երկար խօսակցութիւններ ունեցայ եղած գանգատներուն առընչութեամբ: Որոշ հաւաստիքներ ստացայ, սակայն անկարելի եղաւ յստակ տեղեկութիւններ ունենալ: Իսկ տեղւոյն վրայ քննութիւն կատարելու միջոցներ չունէինք, քանի որ բուհները արտաքին աշխարհէն կտրուած՝ փղոսկրեայ աշտարակի մը մէջ կ'ապրէին: Սակայն տարիներ յետոյ յայտնի եղաւ որ հայ կաթողիկէ քոյրերուն վարժարաններուն մէջ մեր բազմաթիւ որբուհիները կը գտնուէին:

Չեմ ուզեր ըսել թէ այս ձեւով գէշ բան մը եղած էր: Ցաւալի կէտը այն է սակայն, որ մենք այս խնդրոյն մէջ ճշմարիտ ծնողի մը դերը չըկրցանք կատարել, եւ անչափահաս որբուհիները մեծցան բարոյական այնպիսի մթնոլորտի մը մէջ, ուր գուցէ իրենց ծնողքը պիտի չուզէին ձգել:

5.- ՔԱՆԻ ՄԸ ԹԻՒԵՐ, ԵՒ ՊԻՒՏԾԷ

Պոլիս քսանութիւններու մէջ որբ ու որբուհիներ կը պահուէին: Որբանոցները առհասարակ, իրենց մատակարարութեան ձեւով՝ երեք մասի կը բաժնուէին. ա.) Ամբողջովին Խնամատարութեան կողմէ մատակարարուածներ. բ.) Հաստատութիւններ, ուր Խնամատարութեան ծախսով որբեր կը պահուէին. գ.) Ինքնապահ որբանոցներ, որոնց մեծ մասը մեզմէ դրամական նպաստ կամ նիւթեղէն կը ստանար:

— ա).— Ամբողջովին մեր կողմէ մատակարարուած որբանոցներու թիւը վեց էր: Ասոնք էին՝ Բանկաթիի կայան-որբանոցը — երկսեռ 125 որբեր. Խաս գիւղի մանչերու որբանոցը — 97 որբեր. Պալաթի երկսեռ որբանոցը — 168 որբեր. Գուլմ Գաբուի Երուսաղէմական աղջկանց կայան-որբանոցը — 84 որբուհիներ. Եէտի Գուլէի Ազգ. Հիւանդանոցին մէկ թիւը հաստատուած մանչերու որբա-

նոցը — 100 որբեր եւ Օրթագիւղի մանչերու որբանոցը — 93 որբեր: Ուրեմն, այս կարգի որբանոցներուն մէջ 667 որբ եւ որբուհիներ կային:

— բ).— Խնամատարութեան ծախքով որբեր պահող հաստատութիւններու թիւն էր ինը. — Շիշլիի Գարակէօզեան որբանոցը՝ 59 որբեր. Դպրոցասէր Տիկնանց վարժարանը՝ (Նշան Թաշ) 286 աղջիկներ. Հ. Կ. Խաչի դարմանատունը՝ (Շիշլի) երկսեռ 61 որբեր. Հ. Կ. Խաչի հիւանդանոցը — 67 երկսեռ որբեր. Ազգ. Հիւանդանոցի քոստներու որբանոցը՝ երկսեռ 185 որբեր. Բերայի Անարատ Յղութեան Քերց Ս. Աննա վարժարանը՝ 44 որբուհիներ. Սամաթիոյ Ս. Աննա վարժարանը՝ 119 որբուհիներ. Մաքրի Գիւղի Պէզազեան վարժարանը՝ 45 մանչեր, եւ Օրթագիւղի աղջկանց որբանոցը՝ 245 որբուհիներ: Գուլմար՝ 1111:

— գ).— Վերջապէս, նպաստընկալ որբանոցներու թիւը տասն էր. Նշան Թաշի որբանոցը — (մանչեր) 245. Բերայի Եսայեան վարժարանը — (մանչեր) 118. Պէշիկթաշի որբանոցը — (մանչեր) 20. Արնաւուտ Գիւղի երկսեռ որբանոցը՝ 83. Պոյաճը Գիւղի աղջկանց՝ 11. Գատը Գիւղի մանչերու՝ 89. Սկիւտարի երկսեռ՝ 95. Կէտիկ փաշայի մանչերու՝ 37. Նարլը Գաբուի մանչերու 61, եւ վերջապէս Մաքրի Գիւղի երկսեռ՝ 70: Ընդամենը՝ 829 երկսեռ որբեր:

Ուրեմն, Պոլսոյ այս երեք մասերու մէջ գտնուող որբերու ընդհանուր գումարն էր 2607 (բնականաբար փոփոխական՝ բայց միջին թիւ մը):

Պոլսոյ որբանոցներէն զատ, Գաւառներն ալ ունէինք որբանոցներ (վերակազմուած): Գաղատիոյ շրջանը կային Քէսկին՝ 200, Գըրչէհիր՝ 170, Եօզղաթ՝ 400, Պօղազլեան՝ 500, Ազտաշ Մատէն՝ 140 որբորբուհիներով: Իսկ Կեսարիոյ մէջ ունէինք մօտ 500 որբերով հաստատութիւն մը, որ առաւելաբար Կեսարիոյ Հայրենակցական Միութեան նիւթական միջոցներով կը մատակարարուէր: Ամերիկացիներ հոն լուկ իրենց միջոցներով կը պահէին հարիւր տղայ եւ աղջիկներէ բաղկացած տիպար որբանոց մը:

Նոյնպէս, Մարգուանի, Ակնայ, Օրտուի, Կիրասոնի, Տրապիզոնի եւ Սամսոնի մէջ ունէինք ուրոյն որբանոցներ, որոնք առաւելապէս տեղական միջոցներով կը մատակարարուէին, եւ Խնամատարութիւնը միայն նիւթական ձեռնտուութեամբ կ'աջակցէր անոնց:

Նիկոմիդիոյ մէջ, Միս Հոլտի տնօրէնութեամբ, ունէինք 240 աղջիկներու որբանոց մը, իսկ Պարտիզակի մէջ՝ 170 մանչերու որբանոց մը:

Կային նաեւ Պրուսայի մէջ Միս Ալէնի յանձնուած 174 որբուհիները:

Կարելոր է ընդգծել այն իրողութիւնը որ այս որբանոցներու մեծագոյն մասը (բացի կայան-որբանոցներէն) կանոնաւոր նախակրթարանի մը ուսումը կու տային: Այդ հաստատութիւններուն մէջ Դպրոցա-

սէրի եւ Պէզզագեան վարժարանի պէս երկրորդական ուսում տուողներ ալ կային: Աւելի վերջը, որոշ համաձայնութեան մը գալով՝ շատ ուշիմ քանի մը որբ աշակերտներ ալ զետեղեցինք Րոպէրթ Գոլէճ: Հաստատեցինք նաեւ արհեստանոց-որբանոցներ, ինչպէս նաեւ Արմաշի գիւղատնտեսական վարժարանը, եւայլն:

Ինչպէս այս ցանկէն կ'երեւի, առաջին եւ երրորդ կարգի հաստատութիւնները որքերու համար հիմնուած էին, իսկ երկրորդ դասակարգը որբանոցի անուն չունեցող անջատ հիմնարկութիւններէ կը բաղկանար:

Այս երկրորդ մասին մէջ գտնուող որբ-որբուհիներուն համար, սկիզբէն մինչեւ վերջ, իրենց պէտքերը ապահովող դրամը հոգաց Խնամատարութիւնը՝ մատակարարութիւնը ձգելով այդ հաստատութեանց վարիչներուն: Անշուշտ պարբերական քննութիւններով կը կատարուէր նաեւ ազգին բարոյական հսկողութիւնը:

Իսկ թաղերու մէջ հաստատուած այն որբանոցները, որոնք Խնամատարութեան նպաստ կը ստանային, սկզբնական շրջանին կը մատակարարուէին իրենց խնամատար մարմիններէն՝ թաղեցի ազգայիններուն դրամով, նիւթեղէնի եւ սննդեղէնի նպաստով, ինչպէս նաեւ ամէն մէկ խնամակալ-խնամակալուհի, հոս-հոն գլուխ զարնելով հաւաքած եւ հայթայթած նպաստներով: Երբ կեդրոնական մարմին դեռ գոյութիւն չունէր, ասոնց դերը նախախնամական եղաւ:

Պատերազմի եւ քսորի շրջանին, դժբախտութիւնը, յուսահատութիւնը, անզօրի չարաբաստիկ անտարբերութիւնը՝ տեղի էին տուած խանդավառ գործունէութեան մը առջեւ: Ամբողջ մնացորդ հայութիւնը, դժոխային կեանքի մը մղձաւանջէն ձերբազատուած՝ հոգեւին կ'աշխատէր նախ հաւաքել ու պատսպարել իր կորիւնները, ուր որ գտնուէին, որու քով որ ըլլային, եւ վերադարձող իր բախտազուրկ ազգակիցներուն վէրքերը խնամել:

Ես Պոլսեցի չեմ: Սակայն երկար տարիներ Պոլիս ապրած եմ եւ պարտք կը սեպեմ իմ մեծ սքանչանքս յայտնելու Պոլսոյ հայ ժողովուրդին, որուն մէջ իրերօգնութեան եւ բարեացակամութեան զգացումը միշտ զեղուն եղած է: Իսկ Զինադադարի շրջանին, այդ բարի յատկութիւնները իրենց ծայրագոյն ձեւով երեւան եկան:

Առաջին ամիսներէն ետք սակայն տեղական մարմիններու նպատահաւաքի գործը դանդաղեցաւ, որովհետեւ ստեղծուած էր կեդրոնական նպատահաւաք մարմին մը: Անոր աշխատանքի ցանցերը կ'երկարէին մինչեւ թաղերը, եւ ժողովուրդը, գրեթէ պարտադիր տուրքի ձեւով՝ անոր կը վճարէր իր նպաստը: Բնականաբար այդ դրութենէն կը տուժէին թաղային կազմակերպութիւնները:

Ահա այս պատճառով, Խնամատարութիւնը ստիպուած եղաւ իր նպաստի քանակը հետզհետէ բարձրացնել, մինչեւ գրեթէ ամբողջական հոգը ստանձնելու աստիճան:

Գաղթականներու կայանները որբանոցներէն առաջ հաստատուած էին, սկզբնական շրջանին պատսպարելով թէ՛ Պոլիս խուժող բազմութիւնները, եւ թէ՛ որբերը: Առաջին կայանները հիմնուած էին Ղալաթիոյ եւ Հայտար Փաշայի մէջ:

Ղալաթիոյ կայանին մէջ պէտք տեսնուած էր նաեւ առողջապահական միջոցներ ձեռք առնել, բժշկական խնամքի եւ դեղի հայթայթման ձեւով. որովհետեւ եկողներու մէջ ամէն կարգի հիւանդութիւններէ տառապողներու թիւը բարձր էր: Հոն առաջին անգամ սկսած էր նաեւ ծննդավայր առաքման գործը, եւ կրկին հոն առաջին անգամ հաստատուած էր աշխատանքի գրասենեակ մը, որպէսզի ամէն մէկ գաղթականի՝ իր արհեստին կամ ընդունակութիւններուն համապատասխան՝ գործ մը գտնուէր: Այսպէս կարելի եղած էր մօտ հազար հոգի ինքնաբաւ դարձնել:

Երբ Ղալաթիոյ շրջանէն կարգ մը ազգայիններ զբաղած էին այլ մարդոց գործ գտնելով, նոյն ձեւով գաղթական հայուհիներու աշխատանք հայթայթելու համար, կամ այդ ազգայինները, եւ կամ բարեսէր ուրիշ անձեր՝ կարի մեքենաներ տրամադրած էին: Հաստատուած էր նաեւ գուլպայի գործարան մը:

Հետզհետէ առաքումի եւ փոխադրութեան ձեւով Ղալաթիոյ կայանին մէջ զետեղուած 3-400 գաղթականներուն թիւը հարկ տեսնուած էր նուազագոյնին իջեցնել, եւ մեկնիլ չուզողներն ալ բռնի միջոցներով հեռացնել, որպէսզի կարելի ըլլար կեդրոնական վարժարանը օգտագործել:

Հայտար Փաշայի կայանին մէջ ատեն մը երկու հազար գաղթականներ պատսպարուած էին, երկաթուղիի կայարանին մօտ, հանրային պարտէզին մէջ զետեղուած վրաններու տակ: Հակառակ այս անյարմար կացութեան, գաղթականներու մեծ մասը կը յամենար հոն մնալ: Ոմանք Պոլսոյ շրջակայ հայ գիւղերու կացութիւնը անապահով կը գտնէին: Ուրիշներ՝ ներսի գաւառներու ժողովուրդ՝ իրենց ծննդավայրերը մեկնելու անկարելիութեան մէջ էին. իսկ կարեւոր մաս մըն ալ շրջականները, կամ Պոլսոյ կողմը աշխատանք գտած ըլլալով, գիշերելու համար միայն կայան կը մնար: Իսկապէս, պզտիկ օրավարձերով աշխատողներուն համար չափազանց խճողուած քաղաքին մէջ բնակավայր վարձել գրեթէ անկարելի էր:

Սամաթիոյ կայանը (դպրոցական երկու շէնքեր, ընդարձակ բակով) պատերազմի ընթացքին թուրք զինուորներու կայարան եղած էր, բայց Զինադադարի սկիզբը պարպուած եւ միայն հայերու պատսպարման յատկացուած: Հոն բաղդատաբար լաւագոյն պայմաններու մէջ, մօտ 3-400 հոգի կը մնային, եւ մեծ մասամբ Խնամատարութեան կողմէ սնունդ կը ստանային:

*
**

Ինչպէս վերոյիշեալ թիւերը ցոյց կու տան, Ազգային Խնամատարութիւնը հետզհետէ վերածուած էր լայնածաւալ եւ բազմածախս հաստատութեան մը: Այլեւս բարեսրտութիւնը եւ տրամաբանութիւնը բաւարար չէին զայն ղեկավարելու, եւ նիւթապէս մատակարարելու համար: Մտահոգ էի նաեւ այն հեռանկարով՝ որ կուսակցական պայքարներու ստեղծած մթնոլորտին մէջ օր մը ստիպուած ըլլամ ձեռնբափ ըլլալ: Գրեթէ առանց բացառութեան ամէն օր տասներկու ժամ կ'աշխատէի. բայց արդեօք ինձի յաջորդողը սոսկ պաշտօնեայի մտայնութեամբ պիտի չմօտենան՞ որ այս գործին: Ամէն պարագայի տակ անհրաժեշտ էր հաստատութիւնը աւելի ամուր հիմերու վրայ դնել:

Դժբախտաբար մենք հաստատուն եւ մնայուն եկամուտներ չունէինք, ոչ ալ ընթացիկ հասկացողութեամբ պիւտճէ մը: Կազմակերպութիւնն ալ ոչ միայն նոր էր, այլեւ նախընթաց չունէր:

Պիւտճէ մը նկատի կ'ունենայ զանազան գլուխներ, եւ ամէն գլխու համար կը նախատեսէ, քիչ մը աւելի, քիչ մը պակաս՝ որոշ գումար: Մեր պարագային սակայն տուեալները չափազանց փոփոխական էին: Դիւրին էր անշուշտ որբերու սնունդին համար քալորի պարզ հաշիւ մը ընել: Բայց տարիներու զրկանքէն ու ժասպառ մեր որբերն ու տարագիրները ամէն տեղ միեւնոյն պայմաններուն տակ չէին ապրեր, որով իրենց եղած աջակցութիւնն ալ միօրինակ չէր կրնար ըլլալ: Գաւառի որբերն ու այրիները մասնաւորապէս յաճախ կը կարօտէին յաւելեալ օժանդակութեան: Անկասկած, այս բոլորը մեծ կարեւորութիւն չէր ստանար եթէ մեր նիւթական աղբիւրները բնականոն եւ լայն ըլլային:

Հակառակ այս բոլոր դժուարութիւններուն պարտաւոր էինք սակայն պիւտճէ մը պատրաստել: Այդ առընչութեամբ քննութիւններս եւ ուսումնասիրութիւններս ընդարձակեցի եւ խորացուցի: Սկսայ նաեւ հետեւիլ Ելեւմտական Յանձնախումբին աշխատանքներուն, որուն ղեկավարութիւնը զգուշացած էի ստանձնելու, հակառակ որ այդ ուղղութեամբ բուն փափաք կար, որովհետեւ արդէն պարտականութիւններս սպառիչ էին: Յայտնի եղաւ սակայն որ այդ յանձնախումբը պէտք էր վերակազմել, եւ կանոնաւոր աշխատանքի մղել: Կարելոր էր որ յանձնախումբը Խնամատարութեան ամսական որոշ գումար մը հայթայթէր, որպէսզի այդ հիման վրայ կարելի ըլլար պիւտճէ մը կազմել: Բայց մինչ այդ՝ պիտի փորձուէր կարելի խնայողութիւնը կատարել, որպէսզի հաստատութիւնը օր մը չճարճատէր եւ չփլէր:

Որպէս խնայողական միջոց հրահանգեցի որբանոցներու խնամակալութիւններուն որ իրենց խնամքին յանձնուած իւրաքանչիւր որբի համար մասնաւոր, եւ գաղտնի քննութիւն մը բանան: Որբանոցներուն

պաշտօնեաները նաեւ պարտականութիւն ստացան որբերու մօտ տեսակցութեան եկողներուն կապերը քննելու, որովհետեւ ինչպէս յիշեցի՝ շատ մը խնամակալներ իրենց ծանօթներուն զաւակները ձեռով մը որբ արձանագրած էին: Որեւէ կասկածելի պարագայ յանձնուէր իմ ուշադրութեանս, եւ ես ալ Որբահաւաք մարմնէն պաշտօնեայի մը պարտականութիւն կու տայի հարկ եղած քննութիւնը տեղւոյն վրայ կատարելու համար:

Որպէսզի որբերը իրենց պարագաները գտնելու դիւրութիւն ունենային, որոշեցի նաեւ Ազգային Խնամատարութեան վեցամսեայ տեղեկագիրը պատրաստել տալ, եւ անոր կցել ամէն որբանոցի պատրաստակալներուն անուանացանկերը: Գաղթականութեան շրջանին ընտանիքներու անդամները շատ յաճախ բաժնուած եւ զիրար կորսնցուցած էին: Այսօր իսկ, երեսուն-քառասուն տարիներ ետք՝ տակաւին զիրար փնտոողներ կան, ալ ուր մնաց այդ թուականին: Հարազատի մը գտնուելը մեծ ուրախութիւն էր. միւս կողմէ երբ որբ մը մեզմէ այդ կերպով բաժնուէր, տարեկան մօտ հարիւր քսանըհինգ ոսկի խնայողութիւն կը կատարէինք:

Կարելին փորձելէ ետք որ ծախսերը նուազագոյնի իջնեն, վերջապէս պատրաստեցի պիւտճէի մը նախագիծը, որ Վարչութեան կողմէ հաստատուեցաւ: Ըսուեցաւ որ Քաղաքական Ժողովն ալ պէտք է զայն վաւերացնէ: Ուստի հարկ եղած տեղեկագրերով եւ վաւերագրերով ներկայացայ անոր, եւ անհրաժեշտ բացատրութիւնները տուի: Ժողովին անդամ փաստաբան Դաւիթ Տէր Մովսէսեան խնդրեց ատենապետէն որ քննութեան համար պէտք եղած բոլոր թուղթերը յանձնեմ, եւ յաջորդ նիստին ներկայանամ:

Բոլոր ժողովականներու լուռ ունկնդրութեան մէջ յաջորդ նիստին մէկ ժամէն աւելի Դաւիթ Տէր Մովսէսեանի հետ վիճաբանեցանք: Ընդդիմախօսութիւնը իր նկարագրին մաս կը կազմէր, եւ եթէ նոյնիսկ իրեն համակարծիք ըլլայի, այս անգամ ինք իր առարկութիւնները կը հերքէր: Կը յիշեմ հետեւեալը. որբ գլուխ երկու սաւանի ծախս նկատի առած էի. ինք շատ կը գտնէր, եւ տարուած իր ընդդիմախօսելու կիրքէն ըսաւ — «Մենք մեր տունը ամէն մէկս միայն մէկ սաւան ունինք»: Ամէնքն ալ խնդացին: Պատասխանեցի — «Ուր կը մնայ մեր արժանապատուութիւնը եթէ մեր որբերը մենք մեզմէ աւելի խրնամքով մեծցնելու աշխատանք չտանինք»: Ի հարկէ Պատրիարքը եւ ժողովականները դարձեալ խնդացին, եւ այս ընդհանուր ուրախ տրամադրութեան մէջ, «մէ՞կ թէ երկու սաւանի» պատմութեան վերածուած պիւտճէն վաւերացուեցաւ: Եւ ատիկա, հարիւր հազար ոսկիներու պատկառելի գումար մը ներկայացնող՝ Խնամատարութեան առաջին պիւտճէն էր:

*
**

Պիւտճէի հաստատումէն եւ ծախսերու բաժնին մօտաւոր ճշդումէն ետք կը մնար հասոյթները գոյացնելու հարցը:

Ելեւմտական Յանձնախումբը լծուեցաւ այդ աշխատանքին: Իր դիւանը կազմելէ ետք հաստատուեցաւ Ղալաթիա, Ազգային Ժողովի յարակից սենեակներուն մէջ: Օսմանեան կառավարութեան երկու եւ շատ կարող ելեւմտագէտներ մաս կը կազմէին անոր, եւ պէտք է հաստատել որ արդիւնալի գործունէութիւն ունեցաւ:

Այսուհանդերձ կարգ մը դժուարութիւններ պատահեցան, որովհետեւ մասնագէտ անդամները, պետական սեղմ օրէնքներուն վարժուած՝ ո՛րեւէ չնախատեսուած պահանջի պարագային կը պնդէին որ բոլոր ձեւակերպութիւնները անպատճառ յարգուին: Ասիկա առիթ կու տար շատ մը ձգձգումներու, ժողովներու շաբաթական հաւաքոյթին պատճառաւ: Իսկ խնամատարական գործը այնպիսի անակընկալներով լեցուն էր որ դժուար պարագաներուն չէի գիտեր թէ գլուխս ո՞ր քարին զարնեմ:

Օրինակի համար կը յիշեմ հետեւեալը.

Սեւ Մովու եզերքը գտնուող որբերը օր մը նաւով Պոլիս եկան: Որբանոցին խնամակալութիւնը սպառնացող վտանգէ մը զիրենք ազատելու համար այդ միջոցին դիմած էր: Ահա անակընկալ խոշոր ծախս մը, որ մեր ելեւմտականը չէր կրնար հասկնալ: Ի վերջոյ, հարկ կ'ըլլար Պատրիարքին դիմել: Այսպէս, հակառակ նախատեսուած պիւտճէին սահմաններուն մէջ գործելու մեր նախանձախնդրութեան՝ ստիպուած էինք երբեմն շեղումներ կատարել:



6.- ԹՈՒՐՔԵՐՈՒ ՔՈՎ ԳՏՆՈՒՈՂ ՀԱՅ ՈՐԲԵՐ

Որբերու մասին խօսելով՝ ըսի թէ անոնք տարագիրներուն հետ Պոլիս եկած էին: Բայց կային նաեւ հարիւրաւոր որբեր թուրք որբանոցներու մէջ, եւ թուրք ընտանիքներու մօտ: Հայկական սպանդի միջոցին ո՞ր թուրքը պիտի չուզէր ձրի սպասաւոր կամ սպասուհի մը ունենալ: Իրենց փշրանքներով կարելի էր զանոնք կերակրել:

Բնականաբար ամէն հայ կը հետաքրքրուէր այս հարցով, եւ ամէնուն փափաքն էր հայ որբերուն ազատագրումը: Եւ առաջին հերթին՝ Չաւէն Պատրիարքին աւագ պարտականութիւնն էր տէր կանգնիլ իր հօտին: Ես որ ամենօրեայ յարաբերութեան մէջ էի իր հետ, մեծապէս գնահատանքի արժանի կը նկատէի այն աշխատանքը, զոր այս ուղղութեամբ ան կը կատարէր անձնապէս, եւ հաճոյքով կը տանէի իմ գործիս մէջ եղած այդ միջամտութիւնը: Իր ճանչցած եւ վստահութիւնը դրաւած 4-5 երիտասարդներ, իբր Որբահաւաք մարմին՝ Պոլսոյ մէջ քննութիւններ կ'ընէին, տեղեկութիւններ կը հաւաքէին, Համաձայնական Իշխանութեան ներկայացուցիչներուն հետ թուրք տուներէ ներս կը թափանցէին, կը խուզարկէին, եւ ի վերջոյ հայ որբը կամ որբուհին դուրս կը հանէին: Անշուշտ այդ գործը դիւրաւ չէր կատարուէր:

Թուրք պաշտօնեաները կարելի աշխատանքները կը տանէին, որպէսզի իրենց ճանկերուն տակ ինկած եւ պետական որբանոցներու մէջ գտնուող հայ որբերը ետ չտան: Նոյնպէս թուրք ընտանիքները միեւնոյն նպատակով ամէն խոչընդոտ կը յարուցանէին, ամէն դժուարութիւն կը ցուցնէին: Բայց կային նաեւ թուրքեր որոնք հայ որբերուն սրտով կապուած էին:

Քանի մը պարագաներ պիտի յիշեմ՝ այս կէտը որոշապէս հաստատող:

Բ. է. պէյ, հանրածանօթ գրագէտ մը, որ թուրք դիւանագիտական ասպարէզին մէջ շատ փայլուն դիրք մը ունէր (որչափ գիտեմ, Աթէնքի թուրք դեսպանն ալ եղած էր ատեն մը) օր մը այցելեց ինձի, եւ ըսաւ թէ մայրը իրենց խնամքին յանձնուած եւ որդեգրուած 13 տարեկան հայ պատանի մը կը պահէ: Վերջերս Որբահաւաքի պաշտօնեայ մը եկած է պահանջելով որ անիկա հայոց Պատրիարքարանին յանձնուի: Բացատրեց որ մայրը հարազատ թոռան պէս կը գուրգուրար անոր վրայ: Պատրաստակամութիւն յայտնեց մասնաւոր հայ ուսուցչի մը

միջոցաւ անոր հայկական կրթութիւն տալ, եւ նոյնպէս տունը պարբերաբար հայ քահանայի մը այցելութիւնը արտօնել՝ անոր կրօնական զգացումները զարգացնելու եւ իր վիճակին վրայ տեղեկութիւններ ստանալու համար:

Ինչ որ ըսի իրեն, օգուտ չըրաւ: Միշտ կը կրկնէր որ եթէ տղան իր մօրմէն բաժնուի, հաւանաբար մայրը մեռնի: Ստիպուեցայ աւելի խիստ խօսիլ, եւ իրեն պարզապէս բացատրել որ իր ազգակիցները զայն որբացուցած էին եւ հիմա, իբր վարձատրութիւն այդ անարգ ոճիրին՝ չէինք կրնար նոր ոճիր մըն ալ մենք մեր կամքով գործել:

Եւ որբը վերադարձուեցաւ ու լաւագոյն որբանոցներէն մէկուն մէջ գետեղուեցաւ:

Նման պարագայ մըն ալ պատահած էր, կ'ըսէին, Պատրիարքին եւ Սուրբաֆա Քէմալի մօրը միջեւ: Ան ալ հայ պատանի մը որդեգրած էր, եւ չէր ուզած վերադարձնել: Չեմ գիտեր թէ ի՞նչպէս վերջացաւ այդ խնդիրը, երբ Քէմալի աստղը բարձրացաւ:

Այլ պարագայ մը: Պաշտօնի բարձրացումով թուրք դատաւոր մը Հալէպէն Տիգրանակերտ փոխադրուած էր, եւ հոն տունը առած հայ գաղթական կին մը որպէս սպասուհի, եւ անկէ տղայ զաւակ մը ունեցած էր: Զինադադարին՝ հայ կինը զինք պատսպարող թուրք ընտանիքէն բաժնուելով, զաւակը հետը տարած էր: Դատաւորը լքած էր գործը փնտռելու համար իր զաւակը, եւ զայն վերջապէս գտած մեր որբանոցներէն մէկուն մէջ: Բայց հակառակ իր պահանջին տղան իրեն չէին յանձնած:

Բնականաբար, հայ կնոջ եւ իր միջեւ պաշտօնական ամուսնութիւն չէր կնքուած, եւ ըստ տեղական օրէնքի, ինքզինքը հայր նկատած այդ դատաւորը ամէն մարդէ աւելի լաւ գիտէր որ ինք զաւակին տէր կանգնելու իրաւունք չունէր: Բայց թախանձագին խնդրեց որ միջամտեմ:

Ի՞նչ կրնայի ընել: Հայ մայրը կեանքի լաւագոյն պայմանները անգոտնելով, իրեն առաջարկուած ամուսնութիւնն ալ մերժելով՝ նախամեծար կը համարէր գաղթականի թշուառ կեանքը, որպէսզի Խայ մնար, եւ իր զաւակն ալ հայ պահէր:

50-55 տարեկան, ուրիշ զաւակ չունեցող այդ դատաւորը գրասենեակիս մէջ սկսաւ լալ, ձեռքս-ոտքս իյնալ: Զինքը քաղաքավարօրէն դուրս հանեցի:

Երբ մենք այսպէս անշեղ ընթացքի մը կը հետեւէինք, թուրքերն ալ երբեք աւելի մեղմ ընթացքի չհետեւեցան: Թուրք որբանոցներու ընդհանուր տնօրէնը օր մը ինձի այցելեց: Զարմանալի զուգադիպութեամբ մը համալսարանի իրաւաբանական բաժանմունքի իմ դասընկերս եղած էր: Բոլուն զանգատ յայտնեց մեր որբահաւաքներուն գէմ: Ըսաւ թէ անիրաւ գործեր կ'ընէին, եւ թէ թուրքի զաւակները իբր հայ առնել կ'ուզէին:

Պատասխանեցի.

— «Մենք ոչ ոք որբացուցած ենք: Բիւրաւոր որբերու գոյութիւնը հայերու գործը չէ: Մենք ո'չ մէկ անիրաւութիւն գործած կ'ըլլանք, երբ տասէն մէկը մնացած մեր զաւակները կ'ուզենք գտնել, եւ այդ ուղղութեամբ աշխատանք կը տանինք»:

— «Համաձայնականներու միջոցաւ կեսարիոյ մեր որբերէն առնուած հայ որբերուն մէջ թուրք տղաք կան» կրկնեց:

— «Ինչո՞ւ, — հարցուցի, — հայու զաւակները — ամէնքն ալ — այդ որբանոցին մէջ թուրք անուններ ստացած էին: Ինչո՞ւ ամէնքն ալ խալամացուցած էիք: Բարոյականի ու բարեգործութեան ի՞նչ տեսակ ըմբռնում ունիք դուք ձեր բարեսիրակամ ձեռնարկներուն մէջ»:

Անշուշտ ձեռնունայն մեկնեցաւ:

Կը հաստատեմ որ մենք թուրքի զաւակ մը հայացնելու ոչ մէկ փափաք ունէինք: Եւ սակայն, ո'չ մէկ հայ պիտի մտածէր, այնքան ահռելի սպանդներէն ետք՝ մնացեալ հայորդիներէն ալ հարիւրաւորներ զոհել թուրքերու նննգ կեղծաւորութեան: Ասոր համար զարմանալի չէր մեր բծախնդրութիւնը, երբ կը հանդիպէինք թուրք անունով կարգ մը որբերու, որոնց հայ ըլլալուն հաւատալու համար մասնաւոր պատճառներ ունէինք, եւ կ'ուզէինք որ անոնց համար աւելի մանրամասն քննութիւններ կատարուէին: Ուրեմն, եթէ որբ մը ունէ պատճառով չէր խոստովանէր իր հայ ըլլալը, Համաձայնական իշխանութեանց հաւանութեամբ եւ կարգադրութեամբ՝ զայն կը զրկէինք Խնամատարութեան կողմէ, եւ իր ծախսով, Շիշլի հաստատուած Զէզոֆ տունը:

Հոն կային հայ եւ թուրք երկու կին ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ միշտ չէնքին մէջ մնացող հայ եւ թուրք պաշտօնեայ կիներ: Որբերը հոն երկար քննութեան կ'ենթարկուէին, եւ սակայն, մեր դժբախտութենէն եթէ որբ-որբուհի մը հայ ըլլալը բացարձակօրէն չէր հաստատուեր, ան նորէն կը վերադարձուէր թուրքերուն, որովհետեւ թուրքի քովէն եկած ըլլալը ամերիկուհիներուն համար բնական վիճակ կը նկատուէր: Այսպէս՝ որբերուն ինքնութեան մասին անոնց ըմբռնումը պատճառ դարձաւ որ տասնեակներով որբեր ընդմիշտ կորսուին հայութեան համար: Եւ սակայն թուրք ներկայացուցիչ գրագիտուհին (ամէն մեղքիս վրայ, ամերիկեան կրթութիւն ալ ստացած) միշտ կը դժգոհէր եթէ որբ մը հայ նկատուէր, եւ մեր որբանոցներէն մէկը զրկուէր:

Հետզհետէ թուրքերը ինքզինքնին աւելի զօրաւոր զգացին: Օտարներուն մօտենալու եւ զանոնք առինքնելու միջոցներուն մէջ խտիր չղնելու վարժ՝ անոնք սկսան այլեւայլ մեքենայութիւններու դիմել: Թուրք կինը հրաժարեցաւ, եւ քիչ յետոյ Շիշլիի Զէզոք տունն ալ գոցուեցաւ: Աւելի վերջը Պէպէթի մէջ ստեղծուեցաւ նոր Զէզոք տուն մը, որ հսկողութեան տակ դրուեցաւ Ամերիկացի, Զուիցերիացի եւ հրեայ կիներու: Ինչ խօսք որ գործը սկսաւ կաղալ, որովհետեւ

սկզբնական քաղաքական ուղեգիծն ալ, ներքին եւ արտաքին պատճառներով, տարբեր ձեւի մը մէջ մտաւ:

Ինչպէս ծանօթ է, Պոլիսը Անգլիական Իշխանութեան կողմէ գրաւուելէն վերջ, Փրանսացիք եւ իտալացիք բոլորովին տարբեր ուղեւորութեան մը հետեւեցան, եւ մեր դիմումները՝ սահմանափակուեցան միայն անգլիացիներով:

Ամերիկացիներու ղեսպան ծովակալ Պրիստոլի պարագան ալ ծանօթ է: Մեր յարաբերութիւնները ամերիկացիներուն հետ հետըզհետէ սահմանափակուեցան միայն ամերիկեան Բըլիֆին հետ, առանց քաղաքական ո՛րեւէ բնոյթ ունենալու:

Էրէնքէօյի կողմը անգլիացիք ալ, Լորտ Մէյըր Ֆոնտի կողմէ հայկական որբանոց մը կը պահէին Կիլիկիոյ շրջանէն բերուած հարիւրաւոր որբերով: Այդ հաստատութեան տնօրէն տոկտոր Քէնէտիի հետ եւս շատ սիրալիբ յարաբերութիւններ կը մշակէինք, եւ միայն այդքան:

Անշուշտ Ազգային Խնամատարութիւնը քաղաքական ոչ մէկ հանգամանք ունէր, եւ լոկ բարեգործական հաստատութիւն մըն էր: Կը մտածէի որ այդ սկզբունքին վրայ յենած գործունէութիւն մը աւելի օգտակար կրնար ըլլալ: Ինձմէ առաջ, եւ տնօրէնութեան պաշտօնէս դադրելէ յետոյ, քաղաքական շահագրգռութիւններ ունեցող անձեր այդ հաստատութեան մօտենալու փորձեր կատարեցին: Բարեբախտաբար Զաւէն Պատրիարքը, եւ Քաղաքական Ժողովի ատենապետ տոկտ. Դաւիթեանը աջալուրջ հսկողութիւն կը կատարէին, եւ չէին թողուր որ պղտոր ջուրի մէջ ձուկ որսացողներ՝ ազատ ասպարէզ գտնեն: Դէպք մը միայն պատահեցաւ, որ ստիպեց զիս Պատրիարքին հետ համաձայն՝ անձնապէս դիմելու Անգլիական Իշխանութեանց:

Ինչպէս, ըսի թուրքերը շատ դժուարութիւն ցոյց կու տային վերադարձնելու համար հայ որբերն ու որբուհիները: Ամէն տեսակ նենգ միջոցներու կը դիմէին իրենց ճանկին տակ պահելու համար գտնուածները, եւ եթէ կը ստիպուէին ուժին առջեւ տեղի տալ, միշտ առիթ կը փնտռէին կամ կը ստեղծէին՝ զանոնք վերստանալու համար:

Մեր որբանոցներու վարչութեանց հրահանգ տրուած էր իրենց ինամքին յանձնուած կարգ մը որբերը, եւ որբուհիները մանաւանդ մասնաւոր ուշադրութեան առարկայ դարձնել:

Պոլսոյ քաղաքական կացութիւնը կ'այլափոխուէր: Զինադադարի առաջին օրերու սահմուկեցուցիչ ազդեցութիւնը կը թուլնար: Կարգ մը անձնաւորութիւններ դարձեալ հրապարակ իջած էին: Անգլիացիներուն կողմէ Մալթա աքսորուած 50-60 մեծամեծներու պարագաները սկսած էին աշխատիլ զանոնք արձակել տալու համար, եւ այս նպատակով կը դիմէին անխտիր ամէն միջոցի: Թուրքերը համարձակութիւն կը ստանային իրենց ընդոծին նկարագիրը ցոյց տալու, եւ այդ պայմաններուն

մէջ որբ-որբուհի մը որբանոցէն փախցնելու աշխատանքը շատ բնական պիտի ըլլար անոնց համար:

Առաջին ահազանգը Պալատէն եկաւ: Ոսկեղջիւրի այդ որբանոցը երկսեռ էր: Քանի մը օրէ ի վեր որբանոցի պաշտօնէութիւնը տարօրինակ կը գտնէր կարգ մը կասկածելի երեւոյթով անձերու շէնքին շուրջ գիշերով դեգերիլը: Գիշեր մըն ալ որբանոցէն Անգլիացիներու փորձ մըն էին ըրած: Հետեւեալ օրը եկան կեդրոնը, ու ինծի լուր տուին:

Առանց մեր վարչութեան հերթական նիստին սպասելու, անմիջապէս տեսայ Պատրիարքը: Քննեցինք հարցը ամէն կողմով եւ որոշեցինք մինչ այդ գրեթէ անգէն մեր հաստատութիւններէն ամէն մէկուն համար քանի մը զէնք ապահովել, գիշերային պահակ պահելու, եւ Պալատի դէպքը առաջ քշելով Անգլիական Իշխանութեան ուշադրութիւնը հրաւիրել:

Այդ միջոցին լսած էի որ իմ վաղեմի ծանօթս, Բոպէրթ Կրէյվս*, գնդապետի աստիճանով Անգլիական ղեսպանատունը կը գտնուէր եւ հոն կը զբաղէր հայկական եւ յունական հարցերով**: Ներկայացայ անոր: Մեր վերջին տեսակցութենէն 4-5 տարի անցած էր: Այդ ժամանակաշրջանի մեր անձնական կեանքի պատմութիւնը իրարու հաղորդելէ ետք, անցանք նիւթին, երբ բացատրեցի այցելութեանս պատճառը:

Ուշադրութեամբ զիս մտիկ ընելէ յետոյ, յանձնարարեց առ այժմ հետեւիլ թուրքերու ձեռնարկներուն, եւ ակնյայտ թշնամական ընթացքի պարագային անմիջապէս իրեն գալ եւ պատմել եղածը: Խոստացաւ ամէն մէկ որբանոցի մօտ գտնուող իրենց զինեալ ուժերուն հրահանգ տալ, որ դէպքի մը պարագային անմիջապէս պէտք եղած աջակցութիւնը ընծայեն:

Խնդրանքիս վրայ արտօնեց նաեւ որ ամէն մէկ հաստատութիւն, ինքնապաշտպանութեան համար քանի մը զէնք պահէ:

*) Բոպէրթ Կրէյվս 90-ական թուականներուն Կարիսի Անգլիական փոխ-Ռուսաստան եղած էր: Ան էր, որ առաջին անգամ Կարսոյ մէջ Հ. Յ. Դաշնակցութեան եւ անոր ստանալիք կարեւոր երեւոյթը մարգարեական շունչով մը տեղեկագրած էր Լորտ Սալզբորիին: Յետոյ՝ Մակեդոնական խնդրոյ ժամանակ, Սելանիկի ընդհանուր Ռուսաստան էր եղած: Թուրք Սահմանադրութեան յայտարարութենէն ետք թուրք ելեմտական բարեփոխումաց բարձր յանձնախումբին անդամ, ապա Արեւելեան Ասիայի Սահմանադրութեան հսկելու մասնաւոր պաշտօնը ստանձնած էր: (Հօֆ եւ Վեթերստեյն իրենց տեղեկագրերը անոր պիտի դրկէին որպէս Բարձր Դրան քննիչ մարմինի Ասիայագիր): Ծանցայ զինք Հօֆի միսիոնիստ Ռեւ. Վանէն վերադարձուալէ յետոյ, եւ երբ ամիսի շափ ալ իր Ասիայագրական մարմին մէջ իր օգնականը եղայ:

**) Վերջը իմացայ որ Սեպի դաշնագրի հայկական եւ յունական մասերու Ասիայագիծով զբաղած էր:

7.- ՇՈՒՏ ՄԵԾՑՈՂ ՈՐԲԵՐ

Հետզհետե կարեւորութիւն կը ստանար մեծցած որբերու պարագան:

Կեանքի աւելի տանելի պայմաններուն տակ Ազգային Խնամատարութեան որբերը կարծես աւելի շուտ կը մեծնային, եւ արդէն անյարմար կը դառնար զանոնք որբանոցներուն մէջ պղտիկներուն հետ միասին պահելը: Չէինք կրնար սակայն մէկ օրէն միւսը, այդ հարիւրաւոր տղաքը մեր պատսպարան-որբանոցներէն դուրս հանել: Իսկ միւս կողմէ, եւ հակառակ նպաստահաւաք մարմիններուն հետզհետե աւելի կանոնաւոր եւ արդիւնաւէտ աշխատանքին՝ անխուսափելի կը դառնար կրճատել մեր մեծածախս պիւտճէն: Բան մը որ աստիճանաբար կը կատարուէր արդէն, բայց արդիւնքը անբաւարար էր: Ուստի անհրաժեշտ կը դառնար հիմնական կարգադրութիւններ ընել, եւ մեծցած որբերը ինքնապահ դարձնել: Այդ նպատակին իրականացման համար կը մտածուէր արհեստանոցներ բանալ, նոյնիսկ մեր նախնական միջոցներով:

Բայց արհեստանոցները նախ եւ առաջ յարմար շէնքերու կը կարօտէին, որոնք հետզհետե անգտանելի դարձած էին: Պ. Չաքըրեանի միջոցաւ միշտ կը դիմէինք Անգլիական Իշխանութեան շէնք պահանջելով, բայց անոնք այլեւս տեղացի ժողովուրդը չէին ուզեր նեղել:

Ահա այդ օրերուն իմացանք որ անգլիացիք կը մտածէին մեզի կառավարական երկու մեծ շէնքեր տրամադրել: Դեռ չէինք գիտեր թէ ի՞նչ տեսակ շէնքեր պիտի տրամադրուէին: Բայց ես արդէն որոշած եւ գործադրութեան սկզբնաւորութիւն մը ըրած էի՝ Նշան Թաշի որբանոցին մէջ, կօշկակարութեան պղտիկ արհեստանոց մը բանալու համար: Նախապատուութիւնը տուած էի այդ որբանոցին, պարզ այն պատճառով, որ անոր նախկին ուսուցիչ-տնօրէնը փոխուած էր, եւ անոր տեղը բաւական զարգացած, ուշիմ եւ շուկայի կեանքէն հասկցող անձ մը նշանակուած էր:

Կարճ ժամանակ յետոյ Պատրիարքէն իմացայ որ անգլիացի ծովակալ Ուէպ այցելած էր իրեն, եւ խոստացած Վոսփորի ասիական եզերքը գտնուող Գուլէիի երկրորդական թուրք զինուորական վարժարանը, ինչպէս նաեւ Պէյլէր պէյի պալատը իբր որբանոց մեզի տրամադրել:

Լուրը շլացուցիչ էր, բայց միեւնոյն ժամանակ շքեցուցիչ: Շլացուցիչ էր, որովհետեւ ասիկա ցոյց կու տար որ անգլիացիք ամէն ժամանակէ աւելի մեծ դաս մը կ'ուզէին տալ թուրքերուն: Հարպիյէն (զինուորական սպայից վարժարանը), ամէն յարմարութիւններով օժտուած եւ թուրք բանակին օրրանը նկատուած այդ հսկայ շէնքը՝ ուր 2500 ապագայ սպայացու երիտասարդներ իրենց ասպարէզին կը պատրաստուէին, իրաւամբ Օսմանեան Կայսրութեան զինուորական ուժին խորհրդանիշը կը նկատուէր: Չայն թրքական սպանդէն մագապուրծ ազատած Խալ որբերուն յատկացնելու որոշումը լախտի հարուած մը կու տար զինադադարէն մէկուկէս տարի վերջ արթննալու սկսած թուրք ազգայնական շարժումին: Հարուած մը սակայն որ ինծի մեծ մտահոգութիւն կը պատճառէր երկու կարեւոր պատճառներով: Մէկը ներքին, իսկ միւսը՝ արտաքին:

Թաղերու մէջ գտնուող մեր որբանոցները նոյն թաղին ազգայիններէն կազմուած ինամակալ մարմիններու տեւական հսկողութեան տակ կ'ապրէին: Եւ եթէ անոնց սկզբնական լիակատար նիւթական աջակցութիւնը հետզհետե նուազագոյնի իջած էր, անոնց բարոյական հակակշիռը սակայն թանկագին էր:

Երկու հազար հինգ հարիւր մարդ պատսպարող շէնք մը որբերով լեցնելը, զայն նիւթապէս եւ բարոյապէս պատշաճ կերպով պահելը միայն պետական միջոցներով կրնար իրագործուիլ: Կար նաեւ այն անպատեհութիւնը, որ շէնքը թուրք գիւղերով շրջապատուած էր, եւ հայեր չկային մօտերը:

Մտահոգութեանս միւս պատճառն այն էր որ թուրքերը մօտ օրերու մէջ, ինչպէս այն ժամանակ Պոլսոյ մթնոլորտը ցոյց կու տար՝ իրենց վրիժառութեան թիրախ կրնային դարձնել հոն պատսպարուած հայ որբերը: Եւ այդ պարագան հայ կեանքին վրայ դառն անդրադարձումներ կրնար ունենալ:

Մեր Վարչութիւնն ալ կ'ապրէր այդ մտահոգութիւնները, ուստի որոշեց խնդիրը քիչ մը ձգձգել:

Մովակալը սակայն տասնեւհինգ օր վերջ պահանջեց որ տրամադրուած նոր շէնքերուն տէր կանգնինք, եւ փոխարէնը՝ թաղերու մէջ գտնուող որբանոցներէն մէկ-երկուքը պարպենք:

Պէտք էր շուտափոյթ որոշում մը տալ: Եւ այդ որոշումը հարկադրաբար հաստատական եղաւ:

Տիկին Յակոբեանի հետ այցելեցի պարպուած շէնքը (Գուլէիի դէմը): Պարզապէս մարդ գլխու պտոյտ կ'ունենար այդ երկյարկանի շինութեան անվերջ սրահները եւ նրբանցքները տեսնելով: Միայն նրբանցքներուն մէջ հազարի մօտ ընկուզենիի տախտակով շինուած հագուստի մարդահասակ պահարաններ կային. իսկ լուացքի շէնքը, որ նաեւ լաթերը չորցնելու մասնաւոր յատկութիւնով օժտուած էր՝ իր գրաւած տեղով մեր որբանոցներուն չափ մեծ էր:

Տիկին Յակոբեան յանձն առաւ մաքրութեան հսկել, եւ երկու հարիւր ոսկի ծախսեցինք՝ միայն այդ նպատակաւ:

Գացինք նաեւ քիչ մը աւելի վեր, այսինքն՝ դէպի Պոլիս, Պէյլէր պէյի կողմը: Այդ շէնքը շատ աւելի պզտիկ էր, բայց կրնար քանի մը հարիւր որբ պատսպարել: Որոշեցինք զայն արհեստանոց-որբանոցի վերածել: Եթէ այս երկու շէնքերէն մէկը, չափազանց ընդարձակ ըլլալով, անպատեհութիւններ ունէր, միւսին՝ Պէյլէր պէյի պալատին տակի մատանները լեցուն էին բանակի զէնքերով, որոնք Անգլիական Իշխանութեան հակակշռին տակ կը պահուէին: Չանոնք թուրքերուն չյանձնեցին, այլ մեզի վստահեցան, ինչ որ գլխու մեծ ցաւ եղաւ: Քանի՛ քանի՛ չափահաս որբեր, որոնք արհեստ մը կը սորվէին շէնքին մէջ, կարօտով կը նայէին այդ զէնքերուն, եւ որքա՛ն խնդիրներ ունեցանք որբանոցէն մեկնողներուն հետ, որոնք իրենց պատսպարանէն յիշատակներ կ'ուզէին հետերնին տանիլ...

Անգամ մը մաքրելէ եւ անհրաժեշտ պզտիկ նորոգութիւնները ընելէ վերջ, սկսանք փակուելիք որբանոցներուն գոյքերը հոն փոխադրել, եւ հետզհետէ լրացնել միւս պակասները: Եւ այսպէս թուրքերու գինուորական այդ շէնքը դարձաւ հայկական, եւ զգարէ շատ աւելի որբերով:

Ամէն բանէ առաջ մեզ զբաղեցուց տնօրէնի հարցը: Այդ նորահաստատ մեծ որբանոցը կարող վարիչի մը եւ լաւ ուսուցիչ-տնօրէնի մը պէտք ունէր: Չաւէն Պատրիարք ջերմ փափաք յայտնեց որ Սանասարեան վարժարանի տեսուչներէն Պ. Աբուլեանը այդ պաշտօնին կոչուի:

Աբուլեանը ինծի ծանօթ չէր: Ըստ երեւոյթին զարգացած եւ քաղաքավար մարդ մըն էր, բայց իմ փնտրած յատկութիւնները միայն ատոնք չէին: Ես կ'ուզէի գործունեայ, նուազ տարիքոտ եւ փորձով իր կարողութիւններուն ապացոյցը տուած մէկը: Եւ որովհետեւ Վարչութիւնն ալ Պ. Աբուլեանը անուանել կ'ուզէր, որոշեցի Ազգային Հիւանդանոցի որբանոցին տնօրէնը իրեն օգնական անուանել տալ: Ան ալ Սանասարեանի աշակերտ էր, եւ այդ հաստատութեան կողմէ Գերմանիա ուղարկուած (ափսոս որ անունը մոռցած եմ) եւ ապա վերադառնալով ուսուցիչ եղած: Իր անուանումը (այսինքն տեղափոխութեան որոշումը), Վարչութեան կողմէ որեւէ դժուարութեան չբախեցաւ: Այս կերպով տնօրէնութեան կազմը թէ՛ ընդհանուր հաւանութեան արժանացաւ, եւ թէ՛ ես մեծ մտահոգութենէ մը ազատեցայ:

Բայց հարցը այդչափով չէր լրանար: Կար նաեւ ուսուցչական կազմի խնդիրը, եւ մանաւանդ գիշերօթիկ մեծ հաստատութեան մը ներքին կարգապահական խնդիրը: Յետոյ, կար մասնաւանդ Պոլսոյ առիական մասին վրայ բոլորովին թրջարնակ վայրի մը մէջ, թուրքերու սրահին մէջ իբր սուր միտուած մեր որբերուն ապահովութեան հարցը:

Բարեբախտաբար կարճ ժամանակի մէջ այս բոլոր խնդիրները իրենց լուծումը գտան, եւ մէկ ամսուան ընթացքին Գուլէլիի շէնքը արդէն գրեթէ տիպար որբանոց մը դարձաւ, գինուորական հաստատութեան մը կարգապահութեամբ եւ ապահովութեամբ: Մերիններուն աչալուրջ ընթացքը եւ ձեռք առած միջոցները անախորժ դէպքերու առաջըր առին:

8.- ԱՐՄԱՇԻ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՑԸ

Չափահաս (կամ այդ տարիքին մօտեցող) որբերու հարցը, հակառակ զանոնք ինքնապահ դարձնելու համար կատարուած աշխատանքին՝ միշտ մեր մտահոգութեան առարկան մնաց:

Ազգային Խնամատարութեան Գիւղատնտեսական Յանձնախումբը ծրագրած էր իր հսկողութեան եւ խնամքին ենթակայ վարժարան մը հաստատել: Անհրաժեշտ էր զայն հիմնել ազարակի մը կից, բան մը որ անկարելի էր Պոլսոյ մէջ: Իսկ դաւառներուն մէջ ապահովական անլուծելի հարցեր ցարդ անկարելի դարձուցած էին ծրագրին գործադրութիւնը: Միւս կողմէ՝ Գիւղատնտեսականի անմիջական հսկողութիւնը անհրաժեշտ էր նման մասնագիտական դպրոցի մը համար:

Այս առնչութեամբ օր մը Չաւէն Պատրիարքին յիշեցուցի Գիւղատնտեսականին ծրագիրը, եւ հարցուցի թէ Արմաշի վանքը արդեօք այդ նպատակով կարելի՞ էր գործածել:

Վանքը թէեւ կազմալուծուած՝ բայց վարչականօրէն ենթակայ էր Պատրիարքութեան, որով Պատրիարքին հաւանութիւնը անհրաժեշտ էր:

Պատրիարքը իր հաւանութիւնը տուաւ: Տեղւոյն վրայ քննութիւն մը կատարուեցաւ, քանի պատերազմի ընթացքին թուրքերը վանքին շէնքերուն մէկ մասը գրաւած էին, եւ այդ նուիրական վայրը հիմա «էնվեր փաշայի Զիֆթլի» (ազարակ) անունը կը կրէր: Սպասելի էր ուրեմն որ փլատակ վիճակի մէջ ձգած ըլլան զանոնք: Իսկապէս քննութեան արդիւնքը անգամ մը եւս հաստատեց Վ. Հիւկոյի խօսքը մեր հարեւաններուն մասին*։ Բայց ստիպուած էինք 15-20 տարեկան կարգ մը որբերու համար ապրուստի միջոց մը գտնել, եւ հակառակ ներկայ վիճակին, Արմաշի վանքին ընդարձակ հողերն ու անտառները տիպար ազարակ-դպրոցի մը վերածուելու կարելիութիւնները կը

*) «Պորքերը այստեղէն անցան. ամէն ինչ ակեր եւ սուգ»: (Խճր.)

ներկայացնելին, եթէ չէնքերուն նորոգութիւնները կատարուէին: Բոլոր այդ աշխատանքները տարուեցան, բայց այդ պահուն դժուարութիւն մը ծագեցաւ անձնակազմի անուանման առիթով: Ո՛չ Գիւղատնտեսական Յանձնախումբը, եւ ոչ ալ Արմաշի մէջ աշխատելու կոչուելիք անձերը տնօրէն ըլլալիք անձի մը չուրջ համակարծիք էին: Ի վերջոյ, որոշուեցաւ դպրոցը կառավարել ուսուցչական մարմնի մը միջոցաւ, Յանձնախումբին վերին հսկողութեան տակ: Մշակուեցաւ նաեւ նպատակա-յարմար ուսման ծրագիր մը:

Արմաշ ուղարկուելիք չափահաս (կամ գրեթէ չափահաս) որբերու ուսումնական մակարդակը, ինչպէս նաեւ տարիքը՝ սովորական դասարանէ մը տարբեր պատկեր կը ներկայացնէին: Բարդ պարագայ էր նաեւ տարիքով մեծ, բայց ուսման մէջ տկար աշակերտներուն ներկայութիւնը: Որով անհրաժեշտ դարձաւ աշակերտութիւնը երկու մասի բաժնել, նախապատրաստական եւ գիւղատնտեսական, որոնք առաւելապէս գործնական աշխատանքներու պիտի լծուէին, եւ իրենց ստացած նախապատրաստական ծանօթութիւններն ալ ապագային մասնագիտական ուսումնին զարգացնել ուղղուեցան համար՝ բաւարար հիմ պիտի կրնային ըլլալ: 217 որբեր ուղարկուեցան Արմաշ, եւ Գիւղատնտեսական վարժարանին բացման հանդէսը տեղի ունեցաւ 1919 Նոյեմբեր 9-ին: Անմիջապէս յետոյ սկսան դասաւանդութիւնները:

9.- ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Զինադադարին Պոլիս հասած էին նաեւ բազմաթիւ երիտասարդ Հայ մտաւորականներ, արձակուելով գինուորական ծառայութենէն, եւ կամ դուրս գալով իրենց թագստոցներէն: Ամէն մէկը անշուշտ բան մը կ'առաջադրէր ընել, ասպարէզի մը հետեւիլ: Եւ սակայն մինչեւ այդ ծրագիրներուն իրագործումը անհրաժեշտ էր տեղ մը պատասպարուիլ եւ ուտել: Ասոնք ալ ազգին հասած զաւակներն էին, եւ ես խորապէս համոզուած էի որ ինքնամատարութիւնը — որ ազգային անունը կը կրէր — անոնց հանդէպ ալ պարտաւորութեան բաժին մը ունէր:

Պոլսոյ մէջ մեր բազմաթիւ հաստատութիւնները պատասպարեցին անոնց մեծ մասը, որպէս ուսուցիչ: Որբերը թաղային վարժարանները ղրկել անյարմարութիւններ կրնար ստեղծել, որով ամէն որբանոց վե-

րածուած էր նաեւ գիշերօթիկ վարժարանի մը: Յատուկ յանձնախումբ մը մշակեց ուսումնական ծրագիր մը, եւ ամէն որբանոց ունեցաւ իր տնօրէնը կամ տնօրէնուհին:

Այսպէս է որ աշխատանքի մարդ մը բացուեցաւ բազմաթիւ մտաւորականներու առջեւ (ազգային վարժարաններու մէջ գործող ուսուցիչ-ուսուցչուհիներու թիւին գրեթէ հաւասար): Խնամատարութեան կեդրոնն ալ արդէն քսանէ աւելի պաշտօնէութիւն ունէր: Այս բոլորին համար՝ այդ դժուար օրերուն՝ ինքնամատարութիւնը փրկութեան լաստ մը եղաւ, եւ երբեք չեմ զղջացած այս երիտասարդութեան համար գործ եւ հաց գտնելու համար, նոյնիսկ եթէ խնայողութեան սկզբուեցէն երբեմն շեղումներ գործեցի:

Անշուշտ մեծ ամսականներ չէինք կրնար վճարել: Իսկ որբանոցներու մէջ պարտականութիւններ ստացողներն ալ հոն կը ճաշէին, եւ իբր ամսական գրպանի դրամ միայն կը ստանային:

Հետզհետէ սակայն իմ այս գործելակերպս սխալ մեկնութիւններու դուռ բացաւ:

Ոմանք դժգոհ մնացին, որովհետեւ բնականաբար ամէն դիմում կատարողին փափաքը չէր իրականանար: Յետոյ՝ առանց քննութեան մեծ սխալ պիտի ըլլար առաջին եկողին գիշերօթիկ հաստատութեան մէջ պաշտօն տալ: Թող զարմանալի չթուի եթէ յայտնեմ, որ անհատական տպաւորութիւնս ալ ընտրութեան մէջ մեծ դեր կը կատարէր: Տարիներու դատական պաշտօններս մարդիկ արագ քննութենէ մը ետք բաւական ճանչնալու վարժութիւնը տուած էին ինծի:

Յետոյ Հայ կուսակցութիւններու մէջ ալ մրցում մը սկսած էր իրենց անգործ ընկերները ինքնամատարութեան միջոցաւ մէյ մէկ գործով օժտելու, եւ այդպէս նաեւ վարկ եւ ազդեցութիւն չահելու համար: Ասիկա նաեւ առիթ կու տար իմանալու հաստատութիւններու մէջ անցած-դարձածը:

Առանց ճակատէն զարնելու համարձակութեան, սմսեղուկ սը-պրըդաժութեամբ մը օրէ օր արձագանգը կու գար ինծի այն գանգատին՝ թէ Ընդհանուր Տնօրէնը ամէն տեղ դաշնակցականներով կը լեցնէ: Օր մըն ալ Վարչութեան նախկին ատենապետ տոկոտ Դաւիթեան (իրեն յաջորդած էր տոկոտ Ծաղուկեանի վարչութիւնը) Ազգային Ժողովին մէջ գանգատ յայտնեց թէ Քաղաքական Ժողովը բոլոր ազգային մարմիններու վրայ իր հսկողութիւնը տարածելու պարտականութեան մէջ կը թերանայ, թէ ինքնամատարութեան կեդրոնը եւ որբանոցները աւելորդ պաշտօնեաներով լեցուած են, եւ թէ հիմա ալ ձեռնարկած են «Վեցամսեայ Տեղեկագիր» անունով ընդարձակաժառանգ գիրքի մը հրատարակութեան, որուն համար կ'ըսուի թէ երկու հազար ոսկիի մօտ ծախս պիտի ըլլայ: Եւ ասիկա՝ այն ատեն երբ ամէն ժամանակէ աւելի խնայողութեան պէտք կայ: Հետեւաբար, տոկոտ Դաւիթեանը կը խնդրէր որ Ազգային Ժողովին կողմէ քննիչ յանձնախումբ կը կազմուէր:

Իբրեւ երեսփոխան* պատասխանեցի, եւ աւելի ծանրացայ մա՛նաւանդ այն Թիւթակաճ առաւելութիւններուն վրայ, զոր վեցամսեայ առաջին տեղեկագրէն կը սպասէի: Ըսի որ եթէ որբերու ցանկին կցումով, հատորը քիչ մը կը ստուարանայ եւ ծախսը կը շատնայ, միւս կողմէն ալ առնուած 20-30 որբեր, եթէ գտնեն իրենց ծնողքը եւ պարագաները, այդ ցանկերուն հրատարակութիւնը լիովին կ'արդարանայ: Գալով շատ պաշտօնեայ ունենալուն՝ խնդրեցի ժողովէն որ գանգատող տուտ. Դաւիթեանի պաշտօն տան այդ մասին քննութիւն մը կատարելու, եւ հաւաստիք տուի որ եզրակացութիւններուն սիրով պիտի ենթարկուիմ: Այդպէս ալ որոշում անցաւ:

Քանի մը օր վերջ, տուտ. Դաւիթեան այցելեց Խնամատարութեան կեդրոնը: Իրեն հետ սրտբաց երկար խօսակցութիւն մը ունեցայ: Յետոյ միասին կեդրոնի բոլոր դիւանները այցելեցինք: Ամէն մէկ պաշտօնեայի գործը ի՞նչ է, հասկցաւ եւ տեսաւ թէ բաւարար զբաղում ունի՞նք թէ ոչ:

Երբ վերադարձանք գրասենեակ նկատեցի որ Ազգային ժողովին մէջ ըրած իմ յայտարարութիւններս ճիշդ գտած էր: Այս անգամ աւելի անվերապահութիւն կար իր արտայայտութեանց մէջ: Խօսակցութիւնը երկարօրէն կեդրոնացաւ նոյնիսկ Հայաստանի Հանրապետութեան վրայ, որ այդ օրերուն զիւ Խնամատարութեան Նախարարութեան Պոլսոյ ներկայացուցիչը կարգած էր: Զարմանքս մեծ եղաւ երբ անդրադարձայ այն բացարձակ անգիտութեան զոր ան ցոյց տուաւ Հայաստանի մէջ կատարուած գործին եւ գործողներուն մասին:

Փոխադարձ գոհունակութեան եւ շնորհակալութեան արտայայտութիւններով իրարմէ բաժնուեցանք:



*) Ընտրութեանց շրջանին, Պոլսէն (Եւնի Գաբու), Խարբերդէն եւ Իզմիրի շրջանէն ազգային երեսփոխան ընտրուած էի:

10.- ԱԶԳԱՅԻՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՔՆՆԻՉՆԵՐԸ

Հաղորդակցութեանց միջոցներուն անբաւարարութիւնը եւ դանդաղ ընթացքը յաճախ արգելք կ'ըլլային որ Ազգային Խնամատարութիւնը մօտէն եւ արագօրէն իրագրել ըլլար գաւառի մէջ գործող մեր մասնաճիւղներուն կարիքներուն, ծրագիրներուն, հանդիպած դժուարութիւններուն եւ ստացուած արդիւնքներուն մասին: Ուստի անհրաժեշտ նկատուեցաւ չընդուն ներկայացուցիչներ ղրկել, լիազօր եւ ընդհանուր ԲԱՅԻՉԻ Հանգամանքներով, որոնք ճշդուեցան Վարչական ժողովին կողմէ հաստատուած կանոնագրով մը:

Երջանային քննիչներուն գործունէութեան աշխարհագրական շրջանը պիտի բնորոշուէր ոչ միայն հոն գտնուող հայրենակիցներուն վիճակով, այլ եւ ստիպողաբար պիտի մեկնէր կարգ մը քաղաքական տուեալներէ: Որովհետեւ Ազգային Խնամատարութեան կազմութեան ատեն — 1919-ի սկիզբը — Համաձայնական Իշխանութիւնները արդէն գծած էին թուրքիոյ մէջ իրենց ազդեցութեան շրջանակները: Այսպէս՝ առաջին օրէն Կիլիկիոյ շրջանին տիրապետողները Փրանսացիները եղան: Իսկ անգլիացիներու կողմէ Պոլսոյ գրաւումը — անուանական գոյութեամբը Իտալական եւ Փրանսական Իշխանութիւններուն — պատճառ դարձաւ որ մենք առաւելապէս անգլիացիներու հետ յարաբերինք: Որով Կիլիկիոյ մէջ հայերը Փրանսական ներկայացուցիչներուն հետ գործ պիտի ունենային, եւ հայ ազգային իշխանութիւնները կարելիութիւնը ունէին իրենց խնդիրները տեղւոյն Փրանսացի զինուորականներուն միջոցաւ կարգադրելու: Հոն Խնամատարութիւնը գրեթէ ընկիւղ չունէր: Կ'երեւի այս կէտը լաւ չէր հասկցուած: Կիլիկիա ղրկուած քննիչը — նիւթական լայն միջոցներով օժտուած — շատ աւելի իր ըմբռնած ձեւով գործը վարած էր, եւ բնականաբար ըսի-ըսաւներու տեղի տուած: Գիւղացիները ինքնապաշտպանութեան պատրաստելը, եւ այս կամ այն կուսակցութեան կազմակերպութիւնն ու ազդեցութիւնը հաստատելը կամ ընդլայնելը Խնամատարութեան գործը չէր:

Յարմար նկատուեցաւ քննիչ մը ղրկել Անգարայի, Եոզգաթի եւ շրջակայքին համար: Այդ կողմերը մարմիններ ունէինք արդէն, որոնց հետ կը թղթակցէինք, նիւթական օժանդակութիւն ալ կը կատարէինք, սակայն հետզհետէ մեր մտահոգութիւնը կ'աւելնար անոնցմէ հասած

լուրերով: Առջի օրերու սմբած թուրքերը հետզհետէ գլուխ կը ցցէին: Կեղերոնի կառավարութիւնը, տակաւին անգլիացիներուն ենթակայ՝ չէր համարձակէր քաջալերել այդ հակումները, եւ տակաւին ապստամբութիւն չկար, բայց գրեթէ ամէն օր, այլեւայլ առիթներով, նոյնիսկ մէկ երկու յոյն վաճառականներու միջոցաւ, որոնք ներքին գաւառներու իրենց ազգակիցներուն հետ յարաբերութեան մէջ էին, կսկծալի տեղեկութիւններ կը հասնէին Եոզղաթի շրջանէն: Այս հարցը Վարչութեան նիստերուն օրակարգին վրան էր, բայց ժողովականներէն ոչ ոք յարմար թեկնածու մը կըրցաւ ներկայացնել: Հոն դրկուելիք քննիչը նախ եւ առաջ ջարդի եւ աւերածի այդ աշխարհին մէջ՝ անոնց արիւնարբու հեղինակներուն առընթեր աշխատելու համարձակութիւնը ունեցող սրտոտ անձ մը պիտի ըլլար: Նաեւ վստահելի՝ քանի իր տրամադրութեան տակ հազարաւոր ոսկիներ պիտի գտնուէին: Վերջապէս, անհրաժեշտ էր որ անգլիացիներուն եւ ամերիկացիներուն հետ յարաբերելու չափ անգլերէն գիտնար, եւ ունենար կեանքի փորձառութիւն:

Միտքս միշտ այդ հազուագիւտ անձը փնտռելով զբաղած էր, երբ շաբաթ օր մը պատահմամբ հանդիպեցայ Պ. Մկրտիչ Խալասեանին, որ քսան տարի առաջ Միացեալ Նահանգներ գաղթած էր, յետոյ Թուրքիա վերադարձած, եւ այժմ կը պատրաստուէր դարձեալ Ամերիկա երթալու: Զինք նախապէս կը ճանչնայի, որովհետեւ պատանեկութեան շրջանին իր ընտանիքը ծննդավայրս հաստատուած էր: Ժամ մը զինք լսելէ յետոյ տեսայ որ ճի՛շդ մեր փնտռած մարդն էր: Ներկայացուցի զինք Վարչութեան ատենապետ Երուանդ Շիրինեանին: Տասը վայրկեան խօսակցութենէ մը ետք երկուքն ալ համաձայն եղան որ նոյն իրիկուն գումարուելիք ժողովին իր թեկնածութիւնը դնեմ. եւ իսկապէս ժողովն ալ ուրախութեամբ նկատի առաւ զայն:

Պ. Մկրտիչ Խալասեան իր շուրջ վեց ամսուայ քննիչութեան շրջանին ունեցաւ բացառիկ գործունէութիւն մը, եւ Գաղատիոյ, Եոզղաթի, Քէսքիւնի, Պողազլեանի, Ագտաղ Մատէնի, Գըրչէհիրի կողմերը, համատարած թշուառութեան մէջ՝ կըրցաւ կանոնաւոր որբանոցներ հաստատել եւ անոնց մէջ պատասպարել 2500-ի մօտ որբեր: Մինչ այդ՝ անոնցմէ մաս մը տեսակ-տեսակ հիւանդութեանց եւ անսուղղութեան յառաջացուցած կեղտերով եւ վէրքերով ծածկուած՝ հոս-հոն իր կեանքը քարչ կու տար: Ուրիշ մաս մըն ալ կարելի եղած էր Թուրքերու ձեռքէն անուշութեամբ կամ բռնութեամբ առնել եւ ազգին վերադարձնել:

Կրնամ ըսել, թէ Պ. Խալասեանի քննիչական գործը նախախնամական եղաւ այդ շրջանին համար: Շատ անգամներ, իր կեանքը վտանգելու գնով, գացած էր այնպիսի տեղեր, ուր Օսմանեան կեղերոնական իշխանութիւնը անզօր դարձած էր, եւ Համաձայնականներու ազդեցութիւնն: Եւ գրեթէ անուանական: Ոչ թէ ճամբաներու վրայ, այլեւ նոյնիսկ քաղաքներու մէջ տէրն ու տիրականը աւազակներն էին: Պ.

Խալասեան մնացած էր հոն այնքան որ կարելի էր մնալ, եւ վերադարձին (հարաւային ճամբով) մազապուրծ ազատած էր իր կեանքը:

Խնամատարութեան ներկայացուցած իր վերջնական տեղեկագրին մէջ (արտատպուած մեր վեցամսեայ տեղեկագրին մէջ) այնպիսի տողեր կան, որ անոնց ընթերցումը, Ապրիլեան Եղեռնի տարեդարձին առթիւ խօսող բանախօսներուն ուշադրութեան կը յանձնեմ: Եղեռնը եւ աքսորի ճամբու տառապանքները պատկերացնող բաւական գրութիւններ գոյութիւն ունին: Բայց այդ մեծ սպանդէն վերջ, իրենց ծննդավայրը վերադառնալու բախտն ունեցողներ, եւ հոն տեսնուած ջարդի եւ աւերածումի ձգած ընդհանուր վիճակը ներկայացնողներ սակաւ եղած են* : Աչքով տեսնուած այդ անկենդան պատկերը ամենէն կենդանի նկարն է սակայն, մարդկութեան քիչ տեսած այդ մեծ եղեռնին:

Ազգային Խնամատարութիւնը քննիչներ ուղարկեց նաեւ.

- «Վերին Միջագետքի շրջանը՝ (Ուրֆա, Մարտին, Տիգրանակերտ եւ Մալաթիա) տոկոս. Միրզա Քէթէնճեան»:

- «Գարահիսար եւ իր շրջակաները՝ Սահակ Մ. Սարգիսեան»:

Բացի վերոյիշեալ անձերէն, Վարչութեան ժողովի անդամներէն ոմանք այցելեցին գաւառային մերձաւոր վայրեր, քննութիւն կատարելու, եւ կամ այլ պարտականութիւններով:

11.- ՄԻՋ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՒ ԱՅՆ ՊԱՅՔԱՐՆԵՐ

Հայ ժողովուրդը որ կը գուրգուրար իր որբերուն վրայ, եւ կը ջանար ամբողջ գաղթականներուն ցաւերը, բնականաբար պիտի պահանջէր որ անոնք լաւ ձեռքերու մէջ խնամուէին: Որով Ազգային Խնամատարութիւնը որքա՛ն վայելէր հանրութեան վստահութիւնը, նոյն չափով ալ հանրութիւնը անոր նեցուկ պիտի կանգնէր (նոյնն էր նաեւ պարագան օտար բարեացակամ կազմակերպութիւններուն): Մենք հաստատուն եկամուտներ չունէինք, եւ մեր քիւրաւոր որբերը կ'ապրէին ազգին եւ բարերար օտարներու նպաստով: Ես ամբողջ կարելիս կ'ընէի որ հաստատութիւնը ժողովուրդին սիրելին ըլլար (ինչ որ ամէն պաշտօնեայի տարրական պարտականութիւնն է), եւ շարունակէր պահել իր համազգային հանգամանքը: Այդ առաջադրութեամբ ալ կը փորձէի հետու մնալ միջկուսակցական, կամ այլ հոսանքներու պայքարներէն:

Այսպէս, 1919-ի վերջերը Գաղաքական ժողովը, իր ատենապետ տոկոս. Դաւիթեանի նախաձեռնութեամբ՝ աշխատեցաւ Խնամատարու-

* Ականջը խօսի Գր. Ամիրեանի:

Թիւնը ղեկավարել որպէս պատրիարքարանի խորհուրդ մը: Այս ձեւով հաստատութիւնը պիտի կորսնցնէր իր համազգային հանգամանքը, հեռացնելով Ընդհանուր ժողովին կողմէ նշանակուած կաթողիկէ եւ բողոքական վարչականները:

Ուրիշներու պէս, ես ալ համոզուած էի որ սխալ մօտեցում էր հայ կաթողիկէ կամ բողոքական անհատներու նիւթական աջակցութեան քանակը նկատի ունենալ որպէս միակ արժեքափ: Առաջնահերթը զանոնք մէկ սեղանի շուրջ բոլորել, գործակցութեան վարժեցնել, եւ հայ քաղաքական միաւոր մը հաստատելն էր: Կրօնը եւ հաւատալիքը անհատական հարցեր էին, իսկ մենք, ո՛րեւէ յարանուանութեան պատկանելէ առաջ՝ հայ էինք:

Ուրեմն չէի կրնար համակարծիք ըլլալ տոկոս. Դաւիթեանին, եւ Խնամատարութեան հայ կաթողիկէ անդամները (Ինճիճեան եւ Ալէքսանդր) տեղեակ էին իմ տրամադրութիւններու: Անոնք ալ ոգեւին աշխատեցան որ հաստատութիւնը իր համազգային հանգամանքը պահէ:

Վարչութեան ժողովներուն ընթացքին ալ երբեմն անհամութիւններ կը պատահէին, եւ Զաւէն Պատրիարքը իր կարելին կ'ընէր ծագած դժուարութիւնները հարթելու համար: Կ'ուզեմ յիշել միայն իմ անձիս հետ կապուած հետեւեալ պարագան:

Վարչութեան անդամներէն մէկը ժողովի մը մէջ բուռն քննադատութիւն կատարեց պաշտօնեայի մը մասին, պահանջելով անոր գործէն արձակումը: Առանց որեւէ քննութեան անընդունելի էր որ պաշտօնեայ մը հեռացուէր, որով խոստացայ յաջորդ ժողովին քննութեանս արդիւնքը բերել:

Պարզուեցաւ որ Վարչութեան անդամը բոլորովին անհատական պատճառներով շարժած էր: Իսկ արդեօ՞ք պաշտօնեան ալ դրացուհիի մը հետ քննադատական արարքի մը մէջ գտնուած էր (ըստ իր դէմ եղած ամբաստանութեան). այդ մասին կասկածներ կային, բայց ոչ փաստեր: Այսուհանդերձ՝ յաջորդ ժողովին յայտարարեցի որ զայն պիտի տեղափոխեմ, եւ որոշումը գործադրեցի:

Որքա՛ն մեծ եղաւ զարմանքս սակայն երբ յաջորդ հերթական ժողովին Վարչութեան անդամը իր թշնամական սլաքները ինձի դարձուց՝ յայտարարելով որ ժողովին քթին խնդացած էի, քանի ամբաստանեալը մօտակայ այլ կայանի մը մէջ կը պաշտօնավարէր: Քարտուղարին կարդալ տուի նախորդ նիստին որոշումը, որմէ ի յայտ եկաւ թէ կայանէն վերցնելու մասին միայն խօսք եղած էր, եւ ոչ թէ պաշտօնանկութեան: Ժողովը ճիշդ գտաւ եղածը:

Երկու օր ետք Զաւէն Պատրիարքը զիս իր քով հրաւիրեց, եւ խնդրեց որ եղելութիւնը պատմեմ: Լսելէ յետոյ, խնդալով նամակ մը տուաւ որ կարդամ: Վարչութեան անդամը այս հարցին մէջ բռնած ընթացքս իր արժանապատուութեան դէմ գտած էր, եւ կը յայտարարէր որ բռնապետի մը պէս կը գործէի, առանց նկատի առնելու ժողովի եւ

ժողովականի որոշումներն ու թելադրութիւնները: Հետեւաբար կը պահանջէր կամ զիս գործէն հեռացնել, եւ կամ իր հրաժարականը ընդունիլ:

— «Ըսի իրեն, — ըսաւ Պատրիարքը, — որ ասանկ խնդրի մը համար ժողովականներ կրնան հրաժարիլ, բայց չեմ կրնար տնօրէնը հրաժարեցնել: Մեզի համար դժուար է յարմար տնօրէն մը գտնել, իսկ ժողովական շատ կայ...»:

Եւ յաջորդ ժողովի ընթացքին այդ հրաժարագիրը, ցաւ ի սիրտ ընդունուեցաւ...:

Իրականութիւն է որ սկզբնական շրջանէն իսկ կուսակցական պատկանելիութեանս հետեւանքով կարգ մը քննադատութեանց թիրախ դարձայ:

Պաշտօնս ստանձնելուս հինգերորդ թէ վեցերորդ օրը արդէն Վարչութեան անդամ Պ. Միհրան Գարագաշեանը հարց տուած էր.

— «Ճի՞շդ է որ Ընդհանուր Տնօրէնը դաշնակցական է»: Եւ յայտարարած էր (Լեւոն Տէմիրճիպաշեանին).

— «Ես սկզբունքով այդ տաք գլուխներուն ազգին գործը վստահելու կողմնակից չեմ եւ չեմ կրնար ըլլալ»:

Ես մոլեռանդ կուսակցական մը չեմ եղած: Ով որ արժանի է գործ մը լաւ կերպով ղեկավարելու թող ստանձնէ այդ պարտականութիւնը: Այդպէս կը մտածէի, եւ խորհրդականին մտքերը ինձի առնուազն տարօրինակ կը թուէին: Ամէն պարագայի անոնք արձագանք չգտան Վարչութեան ժողովին մէջ:

Ուրիշ անգամ մը երբ պիւտճէի նախագիծը Քաղաքական ժողովին կը ներկայացնէի, անդամ մը (փաստաբան Դաւիթ Տէր Մովսէսեան) կողմնակի կը հարցնէր ժողովական Ներսէս Օհանեանին.

— «Ճի՞շդ է որ այս Ընդհանուր Տնօրէնը դաշնակցական է»:

Ներսէս Օհանեան պատասխանած էր իր պատկերալից ոճով (ինչպէս յետոյ ինձի յայտնեց):

Վերջին հաշուով այս երեւոյթները (եւ այլ բազմաթիւ պարագաներ) կարելոր հետեւանքներ չունէին: Բայց Զինադադարի առաջին տարին դեռ չէր լրացած երբ Պոլսոյ հայ ազգային կեանքը սկսաւ շատ աւելի փոթորկալի շրջան մը բոլորել: Կուսակցական կամ ոչ, ամէն հայ վառ հետաքրքրութեամբ կը հետեւէր կամ կը մասնակցէր ծագած կուսակցական բուռն պայքարներուն: Եւ այս կացութիւնը բնականաբար կ'անդրադառնար Խնամատարութեան գործունէութեան վրայ:

Իժարխտաբար դեռ ոչ մէկ գրող համարձակեցաւ Պոլսոյ այդ եռուզեռ արդի սերունդին ներկայացնել: Կեանքը շատ արագ կ'ընթանար. սկզբնական խարխափումներէ ետք՝ մարդիկ հետզհետէ իրարու կը միանային, իրարմէ կ'անջատուէին, եւ վերջապէս ամէն մէկը, իր նախասիրութեան եւ նկարագրին համաձայն՝ կը յարէր այս կամ այն հոսանքին կամ կողմին:

Հիմա որ պատահ մը հող, պզտիկ Հայաստան մը ունէիք, հարց կը ծագէր թէ ո՞վ պիտի կառավարէր զայն, եւ ի՞նչ սկզբունքներու վրայ յենած: Եւ մարդիկ, որ երբե՛ք չէին յօժարած իրենց զոհողութիւնը, արիւնը կամ կեանքը անկախութեան նժարին մէջ դնել, այժմ ինքզինքնին ուրիշներէ աւելի ընդունակ կը տեսնէին այդ գործին համար: Եւ տակաւին, եթէ կը բարեհաճէին Հայաստանը կառավարել, ատիկա իրենց կողմէ կը նկատուէր զիջողութիւն եւ զոհողութիւն:

Պոլսահայ մամուլը լայնօրէն անդրադարձաւ նաեւ այն առաջարկներուն որոնք կ'առաջադրէին որ Հայաստան գտնուող զինուորներն ու խմբապետները, անկախութեան ի նպաստ իրենց կատարած առաւել կամ նուազ զոհողութիւններուն համապատասխան նիւթական վարձատրութեան արժանանան: Անոնց կեանքը ապահովուած ըլլայ, ինչպէս է պարագան պետական պաշտօնեաներուն, որոնք հանգստեան թոշակ կը ստանան: Եւ ասոր փոխարէն՝ անոնք ձեռնթափ ըլլան հանրային կեանքէն — քանի քաղաքականութենէ բան չեն հասկնար — եւ երթան, ի՛նչ կ'ուզեն ընեն. հող մշակեն, առետուրով զբաղին, կամ ոտքերնին երկրնցնելով հանգստանան: Նկատի առնելով սակայն Հայաստանի սահմաններուն վրայ յամեցող արտաքին վտանգները, յարմար կը նկատուէր առաջին հերթին արձակել միայն շեշտուած կուսակցականները, եւ անոնց տեղը հետզհետէ նորեր հասցնել:

Հայաստանի ազատութեան եւ անկախութեան համար պայքար մղած մարտիկներուն հանդէպ կատարուած այդ զնահատութիւնը սակայն չէր մեկներ երախտագիտական զգացումներէ, այլ ունէր քաղաքական յստակ հեռանկար մը: Ինչպէս ժողովէ մը ետք ինծի կը բացատրէր Խնամատարութեան Վարչութեան անդամ մը

— «Թիւրիմացութիւններ կան Հայաստանի կառավարութեան եւ արտասահմանի հայ զանգուածներուն միջեւ: Անուրանալի է որ ներկայիս Հայաստանի կառավարութիւնը կը գտնուի դաշնակցականներու ազդեցութեան տակ: Նոյնպէս անուրանալի է որ այդ կուսակցութիւնն ալ կը յենու իր զինեալ մարտիկներուն վրայ: Իսկ այս վերջիններուն անկախութեան ի նպաստ կատարած զոհողութիւնները ամէնքս ալ կը հաստատենք: Հայդուկի եւ խմբապետի հարցը լուծել աւելի դիւրին կը դառնայ մեզի համար երբ համաձայնինք դաշնակցական ղեկավարներուն հետ: Այս վերջիններուն կեանքը աւելի լայնօրէն կ'ապահովենք, այնպէս որ ուզած տեղերնին, նոյնիսկ արտասահման կրնան երթալ եւ հանգստանալ»:

Այդ էր նպատակը: Արձակել զինուորներն ու խմբապետները, ցրուել ղեկավարները, ճամբայ բանալու համար այլ կուսակցութեան մը թեկնածուներուն առջեւ, որոնք կը յաւակնէին աւելի լաւ քաղաքագէտներ, եւ վարչական աւելի մեծ կարողութիւններով օժտուած ըլլալ: Ծաւալի է սակայն նկատել որ ծրագրին յաջողութիւնը ապահովելու համար գործածուած միջոցները պատուաբեր չէին: Կը փորձուէր հայրենիքի անկախութեան սիրոյն ամէն զոհողութիւն աչք առնող անձնու-

րացները նիւթական յատկացումներով կաշառել, եւ հայրենասիրութիւնը աճուրդի հանել:

Կուսակցական պայքարներու այս տաք մթնոլորտին մէջ Քաղաքական ժողովը փոփոխութեան ենթարկուեցաւ, եւ հոն ամէն կուսակցութիւն ունեցաւ իր ներկայացուցիչը, այն համոզումով որ այդպէս աշխատանքը աւելի լաւ ընթացք պիտի ունենար:

Յետոյ կարգը եկաւ Ազգային Խնամատարութեան Վարչութեան, ուր ո՛չ մէկ դաշնակցական կար, եւ սակայն անոր Ընդհանուր Տնօրէնը սկսած էր հաճելի չերեւիլ իր կուսակցական հանգամանքին պատճառաւ: Անոր կը վերագրուէին կարգ մը մեղքեր, որոնց շարքին հաստատութիւնը իր կուսակից պաշտօնեաներով լեցնելը: Ոչ ոք առաջարկեց զայն պաշտօնանկ ընել, որովհետեւ կար այդ ծանր աշխատանքին բեռը վերցընելու ատակ թեկնածու մը գտնելու հարցը: Բայց որովհետեւ բան մը պէտք էր ընել, Քաղաքական ժողովը որոշեց որ իր անդամներէն երեք հոգի, կուսակցութիւններու ներկայացուցիչներ՝ մասնակցին Խնամատարութեան Վարչութեան ժողովներուն: Մտածումը լաւ էր, եթէ որոշումին իսկական նպատակը գործերու բարուք ընթացքը ըլլար: Եւ սակայն անձերու ընտրութիւնն իսկ, առաջին վայրկեանէն յայտնաբերեց տարբեր մտածելակերպ մը: Անոնցմէ երկուքը Խնամատարութեան հետ կապուած ազգային հաստատութիւններէ հեռացուցած էին անբաւարար աշխատանքի եւ զեղծումի ամբաստանութիւններով, եւ այժմ կը վերադառնային որպէս համարառու: Անոնց առաջին գործը եղաւ պահանջել ժողովի որոշումներու արձանագրութեան տետրակը: Մէկը փնտոցեց եւ գտաւ այն նիստը, ուր իր պաշտօնանկութեան պատճառները գրուած էին: Իսկ երկրորդը ուզեց իրեն հանդէպ եղած զեղծումի ամբաստանութեան թղթածրարը տեսնել (որ տակաւին Խնամատարութեան քննիչին քովն էր):

Բնականաբար, այդ օրէն սկսեալ ամէն ժողովի մէջ խնդիրներ ծագեցան: Կուսակցական ներկայացուցիչները իւրաքանչիւր հարցի քննութեան ընթացքին Ընդհանուր Տնօրէնը կը քննադատէին իր տիկտատորակաւ վարմունքին համար: Եւ այսպէս՝ Ազգային Խնամատարութեան նիւթական եւ վարչական դժուարութիւններուն վրայ կ'աւելնար կուսակցական կիրքերու եւ դիրքաւորումներու թոհուրհուր:

Ներկայացայ Չաւէն Պատրիարքին, եւ յայտնեցի որ ստեղծուած անտանելի մթնոլորտին մէջ այլեւս ի վիճակի չեմ գործը շարունակելու:

Պատրիարքը իր կարգին երկարօրէն թուեց այն դժուարութիւնները որոնց ինքն ալ կը բախէր, երբ ամէն մէկը կ'ուզէր կառք իր յարմար տեսած ուղղութեամբ քաշել: Համոզեց զիս որ չհրաժարիմ, եզրակացնելով.

— «Մենք զոհողութեան ոգիով կը մօտենանք ազգային պարտականութիւններուն, եւ դուրսէն ո՛վ ինչ կ'ուզէ ըսէ կամ գործէ, մենք նոյն ոգիով պէտք է շարունակենք մեր գործը»:

**12.- ԱԶԳԱՅԻՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ
ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԵԱՆ
ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑԻՆ ՀԵՏ
(Նիր Իսթ Բլիֆ)**

Ամերիկացիներուն հետ մեր յարաբերութեանց ընթացքը հետըզ-
հետէ փոփոխութիւններ կրեց, քաղաքական եւ այլ պատճառներու հետե-
ւանքով:

Սկզբնական շրջանին Բլիֆի տնօրէնը, Մէյքըր Արմայտ շատ
բարեացակամ եւ օգտակար գտնուած էր: Կը կարծէինք որ հայերու դժ-
բախտութիւնները իր մէջ արթնցուցած էին կարեկցական զգացումներ:
Հետագային սակայն, ծովակալ Պրիստոլի պէս, ինքն ալ սկսաւ թուրք
ընտանիքներու հետ սերտ յարաբերութիւններ մշակել, եւ հետզհետէ
իր գործունէութեան մէջ տիրապետող գիծը դարձաւ իւրայատուկ ըմ-
բռնումով՝ քաղաքականութիւնը, եւ ոչ թէ բարեգործական առաքելու-
թեան մը նուիրումը:

Բարեբախտաբար անիկա Պոլիս երկար չմնաց: Իրեն յաջորդեց
գնդապետ Գուլմը, իսկական ազնիւ անձնաւորութիւն մը, իրլանտական
ծագումով եւ կաթողիկէ: Այս ճշդումը կը կատարեմ, որովհետեւ Բը-
լիֆի մէջ գործող բազմաթիւ բողոքական միսիոնարները, առջի վայր-
կեանէն իսկ համակրանք չէին ցուցաբերեր անոր հանդէպ, եւ այս
պարագան յաճախ մեզի համար նպաստաւոր եղաւ: Գրեթէ անմիջապէս
մտերիմ յարաբերութիւններ հաստատուեցան իր եւ մեր միջեւ: Անհրա-
ժեշտութեան պարագային երբ կը դիմէինք Բլիֆին, անիկա միշտ բա-
րերար դեր կատարեց իր դրամական եւ նիւթական օժանդակութիւն-
ներով, շնորհիւ գնդապետ Գուլմսի բարեացակամութեան:

Գնդապետ Գուլմսէն գատ Բլիֆին մէջ աշխատանքի բաժին ունե-
ին նաեւ.

- Մէքալըմը, պատուական մարդ մը որ լաւ հայերէն գիտէր, եւ
կարծեմ նախապէս երկար տարիներ Մարաշ գտնուած էր:

- Մաքնոթնը որ թրքերէն գիտէր, եւ նախապէս պաշտօնավարած
էր Իզմիրի ամերիկեան գոլէճին մէջ:

- Միս Հայգերը, որ Երուսաղէմի ամերիկեան ընդհանուր հիւ-
պատոսին կիներ էր, եւ երկար ժամանակ Պոլիս ապրած (իր ամուսնին
պաշտօնին բերմամբ):

- Միս Հէյսթիմկը, շնորհալի աղջիկ մը որ իր ալպանացի շար-
ժավարին հետ ամուսնացաւ եւ ծննդավայրը վերադարձաւ:

- Միս Ֆիլիքսը, 45-50 տարեկան օրիորդ մը:

Ասոնցմէ մէկ-երկուքը ճիշդ հայու պէս կ'աշխատէին: Բայց մե-
ծամասնութիւնը ոչ միայն մեր մտայնութեան օտար էր, այլեւ մեր
կեանքի ըմբռնումներուն անհաղորդ: Այդ պատճառաւ իսկ մեր յարա-
բերութիւնները յաճախ դժուարութիւններու կը հանդիպէին: Մանա-
ւանդ երբ պատասխանատու պաշտօնեաներու հետ տարակարծիք ըլլալի,
գործը շատ կը բարդանար: Ստիպուած կ'ըլլայինք դիմելու գնդապետ
Գուլմսի միջամտութեան, որ իր աջակցութիւնը երբեք չէր զլանար:

Վերոյիշեալներէն իւրաքանչիւրը որոշ պաշտօն մը ունէր: Այս-
պէս՝ Միս Ֆիլիքսին վիճակուած էր այցելել եւ օգնել այն հայ մայրերուն
որոնք ամուսին չունէին (բայց ունէին մէկ կամ աւելի զաւակներ):
Խնամատարութիւնը կը քննէր անոնց վիճակը, եւ եթէ մօրը անկարողու-
թիւնը հաստատուէր, հայրագուրկ որբը կը գետեղուէր մեր որբանոց-
ներէն մէկուն մէջ:

Շատ մայրեր ո'րեւէ գնով չէին ուզեր բաժնուիլ իրենց հոգեհա-
տորներէն: Բայց մեծամասնութիւնը կը ջանար օգտուիլ որբանոցներու
ընձեռած օժանդակութենէն, նո'յնիսկ եթէ իրենց զաւակները մեծցնելու
նիւթական միջոցներէ գուրկ չէին: Իսկ այրիներէն ոմանք ալ կը փա-
փաքէին իրենց զաւակներէն բաժնուիլ, աւելի դիւրութեամբ ամուսին
մը գտնելու համար: Օրինակի համար կը յիշատակեմ պարագայ մը, եւ
այդ առիթով ստեղծուած տարակարծութիւնը մեր եւ ամերիկացիներուն
միջեւ:

Այրի հայ կին մը, ի զուր աշխատելէ ետք որ զաւակը որբանոցի
մը մէջ պատսպարուի, կը դիմէ միջնորդ կնոջ մը, որուն կը խոստանայ
յիսուն ոսկի տալ յաջողութեան պարագային: Կարելոր է հաստատել որ
ամերիկուհիներուն մօտ նման հայ միջնորդներ կը սլքտային, եւ մեր
Որբահաւաքի պաշտօնեաները — որոնք ի պահանջել հարկին ուստիկանի
պարտականութիւն ալ կը կատարէին — ծանօթ էին անոնցմէ շատերուն:
Միջնորդ կինը կը յաջողի Միս Ֆիլիքսէն կորզել ինծի ուղղուած գիր
մը, որուն մէջ կը խնդրուէր խնդրոյ առարկայ որբը մեր հաստատու-
թիւններէն մէկուն մէջ գետեղել:

Շատ զարմացայ, եւ անմիջապէս՝ ըստ ընկալեալ սովորութեան՝
քննութիւն բանալ տուի, որովհետեւ նոյնիսկ ամերիկուհի մը իրաւունք
չունէր շեղելու որդեգրեալ գործելակերպէն: Երբ յայտնի եղաւ թէ ի՞նչ
պարագաներու տակ ստացուած էր այդ խնդրագիրը, բնականաբար մեր-
ժըւեցաւ անոր ընթացք տալ:

Քանի մը օր ետք Միս Ֆիլիքսը թարգմանի մը հետ գրասենեակս
եկաւ, եւ մերժեց նստիլ: Անմիջապէս յայտնեց որ յետ այսու դժուար
պիտի ըլլայ Բլիֆին համար մեզի հետ գործակցիլ, քանի իրենց բարե-
ացակամ տրամադրութեանց փոխարէն ապերախտութեան կը հանդիպին
մեր մօտ: Նախ չհասկցայ թէ խնդիրը ի՞նչ բանի շուրջ կը դառնար, քանի
զբաղումներու ծանրաբեռնութեան պատճառաւ ամբողջովին մոռցած

էի խնդրոյ առարկայ պարագան: Երբ խնդիրը պարզուեցաւ, առաջարկեցի որ նստի եւ եղածը պատմեմ: Չուզեց նստիլ, չուզեց բացատրութիւն իսկ լսել, պնդեց որ յիշեալ որբը անպայման լաւագոյն որբանոց մը դրուի:

Պատասխանեցի որ ատիկա իմ գործս էր, եւ այդ ուղղութեամբ ոչ ոք կրնար ինծի հրամայել:

Կ'երեւի ուղղակի իրենց տնօրէնին գացած եւ գանգատած էր, որովհետեւ քիչ յետոյ գնդապետ Գուժա հեռաձայնեց հարցնելու համար թէ ի՞նչ անցած էր իմ եւ Միս Ֆիլիբսին միջեւ: Պատասխանեցի որ անձամբ պիտի գամ եւ բացատրեմ:

Գացի, հետս առնելով Որբահաւաքի պաշտօնեային քննութեան թուղթը: Իրեն մանրամասնօրէն պարզեցի թէ ի՞նչպէս խաբած են զինքը, եւ թէ մենք որբ մը ընդունելու համար ի՞նչ ձեւակերպութիւններ կը կատարենք: Կատարելապէս իրաւունք տուաւ եւ ըսաւ.

— «Յետ այսու, ա՛լ Միս Ֆիլիբսը ձեզի հետ գործ չ'ունենար» (եւ սակայն փորձանք դարձած այդ կնոջ հետ ես կրկին տարակարծութիւն ունեցայ):

Այդ դէպքէն ետք բոլոր պաշտօնեաներուն հրահանգեցի մօտէն հետեւիլ ամէն մէկ ամերիկուհիի մօտ սլքտացող հայ կիներու գործունէութեան:

Դժբախտաբար, մեր գաւառական հաստատութիւններուն մէջ ալ, ամէն մէկ ամերիկացի կամ ամերիկուհի պաշտօնեայի մօտ նոյն ձեւով եւ աւելի ազդեցիկ կերպով գործող զգուելի սողուններ գոյութիւն ունեցած են, յայտնապէս երբ պայմանները նպաստաւոր էին...: Ինչպէս ամէն տեղ կը պատահի, միսիոնարական կազմակերպութիւնն ալ չէր կրնար խուսափիլ լաւ եւ ոչ-լաւ ներկայացուցիչներ ունենալու կացութենէն: Տարբերութիւն մը կար սակայն միսիոնարներու եւ պաշտօնեաներու միջեւ: Առաջիններուն մէջ մարտիրոսները յիշեցնող զոհողութեան եւ բարեսրտութեան մարմնացումը եղող հրաշալի անձնաւորութիւններ կային, մանաւանդ գաւառներու իրենց հաստատութիւններուն մէջ, մինչդեռ Ամերիկայէն, իբր Րլիֆի պաշտօնեայ եկողները մեծամասնութեամբ չունէին այն նուիրումի զգացումը, որ առ հասարակ բարեգործական հաստատութիւններու մէջ աշխատանքի տիրապետող գիծը պէտք է ըլլայ: Ասոր համար անչուշտ զիրենք դատապարտելու ոչ մէկ իրաւունք ունինք: Ինչպէս Չաւէն Պատրիարք եւս առիթով մը ըսաւ, Խնամատարութեան մէջ ալ ունեցանք այնպիսիներ, որոնք ինքզինքնին կարծես վաճառատան մը պաշտօնեայ կը նկատէին: Տարբերութիւնը հոն էր միայն, որ մեր հայ պաշտօնեաները կը մնային միշտ հայու զգացումով (այլապէս գոյութեան իրաւունք պիտի չունենային): Եւ սակայն օտարները ազատ էին իրենց ըմբռնումներուն մէջ, եւ ով որ անոնց կարենար մօտենալ եւ նարպիկ միջոցներով զիրենք համոզել, առաւելութիւն մը շահած կ'ըլլար հետապնդած դատին համար:

Երախտագիտական անդիմադրելի զգացում մը զիս կը ստիպէ յիշելու լաւերէն գոնէ երեք-չորսին անունը, որպէսզի հանուր հայութեան առիթը տուած ըլլամ՝ անգամ մըն ալ անդրադառնալու անոնց ներկրական յիշատակին: Անոնցմէ Միս Գուժանը անձամբ չճանչցայ, բայց իր գործը գրեթէ ամէնուս ծանօթ է:

Օր մը, Խնամատարութեան Վարչական Ժողովին ներկայացաւ բարձրահասակ, դեռ կայտառ կին մը, Միս Կրէֆէն, Սեբաստիոյ Հերոսուհին: 1915-ի ջարդերէն առաջ, իր գուրգուրոտ խնամքին յանձնուած հարիւրաւոր պաշտպանեալները, երբ աքսորի հրամանէն զերծ չէր կրցած պահել, անիկա օրերով հետեւած էր անոնց կարաւանին, մինչեւ որ իր դիմումները վերջապէս դրական արդիւնք տուած էին, եւ Մալաթիայէն ետ դառնալու հրամանը ստացած էր:

Ժողովին մէջ, այն օրերուն Պոլիս քննութեան մը համար եկած Քիմկ եւ Քրայն ամերիկացի ծերակուտականներուն հետ իր տեսակցութիւնը պատմեց, եւ եզրակացուց հետեւեալ խօսքերով.

— «Հայերը հիմա փոշիի վերածուած են: Ուր որ ուզեն թառիլ եւ հանգչիլ, ամէն մարդ կը թօթուէ զիրենք, իբր անբաղձալի բաներ: Մարդկային պարտականութիւն է իրենց կայք մը տալ՝ գոնէ մնացորդներուն անդորր կեանք մը ապահովելու համար»:

Խոնարհ, բայց գործունեայ կին մըն էր նաեւ Միս Հոլթը, որ Նիկոմիդիոյ աղջկանց որբանոցը կը վարէր անձնուիրութեամբ: Իսկ Պրուսայի մէջ աշխատող Միս Ալեքը կատարելապէս արժանացած էր հայութեան երախտագիտական զգացումներուն:

Գալով միսիոնարական կազմակերպութեան պետ տոկտ. Տատին՝ ան ողջ հայութեան բարեբարը եղաւ: Նախապէս երկար տարիներ Պոլիս մնացած էր որպէս Պայպլը Հաուզի տնօրէն, եւ բաւական թրքերէն գիտէր: Խնամատարութեան հետ առընչուող հարցերու համար քանի մը անգամ իրեն հետ կապ պահուած էր, եւ Տատ միշտ բարեացակամ տրամադրութիւններ ցուցաբերած էր մեր հաստատութեան հանդէպ:

*
**

Ամերիկացիներուն հետ Խնամատարութեան յարաբերութիւններուն վերջին հանգրուանին անցնելէ առաջ անհրաժեշտ է փակագրի մը բանալ:

1920-ին — այսինքն զինադադարի երկրորդ տարին — Մոնտրոսի առժամեայ դաշնագրով ստեղծուած Թուրքիոյ քաղաքական իրավիճակը արդէն փոխուած էր Համաձայնական երեք պետութիւններուն ներքին պայքարներուն հետեւանքով, որոնք հետզհետէ մրցակցութեան մը բնոյթը ստացած էին: Քանի մը ամիսներու ընթացքին փաստօրէն

անգլիացիները Պոլիսը գրաւեցին, եւ իրենց ենթարկեցին գինուտրական եւ քաղաքական բոլոր հաստատութիւնները: Իրենց հակալիզին ենթակայ պետական թուրք պաշտօնէութիւնը կը հակադրուէր Իթթիհատի, եւ կողմնակից էր Սուլթան Վահէտտինի: Բայց թուրք ժողովուրդին մեծամասնութիւնը այլեւս փատիշահին հետ չէր:

Լոյս ձորնի թրքական քաղաքականութիւնը լաւ աչքով չէր դիտուեր Փրանսացիներուն եւ մանաւանդ իտալացիներուն կողմէ: Փրանսա կը գտնէր թէ Անգլիա կը հետապնդէ թուրքիոյ միակ տէրն ու տիրականը ըլլալու քաղաքականութիւնը: Իտալիա նոյնպէս անիրաւուած կը նկատէր ըլլալ, հակառակ նախօրոք եղած համաձայնութիւններուն եւ խոստումներուն, տեսնելով զինք փոխարինելու ուղղութեամբ զարգացող յունասիրական գիծ մը: Մուսուլի քարիւղային շրջանէն, Իզմիրէն եւ Ատալիայէն իտալացիներու քաշուիլը քաղաքական վերիվայրումներ առաջացուցած էր: Կը կրկնուէր մէկ դարէ ի վեր կիրարկուող միեւնոյն խաղը. այսինքն, ամէն անգամ որ ռուսերը կը յարձակէին թուրքիոյ վրայ, Անգլիա, մինակը կամ ուրիշ պետութիւններու հետ՝ կը ձախողեցնէր ռուսերու յաջողութիւնը: Ուստի տարօրինակ չէր որ այս անգամ ալ, ճիշդ նոյն ձեւով՝ Փրանսա եւ Իտալիա օգնէին թուրքիոյ, որպէսզի անիկա բոլորովին չխորտակուէր եւ չենթարկուէր անգլիական տիրապետութեան: Չէ՞ որ կառքին չորրորդ անիւր խորտակուած էր:

Եթէ Անգլիա որդեգրած չըլլար բացարձակ մենատիրութեան քաղաքականութիւնը, եւ եթէ գործադրուէր նախկին համաձայնագիրը, Փրանսա իր ազդեցութիւնը պիտի տարածէր մինչեւ Սեբաստիա, իսկ Իտալիա պիտի տիրանար Միջերկրականի թրքական ծովեզերքին: Դէպքերը բոլորովին տարբեր ընթացք պիտի ստանային:

Այս կացութեան մէջ անգլիացիք գտան զինուորական թարմ ուժ մը, եւ քաջալերեցին յունական ազգային իդձերը: Վեմիզիոս ժամանակը յարմար նկատեց ձեռքով-ոտքով պատերազմի մէջ նետուելու, իսկ այս ելոյթը թրքութեան համար ամենէն ուժեղ սթափեցուցիչը եղաւ:

Հասած էր թուրքերու հրապարակ իջնելու ժամանակը: Այլեւս գրեթէ բոլորը համախորհուրդ եւ համակարծիք էին երէկուան թայայիմ առջեւ գլուխ չձռնելու:

Գաւառներու մէջ ալ օրէ օր անգլացիներու հանդէպ թուրքերու բարեացակամ հնազանդութեան երեւոյթները կը չքանային: Անատոլուն սկսած էր խլրտիլ: Անգլիական իշխանութիւնները անզօր էին որեւէ միջոցի դիմելու: Պէտք էր զէնքի ուժ գործադրել, բայց թուրքիոյ ներսերը զինուոր զրկելը շատ դժուար գործ էր: Անգլիացի զինուորը յոգնած էր պատերազմէն, եւ Անգլիա անկարող էր մինակը զինուորական միջոցներ ձեռք առնել: Իսկ Փրանսացիները եւ իտալացիները ոչ մէկ պատճառ ունէին աջակցելու քաղաքականութեան մը, ուր կրակէն շագա-

նակները ուրիշի հաշտոյն պիտի քաշէին: Մնաց որ այդ երկու պետութիւններն ալ տրամադրելի զինուոր չունէին:

Բնականաբար թուրքերու հայրենասիրական զգացումները եւ ազատագրման ոգին բաւարար չէին: Անհրաժեշտ էր ուժ մը ստեղծել, կազմակերպել, եւ դիմադրութիւնը ազդու դարձնել: Անհրաժեշտ էր որ անհատ մը բոլոր ցան ու ցրիւ ընդդիմադիր տարրերը իր շուրջ համախմբէր, ստեղծէր երկաթեայ կարգապահութիւն մը, եւ ժողովուրդին փոխանցէր այն հաւատքը որ անկախութիւնը միայն պայքարով պիտի վերականգնուի:

Իթթիհատական դեկավարներու ձեռքակալութիւնը քաղաքական շրջանակներու մէջ մեծ բացեր ստեղծած էր: Գոյուլթիւն ունէին սակայն կարգ մը զինուորական դեկավարներ — որոնց մէկ մասը ջարդերու կամ հակամարդկային արարքներու ձեռնամուխ չէր եղած — որոնք հրապարակէն քաշուած՝ լծուած էին ստորերկրեայ աշխատանքի, իրենց երկիրը դժխեմ ճակատագրէ մը ազատելու տենչով վարակուած: Ասոնց գլուխը կը գտնուէր Երլալըրմ բանակի հրամանատարը՝ Մուսթաֆա Բէմալ:

Մուսթաֆա Բէմալի մասին կ'ըսէին թէ Բերա Բալաս պանդոկին մէկ սենեակը քաշուած օրն ի բուն օդի կը կոնծէ, իր վիշտը խեղդելու համար: Օտարները կը հետեւցնէին որ արդէն փճացած մարդ մըն է, սակայն ծանօթները գիտէին որ անիկա իրեն համար բնական վիճակ մըն էր: Հանրածանօթ էր որ պարտութենէն բաւական առաջ անիկա ածիթաթէօր մը եղած էր էնվերի իշխանութեան դէմ: Մանօթ էր նաեւ որ Իշխանաց կղզիներէն Հէյպէլիի մէջ իր հրակէրով, հարիւրէ աւելի քաղաքային թէ զինուորական իշխանաւորներու հաւաքոյթին մէջ յայտնուած էր որպէս մէկը որ կ'ուզէր թուրք պետականութիւնը իր դարաւոր եւ ախտաւոր վիճակէն դուրս բերել: Կը կարծուէր սակայն որ այդ գաղափարները յայտնող Մուսթաֆա Բէմալը պարզապէս էնվերի հակառակորդն էր, եւ այս վերջինին սուլթանական գերդաստանին փեսայանալն էր մանաւանդ որ զինք Խալիֆա թագաւորին թշնամի կը դարձնէր:

Բերա Բալաս պանդոկին մէջ փակուած Մուսթաֆա Բէմալը սկսած էր սակայն գաղտնի յարաբերութիւններով իր շուրջ Պոլիս, եւ մանաւանդ գաւառը գործակիցներ գտնել:

Անգլիացիք, ինչպէս իրենց հաւատարիմ թուրք կառավարութեան դեկավարները կը զգային որ բաներ մը կը դառնան, բայց կը կարծէին թէ Բէմալ կ'ուզէր նախ եւ առաջ կեդրոնը՝ Պոլիս ձգել: Որով շատ գոհ մնացին երբ անիկա առիթը ստեղծեց որ զինք, որպէս զինուորական ընդհանուր քննիչ՝ Փոքր Ասիա ուղարկեն:

1920 Մայիս 19-ին Մուսթաֆա Բէմալ Սամսոն ելաւ, այնպիսի ձեւով մը որ կարծես յաղթական թուրք բանակի մը հրամանատարը ըլլար: Առաջին իսկ վայրկեանէն հայ համայնքը գէշ տպաւորուած էր, որովհետեւ իր շատ պաղ վարմունքը սարսափի նախազգացում մը ստեղծած էր վերապրող մեր ափ մը ազգակիցներուն մէջ:

Այդ օրը Սամսոնի որբանոցին ինամակալութեան մէկ անգամը գործով Պոլիս եկած էր: Իմ հարցումներու տուած պատասխաններուն մէջ զգացի որ կարեւոր եղելութիւններու նախօրեակին կը գտնուինք: Այնուհետեւ, թուրք ծանօթներու շրջանակին հետ աւելի ուշադիր շըփումներ ունեցայ, եւ կրնամ ըսել թէ ես ալ հետզհետէ վարակուեցայ վախի նախազգացումով մը: Շուտով ուրիշ ճամբորդներ ալ եկան, եւ անոնք մանր-մունր տեղեկութիւններով ամբողջացուցին պատկերը թրքական շարժումին, որ կը խմորուէր Փոքր Ասիոյ մէջ, ուր հազարաւոր որբեր էինք հաւաքած, եւ հարիւր հազարներով վերապրող հայութիւն մը զրկած:

Քանի մը օր յետոյ Չաւէն Պատրիարքին այցելեցի եւ անոր պարզեցի լսածներս եւ ունեցած ծանօթութիւններս: Ըսաւ որ ինքն ալ մտահոգուած էր ստեղծուած կացութեամբ: Մեր խօսակցութիւնը դեռ չէր լրացած, երբ տոկտ. Դաւիթեանը եկաւ: Երեքով շարունակեցինք մեր գաղափարներու փոխանակութիւնը: Բարապան մը եկաւ եւ յայտնեց, թէ Պրուսայի մեր որբանոցի ու պատսպարանի տնօրէնուհին՝ շատ ծանօթ եւ սիրուած Միս Ալէնը այցելութեան եկած էր:

Ոտքի ելայ մեկնելու համար, բայց Պատրիարքը ձեռքով նշան ըրաւ որ նստիմ: Միս Ալէնը երբ ներս մտաւ եւ սկսաւ խօսիլ, հասկցայ որ կը սպասուէր: Կ'երեւի, ինչպէս ուրիշներուն, անոր ալ Պատրիարքը պաշտօն տուած էր որ Պրուսայէն շրջակաները, եւ քիչ մը աւելի ներսերը երթալու կարելիութիւնը օգտագործելով՝ պտոյտի մը ելլէր եւ տեղն ի տեղօք հասկնար թէ՛ ի՞նչ կ'անցնէր կը դառնար թուրքիոյ մէջ, ի՞նչ էր Մուսթաֆա Քէմալի գործունէութիւնը, եւ ի՞նչ կարելիութիւններ կրնար ստեղծել ան:

Միս Ալէնը յստակ եւ բովանդակալից գաղափար մը տուաւ եղած շարժման մասին: Ականատեսի աչքով շատ բան տեսած էր, շատ մը պարագաներ քննած եւ որոշ եզրակացութեան մը յանգած: Իսկ այդ եզրակացութիւնը ոչ միայն քաջալերական չէր, այլ Պատրիարքին պճտուն աչքերուն մէջ խոր թախիժ մը ստեղծեց. իսկ տոկտ. Դաւիթեանի դեղին դէմքը բոլորովին գունատեցաւ:

Միս Ալէնը մէկ ժամէն աւելի խօսեցաւ: Մեկնելէն յետոյ մենք դարձեալ սկսանք խորհրդակցիլ: Պատրիարքին եւ տոկտ. Դաւիթեանին խօսքերը աւելի շատ քաղաքական ենթադրութիւններու շուրջ դարձան: Իսկ ես, ինչ մեղքս պահեմ, այդ պահուն մեծ ուշադրութիւն չէի դարձրներ իրենց խօսակցութեան: Միտքս ակամայ կը կեդրոնանար գաւառի քրեւուճէ աւելի հաստատութիւններուն, մանաւանդ մեր հազարաւոր որբ-որբուհիներուն վրայ, զորս այնչա՛փ դժուարութեամբ հաւաքեր էինք, երբեմն ալ թուրքերու ճիրաններէն խլեր էինք: Այդ հազարաւոր խլեակներուն մէկ օրէն միւսը դարձեալ դահիճներուն առջեւ նետուիլը աւելի քան սարսափեցուցիչ բան մըն էր:

Պատրիարքին յայտնեցի իմ անմիջական մտածումներս եւ հարցուցի թէ հաւանական վտանգէն նուազագոյն վնասով ազատելու համար ի՞նչ պէտք է ընէինք:

Այդ ուղղութեամբ կարծիքներու փոխանակութենէն բան մը դուրս չեկաւ, եւ ես սրտաբեկ, գացի պաշտօնատեղիս՝ առօրեայ գործերով զբաղելու համար:

Նոյն օրը, երեկոյեան լուր առինք որ նաև մը, Սեւ ծովու կողմէն հարիւրաւոր որբեր բերած է: Որբերուն ընկերացող պաշտօնեան ըսաւ թէ ինամակալութիւնը, կանխազգալով վտանգը՝ առանց հարցնելու֊փնտելու որոշած էր որբանոցը աւելի ապահով վայր մը տեղափոխել:

Անշուշտ անմիջական կարգադրութիւններ ըրինք: Նոր անակընկալներ դիմագրաւելու համար ալ հրահանգեցի կանխօրոք կարգ մը միջոցներ ձեռք առնել:

Նաւահանգիստներէն որբերը Պոլիս տեղափոխելը շատ դիւրին, բայց ներքին գաւառներէն անկարելի էր, տիրող նոր պայմաններուն տակ: Ուրեմն որբերը ստիպողաբար հոն պիտի մնային, բայց անոնց ապահովութեան համար անհրաժեշտ էր միջոց մը գտնել:

Ամերիկեան Նպաստամատոյցի ընդհանուր տնօրէն գնդապետ Գումսէն ժամադրութիւն մը ուզեցի, եւ մինչ այդ պատրաստել տուի մեր գաւառի որբանոցներուն վայրն ու որբերուն թիւը ճշդող ցուցակ մը, ամէն մէկ անունի դիմաց արձանագրելով այն գումարը (կամ նիւթեղէնը), զոր Ռըլիֆը մէկ անգամով կամ ամսական վճարումով կատարած էր:

Գնդապետ Գումս ուշադրութեամբ լսեց զիս, եւ համաձայն գրտնըւեցաւ որ Ասիական թուրքիայէն եկած մտահոգիչ լուրերուն վրայ որեւէ գէշ անակընկալ սպասելի էր: Անմիջապէս հարցուցի.

— «Կարելի չէ՞ որ գաւառի որբանոցներուն հոգը ամբողջովին Նպաստամատոյցը ստանձնէ. այդ կերպով, ամերիկեան դրօշին տակ՝ թուրքերը պիտի չհամարձակին անոնց վնաս հասցնել»:

— «Այս կէտին շուրջ ալ համաձայն ենք, աւելցուց գնդապետ Գումս: Ինչ որ ըլլայ թուրքիոյ ներքին խմորումներուն վախճանը, ո՛րեւէ թուրք կառավարութիւն երբեք պիտի չհամարձակի մեր հաստատութիւններուն վրայ ձեռնձգութիւն ընել: Բայց շատ կարեւոր հարց մը կը ծագի: Ձեր որբանոցներուն հազարաւոր որբերուն խնամքը ըստանձնելու համար հսկայ գումար մը անհրաժեշտ է, իսկ ներկայ պիտուճէով մենք չենք կրնար այդ բեռը վերցնել»:

— «Միթէ՞ կարճ ժամանակէն կեդրոն տեղեկագրելով այդ յաւելուածական գումարը չէի՞ք կրնար ճարել»:

— «Դժուար հարց է: Ամերիկայի կեդրոնն ալ իր տարեկան պիտուճէն ունի. իսկ անակընկալ եւ անհրաժեշտ պարագաներու տակ միայն մեր ընդհանուր տնօրէնը, Մ. Վիքրիմ կրնայ կարգադրութիւն մը ընել: Իսկ անիկա ներկայիս քննական գործով Հայաստան կը գտնուի, եւ հա-

զիւ քանի մը շաբաթէն կը վերադառնայ: Ինքն ալ ստիպուած է քննութիւններ կատարել, որով ծրագրին յաջողութիւնը ամիսներու կը կարօտի...»

— «Որպէսզի այդ քննութիւնը շուտ կատարուի, չէ՞ք կրնար կարգադրել որ իր վերադարձին, Հոս Պոլսոյ մէջ իրեն հետ տեսակցութիւն մը ունենամ, եւ մինչ այդ տեղեկագիր մը պատրաստեմ»:

— «Այո՛, այդ ամէնը կարելի է: Բայց, — աւելցուց, — պիտի կրնանա՞ք նաեւ մեզի միջոցներ ցոյց տալ թէ մեր պիւտճէէն ի՞նչ գեղչեր կրնանք ընել, որ գոնէ աւելնալիք ծախսերուն կարելոր մէկ մասը ապահովենք»:

— «Բայց, պարոն գնդապետ, — ըսի, — ես չեմ գիտեր թէ ձեր պիւտճէն ի՞նչ է, եւ թէ անոր ո՞ր գլուխներուն մէջ կարելի է գեղչեր ընել: Ինձի ցուցմունքներ ըրէք»:

— «Իրաւ որ այդ ուղղութեամբ ձեզի չեմ կրնար օգնել: Եթէ գիտնայի որ մեր պիւտճէէն կարելի է խնայողութիւններ կատարել, արդէն ըրած կ'ըլլայի, առանց որ խնայուած գումարներուն դուք պէտք ունենայիք»:

Ու այսպէս, որբանոցները ամերիկեան հաստատութիւններու վերածելու, եւ այդ նպատակին իրագործման համար նիւթական միջոցներ ստեղծելու մասին անորոշ եզրակացութեամբ մը բաժնուեցանք իրարմէ:

Յաջորդ օրը, պահ մը երբ թեթեւեւ գործս, սկսայ նոթեր արձանագրել՝ պատրաստելու համար այն տեղեկագիրը զոր կը մտածէի Պ. Վիքրիին ներկայացնել: Կանչեցի նաեւ Պ. Բիւզանդ Կէօզուպէօյի-բեանը, որ անգլերէնի թարգմանի պարտականութենէն անկախ՝ Ամերիկեան նպաստամատոյցի պաշտօնեաներուն հետ կը յարաբերէր: Ըսին թէ Միս Ֆիլիբսին հետ դուրս ելած է, եւ թէ առհասարակ անոր հետ շատ դուրս կ'ելլէ: Շատ զարմացայ իր ստէպ բացակայութիւններուն տեղեկանալով, որովհետեւ պարկեշտ եւ աշխատասէր պաշտօնեայ մըն էր. նոյնիսկ արտօնած էի իրեն, իմ հազուադէպ բացակայութեանս՝ ընթացիկ գործերը վարել: Առաջին առթիւ որ զինք տեսայ, խնդալով հարցուցի թէ՛ «Միս Ֆիլիբսին հետ ի՞նչ կը բանիս»...

Յայտնի եղաւ որ վերոյիշեալ ամերիկուհին, միշտ շրջապատուած կարգ մը կիներէ որոնք զինքը շահագործելու եւ հաճելի ըլլալու ձեւը գտած էին, հետզհետէ կ'ընդարձակէր իր գործունէութիւնը: Իրենց մայրերուն խնամքին յանձնուած որբերուն ամսական կամ պատահական նպաստներով օգնելու գործը տարօրինակ զարգացում մը ստացած էր, եւ Միս Ֆիլիբսի պիւտճէն նախատեսուած երկու հազարէն բարձրացած էր տասնեւհինգ հազար տոլարի պատկառելի գումարին: Երբ Պ. Կէօզուպէօյի-բեան այս եւ յարակից տեղեկութիւնները տուաւ, անմիջապէս ըմբռնեցի որ նպաստամատոյցի պիւտճէին խնայելի գլուխը գտած էի:

Անկասկած, բոլոր անոնք որ «անհայր» անունով նպաստ կը ստանային կեղծ միջոցներով չէին տիրանար այդ օժանդակութեան, եւ

իրենց մէջ իսկապէս աղքատներ կային: Բայց ճանչնալով Միս Ֆիլիբսը եւ զինք շրջապատողները, վստահ էի որ նպաստը նկատելու մեծ մասը, առանց օժանդակութեան ալ կրնար պահել որբ ըսուածները, մինչ զաւուր որբերը շատ աւելի հաւանական վտանգներու ենթակայ էին:

Անմիջապէս այդ նպաստը նկատելու ցանկը ուղեցի, եւ զայն ձեռք անցընելէ ետք մեր Որբահաւաքի 1-2 պաշտօնեաներուն հրահանգեցի որ կարելի չափով գաղտնի եւ խոր քննութիւն մը կատարեն, ամենակարճ ժամանակի մէջ: Եւ իսկապէս ենթադրութիւնս լիովին ճիշդ ելաւ: Պարզուեցաւ որ աղբիւր մը ստեղծուած էր կեղծ վկայագրեր հայթայթալով, եւ խեղճ Միս Ֆիլիբսի դիւրահաւանութիւնը օգտագործելու համար:

Բոլոր տեղեկագրերը եւ փաստերը ձեռքս ունենալէ եւ հարցը հիմնովին ուսումնասիրելէ ետք, կրկին տեսայ գնդապետ Գումսը: Ան ալ խոստովանեցաւ որ Միս Ֆիլիբսը մեծապէս ընդարձակած էր գործունէութիւնը: Ըսաւ թէ ինքը անոր գործելակերպի հիմը կազմող վկայագրերու ինչ ձեւով պատրաստուած ըլլալուն մասին մօտաւոր գաղափար մը իսկ չունէր, եւ չէր կրցած գործը հակակշռել: Եւ եզրակացուց որ ոչ մէկ առարկութիւն պիտի ընէր, եթէ տրուած պայմաններուն մէջ՝ ես պահանջէի տունը պահուած որբերու գործին մեծապէս գեղչուիլը: Աւելցուց որ Պ. Վիքրիին Հայաստանէն մէկ շաբաթ յետոյ պիտի վերադառնար եւ իրենց Յանձնախումբին հետ ժողով պիտի ունենար:

Երբ իր թարգման Պ. Թէքաթիեանին հետ դուրս ելանք, հարցուցի թէ տեղական յանձնախումբին ամենէն ազդեցիկ անդամները որո՞նք են:

Երկու անուն տուաւ: Մէկը՝ Պայպըլ Հաուզի տնօրէնը, տակտ. Տատ, եւ երկրորդը, Ռոպըրթ Գոլէճի դեր-տնօրէնին կիներ՝ Միս Հիմկթիմկթընը:

Երկու օր ետք տեսակցեցայ տոկտ. Տատին հետ, որուն գնդապետ Գումսը արդէն խօսած էր: Ինքն ալ համոզուեցաւ որ զաւուր որբերը թրքական ոտնձգութիւններէ եւ աւելի ծանր վտանգներէ ազատելու համար անմիջական կարգադրութիւն մը անհրաժեշտ էր: Մրազիրս գործադրելու միջոցներուն մասին երկար խօսեցայ, եւ երկու ժամ ետք, իրմէ բաժնուելու պահուն անիկա ոչ միայն խոստացաւ աջակցիլ, այլեւ յանձնարարեց Միս Հիմկթիմկթընը (հանրածանօթ Տոճիկ աղջիկը) տեսնել:

Հետեւեալ օրը երեկոյեան Ռոպըրթ Գոլէճի իրեն բնակարանը (Պէպէք) կը ներկայանայի այդ ոսկի սրտով սքանչելի կնոջ, որուն բարեխօսութիւններն ու բարիքները խնամատարութեան համար այնչա՛փ օգտակար եղած էին:

Հինգ տասը վայրկեան ընդհանուր խօսակցութեան ունկնդիր ըլլալէ յետոյ, երբ կը մտածէի թէ ինչ ձեւով մօտենայի եւ այցելութեանս պատճառը բացատրէի, ինք կոահեց մտածումս, եւ զիս կանխելով ըսաւ.

— «Պ. Էպիդամբան, առաջին անգամ կ'այցելէք մեզի: Եկէ՛ք ձեզի իմ պարտէզիս ծաղիկները ցոյց տամ, եւ եթէ դուք ալ ինծի պէս կը սիրէք ծաղիկները, հաճոյք պիտի զգաք»:

Քանի մը քայլ յառաջանալէ ետք շարունակեց.

— «Հիմա, որ մեզ մտիկ ընող ականջներ չկան՝ խնդրեմ պարզեցէք ձեր այցելութեան նպատակը»:

Կարճ ու յստակ կերպով բացատրեցի կացութիւնը եւ խնդրեցի, որ Պ. Վիքրիի հետ իրենց ժողովի ընթացքին զօրավիգ ըլլայ ինծի: Կարգ մը յաւելուածական տեղեկութիւններ ալ ուզեց, եւ խոստանալէ ետք որ կ'ուզէ ինծի օգնել, առաջարկեց որ տեսնեմ նաեւ տոկոս. Տատր: Պէտք չունէի իրմէ պահելու թէ ատիկա ըրած էի արդէն, եւ թէ ան ալ համաձայն էր:

— «Ուրեմն, — աւելցուց ժպտելով, — արդէն ձեր գործը կէս մը յաջողած կրնաք նկատել»:

Քաւական ուշ էր, երբ պաշտօնատեղիս հասայ: Անմիջապէս հեռաձայնեցի Զաւէն Պատրիարքին եւ գացի իր մօտ, խնդրելով որ բարապանը մեզ կէս ժամ մինակ ձգէ: Երբ յայտնեցի որ գաւառի որբերուն հարցին մասին պիտի խօսիմ, Պատրիարքը լայն շունչ մը առաւ. կարծած էր որ դարձեալ Վարչութեան մէջ խնդիր մը ծագած էր, կուսակցական հակամարտութեանց հետեւանքով:

Կատարեցի վերջին անցուղարձերուն, առած որոշումիս, եւ անոր գործադրութեան համար ըրած եւ ընելիք դիմումներու համարատուութիւնը:

Առաջին անգամ ըլլալով Պատրիարքը այդքան յուզուած կը տեսնէի: Ոտքի ելաւ, մօտեցաւ եւ ձեռքս բռնեց, յայտնելով իր կատարեալ համաձայնութիւնը եւ յաջողութիւն մաղթելով:

— «Կը մնայ խնդիր մը Սրբազան հայր, — ըսի: Ես տակաւին Վարչութեան ժողովին բան չեմ ըսած: Քաղաքական ժողովին ներկայացուցիչներուն մէջ ոմանք կրնայ ըլլալ որ իրենց կեդրոնէն ուղղութիւն ստանալու պէտք տեսնեն: Եթէ այս կամ այն պատճառաւ գործունէութեանս մէջ ուշացում յառաջ գայ, Պ. Վիքրին արդէն Պոլսէն մեկնած կ'ըլլայ, եւ մենք թանկագին պատեհութիւն մը կորսնցուցած կ'ըլլանք: Իսկ եթէ առանց Վարչութեան բովէն անցնելու կատարեմ դիմումս եւ յաջողիմ, պիտի ըսեն որ ընդհանուր տնօրէնը գործերը ինքնազուլի կը վարէ: Մանաւանդ այս պարագային, երբ հազարաւոր հայ որբերու խընամբ օտար ձեռքերու պիտի յանձնուի, մեծ դալմաղալ կրնայ ստեղծուիլ: Կուսակցական կիրքերը այնքա՛ն սաստկացած են որ տնօրէնին գործունէութիւնը խստօրէն քննադատելու լաւ առիթը պիտի շահագործուի: Միւս կողմէն, արդէն հազարաւոր որբեր ուղղակի ամբրիկացիներուն խնամքին յանձնուած են. ինամատարութիւնը իր որբերէն մէկ մասը անոնց վարչութեան փոխանցելով նաեւ իր պիւտճէին մէջ մեծ խնայողութիւն պիտի կատարէ: Իսկ եթէ այլեւայլ պատճառներով ձեռ-

նարկս չյաջողի, մեր որբերուն իսպառ կորստեան վտանգը շատ հաւանական կը դառնայ»:

Պատրիարքը քիչ մը մտածելէ ետք ըսաւ.

— «Լաւ կ'ըլլայ եթէ գործին յաջողութենէն առաջ խնդիրը պաշտօնապէս Վարչութեան յայտնես: Ճիշդ է որ այլապէս անպատեհութիւններ կրնան ծագիլ: Դուն ինծի բացատրած ձեւովդ գործէ, եւ եթէ որեւէ քննադատութիւն կատարուի, ըսէ որ Պատրիարք Հօր յանձնարարութեամբ գործած ես: Եւ այսօր իսկ ձեր ատենապետ Պ. Արտաշէս Մկրտեանը ինծի դրկէ»:

Պատրիարքին այս հաւաստիացումը թէեւ բաւարար չէր, բայց կարեւորը գործն էր. «Ի՞նչ պիտի ըսեն»ը երկրորդական գիծի վրայ կու գար:

Անմիջապէս պատրաստուած տեղեկագիրը Ամերիկեան Նպաստամատոյցի տնօրէնին տարի, եւ բերանացի փափաք ալ յայտնեցի որ յաւելուածական տեղեկութիւններու եւ բացատրութեանց համար անձնապէս ներկայանամ իրենց ժողովին:

Իսկապէս, վաղայաջորդ օրը կանչուեցայ: Պ. Վիքրի շատ լաւ ընդունելութիւն ըրաւ, իսկ Միս Հինկիթինկթընի բարեացակամ ժպտոր սրտիս անմիջական ապահովութիւն մը ներշնչեց:

Ինչպէս տեղեկագրիս մէջ ալ յիշած էի, բերանացի ալ ներողութիւն խնդրեցի, որ կերպով մը Նպաստամատոյցի ներքին գործերուն միջամտութիւն մը ըրած կ'ըլլայի՝ Միս Ֆրիլբսի գործունէութեան խիստ սահմանափակումը խնդրելով: Ես ո՛չ մէկ առարկութիւն կ'ընէի անոր աշխատանքի ձեւին համար: Եւ եթէ Նպաստամատոյցի պիւտճէին մէջ խնայողութիւն կը թելադրէի, պարզապէս մեր որբերուն խնամքը ստանձնելէ յառաջ գալիք յաւելեալ ծախսի գումարը ապահովելու համար էր: Իմ նպատակս, մեր վարչութեան տակ գտնուող գաւառի որբ-որբուհիները մօտիկ ապագային շատ հաւանականօրէն ենթարկուելիք մեծ վտանգներէն ազատելն էր:

Այլեւայլ հարցումներ ալ կատարեցին, եւ ի վերջոյ ըսին որ քիչ մը քովի սենեակը սպասեմ:

Հազիւ կէս ժամ անցած, թարգման Պ. Թէքաթիւան գիս դարձեալ ժողովասրահ առաջնորդեց: Պ. Վիքրի այս անգամ մեր Պոլսոյ որբանոցներուն եւ առհասարակ Ազգային ինամատարութեան գործունէութեան մասին ինծի երկար-բարակ հարցումներ ըրաւ եւ տեղեկութիւններ ուզեց: Շիտակը, քիչ մը զարմացայ: Ես որոշ նպատակով հոն եկած էի, եւ չէի ուզեր որ հարցը ճապաղէր, բայց կը փափաքէի միեւնոյն ժամանակ իր բարեացակամութիւնը ապահովել: Հետեւաբար անկաշկանդ պատասխաններ տուի, եւ տեսայ որ իր շահագրգռութիւնը հետզհետէ կ'աւելնար: Եւ սակայն, կը զգայի որ ուրիշ գործերով հոն հաւաքուածները պիտի նեղուէին մեր անձնական խօսակցութեան երկարաձգումով. ուստի, յայտարարութիւններս յարմար կէտի մը բերելով՝

իմ գրաւոր եւ բերանացի առաջարկս կրկնեցի, եւ ըսի թէ անձկութեամբ իրենց որոշման կը սպասեմ:

Պ. Վիքրի ըսաւ թէ ժողովը յարմար կը տեսնէ, եւ ինքն ալ համաձայն է որ ընթացք տրուի յանուն Խնամատարութեան ըրած դիմումիս, եւ որ այլեւայլ մանրամասնութեանց ու որոշումի գործադրութեան համար, գնդապետ Գումսի հետ յաջորդ օրն իսկ կրնամ խորհրդակցիլ:

Մեծապէս ուրախացած՝ շնորհակալութիւն յայտնեցի եւ դուրս ելայ:

Դեռ չորս-հինգ քայլ չէի առած, երբ լսեցի Պ. Թէքաթլեանի ձայնը, որ անունս կու տար:

Կեցայ: Անմիջապէս տեսայ որ Պ. Վիքրին ինծի կը մօտենար:

— «Պ. Էպլիդաթեան, — ըսաւ, — ձեր գործունէութեան սահմանէն բոլորովին դուրս նիւթի մը մասին գաղտնի բան մը պիտի հարցնեմ: Դուք անշուշտ ազատ էք ատոր պատասխանելու կամ ոչ:

— «Հրամանեցէք» ըսի:

— «Ի՞նչ կարծիք ունիք Հայաստանի հանրապետութեան ներկայ նախարարութեան մասին»:

Ճիշդն ըսելով՝ ամէն կարգի հարցումի մը կը սպասէի, բայց ոչ ասոր: Անմիջապէս սակայն կռահեցի թէ շան գլուխը ո՞ւր թաղուած էր:

— «Պ. Վիքրի, — ըսի, — ձեր հարցումին պատասխանելէ առաջ ստիպուած եմ բացատրութիւն մը տալ: Ես ինքս ալ, այդ նախարարներու պատկանած կուսակցութեան մաս կը կազմեմ: Ասիկա ստիպուած եմ նախապէս յայտնել, որպէսզի իմ պատասխանիս մէջ չկարծէք որ յետին նպատակ մը կրնայ ըլլալ»:

— «Ինչպէ՞ս, դուք Դաշնակցական էք»:

— «Այո»:

— «Հապա ինծի ըսած էին որ թրքահայերու մէջ գրեթէ Դաշնակցական չկայ, եւ թէ՛ Պատրիարքարանը եւ թէ՛ բոլոր հայկական հաստատութիւնները Ռամկավարներու վարչութեան տակ են»:


— «Կը տեսնէք Պ. Վիքրի որ ձեզի սխալ տեղեկութիւններ տուած են: Նաեւ ձեր մէջ կասկածներ յառաջացուցած են Հայաստանի ղեկավարներուն հանդէպ, որոնք այնքա՛ն պարկեշտ եւ խելօք մարդիկ են: Անոնց մէջ կը գտնուին նոյնիսկ առաքելատիպ անձեր, որ նախարար անուանուած ժամանակ ներկայանալի հազուստ իսկ չեն ունեցած, եւ բարեկամներէ փոխ առած են: Ըսածս անհրեքելի փաստերով կրնամ ապացուցանել, բայց չեմ կարծեր որ դուք ատոր պէտք ունենաք: Այսօր Պոլսոյ եւ թրքահայ շրջանակի ազգային կեանքի առանցքը Ազգային Խնամատարութիւնն է, եւ դուք հոս գործ ունեցաք ամէն տեսակէտով աշխատելու լիազօրուած Դաշնակցականի մը հետ»:

Ուշադրութեամբ երեսս նայեցաւ: Յետոյ ակնարկը կեցաւ թարգման Պ. Թէքաթլեանի վրայ, որ ցած ձայնով բաներ մը ըսաւ իրեն: Երբ ուժգին ձեռքի սեղմումով մը կը բաժնուէինք, ըսաւ.

— «Ուրախ եմ Պ. Էպլիդաթեան ձեզ ճանչցած ըլլալուս, եւ ձեր միջոցաւ շատ մը բաներ սորված ըլլալուս համար»:

Քանի մը օր ետք, Վարչական ժողովին լայնօրէն բացատրեցի կատարած դիմումս եւ ստացուած արդիւնքը: Ատենապետ Պ. Մկրրեան աւելցուց որ Պատրիարք Հայրը շատ գոհ մնացած էր այդ կարգադրութեանէն: Ժողովն ալ համաձայն գտնուեցաւ:

Գնդապետ Գումսի հետ համաձայնելէ ետք, զաւառի բոլոր մարմիններուն անհրաժեշտ հրահանգները տրուեցան, եւ հետզհետէ, կարճ ժամանակի մէջ, ամերիկեան դրօշակը սկսաւ ծածանիլ մեր որբանոցներուն ճակատը, իբր ապահովութեան խորհրդանիշ:



*) Հանրածանօթ է որ թրքական «ազգային շարժումին» արձանագրած յարատեւ յաջողութիւններուն համեմատութեամբ աւելցան հայութեան մտահոգութիւնն ու վախը, վերջապէս յանգելու համար 1922-ի վերջին ամիսներուն աղետալի փախուստին: Զաւէն Պատրիարք կը վկայէ թէ

«Սուճապի մատուցեցան նաեւ Համաձայնականք եւ իրենց պահած որբանոցները սկսան երկրէն դուրս հանել»:

«Սարքերդ, Սեբաստիա եւայլն՝ Բըլիֆի, ինչպէս նաեւ Կեսարիոյ հայրենասիրական Միութեան Կեսարիոյ մէջ, ու Տիարպէքիի հայրենակցական Միութեան Տիարպէքիի մէջ պահած որբանոցները փոխադրուեցան Միւրիա, իսկ Պոլսոյ որբանոցները՝ Միջերկրականի կղզիները եւ ուրիշ տեղեր: Նոյնպէս Անգլիացիք իրենց պահած որբանոցը (Լորտ Մայրս Ֆոնտի) Քորֆու փոխադրեցին»:

«Զուիցերիահայ որբանոցը Զուիցերիացիք իրենց երկիրը տարին, ինչպէս նաեւ Անարատ Յղութեան որբանոցները տարուեցան Իտալիա եւ Հոտտու»: («Պատրիարքական Յուշերս» Գաթիքէ, 1947, տպ. Նոր Աստղ, էջ 391):

Գ. ՄԱՍ

**ՄԱՏԹԷՈՍ Մ. ԷՊԼԻՂԱԹԵԱՆԻ ԿԵԱՆՔԻՆ
ԵՒ ԳՈՐԾԻՆ ՀԵՏ ԿԱՊ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՐԳ ՄԸ
ՎԱԻԵՐԱԳՐԵՐ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ**

Հրահանգներ

*Գաղութների հայերէն գանձուելիք
հայրենիքի տուրքի մասին...*

(Երեւան, 28 Սեպտեմբեր 1920)

Մատթէոս Էպլիղաթեան յաջողած էր 1922 թուականին Պոլսէն Ռու-
մանիա դրկել իր պաշտօնին եւ գործունէութեան հետ աւրնչուած երեք
վաւերագրեր եւ պաշտօնական նամակներու տետրակ մը, ու հակառակ
աստանդական կեանքին՝ մասունքի պէս խնամքով պահել:

Այսպէս է որ անոնք կը գտնուին մեր տրամադրութեան տակ:

Այսօր — վաթսունեօթ տարիներ յետոյ — կը հրապարակենք այդ
դեղնած թուղթերը, այն համոզումով որ պատմական որոշ արժէք ունին,
լոյս կը սփռեն 1920 թուականի վերջին ամիսներուն (Սեպտեմբեր,
Հոկտեմբեր, Նոյեմբեր) հայ ազգային կեանքին կարգ մը իրա-
դարձութիւններուն վրայ, եւ մանաւանդ կը փոխանցեն անկիւնադար-
ձային շրջանի մը մթնոլորտը:

Անոնք կը բացայայտեն նաեւ Հայաստանի Հանրապետութեան
այն ծրագիրները որոնք կը միտէին

— «Օգտագործել հայ գաղութների տնտեսական եւ բարոյական
ուժը, յօգուտ Հայաստանի Հանրապետութեան, կազմակերպելով գա-
ղութների ներգաղթը դէպի երկիր եւ ապահովելով նրանց օժանդակու-
թիւնը Հայաստանի վերաշինութեան գործին...»: Եւ այս տողերը գրու-
ած են Հայաստանի Հանրապետութեան խորհրդայնացումէն երկու
ամիս առաջ (տեսնել ստորեւ՝ առաջին վաւերագիրը):

*
**

Ա.- ԵՐԵՔ ՎԱԻԵՐԱԳՐԵՐ

•
••

Հետեւեալ գրութիւնը Հայաստանի Հանրապետութեան Արտաքին
Գործերու նախարարութեան պաշտօնական մէկ նամակն է, ուղղուած
Պոլսոյ հայ դիւանագիտական ներկայացուցիչ Պ. Տերտինանտ Թահ-
թաճեանին:

Նամակը ձեռագիր է, վատորակ թուղթի վրայ գրուած, եւ կը կրէ
ստորագրութիւնը Արտաքին Գործերու նախարար Համօ Օհանջանեանի:

Արտաքին գործերի նախարարություն
Երևան, 25 Ապրիլ 1920 թ.
N: 5548

Հայաստանի Հանրապետության
Գրասենյակում կ. Ներկայացուցիչին

Կ. Պոլսում

Հայաստանի Հանրապետության Գրասենյակում 24 թ. Ապրիլ 1920 թ. Արտաքին գործերի նախարարության կողմից հասցված է Կ. Պոլսում, Կ. Ներկայացուցիչին:

1. Արտաքին գործերի նախարարության կողմից հասցված է Կ. Պոլսում, Կ. Ներկայացուցիչին հայաստանի Հանրապետության Գրասենյակում 24 թ. Ապրիլ 1920 թ. հասցված է Կ. Պոլսում, Կ. Ներկայացուցիչին:

Երբ թուրքական զորքերը 1920 թ. հունիսի 24-ին արշավանալով Երևան, Կ. Պոլսում, Կ. Ներկայացուցիչին հայաստանի Հանրապետության Գրասենյակում 24 թ. Ապրիլ 1920 թ. հասցված է Կ. Պոլսում, Կ. Ներկայացուցիչին:

Երբ թուրքական զորքերը 1920 թ. հունիսի 24-ին արշավանալով Երևան, Կ. Պոլսում, Կ. Ներկայացուցիչին հայաստանի Հանրապետության Գրասենյակում 24 թ. Ապրիլ 1920 թ. հասցված է Կ. Պոլսում, Կ. Ներկայացուցիչին:

Երբ թուրքական զորքերը 1920 թ. հունիսի 24-ին արշավանալով Երևան, Կ. Պոլսում, Կ. Ներկայացուցիչին հայաստանի Հանրապետության Գրասենյակում 24 թ. Ապրիլ 1920 թ. հասցված է Կ. Պոլսում, Կ. Ներկայացուցիչին:

Երբ թուրքական զորքերը 1920 թ. հունիսի 24-ին արշավանալով Երևան, Կ. Պոլսում, Կ. Ներկայացուցիչին հայաստանի Հանրապետության Գրասենյակում 24 թ. Ապրիլ 1920 թ. հասցված է Կ. Պոլսում, Կ. Ներկայացուցիչին:

Երբ թուրքական զորքերը 1920 թ. հունիսի 24-ին արշավանալով Երևան, Կ. Պոլսում, Կ. Ներկայացուցիչին հայաստանի Հանրապետության Գրասենյակում 24 թ. Ապրիլ 1920 թ. հասցված է Կ. Պոլսում, Կ. Ներկայացուցիչին:

Արտաքին Գործերի
Նախարարություն

Երևան 28 Ապրիլ 1920 թ.
No 5548

Հայաստանի Հանրապետության
Դիւանագիտական Պ. Ներկայացուցիչին

Կ. Պոլսում

Համաձայն Նախարարների Խորհրդի Օգոստոսի 27ի նիստի որոշման, Արտաքին Գործերի Նախարարությանը կից բացուած է գաղութային բաժին, որի նպատակն է,

1. Օգտագործել Հայ Գաղութների տնտեսական և բարոյական ոյժը, յօգուտ Հայաստանի Հանրապետության, կազմակերպելով գաղութների հայութեան ներգաղթը դէպի երկիր և ապահովելով նրանց օժանդակութիւնը Հայաստանի վերաշինութեան գործին:

Նոյն բաժնի գործունէութեան մասին նախարարների Խորհրդի յանձնարարութեամբ մշակուած մանրամասն հրահանգները կ'ուղարկեմ Ձեզի ներկա, ինչպէս նաեւ գաղութներում կազմակերպուելիք Հ. Հ. օժանդակող միութիւններու նախագիծ-կանոնագրէն մի օրինակ:

Ձեր ուշադրութեան կը յանձնեմ նաեւ նախարարների Խորհրդի 1920 թ. Մայիս 27 որոշումը, որու համաձայն առանձին նախարարութիւնները կարող են ուղարկել կամ նշանակել իրենց ներկայացուցիչներին արտասահման, միայն նախարարների Խորհրդի ամէն մի դէպքի համար առանձին որոշումով և այդպիսիներ համարում են այն դիւանագիտական միսիայի կամ հիւպատոսին կից, որոնց շրջանն են իրենք առաւում:

Այս որոշման հիման վրայ առանձին նախարարութիւններ չեն կարող առանձին իրենց ներկայացուցիչները ունենալ: Գալով ներգաղթի, գորահաւաքի, մասնագէտներ ուղարկելուն և այլ գործերուն, որոնք յիշատակուած են Արտաքին Գործերի նախարարութեան Գաղութային բաժնի հրահանգներում, պիտի կատարուին Արտասահմանի դիւանագիտական ներկայացուցիչներու, ընդհ. հիւպատոսներու, և հիւպատոսներու միջոցով: Մեծ գաղութներում, ուր այս գործերը ընդարձակ են, կը նշանակուին գաղութային գործերով զբաղուող յատուկ վարիչներ:

Պ. Էպիդաքեանի ընդհ. հիւպատոսի թեկնածութիւնը նկատի առնուած է. հանեցէք մեզ յայտնել Ձեր կարծիքը և հաւանութիւնը, որպէսզի նրան ուղարկենք համապատասխան թղթեր: Մինչ այդ, Պ. Էպիդաքեանը նշանակուում է իբրեւ Պոլսոյ դիւանագիտական ներկայացուցչութեան շրջաններում գաղութային գործերի վարիչ, որ պիտի զբաղուի Ձեր հսկողութեան տակ գաղութային գործերով, որոնց

մասին վերը յիշատակեցին: Մենք այդ նշանակման մասին հաղորդել ենք խնամատարութեան նախարարութեան, որը ետ է վերցնում նորից իր տուած պաշտօնը:

Պոլսոյ դեսպանատան եւ հիւպատոսութեան շտատները մշակուած են, շուտով կ'անցնեն նախարարների խորհրդէն:

Ժամանակաւորապէս գաղութային գործերու վարիչին մենք համաձայն ենք որ տրուի այնքան ոռնիկ, որքան նա կ'ստանայ այժմ իրրեւ խնամատարութեան տնօրէն, յամենայն դէպս ոչ աւելի քան 200 տանկական ոսկի ամսական: Բնակարանի եւ այլ խնդիրները կը կարգադրուին մօտիկ ապագայում շտատներու հետ:

Այս ամսականը կը յատկացուի այն օրից, երբ Պ. Էպլիդաթեանը կը նուիրուի այս գործին: Այս գումարը կարող է վճարել տեղւոյն վրայ ձեռք բերուելիք հասոյթներից, պակասը լրացնելով մեր տրամադրութեան տակ եղած ֆօնտերից, ի հաշիւ արտաքին գործերի նախարարութեան: Նոյնպէս իրաւունք կը տրուի Ձեզ հրաւիրել նաեւ մէկ քարտուղար, որուն ոռնիկը ձեռք կը բերուի նոյն ձեւով: Գրասենյակի համար կարգադրեցէք պատրիարքարանի հետ: Յուսով եմ որ Ս. Պատրիարք հայրը կ'աջակցի Ձեզի եւ կը համաձայնի առժամապէս տալու խնամատարութեան շէնքին մէջ կամ այլուր գրասենյակ Պ. Էպլիդաթեանին եւ քարտուղարին համար: Պ. Էպլիդաթեանի աջակցութեամբ հետապնդեցէք Ազգ. կալուածներից մէկը ձեռք բերելու գործը միսիայի եւ հիւպատոսարանի համար եւ կատարեցէք կահաւորման նախապատրաստական աշխատանքներ: Յայտնեցէք թէ որքան ծախք կը նստի մեր վրայ վարձքը եւ կահաւորումը:

Պ. Էպլիդաթեանը եւ քարտուղարը պէտք է աջակցին Ձեզի հիւպատոսական գործերը վարելու համար եւս: Բասպօրտ տուէք ամէն մէկ հայու որ կը դիմէ Ձեզ առանց դժուարութեան. աշխատեցէք մեր հպատակները շատացնել:

Արտասահմանեան գաղութների կազմակերպութեան համար մշակուած նախագիծ-կանոնագիրը շապտօն քննութիւնի: Պ. Էպլիդաթեանի հետ համախորհուրդ ուսումնասիրեցէք թէ այդ կանոնագրի ձգտած նպատակները ի՞նչ ձեւով, ինչ տակտիկով կարելի է իրականացնել եւ նոյն նպատակին հասնելու համար ի՞նչպիսի կազմակերպական ձեւ պէտք է ընդունիլ Ձեր շրջանի առանձնաշատուկ պայմանները աչքի առաջ ունենալով, եզրակացութիւնը հաղորդեցէք:

Մեզ ծանօթ է որ այդտեղ Պատրիարքարանը հաւաքում է հայրենիքի տուրք, իսկ մեր առաջադրած նպատակների համար այդպիսի տուրքի գանձումը անհրաժեշտ է. հայկական հպատակութեան համար այդ տուրքը պիտի լինի պարտաւորիչ: Տուրքի գանձման մասին էլ Ձեր կարծիքը յայտնեցէք:

Շուտով Ձեզի կ'ուղարկենք ցուցակ այն մասնագէտներին, որոնք առաջին հերթին անհրաժեշտ են Հայաստանի համար: Նկատելով որ

ընդհանուր կոչերով չէ կարելի քաշել մասնագէտներին, զանազան նախարարութիւններից առնելով կը պատրաստենք ցուցակներ, որոնց մէջ յիշատակուած պիտի ըլլայ թէ ո՛վ որքան քոչակ պիտի ստանայ: Այստեղ կառավարութիւնը ըրած է բացառիկ գոհողութիւններ, նշանակելով աւելի քարձր ոռնիկներ, որոնք կը հասնին եւ նոյնիսկ կ'անցնին նախարարի ամսաթուղակները: Միմչեւ ներգաղթի եւ վերաշինութեան ֆօնտը ստեղծելը, զանազան միջոցներով աշխատեցէք մասնագէտներուն բացի անապարհաժախտ, վճարել նաեւ Յ ամսուայ համար 5էն միմչեւ 10 տանկական ոսկի թղթադրամ ամսական ըստ մասնագէտներու կարեւորութեան, որպէսզի այստեղ եկողը կարողանայ Յ ամսուայ մէջ ընտելանալ տեղին պայմաններուն:

Այս գումարները աշխատեցէք հայթայթել զանազան ընկերութիւններու միջոցներէն կամ Պատրիարքարանի ֆօնտերէն, եթէ հնարաւոր է:

Երեւանի մէջ մասնագէտներու համար բռնագրաւած ենք առանձին բնակարան մը, որը պիտի ծառայէ իրրեւ հիւրանոց միմչեւ որ մասնագէտները տեղաւորուին:

Չինուորներու ծախսերը հոգացէք գոնէ միմչեւ Սանահին: Բաթումի հիւպատոսին եւ Թիֆլիսի մեր դիւանագիտական ներկայացուցչին գրած ենք որ հարկ եղած բարոյական աջակցութիւնը ընեն իրենց անոնց շուտափոյթ փոխադրութեան համար միմչեւ Սանահին: Գրուած է նոյնպէս զինուորական խնամատարութեան եւ հաղորդակցութեան նախարարութիւններուն, որ հրահանգեն իրենց ներկայացուցիչներուն որպէսզի ամէն աջակցութիւն ցոյց տան զինուորներուն եւ անոնց բաշխումը կատարեն Սանահինէն, իսկ մասնագէտները ուղարկուին Երեւան: Ուշադրութիւն դարձրէք որ բաղտախնդիրներ չուղարկուին իրրեւ զինուոր:

Նկատելով որ իրրեւ սպայ արձանագրուելով այստեղ եկողները տարրեր պաշտօններ են ուզում, որպէսզի թիրիմացութեան տեղի չտրուի եւ անախորժութիւններ չպատահին, ամէն մասնագէտի եւ սպայի տոկումէնտները քննելուց յետոյ պէտք է տաք առանձին թուղթ մը, որուն մէջ յիշուի թէ ինքը յանձնառած է Ձեզի ուղարկուած ցուցակին մէջ յիշուած թոչակով ստանձնել համապատասխան պաշտօն, որպէսզի գիտնանք թէ ո՛վ ի՞նչ նպատակով եկած է:

Մասնագէտները եւ սպաները պէտք է ներկայանան անմիջապէս Արտաքին Գործերի նախարարութեան Գաղութային բաժնին, իրենց դոկումէնտներով, որպէսզի իրենց տրուի համապատասխան յանձնարարական, ուղղուած համապատասխան նախարարութիւններու, եւ հոգ տարուի նրանց բնակարանի մասին:

Մամուլի միջոցով եւ առանձին ընկերութիւնների միջոցով դիմեցէք կառավարութեան անունից մասնագէտներին եւ սպաներին,


երբ ստանա՞վ վերեւ յիշուած ցուցակը, յայտնելով նրանց ստանալի՞ք թոշակները եւ պայմանները եւ կոչ ընելով որ շտապե՞ն գալ Հայաստան:

Ամենէն կարելոր այդ բոլոր գործերը բարար կերպով կատարելու համար նիւթականն է, եւ ահա այդ նիւթականը՝ գաղութներու մէջ ձեռք բերելու համար է որ անհրաժեշտ նկատած ենք յառաջ բերել գաղութային օժանդակից միութիւններ: Մենք այստեղէն հնարաւորութիւն չունինք արտասահմանեան դրամներով մեծ գումարներ ուղարկել:

*
* *

Վերոյիշեալ պաշտօնական նամակին հետ ներփակ ուղարկուած են հետեւեալ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ, որոնք առաջինին պէս բնագիր չեն, այլ՝ վաւերացուած պատճէններ (ուղղուած ըլլալով ո՛չ միայն Հայաստանի Հանրապետութեան Կ. Պոլսոյ ղիւանագիտական ներկայացուցիչին, այլ արտասահմանի բոլոր հայ դեսպաններուն):

(Խմբ.)



Նկատելով որ Հայաստանի մէջ տիրող քաղաքացիական օրէնքները դեռ եւս ուսական են եւ չեն թարգմանուած, մինչեւ անոնց թարգմանութիւնը իրաւարանները բաւական դժուարութիւններու պիտի բաղխին: Ահա այդ պատճառով առ այժմ վարչական եւ դատական պաշտօնեաներ մի՛ ուղարկէք: Եթէ այդ թարգմանութեան գործը լրանայ, Ձեզի կը հրահանգեմք որ այդպիսիներին էլ ուղարկէք:

Այս նամակին բովանդակութիւնը տեղեկացրէ՞ք Պ. Էպիլիդաթեանին, որը պիտի կատարէ այս բոլոր գործերը Ձեր հսկողութեան տակ:

Արտաքին Գործերի նախարար՝
Համօ Օհանջանեան

Արտաքին Գործերի նախարարի օգնական
Մ. Պետրոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ
ԳԱՂՈՒԹԱՑԻՆ ԲԱԺԻՆ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ

ԳԱՂՈՒԹԱՑԻՆ ԲԱԺԻՆ

Տ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

1. Գործը կատարվում է համաձայն հարկային օրենսդրության և հարկային կոդեքսի պահանջներին:
2. Գործը կատարվում է համաձայն հարկային օրենսդրության և հարկային կոդեքսի պահանջներին:
3. Գործը կատարվում է համաձայն հարկային օրենսդրության և հարկային կոդեքսի պահանջներին:
4. Գործը կատարվում է համաձայն հարկային օրենսդրության և հարկային կոդեքսի պահանջներին:
5. Գործը կատարվում է համաձայն հարկային օրենսդրության և հարկային կոդեքսի պահանջներին:
6. Գործը կատարվում է համաձայն հարկային օրենսդրության և հարկային կոդեքսի պահանջներին:
7. Գործը կատարվում է համաձայն հարկային օրենսդրության և հարկային կոդեքսի պահանջներին:
8. Գործը կատարվում է համաձայն հարկային օրենսդրության և հարկային կոդեքսի պահանջներին:
9. Գործը կատարվում է համաձայն հարկային օրենսդրության և հարկային կոդեքսի պահանջներին:
10. Գործը կատարվում է համաձայն հարկային օրենսդրության և հարկային կոդեքսի պահանջներին:

1.- Հայաստանից դուրս հայկական գաղութներու գործը վարելու համար Ա. Գ. նախարարութեան կից կը հիմնուի Գաղութային բաժին:

2.- Գաղութային բաժնի նպատակներն են.

Ա.- Օգտագործել հայ գաղութների տնտեսական և բարոյական ոյժը յօգուտ Հայաստանի Հանրապետութեան, կազմակերպելով գաղութների հայութեան ներգաղթը դեպի երկիր և ապահովելով նրանց օժանդակութիւնը Հայաստանի վերաշինութեան գործին:

3.- Այս նպատակներին հասնելու համար Գաղութային բաժինը կը դիմէ հետեւեալ միջոցներուն.

Ա.- Կ'ուսումնասիրէ գաղութներու պատմութիւնը և նրանց ներկայ վիճակը:

Բ.- Կը կազմէ գաղութներու հայութեան վիճակագրութիւնը որմէ առաջնորդուելով համապատասխան միջոցներ ձեռք կ'առնէ հետզհետէ նրանց ներգաղթը դեպի երկիր կազմակերպելու համար:

Մանօթ.- Արտասահմանի հայութեան ներգաղթի մասին կը մշակուին առանձին հրահանգներ խնամատարութեան նախարարութեան ներգաղթի և վերաշինութեան բաժնի հետ համախորհուրդ:

Գ.- Կը կազմակերպէ Հ. Հ. օժանդակող միութիւններ Հ. Հ. արտասահմանեան դիւանագիտական ներկայացուցիչների հսկողութեան տակ, Հայաստանի վերաշինութեան և ներգաղթի գործին աջակցելու համար և կը հաստատէ, կը գանձէ հայրենիքի տուրքը հայ գաղութներու անդամներէն:

Դ.- Գաղութներու և Հայաստանի Հանրապետութեան միջեւ սերտ բարոյական կապ պահելու նպատակով շրջիկ ներկայացուցիչներու, պարբերական ստեպ ինֆորմացիայի և այլ միջոցներով կը ծանօթացնէ Հայաստանը և անոր ֆառաքական և տնտեսական վիճակը գաղութներուն և փոխադարձաբար, ձգտելով ազգային ինֆրանաւանդութեան և ներգաղթի տեւջ յառաջացնելու գաղութներու հայութեան մէջ: Այս նպատակին համար կ'օգտագործէ նոյնպէս գաղութներու հայկական մամուլը և հրատարակութիւնը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր
Գաղութների Հայերեն Գանձուկիք
ՀԱՅՐԵՆԻՔԻ ՏՈՒՐՔԻ
ՄԱՍԻՆ

Ե.- Կը կազմակերպէ գորահաւաք մարմիններ Ռազմական նախարարի հրահանգների համաձայն եւ ամէն կերպ կ'աջակցի Հայաստան եկող զինուորներուն թէ քանապարհին եւ թէ երկիր հասնելու ժամանակ, կը ցուցակագրէ մասնագետները եւ համապատասխան նախարարութիւններու գիտակցութեամբ եւ ցանկութեամբ կը հրաւիրէ արտասահմանէն մասնագետները, ցոյց տալով անոնց ամէն աջակցութիւն թէ քանապարհին եւ թէ երկրին մէջ:

Զ.- Կ'աջակցի գաղութային կապիտալի ներմուծման Հայաստան Հ.Հ. հիւպատոսների միջոցով կազմակերպելով արդիւնաբերական եւ առեւտրական ընկերութիւններ եւ դրամատուներ Հայաստանի մէջ գործելու նպատակով:

4.- Գաղութային բաժինը կը վարէ գաղութներու գործերը Հայաստանի արտասահմանեան դիւանագիտական ներկայացուցիչներու, ընդհանուր հիւպատոսներու ու յատուկ շրջիկ ներկայացուցիչներու միջոցով:


Մանօթ. Մեծ գաղութներուն մէջ դիւանագիտական ներկայացուցիչները կը նշանակեն գաղութային գործերով զբաղող յատուկ վարիչներ:

Արտաքին Գործերի Նախարար
Բ. Հ. Օհանջանեան

Իսկականի հետ միշտ է

Գործավար

Յ. Զրբաշեան



1.- Արտասահմանեան բոլոր գաղութներում կազմակերպելիք Հ.Հ. օժանդակիչ միութիւնները, որոնք կը գործեն Հ.Հ. դիւանագիտական ներկայացուցիչներու կամ անոնց կողմէ նշանակուած գաղութային գործերու վարիչներու հսկողութեան ներքեւ (անոնց համար կը կազմուի առանձին մի օրինակ նախագիծ կանոնագիր) կը գանձեն հայրենիքի տուրք բոլոր հայերէն, ըլլան անոնք Հ. Հանրապետութեան քաղաքացիներ կամ օտարապատակներ, առաջատուական դրութեամբ: Առաջատուական տուրքերի աղիւսակը կը կազմուի իւրաքանչիւր գաղութի Հ.Հ. օժանդակից միութիւններէն, Հ.Հ. դիւանագիտական ներկայացուցչի հսկողութեան ներքեւ:

2.- Այս կերպով հաւաքուած հայրենիքի տուրքը կը բաժնուի սակերու որոնցմէ կը կազմուին առանձին ֆոնտեր:

Նախ տուրքի 20% ը կը վերցուի հետեւեալ նպատակներու համար.

10% ը դիւանագիտական ներկայացուցիչներու ֆոնտ, որը կը կեդրոնանայ մէկ վայրի մէջ Ա. Գ. նախարարի հրահանգներով, այս ֆոնտէն գումարներ կը յատկացուին այն դիւանագիտական ներկայացուցչութիւններուն, որոնք չեն կարող իրենց ծախսերը հոգալ ամբողջովին տեղական հասոյթով:

Մանօթ.- Ըստ թարիքի անցագիրներէ, վիզաներէ եւ հիւպատոսական այլ տուրքերէ առաջ եկած հասոյթներու համար կը պահուի առանձին հաշիւ: Այս գումարներէն կը հոգացուին դիւանագիտական ներկայացուցչութիւններու բոլոր ծախսերը. իսկ մնացեալ գումարները կը միացուին ներկայացուցչական ֆոնտին:

5% - գաղութային բաժնի շրջիկ ներկայացուցիչներու ծախսերուն համար:

5% չնախատեսուած պէտքերու համար:
Մնացեալ գումարները կը բաշխուին հետեւեալ կերպով.

30% բանակի ֆոնտ. այս ֆոնտէն կը ծախսուի մաքու արտասահմանէն Հայաստան զինուորացուներ փոխադրելու համար:

25% Տանկաստան ապրող հայերու օգնութեան համար:

45% ներգաղթին եւ մասնագետներուն դէպի Հայաստան փոխադրելու համար:

3.- Հայրենիքի տուրքէն գոյացած ֆոնտերու համար կը պահուի առանձին հաշիւ: Այս գումարները կը դրուին գաղութային բաժնի հսկողութեան տակ եւ կը ծախսուին կամ կը փոխադրուին գաղութային բաժնի հրահանգներով արտաքին գործերի նախարարի կարգադրութեան եւ հաստատման համաձայն:

4.- Տանկաստան ապրող հայերի օգնութեան ֆոնտերը կը կենդրոնանան Հ.Հ. Պոլսոյ լիազօրի ձեռքը եւ կը գործածուին անոր միջոցով գաղութային բաժնի գիտակցութեամբ:

5.- Ներգաղթի եւ դէպի Հայաստան փոխադրուելիք մասնագէտների ֆոնտերը կը մնան զանազան գաղութներու դիւանագիտական մերկայացուցիչներու տրամադրութեան տակ: Ներգաղթի ֆոնտի գումարներու մէկ մասը գաղութային բաժնի հրահանգով կարող են կենդրոնանալ մէկ կամ մէկ քանի վայրեր՝ նայած պէտքերուն:

6.- Բանակի ֆոնտերը կը գործածուին կամ կը կենդրոնացուին Ռազմական նախարարի կարգադրութեամբ գաղութային բաժնի միջոցով, իսկ գաղութային բաժնի շրջիկ մերկայացուցիչներու ծախսերը եւ չնախատեսուած ծախսերու ֆոնտերը նախարարի կարգադրութեան եւ հաստատման համաձայն:

7.- (4) Չորս ամիսը անգամ մը դիւանագիտական մերկայացուցիչները հայրենիքի տուրքէ ձեռք բերուած գումարներու համար կը մերկայացնեն առանձին հաշիւ Արտաքին Գործերի նախարարութեան:


Մանօթ.— Անձնագրերէ, վիզաներէ եւ հիւպատոսական այլ տուրքերէ յառաջ եկած հասոյթներու մասին նոյնպէս չորս ամիսը մէկ անգամ հաշիւ կը մերկայացուի Արտաքին Գործերու նախարարութեան:

Արտաքին Գործերի նախարար
Բ.Հ. Օհանջանեան

Իսկականի հետ միշտ է

Գործավար

Յ. Զրքաշեան



Բ.- ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐՈՒ ՏԵՏՐԱԿ ՄԸ

Տետրակը (140 էջ) կը պարունակէ 40 նամակներու պատճեններ եւ հաշուետուական տախտակներ, վերարտադրուած՝ մանիշակագոյն մելանով՝ շատ բարակ թուղթի վրայ: Կարգ մը էջեր եւ նամակներ գրեթէ անընթեռնելի դարձած են, սակայն հակառակ տարիներու մաշուքին՝ մեծ մասը կրնայ դիւրութեամբ կարդացուիլ:

Նամակներուն առաջինը, գրուած 16 Օգոստոս 1920-ին եւ ուղղուած Հայաստանի Հանրապետութեան «Ննամատարութեան եւ վերաշինութեան նախարարութեան» կը կրէ նոյն նախարարութեան Պոլսոյ ներկայացուցիչ Մ. Մ. Էպլիդաթեանի ստորագրութիւնը: Իսկ 1921 Դեկտեմբերէն սկսեալ տիտղոսը «Հիւպատոսական բաժնի վարիչ» է (միշտ միեւնոյն ստորագրութեամբ՝ ինչպէս բոլոր նամակները): Երեւանի ուղղուած վերջին նամակը կը կրէ 11 Հոկտեմբեր, 1920 թուականը:

Յայտնապէս տետրակը նախ զաղութային գործերու, եւ յետոյ Հիւպատոսական բաժնիներուն կողմէ առաճուած նամակներուն պատճէնները կը մէկտեղէ: Եօթ նամակներ ուղղուած են Երեւան. ութ նամակներ՝ Պոլսոյ դիւանագիտական ներկայացուցիչ Յ. Թաւաթեանին. չորս նամակներ՝ Պատրիարքարանին, ութ նամակներ՝ արտասահմանի պաշտօնակից Հայ Հիւպատոսներուն (Պաթում, Վաշինկթոն, Սոֆիա, Պուրթէ), եւ երկու նամակներ Պոլսոյ «Ազգային Ննամատարութեան»: Մնացեալները ընկալազեր են: Ներկայ հաստիքով կը հրապարակենք տասը նամակներ:

Իսկ հաշուետուական մասը կը ներկայացնէ Պոլսոյ Հայկական Հիւպատոսարանին մուտքերու եւ ելքերու բաժնիները, 1920 Յուլիսէն մինչեւ 1922 Դեկտեմբեր, իրենց բոլոր մանրամասնութիւններով: Եւ առաջին ակնարկով իսկ յայտնի կ'ըլլայ որ հասոյթները ամբողջովին տեղական են, զոյացած գլխաւորապէս տրուած անցագիրներէ եւ նուիրատուութիւններէ: Իսկ ելքերը յատկացուած են պաշտօնէութեան ամսականներուն (ներառեալ Պ. Յ. Թաւաթեանը), զանազան նըպաստներու, բայց մասնաւորապէս Ա. Ահարոնեանի Հայ Ազգային Պատուիրակութեան (դիւանագիտական ներկայացուցիչ Յ. Թաւաթեանի հրահանգով):

Այլ տեղեկութիւններու կարգին՝ հաշուետուական մասէն յայտնի կ'ըլլայ նաեւ որ Պոլսոյ Հայ Հիւպատոսարանին անձնակազմը կը բաղկանար երեք հոգիէ (Հիւպատոսը, քարտուղարը, Պ. Անուփեան, եւ

դռնապան Նշանը — մականունը յայտնի չէ) : 1922 Սեպտեմբերին միայն պաշտօնի կը կոչուին «օգնական քարտուղարներ», դիմակալելու համար հիւպատոսարան խուժող հայ բազմութիւնները :

Կ'արժէ որ մասնագէտ պատմաբան մը ամբողջական կերպով ուսումնասիրէ վերոյիշեալ տետրակը, որպէս պատմական հուժ նիւթ, նկատի առնելով մանաւանդ որ այդ շրջանէն հասած վաւերագրական տուեալները հազուադէպ են :



Մատթէոս Էպիդարթեան, (տիկնօջը եւ զաւակներուն հետ) 1934 թուականին, երբ Հալէպի Հայկազեան երկսեռ Վարժարաններուն տնօրէնն էր :

Հայաստանի Հանրապետութեան Խնամատարութեան եւ Վերաշինութեան Նախարարութեան

Երեւան

Պարոն Նախարար,

Պատասխանելով Ձեր 6 Յուլիս ամսաթիւ նամակին նախ պարտք կը համարեմ արտայայտել իմ ջերմագին շնորհակալութիւնս ինձի հանդէպ ցոյց տրուած համակրական վերաբերումին համար : Պիտի ջանամ անխոնջ աշխատանքով իրականացնել իմ վրայ դրուած յոյսերը :

Հայ ազատագրութեան ամրապնդման եւ բարգաւաճման տեսակէտով առաջին կարգի կարեւորութիւն ներկայացնող ներգաղթի եւ խնամատարական դժուարին գործը արդիւնաւորապէս տանելու համար, ներուի ինձ Ձեր նկատողութեան յանձնել շարք մը պարագաներ, ուղղակի տեղական պահանջներէ եւ քաղաքական ներկայ կացութիւնէն ծնած : Դժուար չէ գուշակել թէ քիչ ժամանակէն գործունէութեան լայն ասպարէզ մը կը բացուի, ձեռնարկուելով ստանձնուած աշխատանքին . եւ որովհետեւ արագ թղթակցութեան պակասը արգելի կը հանդիսանայ կանոնաւոր յարաբերութեան ընթացքին, անհրաժեշտ է ուրեմն այժմէն ճշդել իմ իրաւասութեանս սահմանը : Աւելորդ է անշուշտ դիտել տալ որ շարունակ կեդրոն դիմելով պատասխանի սպասելու դրութիւնը բաղձալի գործունէութիւն մը չսպասեմք . հետեւաբար կարեւոր է ձեւաւորել եւ ընդլայնել իրաւասութեանս սահմանը :

.....
(Անընթեռնելի երեք էջեր)
.....

Հոս առ այժմ ձեռնուրնէ առաջ դրկուելիք գրեթէ 1000 գաղթական կայ, կայաններու մէջ պատսպարուած, մեծ մասամբ Կարնեցի, եւ մասամբ Բաղէշցի ու Վանեցի : Նոյնպէս հաւանական է 5-600 որբերու առաճումը, 14 տարեկանէն վեր ըլլալու պայմանով : Անոնց համար եթէ որեւէ հրահանգ ունիք, հանեցէ՛ք փութով պատասխանել :

Հայաստանի Հանրապետութեան Խնամատարութեան եւ Վերաշինութեան Նախարարութեան Պոլսոյ ներկայացուցիչ

Մ. Մ. Էպիդարթեան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ
ԵՒ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Երեւան

Պարոն Նախարար,

Պատիւ ունիմ հաղորդելու Ձեզ որ մօտաւորապէս 15 օր վերջ որոշուած է Հայաստան դրկել 100-120 որբեր, որոնք մեր շրջանին մէջ գիւղատնտեսական վարժարան մը ամփոփուած էին. սակայն հիմա վարժարանն ու ագարակը թուրք ազգայնական հրոսակներէ գրաւուած եւ աւերուած ըլլալով, կարելի չեղաւ զիրենք հոս յարմար տեղ մը գետնդել: Ասոնց առաջին գլխաւոր շարժառիթը հարկ է նկատել իրենց տարիքին՝ ընդհանրապէս 14 տարեկանէ վեր ըլլալը, եւ անոնց որոշ պատրաստութիւնը, որով քիչ ժամանակէն կրնան իրրելու երկրագործ եւ գիւղատնտես օգտակար ըլլալ երկրին:

Պոլսոյ Ազգային Խնամատարութիւնը խնայելու համար Հանրապետութեան՝ անոնց նիւթական մատակարարութեան ամբողջական հոգը, պիտի դրկէ միասին նաեւ իւրաքանչիւր տղու համար (25) ֆսան եւ հինգ Օսմանեան ոսկի թղթադրամ, իրրելու սնունդի փոխարժէքինչպէս նաեւ անոնց հետ մէյ-մէկ ձեռք ներմակեղէն եւ հագուստ, անկողինի, վերմակի, եւ բարձի մէյ-մէկ երես, մէկ պատառափող, պնակ, եւայլն:

Պիտի ջանամ իրենց ընկերակցելիք պաշտօնեային ապահովել քաւականաչափ գումար մը անմիջապէս գանձելու առաջնորդել կարենալու համար Երեւան: Այդ մասին լուսագոյն համարեցի գրել նաեւ Պաթումի հիւպատոս Պարոն Աթապէկեանի, որպէսզի հարկ եղած դիւրութիւնները ընծայէ անոնց, երբ որ ժամանեն այդ քաղաքը եւ փութով հեռագրէ Ձեզ, որ հարկաւոր պատրաստութիւնները ըլլան կանխաւ անոնց տեղաւորման համար:

Փափաքելի է որ այս որբերը ժամանակ մը եւս տեսական եւ գործնական հողագործութեան դասընթացներու հետեւին որպէսզի աւելի գիտակցօրէն լծուին յետոյ այդօրինակ աշխատանքներուն, եւ առաւելագոյն չափով օգտակար ըլլան երկրին: Իրենց ընկերացող ուսուցիչները կրնան այդ ուղղութեամբ իրենց մասնակցութիւնը բերել: Յուսալով որ այս որբերը ընդունելու եւ պատսպարելու համար այժմէն պէտք եղած պատրաստութիւնները պիտի ըլլան,

Յարգանքով

Հայաստանի Հանրապետութեան Խնամատարութեան եւ
Վերաշինութեան Նախարարութեան Պոլսոյ ներկայացուցիչ

Մ. Մ. Էպլիդաթեան

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ

S.S. ԶԱԻԷՆ Ս. ԱՐՔԵՊՍ.

**ՆԱԽԱԳԱՀ ՊԱՏԿԱՌԵԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**

Աստ

Բարձրաշնորհ Ս. Հայր,

Ձեր Սրբազնութիւնէն լսելով որ Պատկառելի Քաղաքական Ժողովը մտադիր է Պոլիս գտնուող որբերը փոխադրել Հայաստան եւ կը փափաքի հասկնալ Հայաստանի կառավարութեան այդ մասին, իրրելու Հայաստանի Հանրապետութեան Վերաշինութեան եւ Խնամատարութեան Նախարարութեան ներկայացուցիչը կու գամ այս մասին նախապէս կառավարութեան հրահանգը տեղեկացնել, «երբ անհրաժեշտութիւն ըլլայ, որբերը դրկել Երեւան, սկսեալ մեծահասակներէն, իմացնելով նախօրօք անոնց թիւը, առաքման թուականը, եւայլն»: Գալով նիւթական պայմաններուն, Արմաշի գիւղատնտեսական վարժարանի աշակերտներուն համար եղած կարգադրութիւնը արդէն վերոյիշեալ հրահանգներու հիման վրայ եղած էր, եւ նոյնը պահել քաւարարութիւն կու տայ մնացեալներն ալ նոյն ձեւով ուղարկելու:

Ակնածանօք

Հայաստանի Հանրապետութեան Խնամատարութեան եւ
Վերաշինութեան Նախարարութեան ներկայացուցիչ

Մ. Մ. Էպլիդաթեան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ**

Երեւան

Պարոն Նախարար,

Պատիւ ունիմ հաղորդելու Ձեզ որ ստիպուած եմք մօտերս Հայաստան ուղարկել մաս մը հայ գաղթականներ, տեղաւորելու համար յարմար հողամասի մը վրայ: Հետեւեալ պարագաներու տակ է որ յարմար տեսնուած է փութացնել անոնց առաքումը:

Նիկոմիտիոյ (Իզմիթ) շրջանէն Արսլանպէկ հայ գիւղը, վերջերս թուրք չէթէներու դէմ հարկադրուած ըլլալով ինքնապաշտպանութեան դիմել, մեծ եւ մեղմուտ ուժերու առջեւ վերջապէս տեղի տուած է, եւ գիւղը հրոյ մարակ եղած ըլլալուն պատճառաւ բնակչութիւնը — 146 ընտանիք եւ շուրջ 450 հոգի — մնացած են անտէր եւ անպատսպար: Այս վերապրող հայերը չուզելով այլեւս վերադառնալ իրենց ծննդավայրը, մոյմիսկ եթէ բնական պայմաններ ստեղծուած ըլլային, փափաք յայտնած են հաւաքաբար գաղթել Հայաստան, եւ իրենց կորովը ու ջանքը թափել յառաջացնելու համար նոր կեանք եւ նոր տնտեսութիւն: Եւ այսպէսով սատարել Հայրենիքի վերաշինութեան սուրբ գործին: Արդ, նկատի առնելով այդ գիւղացիներուն գործունեայ, տոկուն նկարագիրը եւ կորովի, պատերազմիկ յատկութիւնները, լիայոյս եմ որ շատ օգտակար տարրեր ըլլան Հայաստանի վերականգնումի աշխատանքներուն: Հետեւաբար կը խնդրուի Պարոն նախարար այժմէն հարկ եղած միջոցները ձեռք առնել, տեղաւորելու համար զանոնք յարմար շրջանի մը մէջ:

Փափաքելի էր պահանջուած կարեւորութիւնը ընծայել այս առաջին առաքումին, որպէս անդրանիկ քայլը յառաջիկայ մեծ ներգաղթին, որպէսզի անիկա իր բարեբաստիկ արձագանքը գտնէ ամէն կողմ եւ ֆաջալերութիւն մը ըլլայ մօտաւոր եւ հեռաւոր գաղութներուն առաջին առթիւ շտապելու համար դէպի հայրենիք, եւ ծառայելու համար անոր բարգաւաճումին:

Յարգանքով

Հայաստանի Հանրապետութեան Վերաշինութեան եւ Խնամատարութեան Նախարարութեան ներկայացուցիչ

Մ.Մ. Էպլիդաթեան

Յ.Գ. Վերոյիշեալ գիւղացիներուն քանակարեւոյնը մինչեւ Երեւան մեմք պիտի հոգանք:



20 Սեպտեմբեր, 1920

Ամենապատիւ
Տ.Տ. Ջաւէն Ս. Արքեպիսկոպոս
Նախագահ Պատկանելի Քաղաքական Ժողովոյ

Աստ

Բարձրաշնորհ Ս. հայր,

Պատիւ ունեցանք ստանալու Ձեր Սրբազնութեան 15 Սեպտեմբեր ամսաթիւ եւ 3349 համար գրութիւնը, Ջօր. Կուրօյի ներփակ հեռագրին պատճենին հետ մէկտեղ, որով կը յանձնարարուէր կարգադրութիւն մը ընել Պէյրութէն Կովկաս անցնելու նպատակով եկող նոր գաղթականներու մասին:

Ձեր Սրբազնութեան սոյն յանձնարարութիւնը նկատի առնուած է: Այսօր իսկ այդ գաղթականներու Հայաստան մուտքին եւ գետնորման համար հարկ եղած տեղեկութիւնները պիտի տամ պատկանեալ իշխանութեանց: Միայն կը խնդրուի հաղորդել անմիջապէս ֆրանսական իշխանութեանց որ յիշեալ գաղթականները Պոլիս չելլեն բնաւ, այլ շարունակեն իրենց նամրորդութիւնը միջեւ Պաթում, միեւնոյն պայմաններու տակ, որոնցմով շոգեմաւ մտած էին Պէյրութէն: Փափաքելի էր որ այս մասին այժմէն հարկ եղած միջոցները ձեռք առնէին:

Ակնածանօք

Հայաստանի Հանրապետութեան Խնամատարութեան եւ Վերաշինութեան Նախարարութեան ներկայացուցիչ

Մ.Մ. Էպլիդաթեան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
ՊԱՐՈՆ ԹԱՀԹԱՃԵԱՆԻ**

Ազնիւ հայրենակից,

Պատիւ ունեցամք ստանալու Ձեր 19 Սեպտեմբեր ամսաթիւ եւ 842 համար նամակը, որով կը հաղորդէիք դադրեցնելու դէպի Պաթում գաղթականներու ուղարկումը մինչեւ ցնոր տնօրինութիւն, համաձայն Օգոստոս 3ի ստացուած Պարոն Աթապէկեանի* պաշտօնագրոյն:

Գնահատելով հանդերձ սոյն պաշտօնագրոյն կարեւորութիւնը, որ նամբորդներու ուղարկման դադրեցումը կը խնդրէ, եւ յսած ըլլալով հանդերձ Ձեզմէ նոյն իրողութիւնը, կը կարծենք որ այժմ ստիպողականութիւն մը չկայ այդ արգելիքն անսալու, քանի որ ամէն կարգի առաւելումներու համար ցարդ որեւէ գանգատ չեկաւ, եւ 3 Օգոստոսէն վերջ բոլոր դրկուածներուն Պաթումէն մեկնած ըլլալը հաստատօրէն գիտենք: Այսու ամենայնիւ միշտ կարելի ըլլալով անմիջապէս եւ պաշտօնապէս կրկին տեղեկանալ այդ մասին, մենք մինչ այդ պիտի յետաձգենք մեր առաւելումները, ի բաց առեալ այսօր մեկնելիք 151 հոգին, որուն համար շոգեմաւային *անկաժըմանի* տակ մտած ենք, ինչպէս նաեւ Արմաշականներու 3-4 օր վերջի առաւելումը, որ բացարձակ անհրաժեշտութիւն է: Միւս կողմէ Արսլանապէկցիներու եւ այլ առաւելումներու մասին կրկին պիտի խնդրենք որ օր առաջ որոշ հրահանգներ ունենանք:

Հայաստանի Հանրապետութեան Վերաշինութեան եւ
Խնամատարութեան Նախարարութեան ներկայացուցիչ

Մ. Մ. Էպիդաթեան

*) Պ. Աթապէկեանը Հայաստանի Հանրապետութեան Պաթումի Ռիպատոսն էր: (Խմբ)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ
ԵՒ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Երեւան

Պարոն Նախարար,

Ինչպէս հաղորդած էի Ձեզ Սեպտեմբեր 2 ամսաթիւ եւ 3 համար նամակովս Ազգային Խնամատարութեան Արմաշի գիւղատնտեսական վարժարանին աշակերտները թուով 113 եւ 14-17 տարեկան այսօր կը մեկնին Պաթում, Երեւան գալու եւ նախարարութեան հրահանգին համաձայն ցոյց տրուած յարմար վայր մը տեղաւորուելու համար: Իրենց ուսուցիչներէն երեքը Պ.Պ. Հայկ Սէրէնկիւլեան, Ռաֆայէլ Ապտուլ-լահեան եւ Սիմոն Թիւթլեան նշանակուած են առաջնորդելու զիրենք տեղույն մէջ ըլլալիք կարգադրութեան համաձայն. այդ ուսուցիչները կրնան ամէն տեսակետով օգտակար հանդիսանալ Ձեզ, թէ տղոց ուսումը շարունակելու եւ թէ գործնական աշխատանքի կոչուելու պարագային, իբրեւ մասնագէտ հողագէտ եւ գիւղատնտես:

Տղաքը չափազանց խանդավառ են Հայաստանի փառայեղ իտէալով եւ այդ զգացումն է որ զիրենք մղած է առանց բացառութեան, նը-լիրուելու Հայրենիքի ծառայութեան եւ վերաշինութեան: Կը մնայ օգտագործել այդ եռանդը արդիւնաւոր ուղղութեամբ եւ այդպէս միշտ կանգուն ու բարձր պահել մեր տարաբաղդ սերունդին թշուառ այլ անկուն րեկորներուն մէջ ծլարձակող հայրենիքի ազնուագոյն հակումներն ու զգացումները:

Ազգային Խնամատարութիւնը չծանրաբեռնելու համար կանաւարութեան պիտենէն նիւթական նոր մտահոգութիւնով մը, իւրաքանչիւր տղու համար որոշած է տալ 25 ոսկի թղթադրամ, եւ այս գումարը 2825 ոսկի, յանձնուած է տեղույս Հայաստանի Հանրապետութեան Դիւանագիտական ներկայացուցիչ Պարոն Թաթաւեանին, Ձեզ ուղարկուելու համար փութով: Որքերու քանապարհաձախսը եւ պարէնագինը մինչեւ Պաթում հոգացուած է, իսկ Պաթումէն մինչեւ Երեւան՝ յանձնուած է ընկերացող ուսուցիչներուն: Որքերը բացի իրենց հագուածէն ունին նաեւ նոր կարուած մէյ-մէյ ձեռք գգեստ, ներմակեղէն, գուլպայ, իրենց յատուկ սեղանի սպաս, անկողին, բարձ, սաւան, մաս մը գրեմական պիտոյք, որոնք նոյնպէս յանձնուած են ուսուցիչներուն, մասնաւոր ցանկի մը համաձայն: Կը խնդրուի մեզի տեղեկացնել ընդփոյթ այս գոյքերու ինչպէս նաեւ սննդագին տրուած վերոյիշեալ գումարին ընդունուիլը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԽՆԱՄԱՏԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ**

Երևան

Պարոն Նախարար,

Տեղույս դիւանագիտական ներկայացուցիչ Պարոն Թահթանեան 20 Սեպտեմբեր, 1920 թուակիր գրութեամբ մը կը տեղեկացնէր թէ թիւ 3 թուականով Պաթումի հայկական հիւպատոսարանէն ստացուած պաշտօնագրի մը համաձայն, յանձնարարուած է, մագութի չգոյութեան պատճառաւ, մինչեւ ցնոր կարգադրութիւն դադրեցնել կամաւորներու, գաղթականներու եւ որբերու ուղարկումը Հայաստան:

Բայց նկատելով որ նախ քան այդ հաղորդագրութիւնը կարգ մը առաջումներ, ընդ որս եւ Արմաշի գիւղատնտեսական վարժարանի աշակերտութիւնը պատրաստուած էին արդէն, եւ անհրաժեշտութիւն մըն էր չյետաձգել գանձնք, այնպիսի ժամանակ մը երբ դէպի երկիր երթալու խանդավառութիւնը բարձր աստիճանի մը հասած էր եւ առաջման յանկարծակի կասիլը կրնար վատ տպաւորութեան մը ենթարկել տեղույս հայութիւնը, շարունակուեցաւ ուրեմն ուղարկումը ինչպէս գաղթականներուն, կամաւորներուն, մոյնպէս եւ որբերուն: Որպէսզի ներգաղթի կենսական գործը չտուժէ այսպիսի պատահական լուրերէ, կը խնդրուի որոշ հրահանգներով լուսաբանել մեզ ուղղակի եւ տեղեկացնել թէ ե՞րբ եւ ի՞նչ ձեւով պէտք է կատարուին առաջումները, մասնաւորաբար կամաւորներուն:

Հայաստանի Հանրապետութեան Խնամատարութեան եւ Վերաշինութեան Նախարարութեան Պոլսոյ ներկայացուցիչ

Մ. Մ. Էպլիդաթեան

Պաթումի հիւպատոս Պարոն Աթապէկեանի կանխաւ իմաց տրուած էր սոյն որբերուն առաջման մասին, խնդրելով միանգամայն տեղեկացնել Ձեզ հեռագրով, որպէսզի կարելի ըլլայ Ձեր կողմէ հարկաւոր պատրաստութիւնները կատարել առաջուց: Անշուշտ ցարդ հաղորդուած է Ձեզ եւ պէտք է ինչպէս պատրաստութիւնները տեղի ունեցած են որբերու ընդունելութեան համար:

Հանեցէք փութով տեղեկացնել մեզ որբերու ժամանման, տեղաւորման եւ իրենց մասին ըլլալիք կարգադրութիւններուն նկատմամբ, որովհետեւ Պոլսոյ հայութիւնը շատ կը հետաքրքրուի անոնցմով, եւ կը փափաքի վերահասու ըլլալ անոնց ստանալիք վիճակին:

Հայաստանի Հանրապետութեան Խնամատարութեան եւ Վերաշինութեան Նախարարութեան Պոլսոյ ներկայացուցիչ

Մ. Մ. Էպլիդաթեան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ***

Երեւան

Պարոն Նախարար,

Համաձայն մեր 20 Սեպտեմբեր ամսաթիւ եւ 6 համար մամակին, Նիկոմիտիոյ շրջանէն 450 արսլանպէկցի հայեր այսօր կը մեկնին Երեւան Պաթումի մանապարհով, Հայաստանի մէջ յարմար վայր մը տեղաւորուելու համար: Իրենց մանապարհածախսը մինչեւ Երեւան հոգացուած է մեր կողմէ:

Այս թուականով յիշեալ արսլանպէկցիներու մեկնումը տեղեկացուած է մասնա Պաթումի ընդհանուր հիւպատոսութեան, որ անմիջապէս իմաց տայ Ձեզ, մախնական պատրաստութիւնները կատարելու համար իրենց մասին:

Ներգաղթի այս հոսանքը, վստահ եմք որ ջերմօրէն պիտի ֆաջալերուի մախարարութեանդ կողմէ, եւ պատմառ պիտի ըլլայ որ ուրիշ մամնօրինակ զանգուածային փոխադրութիւններ տեղի ունենան այսուհետեւ, Հայրենիքի վերաշինութեան գործը ի գլուխ հանելու համար:

Հայաստանի Հանրապետութեան Վերաշինութեան եւ Խնամատարութեան Նախարարութեան Պոլսոյ մերկայացուցիչ

Մ. Մ. Էպլիզաբեան

Յ. Գ. Պարոն Խատիսեանը արտօնած է զմեզ զանոնք փութացնել Երեւան:



ԱԶՆՈՒԱՇՈՒՔ

**ՏԻԱՐ Ֆ. ԹԱՀԹԱՃԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԴԻԻԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑ**

Պոլիս

Պատիւ ունիմ Ձեզ հաղորդելու թէ ստացայ Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործերու մախարարի այն պաշտօնագիրը, որ զիս կը կոչէ Ձեր շրջանին համար Գաղութային գործերու վարիչ, ինչպէս մասնա յարակից հրահանգները գորս ընդօրինակելով Ձեզ կը դրկեմ իսկականները:

Սիրով ընդունելով այդ պաշտօնը եւ անմիջապէս իսկ անոր նշանակելու փափաքով արդէն իսկ հրաժարական մատուցի Խնամատարութեան Տնօրէնութիւնէն Նոյեմբեր 1ին: Հետեւաբար պատրաստ մոր գործիս սկսելու՝ կու գամ խնդրել Ձեզմէ այն թանկագին վստահութիւնն ու աջակցութիւնը, որոնք յաջողութեան գլխաւոր գրաւականը պիտի ըլլան ու որոնցմով պիտի աշխատիմ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան իմ վրայ դրած յոյսերը գէթ որոշ չափով իրականացնելու:

Խնդրելով որ ընդունիք խորին յարգանացս հաւաստիքը,

Ազգային Խնամատարութեան Ընդհանուր Տնօրէն

Մ. Մ. Էպլիզաբեան



*) Այս մամակը Երեւանի Ռետ վերջին կապն է: (Խմբ.)

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

- Մատթէոս Մ. Էպլիղաթեան ծնած է Գըրգաղաճ, 21 Հոկտեմբեր 1881ին:
- 1897ին աւարտած է Իգմիրի Մեսրոպեան վարժարանը:
- 1902ին աւարտած է Իգմիրի Թրքական երկրորդական դասընթացը (Գիմնազիոն, կամ Սուլթանիյէ):
- 1903ին իրաւաբանութեան ուսանող է Պոլսոյ մէջ:
- 1908 Յուլիս 10ին կը հռչակուի Օսմանեան Սահմանադրութիւնը:
- 1909 Մարտին Մ. Էպլիղաթեան կը ստանայ իրաւաբանութեան տոկտորայի վկայականը:
- 1909 Յունիս 18ին կը նշանակուի դատաւոր Եանիայի մէջ (Վերաքննիչ Ատեանի անդամ):
- 1912ին դատաւորական նոյն պաշտօնով կը փոխադրուի Հալէպ:
- 1913 Մարտին կը նշանակուի Վանի Նախադատ Ատեանի ընդհանուր դատախազ:
- 1913 Մայիս 15ին ճամբայ կ'ելլէ դէպի Վան (Պոլիս-Պաթում-Թիֆլիս-Երեւան-Իգտիր-Բերկրի ճամբով):
- 1913 Յուլիս 12ին կը հասնի Վան:
- 1913 Դեկտեմբեր 15ին կը նշանակուի Վանի Պատժական Դատարանի նախագահ:
- 1914 Յուլիս 10ին կը նշանակուի հայերէնի թարգման «ընդհանուր քննիչ» (Մարզպան) Հօֆի մօտ:
- 1914 Օգոստոս 17ին Հօֆի առաքելութեան հետ Վանէն կը վերադառնայ Պոլիս (Բաղէշ-Տիգրանակերտ-Ուրֆա-Հալէպ-Պէյրուս ճամբով, եւ անկէ - նաւով - Իգմիր՝ եւ յետոյ Պոլիս):
- 1914 Հոկտեմբերին Թուրքիա կը մասնակցի Համաշխարհային Ա. Պատերազմին, գերմաններու կողմին:
- 1916 Նոյեմբերէն մինչեւ 1918 զինուորական պարտաւորիչ ծառայութիւն կը կատարէ Օսմանեան բանակին մէջ:
- 1917ին Պարէնաւորման սպայ է Մարմարայի Մեծ Կղզիին մէջ:
- 1917 Հոկտեմբեր 30ին կ'ամուսնանայ Մարինոս (Մարի) Զիլինկիրեանի հետ:
- 1918 Հոկտեմբեր 30ին կը ստորագրուի զիմադադարը (Մուստրոսի դաշնագիր):

- 1919ին կ'ընտրուի ազգային երեսփոխան Պոլսոյ մէջ:
- 1919 Յունիս 14ին կը նշանակուի Պոլսոյ «Ազգային Խնամատարութեան» ընդհանուր տնօրէն:
- 1920 Յուլիս 3ին կը նշանակուի Հայաստանի Հանրապետութեան «Խնամատարութեան եւ Վերաշինութեան Նախարարութեան» Պոլսոյ ներկայացուցիչ (միեւնոյն ատեն վարելով Ազգ. Խնամատարութեան Ընդհանուր Տնօրէնի պաշտօնը, մինչեւ 1 Նոյեմբեր 1920):
- 1920 Սեպտեմբեր 28ին կը նշանակուի Հայաստանի Հանրապետութեան «Փաղուծային Գործերու Վարիչ» Պոլսոյ մէջ, բայց գործնապէս կը վարէ ընդհանուր հիւպատոսի պաշտօնը:
- 1922 Դեկտեմբեր, կը դադրի Հայաստանի Հանրապետութեան ընդհանուր հիւպատոսի պաշտօնը վարելէ, երբ Անգլիական իշխանութեանց հրահանգով Հայաստանի Հանրապետութեան Պոլսոյ հիւպատոսարանը կը փակուի:
- 1923ի սկիզբը կ'ապաստանի Ռուսիոյ Բլոէշտ քաղաքը:
- 1924ին ընտանիքով կը փոխադրուի Աթէնք:
- 1932ին կը փոխադրուի Հալէպ (Սուրիա), եւ կը ստանձնէ Հայկազեան երկսեռ վարժարաններու տնօրէնութիւնը:
- 1935ի աշնան կը մեկնի Անտիոք (Ալեքսանտրէթի Սաննազ), եւ կը զբաղի փաստաբանութեամբ:
- 1938ի սկիզբը Անտիոքի մէջ կը նշանակուի դատաւոր (Նախադատ Ատեանի, եւ յետոյ Վերաքննիչ Ատեանի անդամ), եւ կը պաշտօնավարէ մինչեւ 1939, երբ Սաննազը թրքական տիրապետութեան տակ կ'անցնի:
- 1940 Մարտ 15ին կը նշանակուի Լաթաքիոյ (Սուրիա) Նախադատ Ատեանի անդամ, եւ միաժամանակ՝ շրջուն հաշտարար դատաւոր Քէսապի եւ Քասթալ Մասֆի մէջ:
- 1941ին կը նշանակուի Լաթաքիոյ շրջանի Պարենաւորման միակ դատաւոր, եւ կը պաշտօնավարէ մինչեւ 1947 (պահելով նախորդ պաշտօնները):
- 1947ի Նոյեմբերի սկիզբը հանգստեան կը կոչուի:
- Մահացաւ 30 Սեպտեմբեր 1960ին:

Սոյն գիրքի վաճառումէն գոյացած մուտքը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջոցաւ, ամբողջութեամբ պիտի յատկացուի Տէր Զօրի մէջ կառուցուելիք **ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ** շինութեան ֆոնտին:

ՏՊԱՐԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ՄԵԾԻ ՏԱՆԵՆ ԿԻԼԻԿԻՈՑ
ՀԱՅ ՏԻՊ ԲՈՄԹԻԻԿՐԱՑ
ԱՆԹԻԼԻԱՍ - ԼԻԲԱՆԱՆ